



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2043

9 (44)

7-59







9(44)

7--85

ԱԿ.

ՄԱՔՍԻՄ ԴԻԻԿԱՆ՝

4

# ՊԱՐԻԶՈՒ ՑՆՑՄՈՒՆՔՆԵՐԸ

ՔԱՂԵԼՈՎ ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ՄԻՆԱՍ Վ. ՆՈՒՐԻԻԱՆ



Վ. ԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1903



ՅՆՑՄՈՒՆՔ ՊԱՐԻԶՈՒ



03.04.2013

2043

9044  
7-59

9044  
NOV 7 2011

ՄԱՔՍԻՄ ԴԻԿԱՆԻ

ԱՆԴԱՄ ԳԱՂՂԻՈՅ ԱԿԱԴԵՄԻՍՅԻ

ՊԱՐԻԶՈՒ ՑՆՑՄՈՒՆՔՆԵՐԷՆ

ՔԱՂԵԼՈՎ ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ՄԻՆԱՍ Վ. ՆՈՒՐԻԲԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ԲՍԵՏԵՐԸ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1005  
21784



61



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1903



2043

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Գաղղիոյ Երկրորդ կայսրութեան անկումէն վերջը եկած պատմական գործոց մէջ թէ ոչ առաջին, սակայն առաջիններէն մին է Մ. Գիւկանի Բարիգու Յնցմուշքները, եթէ ոճոյն, եթէ լեզուին և եթէ հմտութեան համար, որ և անմիջապէս հեղինակին բանալ տուաւ շեմարանին դռները:

Մաքսիմ Գիւկան ծնեալ յամին 1822, յետ հրահանգելոյ ի մա. տենագրութեան և ի պատկերահանութեան, աշխոյժ երիտասարդութիւն մը անցուց, մերթ իբր զինուոր կոտակելով կամ ազգային պահապան 1848ի Յունիսի Յեղափոխութեան միջոց, յորում վերաւորուելով կալէնեաք զօրավարին ձեռքէն ընդունեցաւ յեթիս տ'օմեօրի ասպետութիւնը, և մերթ ճանապարհորդելով յԱրեւելս, նախ 1844-1845 տարիները և ապա դարձեալ 1849-1851 միջոցները, յորս տերութեան կողմանէ շրջեցաւ մասնաւորապէս յԵգիպտոս, ի Նուրիս, ի Պաղեստին և ի Փորթ-Ասիս, և ի դարձին հետը բերաւ բազմաթիւ լուսանկարեալ կաղապարք, որք առաջին անգամ յետոյ ծառայեցին տպագրութեան: 1853ին յեթիս տ'օմեօրի սպայ անուանուեցաւ: Անկէ վերջը նշանաւոր յօգուածներ տուած է բազմաթիւ լրագիրներու և Հանդէսներու և մանաւանդ Երկուց Աշխարհաց Հանդէսի (Revue des deux mondes): Բարիգու բարոյական կենաց և կազմակերպութեան վրայ գրուածքը աւելի հռչակեցին անունը և 1869ի Օլիւիէ պաշտօնաւանդ զինքը Տերակուտի անդամ անուանեց, թէպէտ պատերազմին վրայ գալովը այս հրովարտակը երբեք չեկաւ յերեսան:

Մաքսիմ Գիւկան արդէն կանխաւ յայտներ էր իր գատողական սուր հանձարը և բերումը՝ հրատարակելով 1848ի Յեղափոխութեան Յռչողը, ինչպէս նաեւ Նախնիք Հասարակութեան և Գառ Ֆիւսի, երբ յամին 1873 սկսաւ հրատարակել Բարիգու ցնցմուշքները, յորս ամփոփած է 1871ի Հասարակութեան պատմութիւնը սկսեալ Մարտ 18էն մինչեւ Մայիս 28, ոչ իբրեւ պատմութիւն, այլ իբր առանձին առանձին գրուածքներ, վասն զի ըստ իր ասիցը անկարելի



է առ այժմ ամբողջական պատմութիւն մը գրել, քանի որ տակաւին պէտք եղած տարբերը հաւաքուած չեն, թողունք որ մեծ մաս մ'ալ հրդեհը պրեք և նոյն իսկ հասարակավարիչք զայնս ջնջեցին. և թէ պէտ անձրեւի պէս ամէն կողմանէ իր քովը տեղացին հաստատագրութիւնք, վկայութիւնք, նամականիք, յիշատակարանք, ականատեք, այսու հանդերձ տակաւին բաւական չի տեսներ զանոնք:

« Պէտք չկայ, կըսէ իւր Յասարաբանին մէջ, պէտք չկայ ըսելու որ եթէ պատմութեանց և եթէ բարձրագոյն մանրամասնութեանց մէջ սխալներ սարգեր են, այդ վրիպակներն ակամայ են. ոչ մի կուսակցութեան ոգի ինձ առաջնորդած է. վասնզի բնաւ քաղաքագիտական կողման մը չեմ պատկանիր. անտարբեր եմ վարչութեան կրած ա-նուան վրայ, միայն թէ այդ վարչութիւնը իւրաքանչիւրին ապահովութիւնը պահպանէ՝ որուն իրաւունք ունինք տուրք տալովնիս. ուրիշ բան չվիտակցի բայց թէ ճշմարտութիւնը և ամէն ձեռքէս եկածը ըրի՛ զայն զանկու և ծանուցանելու: »

« Այսու հանդերձ չկարծուի որ ճշմարտութիւնը միշտ ամբողջովին ըսեր եմ. շատ անգամ զայն ծածկեր եմ առ յարգանաց ընթերցողին և իմ իսկ անձին: Կան անառակութեան և անբանութեան գործեր՝ զորս պէտք է լռել: Դարձեալ կարելի եղածին չափ ջանացի այն գիպաց վրայ միայն խօսիլ՝ որոնք կատարածանարանաց մէջէն անցան և հետեւաբար աւելի կատարեալ դիպով լուսաբանեալ էին: Շատ անգամ մտադրութեան նիւթ չընելու համար այն անձինքը որոնք փախեր էին Արդարութեան ձեռքէն, չըսի յայտնապէս ինչ որ գիտէի: Կրնամ այդ մասին երկու օրինակք յիշել. կրնայի Փէքքերի բոլոր սպանողքը նշանակել, սակայն միայն երեքը անուանեցի, ուրիշները այս բանիս համար հալածուած չըլլալով, անուննին չտուի: »

« Արքեպիս Գոմինիկեաններուն ջարդին պատմութեան մէջ դուրս ցատկեցուցի Սէրիզիէի և Բուանի խաղցած դերերը, սակայն լռեցի գլխաւոր յանցաւորին անունը, որովհետեւ Արդարութիւնը այդ բանին համար իրմէ հաշիւ պահանջած չէ: Այդ գզուցութիւնը միշտ պահեցի. սակայն չկրցայ բնաւ գոհ ընել հասարակավարիչները: Իրենց հաճոյ ըլլալու համար՝ պէտք էր ցուցնել որ Յերապոյժառ Դարբուս սպաննեց զՎէրիկ և թէ Շոգէ հրացանի բռնեց զՍիկո: »


Քանի որ սկսան հրատարակուիլ Բարիզու Յնցմունքները անհամար յօդուածներ և գրքոյկներ գրուեցան ընդգէմ Մաքսիմ Գիւկանին: Նոյն իսկ երբ Վիկտոր Հիւկոյի թաղման, իբր նախագահ ճեմարանին ի բնէ կ'ինկնար խօսել դազաղին վրայ, կանխաւ հասարակավարիչք ձայն տարածեցին որ եթէ Մաքսիմ Գիւկան խօսեր, մեծ խռովութիւն պիտի հանէին. և սակայն Մ. Գիւկան Հասարակութիւնը ատելու ժամանակ չէր ատեցող Հասարակակուցութեան, ինչպէս իւր թշնամիքը գինքը կ'ամբաստանէին, ըստ իրեն « Հասարակու-

թիւնը բուն Հասարակակուցութեան հակառակն էր: » Ինքն եւս գիտէ որ անոնց ատելի է և պիտի ըլլայ. « Յայտնի է որ իմ ըրած և անաւարտած քննութիւնքս՝ այդ ապօրինաւորութիւնը պաշտպանողաց, բռնութեամբ վրէժ ինդրել ուզողներու, հաճոյանալու բազդը չունեցան: Անոխութեանն օր մը իւր գովեստը լսելով ի շար մարդկանց, ըսեր է. կը վախնամ որ գէշ գործ մ'ըսեր եմ: Ինձի հարկ չկայ այդպիսի վախ մը ունենալ, և ծանշցայ անմիջապէս որ գէշ գործ մը չէր՝ խօսիլ Հասարակութեան վրայ պէտք եղածին պէս: Չմտացին նախատինք, շարախօսութիւնք և զրոյաբուութիւնք որ չհնարուին ինձի գէմ: Ատիկայ ինձի կարեւոր բան մը չերեցաւ և հոգս չեղաւ: Բաւականապէս քալեր եմ յԱրեւելս և ծանօթ են ինձ իրենց առաւները. կը յիշեմ՝ այն տաճիկ խօսքը՝ « Եթէ կենաս քար նետելու ամեն քու վրայ հաջող չան, երբէք ճամբորդութեանդ նպատակին չես հասնիր: » Թողուցի որ հաջեն և շարունակեցի ճամբաս: »

Մաքսիմ Գիւկանի զայրոյթը այն կը գրգռեր աւելի որ այդ հասարակավարիչք, որոնք սպաննեցին արքեպիսկոպոս, նախագահք, քահանաներ, կրօնաւորներ, շատ մը պատուաւոր քաղաքացիներ, այրեցին զԼուվը, Տիւլլըի, Հաշուտունը, Ոստիկանութեան պալատը, այդ աւերիչք և սպանիչք կը պարծէին որ քաղաքագիտութեան մը նպատակաւ զայդ ըրեր էին. և կը յուելու. « Աւելի ապագայ ժամանակի մը մէջ, երբ յերեւան զայ բովանդակապէս այդ Հասարակութիւնը, որուն հազիւ մէկ քանի անկիւնները կրցայ բանալ, այն ատեն պիտի տեսնուի որ քաղաքագիտութիւնը ընա մաս մը չունէր գործ մէջ: Անոնք որ զայդ հնարեցին, ստիպեցին զՊարիզ զայն ընդունելու և յետ չկասեցան ոչ մի յանցանքէ զայն շարունակելու համար, կոչուէին հասարակակուցութեան, ուրիշ բան չէին, բայց թէ անձնատէրք, փառասէրք, և գինովք յիշխանութեան: Եթէ բռնաւոր մը իրենց ընծայեր իշխանութիւն, բազդ և պատուանուն. արդեօք կը մերժէին: Կը տարակուսիմ: Տեսնելով այն հալածանքը զոր փութով ի գործ կը դնեն սէր ըլլալուն պէս, ընդգէմ անոնց, որք զլուի չեն ձուր իրենց յափշտակութեան. հաշուելով այն ոճիրները զորս չանհետացած գործադրեցին, յիշեցի այն հուշակաւոր նամակը. « Հիմայ երկու հարիւր զլուի կորել տուի ի Վիոն. կը խոտանամ ամէն օր նոյնքան կատարել. ուրախութեան և առաքինութեան արտասուք կ'ողողեն արուեանունքս՝ սուրբ զգացմանէ մը յառաջ եկեալք: Այն սիրելիքը որ կը գրէ գասիկայ, յետոյ դուքս պիտի ըլլար Օտրանտի, ի գործ պիտի գնէր Կայսրութեան գաղտնի գործերը և պիտի պահպանէր Երկրորդ Վերանորոգումը, որուն պաշտօնեայ եղաւ: Ֆրուէի ախտերը և փառասիրութիւնը Օտէլ տէ Վիլի մէջ էին Հասարակութեան ժամանակ, բայց կը փնտռեմ իւր խելքը և չեմ գտներ: »



Մաքսիմ Գիւկան իւր « ասարակութեան շորս հատորներուն մէջ ալ միշտ նոյն կորովը ունի և միշտ նոյն ախորժելի գրիչը, որով կը հմայէ զընթերցողը: Ահա այսպիսի մատեան մը՝ որ մերձաւոր ժամանակաց կարեւորութեամբ մեծ յարգ ունի, փափագեցանք աւելի եւս ծանօթացնել Ազգերնուս, թէ ոչ բովանդակ՝ գոնեա թարգմանաբար հաւաքելով նշանաւոր գրուագիները և գլուխները, և այժմէն ներուսն կը խնդրեմ յընթերցողաց եթէ այնպիսի ահաւոր էջեր հանդիպին, զորս չկարենան ընթեռնուլ առանց սարսափելու: Աղանլէյ հռչականունն ճանապարհորդը, Արեւելեան Ափրիկէի ծայրերը կը զըտնուէր Հասարակութեան միջոց, և վերջապէս յաջողեր էր գտնելու զԼիվիկնաղն, երբ 1872 Փետրուար 14ին Աշրոպայէ լրագիրներ ստացաւ, յորս կարդաց միանգամայն՝ Հասարակութեան գոյութիւնը, անկումը, ոճիրները և պատիժը: Իրեն ըրած տպաւորութիւնը անդէն նշանակեց. « Ո՛վ Գաղղիա, ո՛վ Գաղղիացիք, այդպիսի գործեր նոյն իսկ Ափրիկէի կեդրոնը անձանթ են »:



## ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՊԱՏՔ • ԿԵԳՐՈՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՄԱՐՏ 18Ի՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակութեան (Commune) ասանձնական գրուագները պատմել չսկսած, հարկ է որ փոքրիկ գաղափար մը տանք այն պատահարաց վրայ, որոնք պատրաստեցին զայն. կամ լաւ ևս ըսենք՝ որոնք պատճառ եղան Հասարակութեան երևան գալուն, վասն զի հասարակաբարչական գաղափարք և գաղտնի ընկերութիւնք արդէն շատոնց սկսեր էին նոյն իսկ Կայսրութեան ժամանակէն: Այս գաղափարները սնան և մեծցան Գաղղիա-բրուսիական պատերազմին ժամանակ, իսկ յետոյ՝ պարտութենէն վերջը և ամբողջ պաշարման ժամանակ՝ Գաղղիա իշխանութիւն մը չունեցաւ. վարչառջիւն պաշարման, վարչառջիւն պատերազմի, ամէնն ալ պարտապանութենէն էին: Եթէ զինուորական, եթէ քաղաքական և եթէ անտեսական իշխանութիւնք մէջերնին կուրճակելով՝ մէկմէկ անգոր կ'ընէին, բազմաթիւ յանձնաժողովներ, ժողովակներ կազմուած էին՝ որոնք աւելի խոշորացան էին վարչութեան մը համար, և միով բանիւ՝ ոչ ումեք կը հնազանդեցուէր: Ըստ ասից Մ. Գիւկանի « Պարիզու երեսփոխանք — ամէնն ալ ծնեալք ի գաւառս, ի բաց առեալ զՏՏ. Պիքար և Ռոշֆոր — որք Սեպտեմբեր 4ի օրուրնէն վերջը Գաղղիա ազատելու պատասխանատուութիւնը վրանին առին, չգիտցան ոչ խողաղութիւն ընել ոչ պատերազմ »: Պէտք էր վարչութիւնը զբաղել կրթելու զգինեալ ժողովուրդը, զայն



մերքեցուցչաց սզգեցութենէն ազատելու, որով և կրնար ընտիր գունդեր ունենալ թշնամույն դէմ կամ իրեն հաւատարիմ սզգ սյին պահապաններ, բայց չըբու: «Արդէն Սեպտեմբեր ամսէն զիտէր վարչութիւնը թէ ինչ վստասութիւն պէտք էր ունենալ Ազգային պահապանաց գունդերէն ունանց վրայ, որոնք զժողովարար բազմութիւք էին. որք ծաղրածութիւն չմնաց որ չընէին մեր կարանաւոր զինուորաց վրայ: Սեպտեմբեր 19ին շարժուն պահանջողաց գունդ մը պաշտօնընկէց կ'ընէ իւր գլխաւորները՝ յետ մերժելու անոնց հնազանդիլը, կը պարպէ ՂՄՈՆ-Վալէրիէն բերդը՝ զոր պիտի պաշտպանէր, և ցերեզան յետս կը դառնայ այն ժամանակ յորում գերմանացի սիւնակաց յառաջապահք սկսեր էին երկնալ ի Ռէյն: Փոխանակ Ազգային պահապանքը պատժելու կամ զսպելու, զարմանալի միտմտութեամբ մը Տ. Փիւլ Ֆալբը սպայից ընտրութիւնը իրենց կը թողուր, զոգցես կերպով մը համաձայնելով ներքին թշնամույն, որ շողորթելով առ ինքն կ'ուզէր ձգել զանոնք. Սեննայն օք կը խօսէր այս սզգային պահապանաց վրայ: Գովեստանքով զայն կը զինովընէին և մեծ խօսքերով խեղքը զլինէն կ'առնուին. և Ստուուած գիտէ ինչ բաներ կ'ըսուէին իրեն. «Ահաւորք եղէք, սի հայրենասէրք, կը գտէր Վիկտոր Հիւլօ. կեցեք միայն երբ խրճթի մը քովէն անցինք, հոն ննջող փոքրիկ տղան ճակատը համբուրելու համար»: Ասիկայ կ'ըսէր՝ երբ երեք օր տառջ այս «ահաւոր հայրենասէրք» լքեր եին զՄՈՆ-Վալէրիէն:

Այս շար սուտըց մէջ չկար ուժով կամք մը, չկար միտք մը: Պարիզ բաժնուած Գաղղիայէն՝ ժամէ ժամ կը յուսար փրկուի ի գաւառաց: Ատի անտի քանի մը օդապարիկք կը բարձրանային, բայց բնու մին չէր վերագառնար, և այն քաղաքը՝ ուր կը զիմէ սովորաբար բոլոր ալխարհքիս շառաչը՝ շրջապատեալ այժմ արտաքին տութենէ, թմբեր էր իր սեպչական երևակայութեանց սղարակներէն: Մէջի անձնատուր ըլլալուն լուրը յառաջ բերաւ Հոկտեմբեր 31ը, որ անսօրատ անկ երկարեց պատերազմը այլ ևս երեք ամիս, և զիւրացոյց Գերմանացուց ստուգապէս ճանչնալու զՊարիզ կրժող հիւանդութիւնը: Սակայն հասարակալարչականաց դուր այն անգաման ծաղու արժանի վերջ մը ունեցաւ: Տ. Լընէ Պիքար կա-

մաց մը սահեցաւ գնաց պահապաններ փնտտելու, և կարանաւորել տուաւ լուսնասները՝ որոնք սեղանատախտակաց վրայ կը պատէին՝ ի զուր աշխատելով զաղափար մը ըսելու. պատճառը՝ վասն զի չունէին:

Հոկտեմբեր 31ի դուր կրնար զգուշութեան խրատ մը համարուիլ Ազգային Պաշտպանութեանը վարչութեան, զոր ամենայն կերպով կ'ուզէր հաստատուն պահել քաղաքացուց մեծամասնութիւնն, և անոր համար վստահութեան քուէ տալով՝ պահէր էր զայն իշխանութեան մէջ. սակայն վարչութիւնը չգիտցաւ գործածել իր սյժը և իր տարած յաղթութիւնը:

Այս ժամուս Պարիզու Ազգային պահապանաց մէջ 100,000 անձանցմէ աւելի կար՝ յաշտակ ի ծառայութիւն և ի պատերազմ. գոնեա անոնց զինուորական կրթութեան սկզբունք մը տրուէր՝ ուսկից դուրի էին, և որ կարեւոր էր Գեկտեմբերի և Յունուարի յարձակմանց համար: Պէտք եղած ժամանակին գործածելու համար չպատրաստելով, Պարիզ յուսահատ իր օրմց մէջ ամիս փեցաւ և ինքզինքը ուտելով լմնցաւ: Զօրավարաց և սզգային պահապանաց մէջ եղած փոփոխակի անխտահութիւնը արտաքոյ կարգի էր: Զինուորը իւր զօրավարին մտաց մէջ միշտ ծածուկ փառասիրական նպատակներ կ'ուզէր աննել, իսկ զօրավարք զզինուորս « բանի լեկոյներու » անկ գրած էին. և վարչութեան գլխաւորք շնտածեցին հասարակաց փրկութեան համար գործածել այդ զօրութիւնքը, որք այդպէս եռանդեամբ վստաս կեցան հասարակաց կորստեան համար:

Ազգային պահանջողը սրգէն պառակտեալ իրեն վրայ դրուած երևակայական ծառայութենէն, սկսեր էր ցրուիլ պարապորզութենէ և գինովութենէ: Ամէն օր բաց ի բանակին տալիք կերակրոյ մասէն, 50,000 լիար գինի բերդերը կը զրկուէր: Աշխատութեանց զագարմունքը պարպեր էր գործարանները. չկար գործաւորին համար ոչ աշխատութիւն և ոչ վարձք: « Ինչ որ ալ ըլլար տարեք, գուրուր կը գնէր զինուորի գլխարկ մը, վերնագլխատ մը կը հագուէր, հրացան մը կ'ընդունէր, իր կանանաւոր սոճիկը կը ստանար, ուրիշ վճարք մ'ալ կնկան համար և վճարք մ'ալ սղարոյց: Կը վարժէր անգործութեան երկարատե պահպանութեան և գինեատանց մէջ, զիւրու



ապրուտար և ըմպելիքը կ'ընդունէր. ժամանակ անցընելու համար քաղաքագիտութեան վրայ կը խօսէր իր ընկերացիք խոշոր գլուխներուն հետ, որոնք իրեն կը պատմէին գործառնախիղձ մը իր աշխատաւորացիք հանած շահուն վրայ, դրամագլխոյն տիրապետութեան և գլխաւորաց ժողովըրդեան ըրած բռնութեան վրայ: Ամէն գինեառուն ժողովատեղի մ'էր, ամէն պահապանաց կայարան՝ խօսելու տեղի մը: Եւ երբ այս կայարաններուն գինացէն, որք կտորած տակաւի պէս կը հոտէին, կ'անցնէին գինուորք կամ շարժուն պահապանք՝ պատերազմի երթալու համար, իրենց կը պոռացուէր. « Խրախո՞յս. յաղթող դարձէք. արդէն գիտէք որ թէ այդպէս չըլլայ՝ մենք հոն ենք »: Եւ յերաւի հոն էին, բայց հոն կը մնային. այնպէս որ շարժուն պահապանք և գինուորք վատտակեալք ի պատեւ բազմելոյ և շահանելով երբեք քովերնին գանոնք՝ որ զիրենք յորդորած էին աղէկ կուտելու, շատ անգամ Պարիզ մտան կամ ուղեցին մանել գոչելով « Կեցցէ՛ խաղաղութիւն »:

Արդէն վարչութեան անձանցմէ ոմանք սկսեր էին հաշտութեան մը ետեւ ըլլալ: ՏՏ. Պիքար և Ժիւլ Ֆալլը կը թախանձէին իրենց ընկերքը որ Պարիզու ժողովուորքը՝ սովուն սասակութենէն տառապել չտան: Էրեւանցիութիւններէ առաջ եկած մտհերք անհամեմատ կերպով կ'ուտուելուին (8238 մեռեալք ի Կոյեմբերի, 12,885 ի Դեկտեմբերի): Ամէն խղճմտանք կ'ըմբռնէր որ հաշտութիւն մը պէտք էր և փութով, բայց ոչ ոք կը համարձակէր ըսելու՝ Ազգային վարչութիւնէն ունեցած վտանքներն:

Յունուար 22ին Հասարակութեան ազգայնոց անդամներէն ոմանք ընդ պատրուակաւ թշնամութիւնները սկսելու և հաշտութիւնը միայն ի Բեռլին ստորագրելու, փոքր փորձեցին տիրելու Օթէլլ ար Վիլի. սակայն միայն խտանակութիւն մ'եղաւ, զոր հաղիւ իմացան մերձակոյ թողերն: Օթէլլ ար Վիլի վրայ յարձակող գունդը 101գն էր, բանակեալ Բոչիար Խոպիտոյ շրջակայքը. իւր հրամանատարը խաղախորդ մ'էր՝ Ժան - Բադիսո Սէրիլիէ անուամբ: Բմբռնեալ ի յայտնի յանցանա ապստամբութեան և օրինաց հակառակութեան, անմիջապէս զինուորական տունէ պիտի դատուէր. երբ վարչութեան

անդամներէն միայն միջամտութեամբ ազատ թողուեցաւ: Եթէ մեռած ըլլար, որքան զոհեր հիմա պիտի ապրէին, վասն զի ինքը եղաւ որ Արկեօյի Գոմինիկեաները սպաննել տուաւ և Գորլէնքը այրեց:

Զինագաղարման ստորագրուեցաւ. դիտէ ամենայն ոք թէ քանի՛ ծանրագին զոհողութեամբք: Այս միջոցի Ազգային պահանորգը ի Պարիզ 28,000 սպայ ունէր: Պարիզու դոները բացուելուն պէս՝ զուրս ելլելները սկսան. արդարացի պանդխտութիւն մը՝ բայց և որ աղէտալի ազգեցութիւն մը ունեցաւ՝ արդէն սպաննացեալ պատահարաց վրայ: Ամենայն ոք յոգներ էր գոցուած մնալէն, հինգ ամսոյ չափ աշխարհքէս զուրս ապրելէն. կ'աճապարէր երթալ գանելու իրենները՝ զորս հեռացուցեր էր վտանգի ժամանակ. կ'ուզէր ելլել այս աղ կ'ալոյղ քաղաքէն, ուր ամէն ժամ փողերը կը հնչէին. կը կարծուէր որ վտանգը անցեր էր. պարտքերնին կատարեր էին առանց օգտի մը պաշտպանեալ խնդրոյն. ամենայն ոք կ'ուզէր երթալ գիտնալու թէ ինչու « անձնասէր գաւառք », ինչպէս կ'ըսէր նախագահն Տ. Բոնփան, չէին եկած ազատելու զմայրաքաղաքը: Այսպէս անոնք որ կրնային մեկնել թողուցին գքաղաքը. առանց տեղերնին լեցրնելու, յանձնեալ ինքիբն. այսինքն յանձնեալ բարկութեան, յուսահատութեան և անկարգութեան տարերաց: Մոնթակիւ հագարապետը մինչև 100,000ի կը հանէ բարեկարգ ազգային պահապանաց թիւը, որոնք գնացին գանելու իրենց ընտանիքները ի գաւառս: Երբ կուտելու ժամը եկաւ, ի զուր փնտուեցան, վասն զի չէին դարձած:

Երբ Տ. Ժիւլ Ֆալլը Զինագաղարման վրայ կը հաւանաւէր Տ. Բիամարքի հետ, յետինա առաջարկութիւն մ'ըրաւ, որ յայտնի կը ցուցնէ թէ որքան տեղեակ էր նա Պարիզու բարոյական վիճակին: Վախնալով որ հաշտութիւնը չմերժուի Ազգային պահանորգէն, գանիկայ գինաթափ ընելու համար առաջարկեց Տ. Ժիւլ Ֆալլի՝ որ հաց մը տրուի ամէն գէնք բերողի՝ ըլլայ ամբողջ, ըլլայ կտորած: Տ. Ժիւլ Ֆալլը զայդ Պարիզու հայրենասիրական ոգւոյն նախատինք համարելով՝ չընդունեցաւ: Այն ժամանակէն ի վեր իմացանք՝ որ ապագայ Գերմանական Կայսրութեան քարտուղարն՝ ժամը հինգին ի Վէր-



սայլ իւր բնակութեան մէջ կ'ընդունէր Պարիզու լրաց գիրքերէն մէկ մէկ օրինակ որք ի Պարիզ կը ծախուէին ժամը եօթէն ութը: Վարչութիւնը Չինագաղարումը կնքելու իսկ վախ մը կը զգար, վասն զի գիտէր որ մէկ տէր մը ունէր և այս էր ազգային պահանջողը, զոր ապագայ կարելի վախի մը համար կը ջանար շահիլ, և որ պատրաստ էր կռուելու ընդդէմ որո՛ւ ալ ըլլար, իր զէնքերը, առանձնաշնորհութիւնները և սոճիկը պահելու համար:

Ելեւմտից պաշտօնարանը ճշգիւ կու տար սոճիկները, և բաժնելու ժամանակ շատ բարակը չէր քններ: Կային ազգային պահապանացմէ ոմանք՝ որոնք երկու կամ երեք գունգերու մէջ ալ կը գտնուէին. ամէնը ամուսնացեալ էին և քիչը կար որ միայն մէկ տղայ ունենար: « Կային գնդապետք որոնք 1500 հոգուց համար թոշակ կ'առնուէին, մինչ ունեցածնին 800 անձ էր. եղան՝ որոնք իրենց բազը շինեցին », կ'ըսէ վրայ մը: Ասիկայ ամենաստոյգ է: Պաշարման միջոց կրեց՝ և կրեց առանց տրտընջելու՝ փոքրիկ եկամբտով ապրողը, տկար պաշտօնակալն, զործաւորը կամ զործաւորաց գլուխը, արգելեալն բնական տկարութեամբ մը գտնուելու ի կայարանի, արձակեալ ծեր ծառայն, անթոշակ վարժուէին, այրին կամ աղքատ աղջիկը. միով բանիւ՝ ստորին քաղաքացւոյն կէսը, որ չէր կրնար գնել ոչ գինի, ոչ միս, ոչ փայտ, ոչ ածուխ. որ ցուրտէն և տկարութենէն կը մեռնէր:

Գոքա, այս՝ զիւցազունք եղան, և Գաղղիա երբէք պէտք եղածին շտի պիտի չկարենայ նոցա երախտագէտ ըլլալ. վասն զի կրեցին ամէն բան՝ յուստով միայն որ անիկայ պիտի չփոքրկանայ:

Պաշարման ժամանակ, ամերիկացին Բըրնստայ, որ մեզ նայելով՝ սիրով կը մտնար իւր երկրին քաղաքական պատերազմը, ըսեր է Տ. Բիւմարքի. « Պարիզ կապիկներէ բնակեալ խենթանոց մ'է »: Իրաւունք չունէր և կը սխալէր: Չէր խօսիր և չէր ալ կրնար խօսիլ, բայց եթէ փողոցներուն ծայրը և հասարակաց հրապարակներուն վրայ տեսածներուն համար. հոն, այս՝ տեսեր էր գիտով ճոտմարմաններուն Մարսէլիեզ երգելը և պահանջելով՝ որ ուրիշները գինուորական ջանքեր ընեն, որոց երբեք պիտի չընկերէին. բայց եթէ սուները քիչ մը

նայած ըլլար և զոները բացած, այն տակն պիտի տեսնար ի գործ Պարիզու բուն ժողովուրդը, այն՝ որ իւր փառքը կը կազմէ և իւր պատիւն է. տեսած կ'ըլլար զայն՝ համբերող, աշխատասէր, պատրաստ կրելու զամենայն՝ իւր քաղաքը ազատելու համար, ուրիշ բան չուզող՝ բայց մեռնիլ՝ զայն գնելու համար. և զարմանալով որ իւր բարի կամքը, իւր աներկիւղութիւնը ընդդէմ հակառակ բազդին և մահուան դէմ կռուելու փափաքը ապարդիւն մնացին: Ասոնք՝ երբ անձնատուր ըլլալու թուղթը ստուրազուեցաւ, լացին կրճատեալ հայրենիքը, լացին այնքան իզճերու և անօգուտ անձնանուիրմանց վրայ: Մէկալնոնք — խենթերը և կապիկները — անոնքը՝ որ յետ հաստատուն ազգային պահապանք ըլլալու, քիչ վերջը զաշնաւորաց յառաջապահքը պիտի ըլլային, զոքա կը ցաւէին յիշելով պահանջողական հանգստութիւնքը, խուճերը և ընկերվարչական խօսակցութիւնքը, և կը բարկանային մտածելով և հաշիւ ընելով որ Լակնկորտ հրապարակին կոթողին ամէն մէկ լիպրէն շորս Փրանքի եղեր էր:

Ահաւասիկ համառօտիւ մը տեսնք եթէ ո՛յք էին ապագայ Հասարակութեան գործիք եղող անձինք, կը մնայ մեզ ակնարկ մը ձգել նաև այն ծածուկ իշխանութեան վրայ, որ Կեղրուակիս Յանձնախումբը անուամբ ի սկզբան ծածուկ և ապա յայտնապէս յերևան գալով՝ յախշտակեց օրինաւոր իշխանութիւնը, և երեք ամիսէն աւելի բռնակալեց Պարիզու վրայ սրով և հրով:

Ազգային Պաշտպանութեան վարչութեան հաստատուէնէն քիչ օր վերջը, կը տեսնուէր ի Պարիզ տեսակ մը ծածուկ վարչութեան ազդեցութիւնը: Ընտանեկան խորհրդոց պատրուակաւ, որք Հսկողութեան յանձնաժողովի պաշտօն կը կատարէին, կը խափանէին օրինաւոր իշխանութեան հրամանները, ի կարգի կը գնէին ազգային պահապանաց սպայից ընտրութիւնքը, կը ջանային տիրանալ կուսակցութեանց վրայ և կը կազմին այն խումբերը, յորոց 1871ի Փետրուարին պիտի յառնէր Կեղրուակիս Յանձնաժողովը: Այս ճարտարութեամբ ծածկեալ իշխանութիւնն, թէպէտ արդէն զօրաւոր, ուրիշ շքան չէր ջանար, բայց թէ օրինաւոր իշխանութեան տեղ փոխանակելու: Օրինաւոր իշխանութիւնը խորհեցաւ, բայց



քել ձը ուշ, որ ինքն էր տերը, և թէ պէտք չէր որ այլոց թողու իրեն զէմ մաքառելու, և 1870ի Գեղեճմբեր 10ի հրովարտակով ձը սահմանեց ցրուելու « ազգային պահպանաց գունդերուն և ջոկատներուն մէջ նուիրակներէ կազմուած յանձնաժողովները », և հաստատեց նախկին ընտանեկան խորհուրդքը: Ժողովքները՝ առանց ցրուելու՝ զազարեցին ուղղակի միջամտութենէ մը և սպասեցին պատեհի մը՝ սկսած գործերնին նորէն շարունակելու համար: Այս պատեհը ծնաւ ինքնին յետ Պարիզու անձնատուր ըլլալուն:

Թշնամութիւնք զազարեր էին, բոլոր մեր բերգերը թշնամոյն ձեռքը կը զանուէին, հաշտութեան սկզբնազերք տակաւին չէին վաւերացած, Գաղղիա կը գտնուէր ընդ մէջ իշխանութեան մը որ ալ չկար և ընդ մէջ իշխանութեան մը որ տակաւին չկար. չգիտնալով որո՞ւն հնազանդիլ, մատակարարութիւնք անորոշ վիճակի մը մէջ էին. ամենայն ինչ ցրուեալ և մշտամնաց տարտամութեան մէջ էր: Քաղաքը արտասուելի տեսիլ մ'ունէր, հետևակք, անձի հեծեալք, նաւաստի արձակագէնք յամենայն կարգէ, կամաւորք յամենայն տեսակէ, ազգային պահպանք, շարժուն պահանջք, ամենն ալ կը թափառէին փողոցներուն մէջ ձեռուին ի գրպանի, հրապաննին շեղ ուսերնին, անկարգացած յարեցութենէ և աւրուած յանգործութենէ: Բոտ դաշանց ընդ Գեղամանիոյ՝ կանոնաւոր զինուորացմէ քանի մը հազարք՝ իշխանութիւն տապեր էին պահելու գէնքերնին. ստոնք գգուանք կ'ընդունէին: Բէլիլի, Մոնմարտի և Իտալիոյ փողոցի՝ ազգային պահպանաց ծածուկ նշանաբան մը եղեր էր՝ որ պէտք էր անոնց հետ իբր ընկեր վարուիլ, զանոնք բարեկամ ընել, վասն զի թերևս քիչ վերջը կարևոր ըլլար անոնց զէմ կուռիլ, և խոհեմութիւն էր զանոնք շահիլ: Գինետուն կը տանէին զանոնք՝ աղէկ կողմեր. խօսեցընել կու տային ընդզէմ իրենց զօրավարաց իրենց կը բացատրէին որ մատնուած էին և սպէնտը խնցընելու ատեն՝ միջոց միջոց կը հարցընէին. Այնպէս չէ՞ երբեք ձեր եղբարց վրայ հրացան պիտի չպարպէք: Կը պատասխանէին՝ Երբեք: Խօսքերնին պահեցին Մարտ 18ին օրը:


1871ի Փետրուարի առաջին օրերուն մէջ Հաւնազգային

ընկերութիւնը ներշնչեալ Բլանքիէ, պատշաճ ժամանակ համարեցու՝ ազգային պահպանաց ցրուեալ ոյժերէն խումբ մը միայն կազմելու: Այսպէս կրնար ձևանալ բանակ մը՝ զոր չար նպատակի մը պիտի գործածէր, մինչ չէին գործածած երկրին պաշտպանութեան: Մասձուէցու գաշնաւորելու Պարիզու մէջ գտնուած վաշտեր, թողու անոնց տեսակ մը իշխանակցութեան առանձնաշնորհութիւնք, միանգամայն զանոնք հպատակեցնելով Կեղամանի իշխանութեան հրամանաց: Փետրուար 15ին պատրաստիչ ժողովք մը ծանոյց սպազայ ընկերութեան նպատակն և նշանակքը: Փետրուար 24ին կանոնները ընդունուեցան: Հարիւր տասն և չորս ջոկապք հաւաներ էին և խոտացեր էին չճանչնալ ուրիշ իշխանութիւն՝ բաց ի Կեղամանի Յանձնաժողովոյ, որ այն օրուրէն կազմուեցաւ և Պարիզու մէջ այնպիսի զօրութիւն մը եղաւ, որուն զէմ ոչ մի այլ կարող էր կուռիլ:

Կեղամանի Յանձնաժողովը առաջին անգամ պաշտօնապէս հրամաններ տուաւ Փետրուար 26-27ի գիշերը առ սպայս Զ. բաժանման ազգային պահպանաց՝ ծառայութեան մէջ, և որոնք ի գործ դրուեցան: Բայց իր ոյժը փորձելու և գործունէութիւնը հաստատելու համար՝ երկար ժամանակ պէտք չեղաւ: Ինքն էր որ իր նուիրակաց միջոցաւ կազմեց բազմութեան այն ցոյցերը, որոնք կը շրջապայէին ծառուղեաց մէջ, կը ժողլէին Բասզիլի հրապարակին վրայ, և երգելով կը շրջէին Յուլիսի սեան չորս կողմը: Հոն ազգային պահպանք և ցրուած զինուորք կ'եղբայրանային, մէկմէկու փոփոխակի անթաւաճ մտղանց փունջեր կու տային և աղապակով կ'ողջունէին կարմիր դրօշը, զոր նաւաստի մը Ազատութեան Ոգոյն ձեռքին մէջ անցուցեր էր:

Իր մը՝ որ քաղաքականացեալ ազգի մը համար անկարելի պէտք էր ըլլալ, եթէ չգիտնայինք որ կրօնք, իմաստասիրութիւն և բարոյական, անկարող են ամբողջովին սպաննելու ի մարդ զանբանութիւն, ցըցուց յանկարծակի նաև ամենէն տկարամտին՝ որ Պարիզ յորպիսի վտանգ կը դիմէր: Փետրուար 26ի ամբօք կը խոնէր Բասզիլի հրապարակին վրայ: Ամբօքէն ոմանք ճանաչան և ջըցուցին Ոտտիկանութեան հին փոփոխութիւնը մինչէն ցըցուցին Ոտտիկանութեան հին փոփոխութիւնը, և հարցընէին ի անուամբ, որ նախապատրուած իր փոփոխութիւնը:

86ցմուք զարիզու





ընդունելով՝ փախաւ և կրցաւ ապաւինել Սէնդ-Անդուանի փողոցին ծխափաճառի մը կրպակը. հոն տեղէն զինքը գուրս հանեցին կանոնաւոր զինուորաց 21-ր, 23-ր հետի որսորդացմէ ամանք. որոց գունդերը ձեացեր էին պաշարման միջոց ի Պարիզ խոնեալ ոչ այնքան վատահանալի տարերքներէ: Քարչեցին զՎինչէնցիների մինչև պահանջողաց կայարանը, ուր սպայ մը զինքը տպահով տեղ դրաւ և հրամայեց գոցելու երկաթեայ վանդակքը: Ամբոխը զիմեց պահանջողաց կայարանին վրայ, որուն գլխաւորը արեւթեամբ դէմ դրաւ և չուզեց յանձնել իր կարանաւորը: Սակայն Վինչէնցիների քաջութեամբ մը ըսաւ սպային. « Անգուտ տեղ պիտի ջարդուիք դու և քու մարդիկդ ». և ինքնին բանալով վանդակազուռը, ինքզինքը մտանեց ամբոխին:

Երկու ժամուան չափ՝ զինքը պըտըացուցին սեան պատուանդանին չորս կողմը և այնպէս անգթութեամբ հարուածեցին որ անձանասչելի եղաւ: Փորձեցին զանիկայ կախելու, բայց չկրցան: Չտուրները, սուուրները կապեցին և նետեցին ջուրին մէջ: Արի անձ մ'էր « առիւծի մը ոյժ » պէտք էր ունենալ, կ'ըսէ վկայ մը, որպէս զի կարող ըլլար տակաւին ձիգն ընել յետ այնքան չարահանք կրելու»: Կրցաւ յաջողել ազատել իր կապերէն և լողաց Սէն գետին հասնելու, վասն զի ջրանցքի մը մէջ նետեր էին: Ամբոխը երկու կողմի թումբերուն վրայէն վազելով, կը հարածէր զանիկայ քարերով և թրծեալ աղիւսներով զորս սպիւնքը կտպուած նաւակի մը մէջ գտեր էր: Փոքր շոգեհաւի մը զէկափարը խարխաւնչան մը նետեց իրեն, զոր սակայն չկրցաւ բռնել. շատ արկարացած ըլլալով՝ չկրցաւ հասնիլ անկուած ցիցերուն: Եղբերքին մօտ էր՝ երբ մարդ մը գլուխը ձեղքեց ճանկաւոր ձողով մը, և ուրիշ մ'ալ երեսն ի վեր աղիւս մը նետեց: Թշուաւոր կը շարժուէր առանց այլ ևս զինասկցութեան, աւելի կը ծփար քան կը լողար: Երբն ընթացքէն մղուելով՝ ընկրմեցաւ Իլ Սէն-Ղուրի ծայրի եղած նաւակներուն տակ և ալ չերեցաւ:

Վրայէն առեր էին վերնազգեստը, որուն գրպանին մէջ գտեր էին թղթապահպանակ մը, զոր թղթատելով հետաքրքրութեամբ՝ գտան մէջը իր ծախուց հաշիւքը և այս մտածութիւնը, քաղեալ անչուշտ կրօնական բա-

րոյագրքէ մը. « Փախիր ամպարչտէն, վասն զի իր շունչը սպանիչ է, բայց զինքը մի՛ առեր, վասն զի ո՛վ գիտէ թերևս Աստուած սիրաւ փոխած ըլլայ »: Կը պատմեն որ Բիամարք ամերիկացի լրագրագետի մը հետ խօսելով ըսած ըլլայ թէ՛. Գաղղիացիք կարմրամորթք են: Արդեօք ի՞նչ կ'ուզէր հասկնալ. Լըկուս և Ալէման Թոմս զօրավարաց մահը, Պարիզու հրդեհները, պատանդներուն ջարդը, եթէ Վինչէնցիների տանջանքները:

Ժողովուրդ մը որ կրնայ այսպիսի ոճիր մը գործել կամ տեսնել լուսթեամբ՝ մօտ է կորանցընելու իր ազատ կամոց ուղղութիւնը, և հարկ է՝ որ հսկողութեան մը ներքև ըլլայ, բայց այս հսկողք չկային և կամ անկարողք էին և սարսափածք: Չորեքշաբթի օրը Մարտ 1ին բրուսիացի բանակին գունդերէն ամանք հաստատուեցան Շանգլիլգէի թաղին մէջ: Ազգային ժողովքը գումարեալ ի Բորսօ, աճապարեր էր ընդունելու հաշտութեան սկզբնագիրքը: Գերմանացիք ձգեցին զՊարիզ Մարտ 2ին:

Այս 24 ժամ գրաւման միջոց, որ անձնատիրական փոքրիկ գոհութիւն մը տալու համար էր, Կեղրոնական Յանձնաժողովը և Ազգային պահպանաց դաշնաւորութիւնը կենաց նշան մը չըտուին, մինչ ութ օր առաջ որոշեր էին ընդգիմանալ ցմահ: Գոհ եղան միայն կոշտ պատելու սրճարան մը՝ ուր գերմանացի զինուորք խմեր էին և այրեցին Աստեղ հրապարակին մէջ ձիերուն թուղացած սպրը. արդարև տղայական իր. ինչպէս տղայական էր բրուսիացի սպայի մը Յաղթական կամարին վրայ ատրճանակի հարուած մը պարպելը:

Թշուաւոյն քաշուելէն վերջը՝ Ազգային ժողովքը միաբը դրաւ ամենայն կերպով ջանալ բարեկարգելու երկիրը, և սոճմանեց Մարտ 10ին փոխանակ Պարիզու՝ գումարուելու ի Վէրսայլ: Ազգային պահպանք որ կը յուսային թէ ժողովքը ի Պարիզ գումարուելով, զիւրաւ կրնային գայն նետել ի Սէն, մեծապէս գայրացան և նոր մասնութիւն մը կոչեցին գայս, և նոր օրակարգ մը հռչակեց՝ որ « ժողովքը միապետական է, կ'ուզէ խեղդել զՀասարակապետութիւնը և թագաւոր մը հրատարակել »: Ամենայն դաշնաւոր համազուեցաւ. և պատրաստուեցաւ կռուելու: Գծարդդարար նոյն օրը



Այգային ժողովքը վճարելիք մուրհակաց վերաբերեալ նոր տնօրէնութեամբ մը գայրացուցեր էր զվաճառականս. աւելցընենք նաև Պետրուար 16ի հրովարտակը որ Այգային պահապանաց վճարքը վերուցեր էր և որ ամենէն մեծ պատճառ եղաւ գայրացմանս. վասն զի այդ մարդիկ պիտի սպրէին. աւելի լաւ էր մեծագոյն զոհ մ'ընելով շարունակել այդ եղկելեաց վճարքը քան զանոնք աւելի ևս մղել:

Յեղափոխական լրագիրք կը պնդէին խնդրոյ մը վրայ՝ որուն անտեղութիւնը իրենց չէր երևար. « Թնդանօթները Պարիզու ժողովրդէնէն հանգանակութեամբ շինուած ըլլալով՝ ժողովուրդը անոնց վրայ իրաւունք ունէր: » Փաստ մը՝ որուն հաւատար է ըսելը թէ՛ Պետութեան կազմածք ժողովրդեանն են, վասն զի ժողովուրդը վճարած է անոնց համար: Եւ յերաւի Պարիզու ժողովուրդը՝ իբր սեպհական ստացուածք՝ մեծ խնամք ապրեր էր անոնց և ամեն կերպով ջանացեր էր որ անոնք Բրուսիացուց ձեռքը չինկնան:

Կը պատմեն՝ որ այս միջոցներուս Այգային ժողովքին երեսփոխաններէն շատերը ազաչեցին զՏ. Սէն-Մարկ ժիրարդէն, խօսիլ առ իւր հին բարեկամը Տ. Թիէր, գլուխ վարչութեան, որպէս զի լուսաւորէ զպաշտօնարանը թէ ինչպէս պէտք էր շարժիլ այս պարագային մէջ: Խօսակցութենէն ելլելով, որ երկար տեւց, Տ. Սէն Մարկ ժիրարդէն ըսած ըլլայ իր բարեկամաց « Տեսայ զԹիէր, շի գիտեր ինչ կ'ուզէ, բայց հաստատակէս կ'ուզէ: » Չենք գիտեր որ այսպիսի խօսք մը ըսուած ըլլայ, բայց ճշգրիտ կը նկարագրէ այն տարակուսեալ զայրոյթը՝ որով ըմբռնեալ էին լուսագոյն ոգիները:

Վերջապէս՝ յետ դանդաղութեանց՝ որոց պատճառը սպազայն միայն կրնայ յայտնել, որոշուեցաւ գործելու և ձեռք բերելու ժողովրդեան ձեռքը մնացած Թնդանօթները: Վարչութիւնն ուղղեց տիրել անոնց Մարտ 18ին սասուարը, սակայն ծրագիրնին չյաջողեցաւ: Թնդանօթներէն ոմանք ձեռք բերուեցան ի թաղականաց: Իսկ գունդերը կամ չգործեցին և կամ խառնուեցան Թըշնամային հետ: Լրկոնա զօրավարը՝ որ զօրաց խմբերէն մէկուն կը հրամայէր ինչպէս նաև զօրավարն Կէման

Թոմա, երբեմն բարձրագոյն հրամանատար Այգային պահապանաց Պաշարման ժամանակ, կատաղներուն ձեռքը ինկան, որոնք նախատինքներով և արհամարհական վարմունքներով տարուեցան ի Մոնմարտը, Ոտղիէ փողոցին տան մը մէջ, հոն Կեղրոնական Յանձնաժողովէն ի մահ զատապարտուելով՝ մէկէն հրացանի բռնուեցան:

Կէս օրուան՝ ամենայն յոյս ջնջուեր էր, և յաղթութիւնը կորսուած էր: Թիէր յիշելով որ Վինդիչքրաց յետ-մարտախաղը կուտելով մտեր էր ի Վէննա 1848ի յետ նախ հանկէ արտաքսուելու, հրաման զրկեց ամենայն տեսչութեանց՝ զիմել ի Վէրսայլ, ուր պիտի հաստատուէր մշտամնաց վարչութեան ակթուր: Ինքն ևս մեկնեցաւ յետ հրաման ապու՛ որ պարպեն հարաւային բերդերը և Դոդէլի ջոկատը ի Վէրսայլ կեղրոնանայ, որով հարկ էր թողուլ նաև զՄոն-Վալէրիէն: Այս բերանացի հրամանը կրկնեց և գրեց Սէյրի կամուրջը անցնելու ժամանակ: Վարչական տեսչութիւնք փութով ձգեցին զՊարիզ և իրիկունը ամենայն պաշտամունք զրկուած իրենց զուխներէն՝ խառնակութեան մէջ ինկեր էին: Պարիզ առանց սօտիկանութեան, առանց բանակի և առանց վարչութեան՝ խռովարարաց յանձնուեր էր: Եթէ Թիէր զարմացաւ իր յաղթուելուն վրայ, ոչ նուազ եղաւ Կեղրոնական Յանձնաժողովոյն զարմանքը իր յաղթութեանը վրայ: Եոյն իսկ յաղթողներէն ամանք կ'ըսէին. « Չէինք գիտեր ինչ ընել և շուարած էինք: » Մէկէն վարժարանի մը մէջ գումարուեցաւ ի ժողով և ստճմանեց նոր ծրագրով մը որ իրեն գունդերէն երեքը երթան բռնեն պաշտօնարանքը և քաղքին գլխաւոր մասերը: Այս ծրագիրս յաջողեցաւ, ոչ զի ճարտարութեամբ մտածուեր էր, այլ զի ընդդիմացող չկար: Այգային պահապանացմէ խելացի մաս մը ուզեց հաշտութեան ճամբով մը ներկայ և սպազայն արխանահեղութեան դիմայն աճնուլ: Առանց զինուոց, եռագոյն դրոշով մը Պէ փողոցէն սկսաւ երթալ զէպ ի Վանդոմի հրապարակը, զոր բռներ էին Տի, 176դ և 125դ վաշտերը զինեալ Թնդանօթներով, որոց կը հրամայէր Բիստն անուամբ զօրավար մը: Քաղաքացուց խումբը խաղաղասիրական նպատակաւ մը կը



կանչէր « Կեցցէ խաղաղութիւն, կեցցեն կարգք, կեցցէ ժողովն Ազգային »: Սակայն ի մտանց հրացանի հարուածներով ընդունուեցան և 13 մեռեալք և բազմաթիւ վիրաւորք հասկցուցին Պարիզու ժողովրդեան սղջամիտ մասին՝ որ չափաւորութեան ամեն յոյս վերցուեր էր. նա մանաւանդ Կեղերնական Յանձնաժողովը վճռեր էր՝ որ Վանդամի հրապարակին մարդասպանք « արժանաւորք գտնուեր էին հայրենեաց »:

Պարիզ տակաւին սպառնալով որ պիտի յաղթէ, և Վէրսայլ հաստատամիտ նորէն ձեռք բերելու Գաղղիայ մայրաքաղաքը, կը փութային կռիւր սկսելու: Ապրիլ 21ի դաշնաւորք և բանակին գնդերը ձակառ առ ձաւ կատ գտնուեցան ի մեծուղին Կաբրըլուայի: Յետ այսքան խաբուելներու, զեռ կրակը չսկսած՝ ուղեցին փորձ մ'ընել սպըստամբները հրաւիրելու խելքով մը տածելու և հնազանդելու օրինաց: Պտաքիէ բանակին վիրաբուժապետն, իր շքազգեստով, կրելով ճիւղերայի խաչը բազկին և գլխարկին վրայ, յառաջեց բանախոսելու. անմիջապէս սպանուեցաւ: Անկէ վերջը պատերազմը անողք եղաւ: Ապրիլ Յին Հասարակութիւնը ուղեց չուել Վէրսայի վրայ, և ի գործ դնել այն հուշակաւոր պատերազմական ծրագիրը, որուն համար իր զորավարացմէ մին Վիլլիէ՛րբեմն ծովային տեղապահն ըսած է. « Քաղաքագիտօրէն մտածելով՝ այս յարձակումը յիմարութիւն էր, զինուորապէս և ոչ մի քննադատութեան արժանաւոր »: Ի Շատոյեան Գիւլիպ զօրավարը ձեռք բնկաւ և անմիջապէս հրացանի բռնուեցաւ. Գլուրէն՝ որուն գնդերը խառնաշըփաթ ցրուեր էին, սպաւինեցաւ պանդոկ մը՝ Շատուի կամրջին քով. հոն յայտնուեցաւ և ձանջուեցաւ երբ կը ծախէր. պահապանաց հարիւրապետ մը ստկրով մը գլուխը ձեղքեց: Կանտաւոր բանակն ալ դաշնաւորաց օրինակին կը հետեւէր: Կրկու կողմանէ եղբայրական կռիւ մ'էր: Եւ որովհետեւ կռիւր յետին ծայրը պիտի մտուէր, անոր համար ջանացուեցաւ պատերազմալ ամբարձր միջուկ մինչև ի յետին յիմարութիւն, շինարուեցաւ ոչ սուտի, ոչ սպառնալեաց, ոչ շոյններու, ոչ արծաթի և ոչ օդոյ: Պարիզ երկու ամսուան չափ մտկոյն և կատաղի գինովութեան մէջ էր:

Քիչ վերջը ընարութիւնք կատարուեցան, որոնք Հասարակութեան արտաքին օրինաւորութեան ձե մը տալու համար էին: Ընարութիւնք հաստատեցին ղՀասարակութիւնը որ անմիջապէս կը յաջորդէր Կեղերնական Յանձնաժողովոյն. սա խոստացեր էր ետ քաշուելու, երբ իշխան ժողովուրդը խօսէր. իշխան ժողովուրդը խօսեցաւ — շատ աւելի սղեկ կ'ընէր թէ որ լսէր: — Բայց և Կեղերնական Յանձնաժողովը չուղեց ետ կենալ իր պահանջներէն. զանիկայ գոհ բնելու համար էր աւելի այն բազմաթիւ նոր կազմուած յանձնաժողովքները՝ Յանձնաժողով Հասարակաց փրկութեան, Յանձնաժողով հրազինուց, Յանձնաժողով պատնիշաց, Յանձնաժողով պաշարուց, Յանձնաժողով զինուորական հանդերձանաց, Յանձնաժողով հասարակաց սպահալութեան, Յանձնաժողով Կեղերնական, Յանձնաժողով ամեն աւսակ և Յանձնաժողովք հնացեալք, սրբ կը նախանձէին մէկմէկու, կ'ատէին մէկզմէկ, և պիտի սկսէին մաքրել մէկզմէկ, երբ Գաղղիա մտաւ ի Պարիզ:

Ամենէն անարգարանալի գործեր, չէին գարշեցըներ խղճմտանքները. նա մանաւանդ կը գտնային հաւանողներ: Ապրիլ 19ին Մոնարարը որմոց վրայ կալուցին այս գարշութիւնը. « Արովհետեւ քահանայք աւագակք են, և եկեղեցիները սպաւէնք՝ ուր սպաներ են բարոյսայէս զժողովուրդս՝ խոնարհեցըներով զԳաղղիա Բուսպարաւներու, Գալիի և Տրոյի ճիւղաններուն ներքեւ, քաղաքական նուիրակն աէ Կարբիէրի, երբեմն Ռատիկանութեան պարտտոն մէջ, կը հրամայէ՛ որ Ս. Պետրոս Մոնարարը եկեղեցին գոցուի, և կը վճռէ կարանաւորելու քահանայքը և տգիտութեան եղբարքը »: Ստորագրեալ լլ Մուսուի: Եթէ ժողովուրդը անտարբեր էր այս յիմարաբանութեանց, սակայն վստահութեամբ և առանց մտածելու կ'ընդունէր ինչ որ իրեն կը պահային: Զանիկայ Վէրսայի կամ Վէրսայցուց գէմ, ինչպէս կ'ըսէին այն ատեն, ստեղծութեան մէջ պահելու համար, սուտ չմնաց որ չկայեցըներն: Զոր օրինակ՝ Այն բանակը՝ որուն կը կուսէին յառաջապահք, կազմեալ էր ի քաղաքական պահապանաց, միաբանութեամբ Շարէֆի և Գաթլինոյի աւագակաց, կը յառաջէին սպիտակ գրոշով « Կեցցէ Հենրիկոս Ե » կանչե-



լով: Կղերանոցք և Քրիստոնեայ վարդապետութեան Եղբարք զինուորներ էին յետ ուխտելու՝ հաստատել նորէն աւատական իրաւունքները. Գիւղացիք՝ որոնք ամենն ալ անխախտ հպատակեր էին Պարիզու Հասարակութեան, երեքմանեայ հարուածներ կ'ընդունէին ի զինուորաց, որոնք կը հնազանդէին Վէրայլի աւագաններուն հրամանաց. Ծովային զինուորք կայինի հարուածներով հետևակաց երկու գունդ ջնջեր էին: Մինչ այսպէս կը խաբէին զպարուշ դաշնաւորս, ուրիշ կողմանէ կը ջանային անոնց անձնասիրութիւնը շողբորթելու: Յէլէքս Պիա առանց ինտայու կը գրէր վանժօր լրագրին մէջ՝ որ Հասարակութեան Պարիզը « Եփեսոս էր յառաջագիմութեան, Մէքքէ ազատութեան և Հատլմ մարդկութեան »: Այս թանձր խոնկերը, այս հասարակ ճոտմութիւնքը կը թափանցէին անկիրթ մրաքերու մէջ և հոն կը փորագրուէին. կը բորբոքէին աւտելութիւնը և յայտնի է որ մեծ ազդեցութիւն ունեցան մուսուլման և կուռնի տեղութեան վրայ:

Այս կռիւր մենք հոս պիտի չպատմենք. սակայն տեղութիւնը բացատրելու համար պէտք է ըսենք թէ ինչ տարերք գործածեր էր Ազատամբութիւնը Մարտ 18էն վերջը ընդդիմութեան համար. զօրուոր տարերք մը՝ որ կրցաւ գիմանալ երկու ամիս պատերազմի և եօթն օր ճակատամարտի ի Պարիզ: 1047 կտոր հրանոթ ունէր, քսան և եօթը տեսակ, զորս ամեն անգամ չկրցաւ օգտակար ընել պաշարուց բաշխուելուն խառնակութեան համար: Գուրս հանելով եթէ յառաջապահին եթէ բերդերուն և եթէ պարսպօրանց մէջ գործածուած հրանոթքը, երբ օրինաւոր գունդերը Պարիզ մտան 727 հրանոթք փողոցները պաշտպանելու համար գործածուեր էին: Հեծերազօրն աննշան էր և երբեք 449էն աւելի ձի չունեցաւ: Ընդհակառակն հետևակը բազմաթիւ էր: Քսան լեզէնք, կազմեայ 254 վաշտերէ, կը բաժնուէին ի գործող և ի պահպանող խումբու: Առաջին մասին մէջ կային 3649 սպայք և 76,081 զինուորք, երկրորդ մասին մէջ 106,909 անձինք, որոց կը հրամայէին 4284 սպայք, որով ընդ ամենը կ'առաւելուր 192,000 թիւը. ուսկից պէտք է հանել 30,000ի չափ անձինք որոնք կրցան միշտ յաջողիլ ծառայութենէ

փախուտ տարու: Ընդ ամենը՝ Հասարակութիւնը ունեցաւ 140,000էն մինչև 150,000 կուռններ, զորս ինքը վարեց թէ ի ներքս և թէ արտաքոյ Պարիզու:

Այս բազմութեան վրայ պէտք է աւելցնել 28 ազատ գունդեր ալ, ազատագնացք, գործողք վայրկենական ազդեցութեան համեմատ, և ոչ ուսեք հնազանդողք: Իրենց յարափոխ թիւը Մայիսի կէսին վերջերը կը հասնէր 10,820ի՝ հրամայուած 310 սպաներէ: Ամեն տեսակ և ամեն կարգի մարդիկ կային մէջերնին, որոնք սարօրինակ անուանակոչութիւններ կ'ընտրէին, Տարբոսք Հասարակութեան. Լրտեսք Բէրթըրէի, Մանկունք Պարիզու, Մանկունք Պէր-Գիւշէնի, Զածածք, Սրիկայք, Արձակագէնք Մարտէյլեղի, Կամուորք Յուլիս-Սեան և վրիժառուք Յուրէնտի, զորս ժողովուրդը կը կոչէր — սիլ ժողովուրդ սպերախա — վրիժառուք Յուրանտի՝:

1. վրիպակաւ տարով խառնոյ քաղքին անունը:



Ա .

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՌՐ ԱՆՁԻՆՔԸ

ՈՒՍՈՒԼ ՌԻԿՈՅ . — ԹԷՈՅԻԼ ՖԷՐՐԷ . ԻՐԵՆՑ

ԱՆԳԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՎԵՐՁԸ :

Յանաւն ազատութեան յաղթող ազատամբութեան մը երկրորդ առաւօտը, ոչ որ կ'ըսէ ինքնիրեն « Ազատ եմ » այլ իւրաքանչիւր որ կ'ըսէ « Տէր եմ » : Շատոնց ի վեր Վամբնէ հրատարակած է այս ճշմարտութիւնը իր Մտածոչրեանց մէջ 1841ին գրելով . « Ոչ որ կ'ուզէ հնադանդիւ և ամենքը կ'ուզեն հրամայել : Հարցնուր հասարակապետականին իր գաղտնիքը . իր գաղտնիքն է իշխանութիւն և յաղթանակ իւր կարծեաց և շահուն . ինքնիրեն կ'ըսէ . երբ ես թագաւոր պիտի ըլլամ : Հոն է իր հասարակապետութիւնը » : Հասարակութեան մարդիկ այս մտտին ամեն չափ անցուցին . իւրաքանչիւր որ օրինաւոր իշխանութեան ձեռաց մէջ կոտորատած իշխանութենէն մաս մը տուեր էր, և յեղափոխական երևնալու պատրուակաւ իւր խելաց համեմատ կը գործէր : Այս իշխանութեան մասերն ինքնակամ գործաց, կալանաւորութեանց համար աւելի կը գործածէին, և սրաց պատճառը անկարելի է շատ անգամ բնութեան թէպէտ նրբին խկ քննենք : Ասիկայ յայտնի կ'երևայ, երբ մէկը աչքէ անցընէ Պանպանց (Dépôt) Ռատիկանոչրեան մօտ կոչուած բանտին տեսրը : Այս տեսրակաց մէջ մրցում մ'ալ կար . իւրաքանչիւր որ կ'ուզէր ստորագրել իր թուղթը, իր կնիքը զարնել և իշխանապետութենէն գործել :

Մարդ կ'ապշի տեսնելով որ այն անձինք՝ որք կը համարէին թէ իշխանութիւն ունէին անհատականաց ազատութիւնը վերցնելու, որքան բազմաթիւ էին և ինչպիսի անձինք : Կեդրոնական Յանձնաժողովոյ ամենայն անգամ, Հասարակութեան ամեն անձն՝ ուշադիր էիր կնքագիրներ ձեւացնելու . պաշտօնարանին նաւիրակք, Պարիզու բերդօրէից հրամանատարը, իւրաքանչիւր շրջանակի զինուորական հրամանատարը, Հասարակութեան գործակալը և իւր փոխանորդք, ստիկանութեան պաշտօնատարք, հարցաքննիչ գատաւորք, (յորոց կային աստղճագործութենէ տունուած, ինչպէս ժանդոն, կամ զարոցի մի գրատախտակէն ինչպէս Բարալ), ստիկանութեան գործակատարք և խաղաղութեան գատաւորք՝ այս օրինազանցութիւններով գոհ չէին ըլլար : Ամենայն շրջանակ ունէր դարձեալ իր անաւտիչ յանձնաժողովը՝ որ կը բաժնուէր հսկողութեան յանձնաժողովներու, որոնք կ'անուանէին զնուիրակս . նաւիրակք, յանձնաժողովք հսկողութեան, յանձնաժողովք անաւտական՝ փոփոխակի կը մրցէին բանտարգելութեան հրամաններ տալու : Ասիկայ դեռ բաւական չէ . կար սակաւին Պարիզու մասերուն բաժանմունքը և ալ զային պահապանաց ընտրեալ զխաւորք՝ տէր էին անոնց . ոչ միայն իրենց խելքին փշածին համեմատ բանա կը նետէին իւրաքանչիւր թաղի արգելաբանին մէջ՝ զով որ կ'ուզէին, այլ և կալանաւորեալ անձինքը ուզած բանտերնին կրնային զրկել : Խոհեմութիւն չէր լեզուանաց այս գլխաւորներէն ոմանց ընդդիմութիւն ընել : Աէրիկիէ ամբողջ Հասարակութեան միջոց սարսափեցուց պարիզական իններորդ շրջանակը . որով և տիրած էր Սանտէ բանտին, և իր յանցանքը չէ՝ թէ որ պատանդները հոնկէ սղ ելան :

Հրամաններուն անբանութիւնը անբացատրելի է : Շարլ Ռիէլ՝ ստիկանութեան անցագրոց ապագրատեալ Ազրիլ 17ին հրաման մը տուած է, զոր կրնանք օրինակ համարել այս ժամանակի մասմուրուութեանց . « Բնէք քաղաքական նաւիրակ, գործելով գորութեամբ իշխանութեան՝ որ մեզ արուած է, խորհելով՝ որ օրէնքը կ'արգելու Պարիզէն ելլալու 19-40 ամեայ անձանց . . . կը հրամայենք : Պահանջողաց կայարանի



ամենայն զլիսաւորք՝ մեր փոխան-նաւիրակաց հրամայելուն պէս՝ պէտք են տալ կայարանին մատակարարել կրցած զօրութիւնքը... Ամենայն անձն որ ընդդիմանայ՝ անմիջական ժողովքով մը հրացանի պիտի բռնուի, եթէ պէտք է»։ Եթէ խտտութիւն կար — և կը տեսնանք սրչափ — խոհեմ մարդկանց զէմ, ուրոնք Հասարակութեան ծառայելու պարտականութենէն կը փախչէին, մեծ ներդրամութիւն կար չարագործաց համար։ Ժան Մարի Օլիվիէ 1871 Յունուար 8ի պատժական դատարանէն վեց ամսուան բանտի դատապարտուեր էր գորութեան և հասարակաց զօրութեան պաշտօնէից նախատինքի համար։ Հասարակութիւնը իշխանութեան հասած ժամանակ գանձիկայ գտաւ ի Ահնա-Պէլաժի բանառ. հոնկէ ելաւ այս հրամանով, որուն ահաւասիկ բնագիրը. « Հրաման սղատելու զկուչեցեալն Օլիվիէ Ժան Մարի դատապարտեալ պալլարի վրայ տաքնալու փայտ գողնալուն համար. ըսա իս ան նըշան իր մը։ Հրամանատար բերդի՝ Ռէվոլ։ Հրաման ազատուելու գնա՝ Է. Գիւվայ (անթուական) »։ Ըստ կանա պատմութիւն տալը եղեոնական յանցաւորաց՝ սովորական իր մ'էր Հասարակութեան համար, ինչպէս պիտի տեսնանք։

Գիտէ ամենայն ոք՝ որ կալանաւորութեան մը հրամանն պէտք է պարունակէ անոր պատճառը, ստիկայ սպառնալութիւն մ'է կալանաւորելոյն և պատասխանատուութիւն մը կալանաւորել տուող իշխանութեան պաշտօնէին։ Հասարակութեան միջոց՝ փոխուեցան այս ամեն բաները։ Անպատճառ բառը շատ անգամ բանտարգելութեան հրամաններուն մէջ կը հանդիպինք. երբեմն պատճառքն ծաղրական են. « կտակոծուոր, — կտակած՝ որ ժամկոչ է, — քաղաքագիտական գործ, — պատին վրայ կպցուած հրովարտակէք պատուեր է, — վիրաւորներ ժողովելու վրայ էր (Միշէլ Աւար, 4 Ապրիլ։ և այլն)։

Կրնայինք անխերճանալի կերպով շարունակել այս անմտութեանց շարքը։ Երբ Բոնժան նախագահը կը արանջար կարանաւորուերուն համար, Ռասու Ռիկօ պատասխանեց. « Արդարութիւն չէ ըրածնիս այլ յեղափոխութիւն »։ Էհ, չէ, և ոչ իսկ այդ. անպիտան եւ չար էին, և ահա ամենայն ինչ։ Թերեւս միայն սինը-

քոր ըսէինք, եթէ այդ տեսակ հրամանով բանտարկեալ անձինք անգթարար շարչարուած չըլլային։ Բայց ահա գէշը. « Սենակ Ոստիկանութեան, 3 Ապրիլ 1871, Տեսուչ քաղաքային Պահպանոցի բանտին, գորանի բանալը զիբ Ժան Լուի խաղախորդը և ուտելիք մի տար մինչև որ խտտութեան թիւներ ընէ։ Սկզբնական գործակատարին տեղ, խաղախորդեան դատաւորը՝ Ֆէլիքս Հանրի »։ Հասարակութիւնը նշանաւոր է նաև զուղղագրութիւն, զքերականութիւն, և զօրինականութիւնը արհամարհութեամբ մէկդի ձգելուն համար. վկայ են այդ իրին՝ հրդեհէն փախած ձեռագիրները։ Երբեմն զարմանալի սխալներ կը գործէ, և այս նիւթոյս վերաբերեալ, (ընթերցողը թո՛ղ ներէ մեզ յիշելու անձնական զէպք մը ի վկայութիւն մեր ըսածին), ձեռուընիս փոքրիկ գրութիւն մը կայ այս իմաստով « Հրաման Հասարակաց փրկութեան Մագաս բանտը տանելու զՏ. Մաքսիմ Գիւկան. Ստորագրեալ՝ Ժ. Ռանվիէ. Ֆէոս. Գամբոն. « Հրաման առ Տեսուչ Պահպանոց բանտին՝ ընդունելու զՄաքսիմ Գիւկան, կալանաւորեալ հրամանաւ Հասարակաց փրկութեան։ Ստորագրեալ՝ Ա. Ռէնեար »։ Ամբողջը զարգարուած երեք կնիքներով, յորոց երկուքը կարմիր և մէկը կապոյտ։ Փոխանակ նշանակեալ անձը բռնելու, Ռիվոլի փողոցին և Օթէլ-Դը-վիլի հրապարակին անկիւնը բռնեցին Կեղրոնական Յանձնաժողովոյ անդամներէն մին՝ Ալֆոնս Գիւկան աւուսամբ, զոր իր անուանակիցն երբեք չէր ճանչնար, եւ բանտարկուեցաւ Ոստիկանութեան Պահպանոցին մէջ ուր Թ. Ֆէրրէ եկաւ իրեն իմացընելու՝ որ հրացանի պիտի բռնուէր։ Գաղղիացի բանակին մերձենալովը կըրցաւ այս դժբաղդը բանտէն փախչել։ Այս սխալը նշանակեցինք, որոյ փաստը ձեռքերնիս է, բայց տակաւին քանիննր, որոց վերջը թերեւս անգարմանելի եղաւ, են և պիտի մնան անձանսթք։

Ինչպէս ըսինք՝ իւրաքանչիւր ոք իշխանապետի պաշտօն վարելով՝ իրեն պատիւ կը համարէր բանտերը լեցնել։ Բայց ամենէն աւելի երկու հոգի, զորս պէտք է ծանօթացնել, այս սղբերգական կատակերգութեան մէջ առաջին դերը խաղացին։ Երկուքն ալ զինեալ յանդգութեամբ մը՝ որ ծնունդ է միայն յետին անբաւ-



բայանութեան, առանց կրթութեան մը, բայ յայն-  
մանէ զոր արուած էին գարեջրոյ ասնց և գինեատուն-  
ներու մէջ, Հասարակութեան ամենայն անօրէնու-  
թեանց գործադիրքն եղան: Մինն է Ռատւ Ռիկօ,  
միւսն Թէոֆիլ Ֆէրբէ. երկուք ալ 25 տարուց մօտ և  
բիտասարգք, որոնք շարը գործեցին ի սէր շարին:

Ռատւ Ռիկօ բերտ մանչ էր, անհոգ, մաղերը և մօ-  
րուքը խառնափնդօր. հաստատուն ուսերով, կարճ սը-  
րունքներով. կարճատես, աչքը շիւ հայտլ, քիթը ա-  
նամօթ, բերանը զգայալիր, միշտ քիչ մը գինով, խօ-  
սող, պոռայցող, ձեռքերը շարժող, միշտ քթախոտ ունչ-  
քերը լեցնելով, վախցընող գնորեկս իրեն ճամարտակու-  
թեամբ, գրեաթէ երևելի Էկօլի թաղին մէջ և շատ  
յարգեալ հասարակ աղջիկներէն: Ահա-աշակերտ կէս-  
լրագրագիր, անկամ աշխատութեան, առանց հանճարոյ  
մը մտանապարտութեան, իբրև հաստատուն ճշմարտու-  
թիւններ՝ կրկնելով Ամի դի: պեօպլի՝ և Պեր Գիւշեկի մէջ  
եղած յիմարարանութիւնքը, ուժով մարդու մը գաղափար  
տուեր էր, վասն զի կոշա էր, արի անձի մը՝ վասն զի  
անգութ էր, խելացիի տեղ զրուեր էր՝ վասն զի մե-  
ծաբան էր: Ապարութեան վերջերը մէկ քանի կրած  
գատապարտութեանց համար, զորս ստացեր էր յօ-  
ղուածներ հրատարակելով այն սակաւակեաց փոքրիկ  
լրագրոց մէջ, որոնք այն միջոցին կը կոչուէին լրագիրք  
« ճախ արունքին », առիթ ունեցաւ քիչ մը « մարտիրոս »  
ըլլալու, և վրէժխնդրութիւն մը մտածելու « բռնաու-  
րութեան սրիկաներէն » յանուն իրեն նախատեալ սկզբ-  
բանցը:

Վստէն թաղին աննշան խոտիութեանց միշտ յուզիչ-  
ներէն մէկն էր, ինչպէս և ամիթիթէատրոնի շփոթու-  
թեան. կը քաշէր խոտարարները, և մատով կը սպառ-  
նար իրեն հետեւի շուղողներուն. կ'ըսէր անոնց « Գո՛ւ...  
ես քու գլուխդ պիտի կտրեմ »: Նոր տեսակ արդարութիւն  
մը հնարած էր, զոր կը կոչէր դատ աննաւասարից:  
Հայրերը պիտի գատուէին յորդուոց, զինակիրք ի կա-  
լանաւորաց, սպաք ի զինուորաց, գատաւորք ի գատա-

1. Բարեկամ ժողովրդեան, լրագիր մը ճայրայեղական:

պարտելոց, կիշտիներ իրեն համար դանդաղ կ'երևար  
և հին. անոր տեղ կ'ուզէր ելէկարական բաղխումն դնել,  
որպէս զի դուրաւ կարենայ մէկ վայրկեանի մէջ հինգ  
հարիւր միտպետականեր մէկէն սպաննել: Ար խնտային  
այս մտածութիւններուն վրայ, կը համարէին որ այս  
բուն լեզուն երիտասարդութեան արգիւնք մ'էր: Այդ  
մարմնեղ կարճ մարդը, բարձրաձայն կը պատմէր իր  
ցնորքները, և գիացաւ զանոնք ի գործ դնել:

Գլուխ էր սակաւաթիւ խմբի մը՝ որ ուրիշ տէր չէր  
ճանչնար, բայց միայն զանիկայ՝ զոր սովորաբար կը  
կոչէին Ծերը, այսինքն Բլանքի: Արդ Բլանքի աղէկ  
գիտէր Ռիկօյի ինչպիսի ոք ըլլալը, և կ'ըսէր՝ որ « ի-  
բրև մարդ՝ սրիկայ մ'է. բայց առաջին կարգի խու-  
զարկու տատիկան մ'է »: Եւ յերաւի այսպէս էր: Ռատւ  
Ռիկօ բնական սուրք մ'ունէր տատիկանութեան, և  
սպահով եմ որ թէ սպրած ըլլար՝ իրեն տիրող փա-  
փաքին տեղիք տալով՝ գաղանի գործակատար մը պիտի  
ըլլար, նման գաղտ որսորդայ՝ որք որսապահք կը վեր-  
ջանան: Մասնաւոր զիտած էր Ռատիկանութեան վե-  
րակեցունները, կը ճանչնար զանոնք՝ որք կը հսկէին  
բարուց, սպահովութեան, բնակարանաց, խուզարկու-  
թեան գունդերուն: Ար վախէր քննութեանց վրայ ե-  
ղողներէն, որոց գլուխ էր Տ. Մարտէլլ և գիտէր լաւ  
պարսպի հանել Վազրանժի մարդիկը, որոնց յանձ-  
նուած էր Ռատիկանութեան պալատան քաղաքապետա-  
կան հսկողութիւնը: Իրեն համար մեծ ուրախութիւն  
էր հետեւի անոնց, զանոնք խաղցընել, անոնց հետ խօ-  
սակցութեան բռնուիլ, զանոնք թաղին գարեջրոյ տուն  
մը ամնիլ և գինովցնել:

Իր յատուկ տատիկանական զիտաւորութեանց համար  
միայնակ բաւական չէր, իրեն նման աշակերաներ կը  
գտնէր և կը հրամայէր տեսակ մը գնդի՝ որ և շատ  
անգամ մրցած է կանոնաւոր ոտտիկանութեան հետ:  
Իւր մեծ զբաղումն էր հետևողացը սարուեցընել այն  
ծածուկ գործակատարները, յորոց պէտք էին վախնալ.

1. Ռատւ Ռիկօյի հոգը անճասպան եղած է ի Պարիզ. յամի-  
1878, Մայիս 12:



անոր համար իրենց պէտք էր ցուցնել. այդ բանին համար ստէպ մէկ երկու զեռ ձեանալիք բարեկամներով՝ երեկոյեան ժամը տասնումէկին կամ առաւօտեան մէկին քարշ կու գար Ռատիկանութեան պարատին շըր- շակայքը, զններով անցորդները ճանչնալու համար՝ և Ռատիկանութեան պատկանողները ցուցնելով իր աշակերտաց: Պայծառ լուսնով գիշեր մը, երբ երկու նոր աշակերտներով կը շրջագայէր Օրֆէվրի սալալատակին վրայ, տեսաւ որ կու գար Լագրանտ. ստիկայ այ ճանչցաւ զՌիկո, բայց չտեսնելու պէս ձամբան շարունակեց զէպ ի փողոցն Ժէրիւզայէմ: Ռիկո՝ զոր Բլանքի աղէկ դատած էր, և ստուգիւ սրիկայ մ'էր, չկրցաւ ծաղրածութիւն մը չընել. երկու ձեռքերը փողի ձեռով միացուց բերնին չորս կողմը և պոսաց « Բարե Լագրանտ »: Յետինս դարձաւ, զէպ ուղիղ եկաւ առ Ռիկո, որ իւր երկու բարեկամաց մէջ էր, և կեղծելով որ յանկարծակի ճանչցաւ, ըսաւ իրեն. « Ահ, դո՛ւն ես. ուրախ եմ զքեզ տեսնալուս. ոստիկանապետը զայրացեր է. փութով զրկէ քու տեղեկութիւններդ, ապա թէ ոչ՝ այս ամիս քեզ շնորհք մը չկայ »: Յետոյ դարձուց երեսը և հեռացաւ: Քանի մը քայլ ընելէն վերջը դարձաւ, և տեսած տեսարանը արգարե արժանի էր ծաղու: Երկու նորուսները զՌիկո գետինը պատկեցուցած կը ծեծէին զանիկայ լրտես մը համարելով: Լագրանտ այն աստե՛ն բոլոր իր ուժովը պոսաց « Բարի երեկոյ Ռիկո », և մտաւ Ռատիկանութեան պարտուր:

Եթէ իր վրայօք աւելագոնց բաներ ըսուեր են, պէտք է ճշմարտան ըսել որ երբեք մարդ խարել ուզած չէ. ամբողջովին ինքզինքը կը յայտնէր և հպարտութեամբ մը կը ցուցնէր՝ զինքը այրող ատելութեան խայթերը: Կ'արհամարհէր փռաստիրաց սովորական պատուակները, չէր խօսիր հաւատարութեան և ազատութեան վրայ, ևս առաւել եղբայրութեան վրայ. կ'ըսէր « Երբ մենք տէր ըլլանք... երբ մենք իշխանութեան հասնինք »: Քաղաքական դատաստանի մը մէջ յորում պարտաւոր զանուեր էր, երբ Տ. Լք Պէլլատիէ՝ կայսերական փաստաբանը (զոր միշտ հասարակաց ամբաստանիչ կոչեց) ներել խորհուրդ կու տար վեցերորդ առեանին, սակաւին իր մատաղ հասակին համար, Ռատու

Ռիկո զինքը ընդհատեց « Կը մերժեմ ձեր ներումը, վասն զի երբ ես ալ իշխանութեան հասնիմ, ձեզի պիտի չընէրեմ »: Կ'արհամարհէր զՌաբէսպիէր, զոր շատախօս կ'անուանէր. տկար կը գտնէր զԱէն-Ժիւստ, և զԿուլթոն հինգամ գաւազանի զուլի կ'անուանէր:

Ամբողջ գաղղիական Յեղափոխութեան մէջ երկու մարդու վրայ կը զմայլէր՝ որք էին Լըբէր և Մարա, նենգաւոր մը և զոզ մը. կ'աշխատէր անոնց հաւատարելու, և սակայն գերագոնցեց: Կապայի մը կամ եկեղեցւոյ մը տեսքը զինքը կը կատողեցնէր. ինքն ես սիրով « խզած կ'ըլլար յետին քահանայն՝ թագաւորաց յետոյն աղիքներով »: Երբեք սուրբ և սրբուհի բառը չարատանեց. փողոց Կա-Միշել՝ կ'ըսէր, փոխանակ ըսելու փողոց Աէն Կասէնթ, Աէն Միշէլ: Այս տղայութիւնները կը զուարճացնէին և երբեմն դժուարըմբողջ նելի բառարան մը կը կազմէին. բայց ասով զարմանալի համբաւ կը ստանար, որով կը պարծէր վասն զի ճայի մը պէս սնուարծ էր: Չի գիտցուիր լաւ թէ ինչ միջոցներով կ'ապրէր. այս բանին նկատմամբ շատ չար շոյններով կ'ապրէր. այս բանին նկատմամբ շատ չար շոյններ լուսած են Լատեն թաղին մէջ, բայց մեր ունեցած ոչ մի վկայագրութիւն՝ կարող են գտանք ճիշդ համարել: Ըր շրջանակին մէջ 2175 քուէով, (թէպէտ նշանակեալ ընտրողաց թիւն էր 17,825) կ'անուանուի նա անգամ Հասարակաց Ազատութեան: Ապրիլ 25ին յետ բուռն տեսարանին Հասարակութեան, խորհրդին մէջ կը հրաժարի Ռատիկանութեան նուիրակութենէ: Վէզինիէ, Պիլլօ, Ռաստուլ կ'առաջարկէին հետեւեալը. « Հասարակութիւնը յանուն մարդկային իրաւանց, կը վճռէ գաղտնեաց բարձումը »: Ռասուլ Ռիկո զէմ կը կենայ առաջարկին. իրեն կ'ըսեն՝ որ գաղտնիքն անբաւ լոյսական է. կը պատասխանէ. « Ինձի ինչ հոգ՝ երբ պէտք ունիմ. պատերազմն ալ նոյնպէս անբարոյական է, և սակայն կ'ընենք մենք »:

Քաջուեցաւ պաշտօնէն. բայց Գաղղոյ Յեղափոխութեան պաշտօններէն մէկը իրեն համար յարուցանելով. Ապրիլ 27ին ինքզինքը անուանել սուաւ Գործակալ Հասարակութեան, որով ըստ գասակարգութեան զուլի եղաւ իր տեղն այնողին որ էր Կուրնէ: Ռիկո՝ յետ թողլու իւր նախընթաց ոստիկանապետին սենեակները,



գնաց բնակելու Վճռալին՝ Ատենին ընդհանուր գործա-  
կալին բնակարանը, միշտ դաշնաւորաց հրամանատարի  
հագուստով և քիչ մը աւելի կոկիկ՝ յետ սրոյ պարան  
եղեր էր: Երբեմն ինքնին կը նախագահէր իրեն հրա-  
մայեալ խուզարկութեանց: Հասարակութեան միջոց՝ Տ.  
Սանճաքովի բնակարանին եղած 17 խուզարկութեանց  
երեքին ինքն էր գլուխ:

Ռատիկանութեան պայտաէն անցնող Հասարակու-  
թեան անդամք՝ երբէք ժուժկալութեան և բարեխառ-  
նութեան մէջ նշանաւորը չեղան: Զօրավարն Գիւլալ,  
Ռսուլ Ռիփօ, Կուրնէ՝ առատութեամբ կուտէին, նոյն-  
պէս ալ կը խմէին. երեկոյեան ընթրեաց միջոց երե-  
կոյթներ կու տային և կը մտանային ժողովրդեան քըր-  
տինքը: Կարեւոր է գիտել կերակրիչ Մարդէնի հաշիւքը,  
որ իրենց սեղանը պատրաստողն էր: Ապրիլ 21ի 1871  
տարւոյն, վճարեալ է և ընկալեալ ի Ռըպլան քաղաքացւոյ,  
գլխաւոր արկղատահ, տասը հաղար ու հարիւր յիսուն  
երկու ֆրանք գումարը մինչև Ապրիլ 22 տուած կերա-  
կուրներուն համար. միջին հաշուով օրը 228 ֆրանք 61  
հարիւրորդ, որ ըսել է՝ տարեկանը պիտի ըլլար 83,406  
ֆրանք: Կան յետոյ մանրամասունք՝ « սեղան Ռատի-  
կանապետին՝ 7541 ֆրանք »: Մինչև վերջ այսպէս էր:

Քանի մը թիւք կարող են բացատրելու այս արտա-  
քոյ կարգի ծախքերը. — 25 Մարտ, նախաճաշ զօրա-  
վարին (Գիւլալ) 15 անձինքներով. 74 շիշ Բոնի գինի. —  
18 Ապրիլ, նախաճաշ ռատիկանապետին, 13 անձինքնե-  
րով. 48 շիշ Մակոնի գինի, 2 շիշ՝ քոնեաք: — 7 Մայիս,  
երաժշտութեան համար, 27 շիշ մակոն (ստոնք՝ բաց  
ի այն գինիներէն՝ զորս արդէն առատութեամբ գտեր  
էին Ռատիկանութեան պարատան գինեպոհէտոնին մէջ):  
Ռսուլ Ռիփօ ուրիշներուն նման ընկղմեցաւ գինւոյ եւ  
օղիի մէջ: Բարուց մաքրութեան մասին ալ շատ փա-  
փուկ զգացմունք մը չունէր, և Հասարակութեան եր-  
կու ամուսան միջոց՝ յըրցուց թէ արհամարհող չէր որ  
և է զուարճութեանց. և ստակի մասին ամենեւին խըղճ-  
մբտանք չունէր:

Սեպտեմբեր 4էն վերջը՝ կրցաւ հասնիլ իր երազնե-  
րուն և մտնել Ռատիկանութեան պարտը. քիչ վերջը  
Տ. Էգմոնտ Արամ՝ զանիկայ քաղաքիտական մասին

ծառայութեան մէջ զբաւ, ճիշդ հոն՝ ուր երբեմն եղած  
էր Լազրանտ: Հոն էր՝ աշխատելով աւելի որ եւ իցէ  
ստիթ մը չփախցնել Ազգային պաշտպանութեան վար-  
չութիւնը կործանելու քան անոր օգնելու: Հոկտեմբեր  
31ի դուաճանութեան մէջ էր. Բյունքի զանիկայ Ռա-  
տիկանապետ անուանեց, եւ կը պատրաստուէր պաշա-  
տը ձեռք առնելու, երբ դուր ձախող գնաց: Ստիպուեցաւ  
հրաժարականը տալու. բայց պաշտօնը թողլու ժամա-  
նակ՝ հետը շատ մը յուշագիրներ տարու, որոնք յետոյ  
իրեն անօգուտ չեղան եւ ի մասնաւորի Ռատիկանու-  
թեան պաշտօնատեարց հասցէներուն տեսրը: Սկսաւ  
առանձին կեանք մ'անցընել, զո՛հ ըլլալով միայն գա-  
րէջրոյ տանց մէջ ճառախօսելէ, փոխանակ երթալու եւ  
միանալու մեր բանակին մնացորդներուն հետ, որոնք  
թշնամուսն հետ կը կուտէին ի յառաջապահս: Սպայ  
էր հրաձիգներու ինչպէս ամենայն սպասամբաւէր, սրոյ  
երազն է թնդանութներ ունենալ իրենց զրուծեանց  
զործագրութիւնը զիւրացնելու համար. երբ կը յան-  
գիմանէին իր անգործութիւնը, անհագութեամբ կը  
պատասխանէր՝ թէ սենեկի ոմբակոծ եմ: Պէտք է  
ըսել՝ որ փաս չգտնուեցաւ, գիտցաւ քաջութեամբ  
մեռնիլ. բայց բոլոր իր նմանեաց պէս կը սպասէր ըն-  
կերական վրէժինգրութեան մեծ օրուան. այսինքն է  
այն օրուան՝ յորում իշխանութեան պիտի հասներ:

Իրեն՝ ինչպէս ուրիշ շատերուն համար՝ այս օրս ե-  
կաւ Մարտ 18ին: Գիւլալ՝ Ռատիկանութեան լքեալ  
պալատան տիրելով, զինուորական հրամանատար եղաւ.  
Կեդրոնական Յանձնաժողովը Մարտ 27ին իրեն քաղա-  
քական նուիրակ տուաւ զՌսուլ Ռիփօ: Սակայն պաշ-  
տօնապէս անուանուելուն չէր սպասած եւ իւրական  
իշխանութեամբ գնացեր տեղաւորուելու էր 20ին. 26ին  
Հասարակութեան անդամ ընտրուեցաւ եւ ահա առկէ  
էր այն առատ ստակի բաշխումը՝ 18ին կամ 19ին  
գլխաւոր պաշտօնակալաց, երբ իմացուեցաւ որ ամե-  
նայն ինչ կը կործանէր: Մայիս 16ին, Թէոֆիլ Ֆէրրէ  
ալ կը սկսի իւր նախահոգ զգուշութիւնները: Ահաւա-  
սիկ իւր ընկալագիրը. « Ընկալեալ Ռըպլան քաղա-  
քացիէն վեց հաղար ֆրանք գումարը՝ եղած կամ ըլլա-  
ւեք ծախքերու համար »: Արդեօք այս գումարին մէ-



ջէն պիտի հանէին նշան մը շինելու համար պէտք եղածը, զոր Ռատու Արիօ որպէս էր հնարելու կամ վճռելու. ոսկի միտալ, երեսը՝ Հասարակութիւն և բախտապարտ. միւս կողմը՝ Կոանկիւն, վրան փոխ- գացի գլխարկով՝ կարմիր ժապաւէն ընդմէջ անցեալ ապիտակ սուրբ Անդրէասի խաչ մը:

Ռատու Արիօյի երազն էր նմանելու Երէրի, իսկ Թէոֆիլ Ֆէրրէի երազն էր՝ նմանելու Ռատու Արիօյի. եւ այս երկու արարածներուն մէջ շարադրածելու նախանձը հաստատուն մնաց: Արիօ երիտասարդական պատրաստականութիւն մը ունէր, իսկ Ֆէրրէ՝ ամու- նեւին. յոսի եւ անպէտ վիժած մ'էր, կրելով եր- կայն զլուխ մը՝ թզուկ մարմնոյ վրայ: Իւր առատ մա- գները, թաւ սև մօրուքը՝ աւելի զգալի կ'ընէին իւր անձին անհամեմատութիւնը: Իր վարժապետին և նա- խանձորդին նման կարճատես, սև և բաւական անոյշ աչուրներ ունէր, նման միջին դարու տեսարանաց մէջ ներկայացուցած կրօնամոլ սպուշներու. ըստ ինքեան զարմանալի բան մը այնպիսի մարդու մը վրայ՝ որ հուսատաքննիչի մը կազմապարն էր. երեսը բաւական կանոնաւոր եղած կ'ըլլար, թէ որ զայն ազեղուցած չըլլար բոլորովին խոշոր և կարթաւոր քիթ մը. սրուն կամարաւոր բաց անգունքը՝ ցուցնելով զներքինը, բո- լոր երեսին անհանգիստ անձի մը երեսոյթ կու տային: Երբ ակնոցները կը վերցնէր, աչքերը կը մօրբէին և երեն շուարած կերպ մը կու տային, զոր կը սասակա- ցնէր երեսին զեղնութիւնը: Զգային ձրգաման պատ- ճառաւ՝ որով մշանջնաւոր սարսելով կը շարժէր ու- սերը, աեղ մը անշարժ չէր կրնար կենալ. և թէպէտ կը ջանար իւր կերպին մէջ ծանր խտուութիւն մը ու- նենալ, սակայն անզազար կը շարժէր, իբրև թէ ներ- քին ձրգամանց հետ կը կուտէր: Թմրածուին է, կ'ը- սէր զինքը ճանչցողներէն մին, քովը կեցողը կը մտի:

Այս անհեղեղ պատկերը խնտացնելէն յոգնած՝ ուզեց վախցնել. գիտնալով իր խոշորութիւնը՝ մտածեց սար- սափելի ըլլալ, և եղաւ իսկ: Իր հայրը՝ կառավար՝ ա- ղէկ ընտանեաց մը քով և յետոյ իր խնայութեամբ ժո- զոված զըրամովը առանձին քաշուած, զինքը դաստիա- րակութեան սուսաւ Քրիստոնեայ վարդապետութեան

Նըբարց, և յետոյ Տ. Լ... ի քով, որոյ վարժարանը գոցուեցաւ հոն ուսուցեալ անգրադեանական վարդապե- թեանց համար: Ուսուանքը ընցընելէն վերջը, Թ. Ֆէր- րէ իբրև գրագիր կամ հաշուէկալ եղաւ գործակատարի մը քով: Հոն զինքը գտաւ Հասարակութիւնը: Արդէն պզտիկ անուն մը ստացեր էր յեղափոխականաց մէջ: Մանմարտի գերեզմանացին մէջ Բաղէնի համար եղած ցոյցին ժամանակ, թառեր էր գերեզմանի մը վրայ և կանչեր էր. « Դաշնախումբ տատանն ի Տիւլլորի և Բանն ի Նոտր Դամ »: 1869ի Յունուար 6ին, Մուֆ- Քըսար փողոցի, Վիէ-Շիէն զինեաան համախմբու- թեան մը մէջ ըսեր էր. « Բարեկեցիկ քաղաքացին՝ ամ- բոխին քրտինքով կ'ապրի... այսօր զմեզ ճնշող սյօժը՝ մենք ալ կրնանք ունենալ օր մը, և զայն պիտի ջախ- ջախենք »: Ասոնք իրեն համար արդիւնքներ էին. կրցաւ արժեցնել, և 1870 Հոկտեմբեր ամսէն ի վեր՝ զլուխ զրուեցաւ Հսկողութեան յանձնաժողովոյն, որոյ աթոռն էր Կէնեանկուր փողոցը, թիւ 41: Այսու ա- մենայնիւ հոգաց իր աձև մարմինը պատերազմի ժա- մանակ վտանգի չդնելու, և անգամ մ'ալ պատերազմի չդնայ:

Հասարակութեան անդամ ընտրուեցաւ Մարտ 30ին մասնակից ընդհանուր ապահովութեան յանձնաժողո- վոյն: Այս պաշտօնով նա Ապրիլ 28ին կը խնդրէր պա- տանդներուն անմիջապէս ապանուիլը՝ սկզբանց հաստա- տութեան համար: Մայիս 5ին Ռատու Արիօ զայն առ ինքն կը մտաեցընէ փոխանորդ Հասարակութեան գործա- կալի ախտորոտի. վերջապէս, երբ մեր գտնդերը բռներ էին Իտաի բերդը, երբ կը պատրաստուէին ընդգիմու- թեան մը որ իրենց պարտութիւնը պիտի յաւելուր, այն ատեն Ֆէրրէ ընդհանուր ապահովութեան նախնակ կ'անուանուի, կամ ուրիշ բառով ըսենք, գործադրող կը կարգուի Հասարակութեան բարձր գործոց: Գիտէ ամե- նայն ոք թէ արդեօք իր պաշտօնին հուսատարիմ գըտ- նուեցաւ: Պատերազմին վերջին ժամերուն երբ Բէլլը- վի տակաւին կը զիմանար, Ֆէրրէ մօրուքը կըսերեց, կանացի չըջագգեստ մը հագաւ, գլխուն կանակը մազերու հիւսուածք մը՝ որ յափշտակեր էր՝ հաստատեց, և ծա- ծուկ մը փախաւ: Կալանաւորեցաւ Յուլիս 9էն 10ին



գիշերը, 1871, Սէն Սովէր փողոցը, թիւ 6, սենեկի մը մէջ ուր կը բնակէր օթոցարար գործաւորի մը հետ, որ էր իւր եղբայրը: Գոտոզ և այսպանող գանուեցաւ իր գատաստանին միջոց, և թէպէտ ըսեր էր որ ինքը զինքը պիտի չպաշտպանէր, այսու հանգերձ ձեր փաստարանի մը պէս յաջողակութեամբ ճոռումարանեց, քանի մը սխալ վկայութիւններով՝ Մայիս 27ի օրուան Գուանա-Ռաքեաի պատահարաց մէջ ունեցած մամուկացութեան վրայ: Սատորիի տափարակին վրայ առանց զեղներու՝ լսեց հրացանի բռնուելու վիճիւրը, գլխարկը նետեց և գոչեց « Կեցցէ Հասարակութիւն » և մեռաւ: Սև շուն մը երեսը գոցող արիւնը եկաւ լզեց: Իր պղտիկ և հաստատուն գրով՝ տեսակ մը պաշտպանութիւն ամփոփեր էր, որ կը լմնար այս խօսքերով. « Բազը տարօրինակ իր մ'է. սպազային կը թողում իմ յիշատակիս և վրէժինդրութեանս հոգը »:

Չենք կրնար ըսել որ Ռատու Ռիկօ և Ֆէրրէ Հասարակութեան մարդիկ էին. վասն զի Հասարակութիւնը մարդիկ չունեցաւ, այլ ուրումներ, և կամ անցելոյն ստուերաց մէջ կորուսեալ ցնորքներ զորս նմանողութեան պէտքը մղեց ի բռնութիւն, և որք չկրցան որ և է գաղափար մը կազմակերպել. սակայն արտայայտութիւնք էին, ներկայացուցիչք էին անմտութեան, խոչարութեան, ունայնասիրութեան, անգթութեան, ազիտութեան, և անսոսկութեան: Արհաւրաց այս երկու կատակախօսքս՝ երազատեսից ամբողջ գրգռելով ծայրայեղ միջոցներով՝ անհամար շարեք գործեցին: Յեղափոխութեան միջոց ով որ կ'ուզէր լուսիլ՝ պէտք էր ուժով պոտար: « Տեսանք ի ժողովակս, կ'ըսէ Սաէնդալ, Յեղափոխութեան միջոց՝ որ ամեն վախկոտ ընկերութիւն, անգիտարար տիրապետուած՝ առաջնորդուած է անոցմէ՝ որոց բանականութիւնը նուազ է և յիմարութիւնը շատ »: Հասարակութեան պատմութիւնը այս ճշմարտութեան նոր այժ մը կու տայ: Առանց բանով մը արդարացընելու Մարտ 18ի սպրտամբութիւնը, կրնանք ըսել որ ունեցաւ իր մէջը նաև հանդարտ և ոչ շար անձինք ալ, որ սակայն անկարող մնացին: Համբերեցին արիւնահեղ առաջարկութեանց, բայց ոչ թէ ընդունեցան, և իրենց անկարելի եղաւ գանանք մերժել, և վերջապէս

համակամեցան հնազանդիլ լուսնոտներուն՝ որք մշտամնաց սպանդանոց և շարունակ հրացանի բռնել կ'երազէին:

Ինչպէս Ժակորէններուն տիրապետութեան միջոց՝ այսպէս այժմ ալ շափաւորութիւնը ոճիր մ'էր, և անվրէպ պէտք էր ունայ գայլերուն հետ և ուժով ունայ՝ անոնցմէ չուտուելու համար: Գաշնաւոր սպայից խումբը պատրաստ էր առ ամենայն շարագործութիւն. սպանութիւնք իրեն օրինաւոր երեցած են, և հրդեհները հաճոյական. բայց թերևս կարելի ըլլար խոյս տալ այս ազէտներէն՝ եթէ Հասարակութեան անդամներն չմղուէին մարգասպանութեան մարտութեան՝ Ռատու Ռիկօյի և թ. Ֆէրրէի գրգռութիւններէն. երկու վաս շարագործք, որք գաղղիական Յեղափոխութեան պատմութենէն միայն ոճիրները և անիրաւութիւնները մտքերնին պահէր էին:



Բ .

Պարիզոս բանտերը . - Լիշիէ . - Խօսք , - Զօրավարն  
 Գիշար . - Տ . Կորե , օրինաւոր տեսուչը բանտարկեալ . -  
 Գարթօ դարբինը . - Աբաչին պատակը . - Տիկիկն Գորե  
 և Տիկիկն Բրաքոն . - Գովիդի վարձուներ օրինաւոր մա-  
 տակարարներէն պաշտօնից . - Յանձնարարչքիւն Տ .  
 Բոնժանի . - Աս ընդմանուր գործակալը գրած կամակը . -  
 Տ . Լըկուշի սննդիչպէս պատուէրք . - Այս պատուէր-  
 կներուն ազդեցութիւնը պատակդից վրայ . - Զանք զՏ .  
 Բոնժան ազատերու . - Ռատչ Ռիկօ և Ֆերրե Տ . Բոն-  
 ժանին խղիկին քով . - Ֆերրեի կամակ մը :

Պարիզու վարչական բանտերը — որոց վրայ միայն  
 պիտի խօսինք — ութ են թուով . Մազա՝ խղիկը կալա-  
 նաւորելոց , սահմանեալք ամբաստանելոց համար . — Աբ-  
 զեւարան՝ որ է արգարութեան բանտ , ուր առ ժամանակ  
 մը կը մնան այն ամբաստանեալք , որք պիտի ներկա-  
 յանան եղեռնական և կամ պատժական ստենին . — Լա  
 Սանտէ և Սէնա Պէլաժի սպաշխարատեղիք , տարի ու-  
 մէկ օրուրնէ նուազ բանտարկելութեան դատապարտեալ  
 անձանց . — Սէն Լազար՝ տուն բանտի և սպաշխա-  
 րութեան միայն կանանց համար , բաժանեալ շատ մա-  
 սերու , ուր կարելի է պահել առանց հաղորդակցու-  
 թեան՝ ամբաստանեալ և դատապարտեալ կանայք պա-  
 աիժնին քաշելու , աղջկուներ և վատահամբաւ գտերք .  
 բանտին կից է նաև սեպհական հիւանդանոց մը մէկ քանի  
 հիւանդութեանց համար . — Փոքրիկ Ռաքէա՝ տուն  
 սպաշխարութեան մանչերու . — Մեծ Բոքէա՝ բանտ դա-  
 տապարտելոց , ուսկից մեծ ոճրագործք կը փոխադրուին  
 կեդրոնական բանտերը և կամ յաքտր և կամ ի մահ :  
 Սպիտական ժամանակ՝ ամենայն կալանաւորեալ անձն  
 կը տարուի նախ Արգարութեան պալատան կից բանտ

մը , որ է Պահպանոց Ոստիկանութեան պալատան , բա-  
 ժանեալ երկու՝ մէկ կողմը մարդկանց , միւսը կանանց ,  
 որոց կը հսկեն Գորք Մարի-Ճոզէֆ : Այս ընդարձակ  
 բանտը որ կը պարունակէ 195 խղիկներ և մեծ սրահ-  
 ներ , թէ առանձին և թէ միաբան բանտարկելութեան  
 կը ծառայէ : Շինուած է Բ . Կայսրութեան վերջին տա-  
 բիները մեծ զօրաւոր քարերէ , և այնպէս կազմեալ՝ որ  
 անհնար է փախչիլ : Թէ սրանց և թէ կանանց միա-  
 բանական սրահները շինուած են Արգարութեան պա-  
 լատան մեծ սանդղին ներքև որ կը նայի Գոֆէնի  
 հրապարակը :

Հարկէ—գիւ պոյէ փողոցին վրայ հաստատուած էր Մըշ-  
 տամնացը , ուր կը նշանակուէին կալանաւորելոց ա-  
 նուանք և նշանք՝ Պահպանոց զրկուելէն առաջ , որոյ  
 մտախի արեմտեան և հարաւային կողմը բռնած էին հին  
 և խորխուր շէնքեր , որոց վրայ կը վաստակէր ստիկա-  
 նութիւնը զիշեր ցորեկ :

Մարտ 18ին , երկիրայեան ժամը 7ին միջոցները , Պահ-  
 պանոցին տեսուչը Տ . Կորէ , սուսգեց որ օրինաւոր իշ-  
 խանութիւնը քաջուէր էր Ոստիկանութեան և Արգա-  
 րութեան պալատներէն . սրով առանց հրամանի մնալով  
 զիմեց առ Տ . Պրա , ընդհանուր մտատկարար Սէնի  
 բանտերուն . և սակայն հրաման մը չկրցաւ ընդունիլ :  
 Կիտէին որ սպասամբութիւնը տէր էր Պարիզու . մերձ  
 էր Ոստիկանութեան պալատան , որոյ զէմ անշուշտ  
 փորձ մը պիտի ընէր . զոցուած մնացին և պատուիրե-  
 ցին Մարի — Ճոզէֆ կուսանոց՝ աշխարհիկ զգեստ պատ-  
 րաստ ունենալ հագնելու համար , և ամենը միաբան  
 սպասեցին : Հսկողք՝ ամենն ալ հին ենթաստայիցով  
 ընտրուածք , իրենց սեղերն էին : Երեկոյեան ժամը  
 11ին միջոցները 10դ զունդը , որ էր Հասարակութեան  
 համար եռանդուններէն մին , տիրեց Գոֆէնի հրապա-  
 համար եռանդուններէն մին , տիրեց Գոֆէնի հրապա-  
 խուսկին ընդ հրամանօք Ճոլլիվէ անուամբ մէկու մը , որ  
 40,000 խուսկեց բովանդակ Ոստիկանութեան պալատը  
 հրացաններու շանարան մը գտնելու , մինչդեռ և ոչ  
 մէկ հատ մը կար :

Մինչդեռ Ճոլլիվէ և իւր մարդիկը կը կողպակէին  
 սուսալին մտախի գրասեղանքը , Լիւլիէ՝ որ այն ստենէն  
 սկսու սպարապետի անուն կրել , դաշնաւորաց զունդով



մը հասաւ: Երկու խումբերը մէկմէկու հետ քիչ մը  
ընտանեցան. փոփոխակի մէկմէկու օղի, ձեռք և կեց-  
ցէներ ընծայեցին, և Վիւլիէ խտորելով Հարէ փող-  
ցէն, անցնելով Օւրժի գետափը, մտաւ ի Պահպանոց:  
Ամբոլը՝ որ զինեալ կը հետեւէր, հոն թափեցաւ: Ճրագի  
անդրադարձուցիչ մը հազիւ լուսաւորելով կը ցուցնէր  
պատուհանները պաշտպանող ամուր որմոց մէջ վանդա-  
կածողքը. երկաթէ դուռը գոց էր: Բաղխեցին զայն  
հրացանաբունով, քարով և սաքով. ամեն մէկ բաղխումն  
կը թնդար Պահպանոցին մէջ թնդանօթի մը ձայնի  
պէս: Տ. Կորէ բացաւ դուռը և բանակեցաւ Վիւլիէի  
հետ. գաշնաւորք որոց խելքը գոցեր էր յաղթու-  
թենէն և գինիէն, կը պտային և կը պահանջէին որ  
բոլոր հոն գանուող պահպանք թրէ անցուին:

Հսկողաց ենթապահապետ մը, Պիէր Բրաքոն անու-  
ամբ, պող արիւն և արի անձ մը՝ ըսաւ Վիւլիէի. « Պի-  
տի թողնա որ այդ մարդիկը խողխողեն գեղք. իրենց  
զխաւորն ես, ըսէ որ յարգեն հին զինուորները»: Վիւ-  
լիէ որ ստոյգն ըսելով՝ անգութ մէկը չէր, դարձաւ իր  
մարդիկներուն և այս խօսակցութիւնն ըրաւ. « Քաղա-  
քացիք, պիտի երգնաք ինձ՝ ընաւ չլիսաւելու այս պաշ-  
տօնատեարց. գանձք կը ճանչնամ, աքիկ մակնըր են.  
ձեռուրնիդ բարձրացուցէք և երգուրնցէք շարատաւ-  
ընցան և սկսան կանչել. « Մեր ընկերները, մեր ըն-  
կերնատունը իր սարայիցմէ ամանց հետ, բերել կու-  
տայ բանաարգելոց ցուցակը և հրաման կու տայ ան-  
միջապէս ազատելու՝ Պրիւտով (Ալէքսանդր-Անտուան),  
Վիտր (Պոնպէ-Օզիւտը), Շուրօ (Հանրի-Լուի), որք  
նոյն սուսուօրը թէ քաղաքամասին ծանուցիչ զընդա-  
պետին հրամանով Պահպանոց բերուեր էին, քաղա-  
քական պատերազմի զրգուրթեան յանցանքով: Նոյն  
վայրկենին պատ թողուելով մեծ յաղթանակաւ ընդու-  
նուեցան սպասամբակիցներէն, մանաւանդ Շուրօ՝ որ  
խառնադրանձ գաւաճաններու մէջ անուն մ'ունէր: Այս  
չառաչալից արշաւանքը լամբնալէն վերջը, Վիւլիէ ձի  
հեծաւ և գոչեց իր խումբին. « Սպայակուտին պարաւը,  
վանդով հրապարակին ձէջ՝, և ինքը փութաց հեռացաւ  
այն տեղէն:

Երկրորդ օրը իմացուեցաւ՝ որ Գիւլիալ զօրավարն՝  
ձուլիչ աշխատաւոր, Բլանքիի հետևողներէն զինուորա-  
կան նուիրակ անուանուեր էր Ոստիկանութեան պալա-  
տան, և Ժուլիվէ տեղաւորուելով ի Մշտամնացն՝ հրա-  
մանատարի տիտղոսով, պիտի ստորագրէր Ոստիկանա-  
պետին հետ: 20ին վաթսուն և երկու հասարակապե-  
տական պահպանք բանաարգելեցան (նախկին պահա-  
պանք Պարկու, նախկին պահպանք Ոստիկանութեան),  
որոնք 18ին թողուելով Մոնմարտի բարձանց վրայ՝ գերի  
բռնուեր էին: Նոյն օրը ժամը երեքին միջոցները Տ.  
Կորէ քաղաքին հրամանատարէն ընդունեցաւ հետեւեալ  
հրամանին լուրը. « Հրաման՝ 1624 գունդի զխաւորին,  
անմիջապէս խումբ մը զրկելու Պահպանոցը բռնելու  
համար. ուր ոչ ոք կարենայ մանել և ելլել առանց մեր  
կնքով հրամանին. — Ժուլիվէ»: Այս թղթովս ներկա-  
յացաւ զնդապետ մը իր 125 ստորակարգեալներով: Տ.  
Կորէ մերժեց ներս մտցնելու այս խումբը, որոց ներ-  
կայութիւնը ի Պահպանոցի և բանաարգելոց հետ ըն-  
տանութիւնքը կրնային ծանր և անպատշաճ հետեանք-  
ներ ունենայ: Գնաց ի Մշտամնացն, որպէս զի կա-  
րենայ խօսիլ Ժուլիվէ հրամանատարին հետ, որ շատ  
զինով ըլլալուն համար՝ ըսածներէն բան մը չհասկըցաւ:  
Այն ատեն Տ. Կորէ զիմեց առ զօրավարն Գիւլիալ, որ  
ժամանակ խնդրեց մտածելու, իմացնելով որ պէտք  
էր խորհրդակցիլ Ժուլիվիէի հետ և թէ կ'իմացնէր ա-  
պա սրոշումը:

Ժամ մը վերջը Տ. Կորէ ստիկանապետին գրասե-  
նեակը կանչուեցաւ. հոն չի տեսներ ոչ զԺուլիվէ և ոչ  
զԳիւլիալ. և կը գանուի Ռատու Ռիկոյի առջև որ պաշ-  
տօնը սկսեր էր: Տ. Կորէ ըսաւ իր փաստերը. Ռիկօ  
մտիկ ըրաւ և պատասխանեց. « Պաշտօնէդ ինկած ես»: Տ.  
Կորէ ըսաւ՝ որ պաշտօնարանի հրամանով անուա-  
նուած ըլլալով, չէր կրնար պաշտօնանկ ըլլալ առանց  
ներքին գործոց պաշտօնէին հրամանի մը: Ռիկօ պա-  
տասխանեց. « Այդ արարութիւնները պիտի պար-  
զենք»: Թղթի թերթի մը վրայ քանի մը բաւեր գրեց,  
յանձնեց զայն իր քովը եղող մէկուն՝ որ նախատեսեկի  
ծառայութեան եղող երկու գաշնաւորք կաշեց. և ան-  
ձամբ տարու զՏ. Կորէ ի Պահպանոց և գոցեց ի ծա-



ծուկ թիւ 182 խղիկին մէջ: Օրինաւոր տեսուչը բանա տանողն՝ էր նոր տեսուչն՝ Գարրո, քսան և չորս տա րուան դարբին մը, որ կը ճանչնար բանտերը հոն չորս տարի իր կամաց գէժ բնակած ըլլալուն համար: Սպաս նախից և ախրագէժ անձ մ'էր, որ բնաւ քաղցրութիւն չըջցուց ոչ հսկողաց, ոչ բանտարկելոց և ոչ պատանդ ներուան: Տ. Կորէ բանտեալ էր, սակայն մեծ օգուտ մ'ըրեր էր Պահպանոցի անձանց, որս:Հետև Ոստւլ Ռիկօ անոր զխտողութեամբք հրամայեց որ դաշնաւու րաց գունդը քաշուի, որ ժողովէէն հրաման ունէր ախրեղբ բանտին և հսկելու:

Երկրորդ օրը բերուեցաւ սոսալին պատանդը: Մինչև այն ստան կը կարծուէր որ զինակիրք, Հասարակապե տութեան պահապանք և քաղաքին հսկողք՝ պատերազմի կալանաւորք համարուելուն համար բանտուէր էին, որ պէս զի չերթան չմիանան Վէրսայլի վարչութեան. բայց Մարտ 21ին տեսնուեցաւ՝ որ ինչ վիճակ սպաննացեալ էր բարեսէր անձանց: Գատուորական և քաղաքագի տական բարձրաստիճան անձանց մէջ, մասնաւորապէս նշանաւոր եղած էր անձ մը՝ ներողամիտ գաղափարնե րովն ի կրօն, և ազատականութեամբք ի քաղաքագի տական: Թէպէտ յսոսալացեալ տարիքով, սակայն պատե րազմի ժամանակ օրինակ եղած էր հայրենասիրութեան և ճիշդ ներկայ գտնուէր էր բերդերուն վրայ և այլուր: Այս առաքինի անձն՝ անխնջ աշխատող՝ իւր ունեցած աստիճանն և պատիւը ինքնին շահեր էր իւր ջանքով, գոր ոչ մի ինչ կարողացեր էր նուազեցընել: Կա էր Տ. Բանժանի վճռալինջ ստանի նախագահներէն մին, պղտիկ աշխոյժ ծերունի մը, հանձարեղ ճարաստան, միշտ լսելի եղած, սիրելով զբարին ի բնէ և զայն ետանդեամբ գոր ծագրող, անձնանուէր պարտուց և առաքինութեան:

Մարտ 21ին նախագահը բազմեր էր աղերսագրաց ա նենին մէջ, վասն զի — արգարութիւնը չի հանդչիր — և րեկոյեան ժամը հնգին միջոցները գնացին իւր բընա կարանին մէջ զինքը կալանաւորելու և տարին ի Պահ պանոց: Իր անունը տուաւ այսպէս զիւանագրին՝ Բան ժան (Ղուի-Բէրնար), վաթսուն և վեցամեայ, ծնեալ ի Վալանս (Գրոմ): Բանտարգելութեան հրամանն էր «ամենախիստ գաղանիքի»: Նախագահը փակեցին թիւ

6 խղիկին մէջ, ուր նա տամուլեց մնացած օրերուն մէջ ըստ հարակամութեան տեսուչ քաղաքացւոյն մեծ մտադրութեան նիւթ էր թէ՛ հսկողաց և թէ՛ բանտա պանոց: Տ. Կորէ իւր սենեկին խորէն շէր կորսըն ցուցած ամեն հեղինակութիւն, և շէր դադրել յան ձնարարել իւր ենթարկելոց բազմապատկել հոգերին Տ. Բանժանի համար. որուն մասնաւորապէս երկու կա նաք օգտակար եղան՝ Տիկինն Կորէ և Բրաքոն ենթա պահապետին ամուսինն. իրենց կարելի եղածին չափ քաղցրացուցին նախագահին կալանաւորութիւնը. իւր տկար սոսալութեան պէտք եղած հոգերը տարին, և յաջողեցան բանտին սովորական սնունդէն դուրս, լաւագոյն եղանակաւ հոգալ: Կթէ Հասարակութեան վեր ջին ժամերուն բովանդակ պատանդները շիտղխողեցան, արդիւնք է այդ բանտապանոց պահապետներուն, ենթա պահապետաց, հսկողաց օրինաւոր մատակարարութեան, որոնք իրենց տեղերին բնաւ չթողուցին, ընդդիմացան դաշնաւորաց և ահաւոր վարկենին մէջ ընկերացան կա րանաւորաց ընդդիմադրութեան: Ատիկայ երեան կու զայ այն ամեն վկայագրութիւններէ՝ որոնք մեր աչքին ներքև են, և որովք կրցանք ձեռն գարնել այս ընկե րական տխտարանութեան. բայց թէ հսկողք Հասարա կութեան մարդիկներէն կասկածուելով, նախատուելով և սպառնալիք ընդունելով հանդերձ՝ չթողուցին բանդերը, գորս արգիւնքն՝ ըստ ամենայնի Տ. Բանժանի պար տական ենք:

Վասն զի տեսնելով նա թէ լաւ էր որ օրինաւոր պաշտօնեայք և պահապանք միան բանտերուն մէջ, ու րոնք միշտ կրնան օգնել վտանգաւոր ժամուն, յոր րոնք միշտ կրնան չթողու իրենց պաշտօնը. և որպէս զի աւելի վտահ ընէ բովանդակ սպասաւորքը, նամակ մը գրեց սա Տ. Պօլ աը Գապրը, ընդհանուր գործակալ վճռալինջ Ատենին, յորում իրեն խորհուրդ կու տար չքաշելու չառնելու բանտերուն մէջ ծառայող օրինաւոր պաշտօնեայքը, թէպէտ և ընդ հրամանօք սպասամբ հրոմանատարաց ըլլային:

Այս նամակը տանողն ի Վէրսայլ էր Տ. Քահն, սպա սաւոր ստանադպիր Պահպանոցի մէջ, որ այս թուովն սուս առանց պահարանի, գանիկայ զխարկին ծաքին



տակ յարմարացուց և մեկնեցաւ ի վէրսայլ, ուր հասաւ Տ. Պապրի յարգարկաւորութեան նախընթաց իրիկունը: Այն առնն զիմեց առ իւր դասական գրուելը՝ որ էր Տ. Լըկուր, Կատիկանութեան պալատան առաջին բաժնին պետը, որ անմիջապէս հրամանն զրկեց բոլոր Աէնի բանտերուն սպասաւորաց, պահելու իրենց տեղը և հըսկելու սպորինաւոր հրամանով բանտարկեալ անձանց ապահովութեան վրայ: Այս միջոցս, զոր խնդրեր էր Տ. Բոնժան և կատարեր էր Տ. Լըկուր, ապահովուց շատ մը պատանդներու փրկութիւնը, որոց մէջ գոթաղ-դարար չգանուեցաւ այն արժանապատիւ անձն՝ որ այս լուռութեան պատճառ եղեր է:

Երկու անգամ փորձուեցաւ ազատելու զՏ. Բոնժան: Երկու դաշնաւորք բանտուեր էին. իրենց ընկերները նամակ մ'ուղղեր էին առ Ռատու Ռիկօ աննայ ազատութիւնը ստանալու համար: Առաջին էջին ուղիղ և հակառակ կողմը միայն բռներ էր աղերսագիրը. պարտապ մնացած թղթին երեսը Ռիկօ գրեց. Հրամանն ազատելու երկու վերը նշանակեալ կարանաւորքը. և այս ազատութեան զերը զրկեց Պահպանոցի դիւանատունը զհնաւորով մը: Անմիջապէս մտածուեցաւ որ կրնար օգուտ մը ելլել այս անուղիղ գրուած հրամանէն, յորում անուանք նշանակեալ չկային, և որ իրօք սպիտակ թուղթ կրնար համարուիլ. բաւական էր անհետ ընել նամակին մասը և Ռիկօյի գրածին վրայ երկու անուանք դնել, բանտէ ազատում մը արգարացըներու համար: Գնացին գտնելու զՏ. Բոնժան, և իրեն բացատրեցին որ զիւրին էր զինքը ազատել: Բանտեալն պատասխանեց. « Չեմ ուզեր մէկու մը վտանգի պատճառ ըլլալ. իմ փախուստս պատճառ պիտի ըլլայ՝ որով պիտի ձամբուին բոլոր Պահպանոցի սպասաւորք և իրենց տեղ վտանգաւոր անձինք պիտի դրուին »: Մասնաւոր ձախտագիր մը խափանեց իր փոխադրութիւնը Առողջութեան ոստիկանական տունը, այն է Տոն Գիւշպուշ: Պահպանոցի բժշկէն, Տ. Լըզրան-տիւ-Սուլ, վկայագիր մը ներկայացուեր էր Գիւշպուշ, որ շատ հոգ չէր տարած. նոյնը երկրորդ օրը կրկնուելով՝ յաջողութեամբ ընդունուեցաւ: Գիւշպուշ հաւանեցաւ հրաման տալու, բայց միտքը զբաղած տեղայն ժողովրդական անուան վրայ՝ ստորագրեց Գիւշ-

պուշ փոխանակ Գիւշպուշ գնելու: Պահպանոցին դիւանատունը տեսնուեցաւ սխալը. դարձան Ռատիկանութեան պարտար, սակայն Գիւշպուշ նոր ելեր էր: Գիւշպուշն առ Ռատու Ռիկօ, որ պատասխանեց. « Բոնժան բանտը պիտի մնայ՝ մինչև որ Բրանքի ինքնին իմ՝ զբասեզանիս վրայ չստորագրէ անոր ազատութեան հրամանը »: Եթէ այս ձախտագրութիւնս պատահած չըլլար՝ թերեւ Տ. Բոնժան ազատած կ'ըլլար, ինչպէս ազատեցաւ Մարտէնպոէյ զօրավարը՝ որ Ապրիլ 26ին բանտարկուելով ի Պահպանոց, 30ին փոխադրուեցաւ Գիւշպուշ տունը:

Ռատու Ռիկօ և Թ. Ֆէրրէ գոհ չէին որ Բոնժան նախագահը աղիւերու ներքեւ էր, այլ և կը տանջէին զժերտանին, որ իր բանտին միայնութեան մէջ կը մտածէր իւր կնիւն և սրոց վրայ՝ զորս կը պաշտէր. և սակայն սրտի ցաւ մը չունէր, վասն զի կը համարէր որ իւր պարագին ըրեր էր: Երեկոյ մը Ֆէրրէ, Ռիկօ և իրենց բարեկամներէն ոմանք, յետ կատարելու այն ճաշերէն մին, որոց զինը 228 Ֆրանքի կ'էլլէր, զուարճանալու համար Պահպանոցին այցելութեան դացին: Ֆէրրէ բացաւ թիւ 6 խղիկին վանդակազուռը և ըսաւ. « Տէր Բոնժան, Տէր Բոնժան, կ'ուզե՞ս ազատիլ. ես հոկոյ մ'եմ. Գարրօ պառկեր է, կ'ուզե՞ս փախչիլ »: Տ. Բոնժան մտեցաւ և պատասխանեց. « Յոգնած եմ, թուղէք որ հանգչիմ »: Ուրիշ անգամ մը, ապրիլ 4էն 5ի գեղերը, Պարիզու արքեպիսկոպոսին կալանաւորութեան օրը, Մագաս փոխադրուելէն օր մը առաջ, որ առաջին ստտիճանն էր մահուան սանդղոյն՝ նոյն խեղկատակները նորէն եկան: Նորէն Ֆէրրէ, (որ Ռատու Ռիկօ սիրով առաջ կը նետէր, և որ իր կարճ հասակին համար բանէ մը ետ չէր կենար), Ֆէրրէ բացաւ Տ. Բոնժանի վանդակազուռը և գոչեց. « Լաւ ուրեմն, ծերուկս. ինչպէս կը գտնես մայն ջուրը: — Ո՞վ ես դու, որ ինձի այսպէս կը խօսիս: — Յոգնած մարդիկ ենք. վասն զի վէրսայլէն նոր հասանք. ջուրը նետեցինք զԹիէր Սուխի աւազանին մէջ, և ցից հանեցինք զգիւրուկն Փիքար. շուտով կարգը քեզի պիտի գայ. անհամբերութիւն մի ըներ: — Երիտասարդք, վրայ բերաւ Տ. Բոնժան, որ երբեմն ի զործ կը վարէր այն պաճուճեալ ոճը, զոր ունին նախնեաց մատենագրու-



թեանց մէջ սնեալ սնծինք. երիտասարդք, թողուցէք  
հանգիստ ծերու մը քունը»:

Ճէրբէ ևս օր մը պիտի կրէր այդպիսի ծագրածու-  
թիւններ, և սակայն իրեն ընելովն՝ առ ինքն եղեալքն  
չեն արդարանար: Այլամաստրեալ և սոժամանակեայ  
գոցուելով ի Պաշտօնոցի, յուլիս 11ին 1871ի կը գրէր  
առ Տ. Կորէ, որ իր տեսչութիւնը ձեռք առեր էր.  
«Կը խնդրեմ վերջանցնել տալ այդ ծագրածութիւն-  
քը, որ ինձ կ'ըլլուին ձեր տունը մտնելէս ի վեր-  
ամեն վայրկեան կը բանան վանդակազուռս և զիս կը  
զիտեն, իբրև թէ ժարդէն տէ Պլանդի վայրագ գա-  
ղաններէն մին ըլլայի, և զուսն տակէն շարունակ կը  
լսեմ այս սիրելի բացաբանչութիւնքը. «Շան սրգի,  
ոճրագործ, պէտք էր զքեզ հրացանի բռնել»»: Այդ  
վայրկեանն արդեօք միտքը ինկաւ Տ. Բոնժան և զղջումն  
ունեցաւ: Իրեն բնատրութիւնը մեզի տարակուսել կու  
տայ առիկայ:

Գ.

Կ Ա Լ Ա Ն Ո Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Քանակայք. — Գրկերրի քանակայիս տակ կորու-  
տալիլ. — Արքեպիսկոպոսիս կառքը. — Հասարակա-  
վարչական պրծոչքիւնը. — Օրէնք կաւկածաւորաց. —  
Շարդ Լիշիկ. — Իր փախուտոր. — Ուսուել. — Իր  
փառասիրոչքիւնը. — Նոչիրակ պատերազմի. — Իր  
դատապարտոչիլը և մանր:

Տ. Բոնժան երկար ժամանակ անդ միտյնակ պիտի  
չմտար իբրև «մեծ պատանդ», ինչպէս այն տակն կ'ը-  
սէին: Ապրիլ 4ին Պաշտօնոցի զոները բացուեցան Բա-  
րեզու կղերին շատ անգամայ համար: Չերասայծառ Գար-  
պուս և իւր փոխանորդն՝ Լազարա, Տ. զը Բէնժի,  
Հայրն Կէր, քահանայն Ալտար՝ երէց հիւանդակառայ.  
քահանայն Կրոզ՝ երէց Ուրքեաի, հաւատարիմ և յամուտ  
պաշտօնան դատապարտելոց. քահանայն Գրկերրի՝ ժա-  
ղալրդապետ Լա Մաղըլէն եկեղեցւոյն, հանրածանօթ ի  
Պարիզ իւր բարձր հատակաւ, երկայն խառնակ մազե-  
լով և զինակրաց հաղարապետի խոշոր քայտածքով,  
Հայրն Գիւքուզրէ և ուրիշներ կու գան բնակելու նեղ  
խղիկներու մէջ, և կը զրուին ի ծածուկ: Այդ բաւա-  
կան չէ. երկրորդ օրը Գեր. Սիւրա՝ աւագ սարկաւազ  
Բարիզու, Տ. Մուլէան՝ ժաղալրդապետ Սէն-Սէվրէնի  
անոնց կը միանան: Այդպէս պիտի ընէ ահա Հասա-  
րակութիւնը մինչև վերջին օրն ալ, երբ պիտի կրնայ  
ձեռք ձգել կղերիկոս մը, ինչպէս մատաղահասակ Սէն-  
Ջըրէն, աւանդապահ մը, ժամակոչ մը, քահանայ մը,



կրօնաւոր մը, ամենն ալ պիտի բանաէ. առանց դա-  
տաստանական ձեւի մը. անոր համար միայն՝ որովհետեւ  
նորա կը պաշտեն Աստուած մը՝ զոր Հասարակութիւն  
չի ճանչնար. և եթէ հարցընէ մէկը, թէ ինչո՞ւ կը կա-  
րանաւորուինք, իրեն պիտի պատասխան տրուի. «Ա-  
հաւաստի 1500 տարի որ նոյնը գուք մեզի կ'ընէք, և  
այդ զմեզ վերջապէս նեղացուց»։ Գոնեա այս պատաս-  
խանա տուաւ Ռատւ Արիօ առ Արքեպիսկոպոսը։ Այս  
քահանայք շատ յարմար ընկած էին Գարբոյի ձեռքը,  
որ այնպիսի տաեւութիւն մ'ունէր կրօնից զէմ՝ մինչև  
Մարտ 29ին բռնագաղութեան հեռացընել Մարի-Ճո-  
զէֆի Քորքը, թէպէտ սովորական աշխարհիկ հանդերձ-  
ներ կը կրէին, վասն զի Գարբո ստեպ կը պարտնար  
հրացանի բռնելու «բար ալդ մայրապետները»։

Գրկէրրի քահանային տունը այնպէս կողպտեր էին՝  
ինչպէս աւարի մասնեալ քաղաք մը. արքեպիսկոպոսա-  
րանին մէջ քիչ մ'աւելի զգուշաւորութիւն ունեցան։  
Արքեպիսկոպոսը իրեն ամենը մէջ կարանաւորողն եղեր  
էր գաշնաւոր հարիւրապետ մը Ռէվոյ անուամբ, ինչ  
որ կ'երեւայ շատ յատկութիւններ ունէր. վասն զի եթէ  
ձեռք իսկ երկնցուց Գեր. Գարպոււայի վրայ, սակայն  
մեծապէս ջանաց Կրոյ քահանային ազատուէր ձեռք  
բերելու, որ բռնուեր էր Ռատւ Արիօյի նախասենեկին  
մէջ, ուր գնացեր էր հրաման մ'ընդունելու կարանաւոր  
քահանայի մը այցելութեան համար։ Այս Ռէվոյ ալ  
յետոյ Մազաս բանտարկուեցաւ, ուսկից կրցաւ ելլել  
Մայիս 22ին, և խառնուեցաւ Հասարակութեան վերջին  
զինուորաց մէջ, սակայն իրեն գլխաւորաց ճարտարու-  
թիւնը չունենալով՝ բռնուեցաւ և Վէնտէն զգեկին փո-  
սերուն մէջ սպանուեցաւ Քազրատիոն իշխանի մը հետ  
մէկտեղ, որ չենք գիտեր ինչպէս խառնուեր էր այս  
խեղիատակութեան մէջ։ Ռէվոյ նկատմանքներ ալ ու-  
նեցաւ արքեպիսկոպոսին համար. թողուց որ Ռատիկա-  
նութեան Պալատը իւր կառքով տարուի, որ անմիջա-  
պէս յախշաակուեցաւ և ծառայեց յետոյ Ռատւ Արիօյի,  
իւր Գառգոն Գազատաւ բարձրամին և երբեմն ամեն  
կողմէ փողովուած մարգոց շրջադայութեան։

Արքեպիսկոպոսին ձիւրուն փութով սոսճմանեալ ծա-  
ռայութիւնն՝ անշուշտ իրենց համար անցործութիւն մը

չերեցաւ, վասն զի արքեպիսկոպոսին դատապարտու-  
թեան հետեւեալ երկու օրերը քսաննութ անգամ ձոնաւ  
պարհ կարեցին Ռատիկանութենէն Արքեպիսկոպոսարան.  
կառքն ալ կահ կարասիք փոխադրելու ապլ մը դարձեր  
էր։ «Ինչք եկեղեցույ, ինչք գաղթելոց՝ են ինչք ազ-  
գայինք»։ — Յուրե՛նս այսպէս հրատարակեր էր յաղ-  
թութեան երկրորդ օրը։ Կիկեղեցույ զարդերը, քահա-  
նայական հանդերձները, ամենն ալ բերուելով Պալա-  
տը, խառնաշփոթ նետուեր էին Ռատիկանութեան և  
կամ առաջին բաժնին գրասենեկաց մէջ։ Յայտնի է որ  
սպասախոհ գաշնաւորաց համար անիկայ մեծ փորձու-  
թիւն մ'էր, որոնք կը պոսային լրագիրներուն մէջ՝  
«ՉԱստուած կը ջնջինք»։ Չկրցան զիմանալ, և պա-  
սե՛նք չկորսնցուցին սրբապղծութիւն մը կատարելու. և  
պիսկոպոսական թագը գլուխնին գրին, հագան շուր-  
ջառները, ձեռք ամին հովուական գաւազանը, սիկննե-  
րը, ճաճանչները, սրբատուիք, բուսվառք, խաչեր և  
ջահերը, և սրահին մէջ, (որ այն միջոցին առաջին բաժ-  
նին արձակարանը կը կազմէր), պատարագ և թափօր  
ձեւացուցին։ Երբ աղէկ մը զուարճացան, անթները և  
զարդերը ապլի մը վրայ բեռուցած՝ ի փողերանոց  
զրկեցին։ Այսպիսի ամբարշտական քաջագործութիւնք  
խառնութեան միջոց սովորական էին. մատարան մը  
խորանն Սէրիգիէի հարսանեկան անկողնոյ տեղ ծա-  
ռայեց։

Այս քահանաները և կրօնաւորները զարձեալ մենք  
պիտի գաննէք քիչ մը վերջը ի Մազաս, ուր փոխա-  
զրուեցան Ապրիլ 6ին Տ. Բանժանի հետ. պիտի զբա-  
նենք զանոնք նոյնպէս Գրանա-Ռաքէա, ինչպէս պիտի  
գաննէք և ի Սէնա-Պէլաժի զԳլխատաւ Շոգէ, Ապրիլ  
13ին բանեալ Պահպանոցը և անկէ անմիջապէս եր-  
կրորդ օրը փոխադրուած ի Մազաս։ Հասարակութիւնը  
կրակածաւորաց օրենքը կը զործադրէր։ Ո՞վ կրնայ եր-  
բէք զիմանալ թէ ինչո՞ւ Տ. Գլէ-Կիզուան և Տ. Շէօլէ  
անցան Պահպանոցի խղիկներէն։ Կարանաւորութեան  
հրամանները կ'իշխան ըստ բաղդի, ինչպէս երկնից կայ-  
ծակներն։ Ապրիլ 7ին Տ. Քահն աստեաղակիրը պաշտօնին  
վրայ կեցեր է. իր երկար խառնակ գրովը կը կարանաւո-  
րէ, թիւ 1801, Վիգոր անուամբ անձ մը, առանց պատ-



ճառի բանուած, հրամանաւ Դապիտէլ քաղաքացիին<sup>1</sup>, գլխաւոր Մշտամնացի գրասենեկաց: Յանկարծ գրութիւնը կը փոխուի, և թիւ 1802ի մէջ կը փակեն նոյն ինքն Տ. Քաշնի, զոր կը գոցեն թիւ 11 խղիկին մէջ, ըստ հրամանի թ. Ֆէրբէի. վասն «սպանալեաց ընդդէմ Հասարակութեան անգամաց և բանակցութեան Վէրայի հետ»: Կը մնայ բանտեալ մինչև Մայիս 16ին: Կրթեմն տեսարակը մեզ կարևոր յայտարարութիւններ կ'ընէ և մէկ խօսքով կը հաստատէ քանի մ'իրեր, որք երբեմն եռանդով մը կը ժխտուէին. — 2 Մայիս. Ս.... (Լաժէն), կոչկակար, մտանկց կայսրութեան ժամանակ սեպտեմբրի գաւր: — Դատ աւելի խոհեմ կ'ըլլար լուրս այս խոստովանութիւնը:

Ապրիլ 6էն բանաորդեալ անձանց վիճակը սխառտագնապեցուցիչ ըլլաւ: Մինչև այն ատեն կը կարծուէր որ սոցիալութեան և եպիստանաց ոգեով գործեալ իշխանութեան մ'անիրաւութիւն էին. բայց այն ատեն պէտք եղաւ կարծիք փոխել, տեսնել իրն ստուգապէս և ըմբռնել ծածկեալը: Ապրիլ 3ի պատերազմին, այն հոչակաւոր միախառնէր յարձակման ելքը, յուսահատացուցիչ էր զՀասարակութիւնը, որ այդ փորձով կը ճանչնար իւր կազմութեան տկարութիւնը և բազմաթիւ պառտաւոր անձանց զօրութիւնը, որոց զէմ ի զուր էր կրուել: Անխնայապէս ծայրայեղ միջոցներու գիտնց. տեսնելով որ վերջը մօտեցեր էր, ուզեց ստորափը նեցուկ մը ընել իր տկարութեան: Կ'ոյգընէլ ատուա փողոցներու մէջ հրատարակութիւն մը և հրովարտակ մը որ զՊարիզ սպչեցուց:

«Յանցաւորները կը ճանչնաք. ևն զինտիւրք և կայսրութեան քաղաքական պահապանք, Դարբէտի և կատուինայի թագաւորականքն ևն, որք կը չուեն ընդդէմ Պարիզու, գոչելով կեցցե՛ր բազաւորք. երևնց զուրս ունենալ»

1. Դապիտէլ (Օգիտտ-Ադուրի) գոնապան և կոչկակար, ծնեալ յամին 1840, դասապարտեալ յամին 1861 երեք տարուան բանտի, ի շարն վարած ըլլալով առ ինքն եղած փաստագրութիւնը. 1864ին մէկ տարի և ամիս մը բանտի գողութեան համար: Հասարակութիւնը զարդպիտն Ոստիկանութեան զորձակատար ըրեր էր և նուիրակ Մշտամնացի գրասենեկակի մէջ:

լով սպիտակ գրօշը՝ Վէրայի վարչութիւնը ինքզինքը արտօրայ կը դնէ պատերազմական օրինաց և մարդկութեան... Դապիտուրը միշտ վեհանձն և արդար՝ նոյն իսկ իւր բարկութեան մէջ կը ստիպայ յարենէ, ինչպէս նաև քաղաքական մարտէ. բայց և իրաւունք ունի ինքզինքը պաշտպանելու իւր թշնամեաց վայրագ յարձակմանքներէն, և որքան ծանրագնի ալ ըլլայ իրեն՝ պիտի տայ աչք աչքի տեղ և ստամն ստաման...»: Յետայ կու գայ հրովարտակը. «Յօդուած Գ. — Սմենայն ամբաստանեալք Հաստատեալք ամբաստանութեան երգուեալներէն, պատանդք ևն ժողովրդեան Պարիզու. — Յօդուած Կ. Սմենայն սպանութիւն՝ պատերազմի կայսրութեան մը և կամ Պարիզու Հասարակութեան օրինաւոր վարչութեան կուսակցի մը, անմիջապէս պատճառ պիտի ըլլայ փոխադարձ սպանուելու եռապատիկ թուով կալանուար, պատանդներէն զօրութեամբ Գ յօդուածայն, և պատանդք՝ վիճակու պիտի հանուին»:

Այս առաջարկս ընդունելի եղաւ Ռատու Ռիփոյի, թ. Ֆէրբէի և Գապրիէլ Ռանվիէի առաջարկելովը: Հրովարտակէն առաջ հրատարակումը ստորագրեալ է՝ Հասարակութիւնը Պարիզու. կը նշանակէր որ բովանդակ Հասարակութիւնը յանձն իւր կ'անուար այս գործայն պատասխանատուութիւնը. միանգամայն կը նշանակէր որ Հաւաքական ըլլալով՝ անհասաներուն վրայէն կրնայ բառնալ պատասխանատուութիւնը: Այս վկայագրութեան մէջ առաջին անգամ յիշուած է սրահատանպէս պատանկ բառը. և ամենայն անձն կալանուար այդպիսի համարուեցաւ՝ ըստ հրամանին զոր անփոփոխ ստորագրած են թ. Ֆէրբէ և Ռատու Ռիփո: Յետինս գասնք կը կոչէր իւր «անձնական բանտեալքը», և չէր թողուր որ գաննք սպասելու վրայ խօսուի:

Ոչ նոյնպէս այն կալանուարիւց համար, որոնք բանտարկուած էին Արդարութեան նուիրակին հրամանով, որ կը կոչուէր Լաժէն Պրատու, և որուն հրամանք միշտ լինէր յարգուէր Հասարակութեան յանկարծատակը գալ տուարներէն: Այսու ամենայնիւ շատ կերպերով կարելի էր յարմարիլ այդ վարչութեան քիչ ստորին պաշտօնաւեարց հետ, որոնք շատ բարակ խղճմտանք չունէին: Արդարութեան Պարտատն մէջ մէկ քանի հարցաքննիչ



դատաւորներն նստեցուցեր էին, որոնք արժանի էին դե-  
րասան ըլլալ այս ողբերգութեան. չեմ գիտեր ուստի  
ժողոված, անգէտք ամենեւին իրաւագիտութեան ա-  
նուանն անգամ: Այս յանդուգներուն մէջ, որոնք ե-  
ղեանական օրէնսգիտութիւնը պէտք էին ուսանիլ, զոնէ  
իրենց անձանց համար, կար մէկ մը որ միւսներուն  
չափ անբան չէր: Գա երեսնամեայ գէր մանչ մ'էր,  
երեսանց բարեմիտ, ամեն բանի մէջ սկեպտական, ու  
րուն շատ հոգը չէր ոչ Հասարակութիւնը և ոչ Վէրսայլ,  
միայն կը ջանար այս դիպուածոց առթիւ քանի մը ա-  
ղէկ ժամեր անցընել. վայրագ չէր և ոչ անդուծ, և  
երբեմն պատրաստ իսկ ծառայութիւն մը մատուցա-  
նելու: Անդոյ չէր նաև զեղեցիկ սեռին ազերաներու,  
և ուսեր էր՝ որ զանազան զիպաց մէջ օրէնքն հրատան  
կու տայ դատաւորին՝ երաշխաւորութեամբ մը անժաւ-  
մանակեայ ազատութիւն տալ կարանաւորելոց:

Այս գիւտը խեղճ մարդուն համար օգտակար յայտ-  
նութիւն մ'եղաւ, որ արդէն աւանդներու և յանձնա-  
բարութեանց Արկղէն անցեր ելեր էր, ոչ մաքուր ձեռ-  
քերով: Ամեն անգամ որ վախ չէր սնենար խնու-  
ցուելու Ռատլ Արկոյէն կամ Թ. Ֆէրրէէն, կը ստու-  
րագրէր երաշխաւորութեամբ ազատութիւն մը: Միայն  
այս գրաւն որ կը զանազանէր 500 ֆրանքէն — 2000  
ֆրանք, իր զրատեղանին վրայ կը գրուէր. խոհեմու-  
թեամբ մը ամենեւին ընկարգելի չէր սար, և կը մոտ-  
նար միշտ զայն յանձնելու անոնց՝ որոց կը պատկանէր,  
որով բաւականապէս զրգանները լեցուցեր էր՝ երբ փա-  
խաւ յետ անկման այն Իշխանութեան, որոյ Արգարութեան  
ներկայացուցիչն եղեր էր: Կը ջանար հաճելու  
իրեն բարեկամներէն զամանս, և սիրով փախուկ բա-  
նակցութեանց մէջ կը մտնար: Իր միջամտութեամբ՝  
Պարիզու նոտար մը Մայիս 5ին բանտեալ ի Պաշպա-  
նոցը և 8ին փոխադրեալ ի Մագաս, կրցաւ 13ին ա-  
զատիլ, 5000 ֆրանք տալով անձի մը՝ որ անշուշտ պէտք  
ունէր:

Հասարակութեան անձինք բնաւ չլրիպեցան Սար-  
ասիին թողուցած աւանդութիւններէն. բանտարկեցին  
իրենց հակառակորդները, բայց և զիրար ալ բանտար-  
կեցին: Կարանաւորութեան տետրին մէջ առաջինն է

է անանցմէ Դարլ Վիւլիէ: Մարտ 23ին կը գրկուի նա  
Պաշպանոցը առանց պատճառի. և գաղտնիքի մէջ կը  
գրուի թիւ 26դ խղիկին մէջ: Եւ սակայն Մարտ 18ին  
սպարապետ էր սպատամբ գունդերուն. իրեն համար  
ևս Տարպեան ժայռը մերձաւար եղեր էր Կապիտալիսնի:  
Բայց այդ պատմութեան չի պատկանիր, և կ'իյնայ  
ըստ ինքեան մտաւորական ախտաբանութեան. իր տեղը  
պէտք էր եղած ըլլար մեր յիմարանոցներէն մին: Եւ  
սակայն բանտարկուեցաւ հրամանաւ և ջանիւք Կեղրու-  
նական յանձնաժողովոյն՝ իւր բարեկամաց: Արգեօք  
լինչ պատճառաւ. — շատ զժուարիւն է զայն զխնայ-  
վասն զի ժամանակին չէր տիրած Ման-Վալէրիէնի,  
կ'ըսեն ոմանք. վասն զի անախորժելի ճշմարտութիւններ  
ըսեր էր Հասարակութեան, կը պատասխանեն այլը-  
վասն զի յիմար էր, վասն զի ինքզինքն ուղեց պատու-  
հաններէն վար ձգել և պէտք եղաւ բռնութեամբ զինքը  
պաշպանել ընդդէմ իւր անձին իսկ, կը յաւելու Կե-  
ղրոնական յանձնաժողով: Ինչ որ ալ ըլլայ՝ Պաշպա-  
նոցին մէջն էր և հոն կը մնար: Սակայն խելացի զըս-  
նուեցաւ երկար տատեն չկենալու:

Մարտ 29ին՝ թիւ 24դ խղիկին մէջ որ իրենին մօտ  
էր, փակեցին Էմիլ Լը Բօ անուամբ երիտասարդ մը,  
որ քիչ մը ժամանակ Հասարակութեան Պաշտօնական  
օրագրին տեսուչ եղեր էր. Վիւլիէ իրեն մէկ հրատա-  
րակեալ թղթին մէջ զայն իւր զրագիրը կը կոչէ. որով  
մէկդմէկ կը ճանչնային: Անշուշտ մէկմէկու հետ ալ կը  
խօսակցէին զոնէ դուռ, որոնք կամու կէս բաց կը թու-  
ղուէին: Միարանեցան, և Ալբրի 3ին զեղերը փախան  
կամոցուկ մը: Վիւլիէ կը կրէր իւր սպարապետի պա-  
տերազմական հագուստը. Պաշպանոցի գաւթին պաշա-  
կապանք ի պատիւ՝ զէնքերնին բարձրացուցին, ինքն  
ալ գասախարակեալ անձ մ'ըլլալով՝ զինուորական բարեւ  
սուտաւ: Երկրորդ առաւօտ ամենքն ապշեցան ըելով  
այս երկու փախուստները. և սակայն իրը պարզ էր:  
Գարբօ՝ տեսչութիւնը սոսա՞ծ ժամանակ՝ հետը բերած  
էր իւր բարեկամներէն Լէգոլ անուամբ մէկը, զանիկայ  
երբև հակող զրեր էր. ծածկապէս իրեն հաշիւ տալու  
պաշապանաց վրայօք: Լէգոլ՝ որուն հետ Վիւլիէ բա-  
նակցեր էր, բացեր էր յիմարաց սեպհական հիւանդա-



նային դուռը, որ մէկ կողմանէ Պաշպանային հետ հա-  
զորդուած է, միւս կողմանէ դուրսի հետ, և այսպէս  
ազատեր էր բանակաւորները:

Լիւլիէ գոհ չեղաւ, իր դառնութիւնը թափեց նամա-  
կով մը, ուղղեալ առ լրագիրն Մօ Թոքաթ... «Գա-  
ծուիք զիս զբնն այն սառն՝ երբ Պարիզ պէտք ու-  
նէր գործունեայ և զինուորական փորձառու անձի մը:  
Պաշպանայը անբաւական բանա գարձեր է, և կալա-  
նաւորեցոյ զէմ ամեն խիստ բռնութիւնք կ'ըլլաին...:  
Այս ժամուս ինձ անձնանուէր 200 անձանց պէտք ու-  
նիմ, որոնք ինձի թիկնապահի սեղ ծառային. և երկու  
լեցան տարբարանակ գրգռանիս մէջ, միտքս գրած եմ  
խորտակելու անոր զուխը՝ որ ուզեցայ զիս կարանուա-  
րել»: Գիտէին որ Լիւլիէ խօսքէն ետ կեցոյ չէ. լուս  
կեցան: Լը Բօ նայնպէս իւր ազատուելովը ուզեց խօսիլ  
առ ժաղիւսրդն. Ապրիլ 15ին հրատարակութիւն մը  
կպցնել սուտաւ, որով կուզէր որ գրուուին կայսերա-  
կանաց ինչքերը, որոց արժէքը կ'ելլէր «գրեթէ 40  
միլիար»:

Ատոյ՛թ-Ալֆրանս Ատի՛ Համադգայնայն զօրուար սո-  
ղեցութիւն ունեցող ընկերագիրներէն մին՝ և որ Կայ-  
սրութեան վերջի սարկները տեսակ մը նշանուար եղեր  
էր խառնութիւններ ձգելով Կրէշպոյի գարբնայի գոր-  
ծաւորաց մէջ, անգամ Հասարակութեան, նախքան Հա-  
սարակոց սոցալիստական յանձնաժողովայն, նախագահ  
կեղրանական յանձնաժողովայն, գրեթէ իշխանացեալ,  
զինուորական հրամանատար Օտէլ զը Վիլի, Ապրիլ 1ին  
Պաշպանայ կը տարուի հրամանաւ Գիւլիոյ գորտաբրին,  
որ էր ենթասարագրեալ ի Ռատու Ռիկոյէ: Անխոհեմ  
գանուեր էր պնդելու Հասարակութեան Ատենին մէջ որ  
անկիկայ իր սահմանէն անցեր էր: Աստի միտպետական  
համարուեցաւ, և իրեն հասկըցուցին՝ ոչ շատ քօղոր-  
կեալ խօսքերով՝ որ կը կտակածէին թէ ինքն Տ. Ռա-  
հերի գաղանի գործակատարն եղած ըլլայ, և ըստ խոր-  
հըրդոյ Տըլեկիւզի, խղիկի մը մէջ փակեցին: Հոն հան-  
գարտ չկեցաւ. Աստի միտքը բորբոքած անձ մ'էր, ա-  
մեն բան հաշուոյ, արբեալ ի գոտաութենէ, ինչպէս  
ընկերավարչութեան շատ մը չոր պատուները, և ի բնէ  
բուսն: Փակուելը և ծածուկի միայնութիւնը սեւիլ

ստակացուցին իր բարկացտ բնութիւնը. ամեն վայր-  
կեան հսկայները կը կանչէր, բերել կու տար տեսուչը,  
և գատաւորները կ'ուզէր: Երեն կ'ըսէին որ ոչ գա-  
տաւորք չկային, և կը սխալէր չհաւատարալը: Վերջու-  
պէս Պաշպանայը ազատեցաւ այս 27 տարուան բռնու-  
տէն, որ ինքն միայնակ բարբ կալանաւորներէն սեւիլի  
շատաչ կը հանէր: Ապրիլ 6ին զինքը Գրանդ-Ռօքէտ  
փոխադրեցին. ուսիկց ելաւ 11ին՝ խօսք ստալով Օտէլ  
զը Վիլի մէջ փակուելու, և քիչ վերջը շուտով Պարէ-  
նից յանձնաժողովայն տեսուչ եղաւ:

Ինչ որ այ ըլլար Հասարակութեան վիճակը, Լիւլիէ  
և Աստի միշտ երկրորդակարգ պիտի մնային, մին իր  
անդէպ և յարախիս բնուարութեան պատճառաւ, միւսը  
իր ազխաութեամբ և փառասիրութեամբ: Ապրիլ 2ին,  
Ատիի կարանաւորման երկրորդ օրը և Լիւլիէի փախը-  
տենէն օր մը առաջ, Պաշպանայի ամեն անձինք գար-  
մացան տեսնելով որ կալանաւոր կը բերուէր Լաի-Նա-  
թանիէլ Ռատու, «քաղաքագիտական պատճառի հա-  
մար»: Ռատուէլ արժէք ունեցող անձ մը կը համարուէր,  
գոնեա ունէր երեւոյթ մը. թէպէտ խարերայ երեւոյթ,  
որ կը ծածկէր խոբին գատարկութիւն մը, յորում կը  
ծփային աննպաստակ երազներ և անձն ծրագիրներ: Եր-  
կար ժամանակ բանաը չպահուեցաւ. Ապրիլ 3ին արդէն  
զինքը ազատել տուեր էր Ռատու Ռիկո:

Ըստ իւր բանից՝ կալանաւորուէր էր ուզելով մի քանի  
բարեկարգութիւններ մտցընել Գաշնաւորութեան բա-  
նակին մէջ. ըստ Կեղրանական յանձնաժողովայն, որ  
զինքը փակել տուեր էր, ուզեր էր ազատիլ անկէ, փան  
զի կը նախատեսէր անոր փախալը ի զիկատարութիւն:  
Խարեմիս քարտղիչներէ ամանք, յետ անկիման Հասա-  
րակութեան բոսձ են, որ ուզեցին ոչընչացընել զնա,  
Փանս զի իւր զինուորական գիտութեամբ էր մասնաւոր  
տեղեկութեամբ կարող պիտի ըլլար յաղթել գաղղա-  
կան բանակին: Այդ խօսքը մեծ սխալու էր իրեն և  
մեծ սուտ: Ռատուէլ կալանաւորուէր էր պարզապէս իր  
սրհամարհոտ բնուարութեան համար, չուզելով խնայու-  
հել ի չղբարթութիւն, որոնք միայն հաճոյ էին իշխա-  
նութեան վրայ եղպներուն: Ռատու Ռիկո գանկիկայ ա-  
ղատելու պատասխանատուութիւնը իր վրան տուաւ, և



կատարեց զայն՝ տակաւին Հասարակութիւնը շորոշած, վասն զի ի վեր էր քան զԳիւլփարս, Էւստ, Բէրփըրէս, Լիզրոնս, և ուրիշ մեծամեծ զինուորակոններ և յեղափոխական կոյտեր, որոց համար գոհութենէ աւելի շուտ ըլլան կը զգար:

Միանգամայն Ռոսսէլ, իր անձին փորձ մը տուեր էր, ինչպէս սովորութիւն է ըսել: Մէցի ներքև եղած բանակին մէջ ամենէն ափսոսանքներէն մին երեցեր էր. կազմեր էր իրեն պղտիկ գաւը, և նոյն իսկ հրամաններ զրկեր էր, յանկարծ ընտիր զիկատատորի մը պէս: Անձնատրութենէն վերջը փախչելով, եկաւ նա հպատակելու ի Տուր բազմոց վարչութեան, և այնքան զարմանալի թեթևամտութեամբ՝ մինչև հասկըցայ որ սիրով յանձն կ'ստնար զինուորական գործադրութեանց ուղղութիւնը: Հասկըցան միաքը, ճանչցան իր բուռն և միանգամայն վարանեալ բնասարութիւնը ստանց հաստատուն կարծեաց մը, և լցեալ այնպիսի փառասիրութեամբ մը, որուն ստատութիւնը ինքն անգամ թերևս կ'անգիտանար: Այսու հանդերձ ստանց ընդգլխութեան մը զինքը հազարապէս անուանեցին, բայց այնպիսի գործ մը ստեին իրեն՝ որ զինքը բուն պատերազմէն հեռի պիտի բռնէր:

Ռոսսէլ համարեցաւ որ իր արժէքը չճանչցան, ուստի ստեղծութիւն մը զգաց ընդդէմ վարչութեանց, թէ՛ կանոնաւոր ըլլալին թէ ոչ, որոնք կ'արհամարհէին իրեն ունեցած արտաքոյ կարգի հանձարը: Գեո 25 տարուան՝ զինուորական ճարտարապետութեան հազարապէս ըլլալը իրեն բուռնացնէր:

1871 Մարտ 19ին կը գտնուէր Նըվէրի բանակը. իւր հրաժարականը կը զրկէ պատերազմի պաշտօնէին և կը վազէ ի Պարիզ մտնելու: Կեղրոնական յանձնաժողովոյն հրամանաց ներքև. անմիջապէս ընտրութեան մէջ ստացաւ Ժ.Կ. Լեգէնի գլխավորութեան ատարձանը: Բանալը գրուեցաւ, ինչպէս ըսինք. բայց այդ ա՛մենին արգելք մը չեղաւ իր բազմին, վասն զի Ապրիլ 13ին կ'անուանուի գլուխ սպայակաւտի պատերազմի պաշտօնարանին: Ալիւզըրէի հրամանաց ներքև ծառայելը անշուշտ իրեն խնարհական պիտի երևնար, վասն զի անոր հանձարոյն վրայ շատ քիչ համարմունք ունէր:

Ռոսսէլ կը կարծէր որ արտաքոյ կարգի զինուորա՛

կան կարողութիւններ ունի, և սակայն բաց ի զինուորէ՛ր ամենայն ինչ: Կրնար մասնական մատենագիր մը, երկրաչափ մը, թուարան մը, զիտուն մ'ըլլալ: Բայց երբեք չէր կրնար գործունեայ մարդ մ'ըլլալ: Եղելութեան մը զիմաց վարանեալ և խռովեալ՝ կարող չէր զինուորական գործ մը աղէկ կերպով ի ծայր տանել: Երկու անգամ Պարիզու քով փորձ փորձեց Վէրսայլի գունդերուն ղէմ, երկու անգամն ալ ստանց զազաւարի մը և ստանց արութեան. միով բանիւ՛ յայտնապէս ծաղրական եղաւ: Կը սիրէր յարմարութիւններ և անոնցմով կը անանէր, կ'երազէր միշտ և երբեք չէր գործեր: Եստակայն կը փառասիրէր ամենարարձը ճակատագիրներու, իր երևակայութեանց մէջ՝ Բոնապարտի նմանութիւն մը տեսեր էր իր վրան, լսեր էր Մազքետի վճռակներուն ուղջոյնները: Կը կարծէր որ մարդկային հօտը իրեն հնազանդերու համար էր, և թէ ինքն ալ կարող էր անոնց ա՛ռաջնորդել: Իրեն կերպ մը բռնած էր, ուսկից երբեք չխտորեցաւ հասարակաց առջև. գոռոզ՝ ստորնագունից հետ, արհամարհող իւր մեծերուն:

Երբ Հասարակութիւնը իր կասկածաւ բնասարութեամբ, (ինչպէս է ամենայն անկարող վարչութիւն), ստաւ Ալիւզըրէի ձեռքէն իւր պաշտօնը, Ռոսսէլ Պատերազմի նախնական անուանուեցաւ: Այն ստեն անձը ճանչցուեցաւ և ամենէն սակաւ տեսողն ալ գուշակից անոր փնտռած նպատակը: Առ երեսո հնազանդիլ կը ցուցընէր Կեղրոնական յանձնաժողովոյն հրամանագիրներուն, և իր զինուորական գործադրութեանց հաշիւ կուտար Հասարակութեան. կը շոյէր այս երկու հակառակընդդէմ իշխանութիւնները. կը յենուր միւրոյն վրայ՝ միւսը անկարող ընելու համար. կ'երազէր երկուքն ալ կրանելու, յաղթել Վէրսայլի բանակին, կուռք մ'ըլլալ իրմէ պատեալ ժողովրդեան, և լսել գոչել՝ « Պղբոյն Կեւար »: Այս երազը շատ երկար չտևեց, վասն զի անժամ էր:

Կանոնաւոր բանակին մէջ բարեկարգութեան և հրամանատարութեան սովորութիւններ ստացեր էր, որոց ընդդէմ կ'երևէին այս իւր առաջնորդելիք նարօրինակ զինուորները. այլ բան մը կարող չէր ընել այն տարերքներով մանուանդ զորս իր ձեռքն ունէր, և իր վարանեալ բնասարութեամբ: Կը տեսնէր որ սխալեր



էր, բայց և չէր ուզեր թողալ բռնած ուղին, յուսարով յանկարծական յաճող զիպաց մը վրայ և չհամարձակելով յետս նահանջել, վասն զի դարձին ճամբան գոցեր էր: Սակայն աղէկ կը գտանք զմարդիկ. «Հայրենասերներ փնտտեցի և սակայն գտայ այնպիսի մարդիկներ՝ որոնք աւելի յանձն կ'անուանին զՊարիզ մասնեկ Պրուսիացուց բան հնազանդել Այգալին ժողովոյն. ազատութիւն փնտտեցի և փողոցներու ամեն անկիւն առանձնաշնորհութիւններ գտայ. հաստարութիւն փրնտտեցի և գտայ դաշնաւորութեան կնճսեալ դասակարգութիւնը...»:

Հազիւ ութ օր էր որ պաշտօնեայ էր պատերազմի և սպարապետ, և տաղտութեանէն կը խզուէր: Մայիս 9ին իւր հրամարականը զրկեց Հասարակաց սպաշտութեան Զանձնաժողովոյն նամակով մը, որ այսպէս կը վերջանար. «Ար բաշուիմ, և պտաիւ ունիմ ձեզմէ խնդրելու խղիկ մը ի Մագաս»: Պատրաստուէր էին իր փափազը կատարելու՝ երբ աւելի խելքով մտածեց և աներևութացաւ:

Պահուրանցաւ նա և կրցաւ ազատիլ Հասարակութեան խաղաղութիւններէն որ սակաւին զինքը կը փնտաէր, երբ գաղութական բանակը ախրեց Պարիզու: Իր թագաւորանն իմացուցաւ Զանձնաժողովոյն օրերը: Մտանուելով պատերազմի երրորդ Ատենին՝ սրուն կը նախագահէր ճարտարապետական հազարապետ մը, գաստապարտուցաւ զիստպարտութեան: Մահը քիչ մը սուգնապալեց երաւ: Քովը անձինքներ ունէր և կոչէր էր բողբոսական հովիւը իւր վերջին մահու վախերը կակզացներու համար: Ստիպուեցան իրեն ըսելու որ այս գանդաղութը իր գաստապարտեալ ընկերաց պատուհասը կը ստատկայնէր: Ար մտածէր այնպիսի խօսք մը ըսելու՝ որ պատմութիւնը զայն յիշէ, և չէր գտներ. գոչ եղաւ բսելով միայն թէ «Ար ճանչնար որ իւր գաստարները իրենց պարաքը կատարեր էին». այդ ալ Անն Պրուսիայի միայնակեցին խօսքն էր. «Այդպար գաստապարտուց դատապարտեցայ»:

Գ.

ԱՌԱՋԻՆ ԱՊԱՏՈՒԹԻՒՆԻՔ

Կարո՞ դարբիսին տեղ կ'անցնի Գրեկ սևոյշ ձոտեր ծախտոյր - Ռիկոյի և ընկերաց ձարեմը - Ժորժ վէյս - Միջևորդ Պարիզու և վէրասյի մէջ - Չորս ընկերութիւնը - Մոնմարտրի թերակտրատեղիք - Զօրավարն Գամբրուսիք - Գազա դաշիք - Հիշցիկեկեր, վերջին տեսութիւն - վէյսի կարանաւորութիւնը - Բերդերուն պարսպութիւնը - Գամբրուսիք կը սպանուի - Գաղղիացի գունդերուն Պարիզ մտնելը - Գանդապարտութիւն շարժունընկերուն և աղետալի ձեռնակը - Զեքր սևոնուած ձանդերմակը այրելու և օդ ձանկուր Ռատիկանուրեան պարատը - Ժան վալլո - Իր սպանունընկեր ձրանակը - Հրացանի կը բանուի - Գաղղիացի գունդերուն յաւաքելը - Պարիզ կ'այրի - Զինուորական գործողութեանց ակնուշարիւնը - Թեոֆիլ Գերթե և սպաննուց գունդը - Սպանունով Ժորժ վէյսի:

Ազրելի վերջը, Գարրոյի տեղ որ Մագասի վարիչ զրկուեցաւ, Պահպանողի վրայ գրուեցաւ Լաֆէն Ծուէ անուամբ կազմ սևոյշ հոտեր ծախտ մը, որ կազ կազ սրահներուն մէջ պտակով, անշուշտ ինքն իրեն կը հարցնէր թէ ինչպէս հոտերը ձեռնատուէն, յանկարծ վարչական պաշտօնի մը անցեր էր: Այս բանիս պատճառուելու համար, քիչ մը փամփոսակ մնացեր էր Ռատու Ռիկոյի գրասենեկին մէջ իբրև ստիկանութեան վերակեցուց: Բայց անոր հետ յարաբերութիւնը չէր փոխած իւր բնաւորութիւնը. անվնաս մարդ մ'էր, միշտ քաղաքացի հագուստով, կարմիր գոտին ուսէն անցուցած, ա-



ունց կրպտութեան կարանաւորաց հետ և ամեն գործ իրեն ստորակարգելոց նախ թողով: Միայն վերջին օրերը քիչ մը բռնկեցաւ, երբ արդէն ապստամբութիւնը սկսաւ հարուածուիլ Պարսկու մէջ. այն տունն կը ճօճէր սարճա՛նակ մը ձեռքով. ուրիշ մ'ալ գօտիին մէջ զբաժ, աշխւթով մը կը խօսէր որ ամենուն ուղեղը օղը պիտի հանէ բայց իր ամեն ապստանալիքներովն հանգեծ՝, աւելի շառաշ ըրաւ քան վրաս: Կը տեսնուէր որ իր պաշտաման պարտուց վրայ լուրջ դադարաւ մը չուներ, վասն զի իր վարչութեան ժամանակ Պաշպանոցին մէջ այնպիսի բաներ պատահեցան, որոց չեմ գիտեր ինչ անուն տարու է: Երեկոյեան ժամը իննին, տասնին ժամանակները, Ռատիկանութեան Պալատան նաւիրակի գրասենեկին պաշտօնէցմէ ոմանք կը ներկայանային Պաշպանոցին դուռը, ձեռքերնին հրամանով մը արտահանելու նշանակուած մատաղահասակ կնկուիք, որոնք օրուան մէջ բանտուած կամ բերուած էին ի Սէն-Լազար: Ասոնք կը յանձնուէին Կաբնէի, Ռիկոյի և կամ Ֆէրրէի նաւիրակներուն, որ երկրորդ առաւօտ նորէն կը բերէին բանտը գնելու: Որով Պաշպանոցը լաւ կազմակերպեալ կանանոց մ'էր, սակից Ապստամբութեան պաշաները կ'ընտրէին իրենց երեկոյեան ընթրեացը ընկերներ: Սյո օրինակ արտահանութեանց վերջինն կը գտնենք Մայիս 20ին և էին հինգ սղջկունք յանուանէ նշանակեալք:

Ամբողջ Հասարակութեան ժամանակ, որ է ըսել Մարտ 18էն մինչեւ 23 Մայիս 1871, Պաշպանոցի (Dépot) մէջ, միայն էրիկ մարդիկ 3632 անձինք մտած են. վերջին օրը Ռատիկանութեան Պալատան բանտը կը մտնէ վերջին բանտեալը Հէլուէն (ժօզէֆ) գարէջուր վաճառող, նշանակուած իբր բոնապարտեան գործիչ: Թէպէտ և ընդհանրապէս առանց պատճառի մը կալանաւորեալք, այդ կերպով կը նշանակուէին: Կա անծանօթ և աննշան մէկն էր, բայց Մայիս 21ին Պաշպանոցը փակուեցաւ այնպիսի անձ մը որ մեծ գործունէութեամբ մտեր էր այն դէպքերու մէջ, որոնցմով Պարիզ գտաւ իւր ազատութիւնը: 3440 թուոյն ներքեւ բանտը գրուեցաւ Ժան Վէյյսէ, երկրագործ, յիսուն և ինն տարուան «լրտե՛ս» խնամքով պահուելիք Ֆէրրէի

տրամադրութեան»: Թանկագին կալանաւորութիւն մ'էր այս Հասարակութեան համար, ձեռքերնին կ'իլնար աներկիւղ անձ մը, որ իր կեանքը վտանգի մէջ դրեր էր Վէրսայլի գունդերուն մուտքը ի Պարիզ գիւրացնելու համար և յաջողեր էր: Ետտոնց ի վեր կասկած կար վրան և կը հօկէին իրեն Ռատու Ռիկոյի և Ֆէրրէի գաղտնի լրտեսները. բայց կրցեր էր ամեն խուզարկութենէ փախչիլ մինչև այն օրը յորում արծաթատէր գոնապանուհի մը զինքը մատնեց և այսպէս ինկաւ Թէոֆիլ Ֆէրրէի ժանեաց մէջ: Արդէն Մայիսի 11էն 12ի գիշերը Յուրեկնի վրիժառոշը շրջապատած Ռատիկանութեան վերակեցու մը, յարձկեր էին Կոմարտէն փողոցը ունեցած բնակութեան վրայ, և զինքը հօն չգտնալով, առեր տարեր էին իւր ամուսինը Տիկ. Ֆորտան Վէյյսէ առ նաւիրակն Ապստամբութեան. որ գանիկալ Պաշպանոցը բանտել տուաւ: Տիկինը գիտնալով իւր էրկանը վտանգաւոր բանակցութիւնքը, իրաւունք ունէր վախնալու. մօտ գտնուելով Ռատիկանութեան Պալատան ուղեց հեռանալ: 3000 ֆրանք տալով Հասարակութեան մէջ մեծ դիրք ունեցող անձի մը փոխադրուեցաւ ի Սէն Լազար, ուր գրուեցաւ վճարմունքով սենեակ մը, քաղաքային պահապանաց բանտեալ կանանց հետ:

Պաշպանոցի Յուցակի մէջ Վէյյսէի անունը Ժան գրուած է, թէպէտ իւր անունն էր Ժորժ: Պարիզու պաշարման ժամանակ, պաշտօն ունեննալով քաղաքին մէկ մասին պաշարը հօգալու, յաճախ յարաբերութիւններ ունեցեր էր Ազգային Պաշտպանութեան վարչնեւրուն հետ և զինագաղարէն ու հաշտութենէն վերջնալ այս յարաբերութիւնք շարունակուեր էին: Մտածեց Մարտ 18էն վերջը, միջնորդ ըլլալ Հասարակութեան և Վէրսայլի կառավարութեան մէջ. այսպէս առաջըր անուլ այն կուռոյն որ վախ կար և Պարիզ յանձնել օրինաւոր վարչութեան: Վէրսայլի կառավարութիւնը չմերժեց առաջարկը և յորդորեց որ ի գլուխ սանի իւր խորհուրդը: Նախ խնդիր եղաւ նոյն իսկ Պարիզու մէջ շարժում մը փորձել, և նոյն իսկ Հասարակութեան զօրավարներէն ոմանք անխող չեղան խօսքերուն. և յոյս կար լուրջ նպատակի մը հասնելու, երբ Վէրսայլի վարչութիւնը իր նախկին գիտաւորութիւնք փո-



խելով, յորդորեց զժորժ Վէյսէ դաշնակից գունդերուն  
գլուխներէն մին շահելու և անոր միջոցով ջանալ որ  
բերդորմոց մէկ կամ երկու դռները իրենց յանձնուին:

Ոստիկանութեան լրտեսութիւնքը խարխուրու հա-  
մար, որոց մէջ Ռասու Ռիկոյի վարպետութիւնքը գիտէր  
Վէյսէ, իւր արամադրութեան ներքեւ եօթը բնակութիւն  
ունէր, որով ստէպ կը փոխէր իւր տեղը. բայց ամենէն  
կարեւոր հաւաքմունքները ընդհանրապէս կ'ըլլային Մա-  
դրիզի փողոցը թիւ 29 կամ Ռուէ փողոցը թիւ 3: Ետ  
ճարտար քե էր Վէյսէ, վեհանձն ինչպէս ամենուն բա-  
րեք կամեցող մը, և որ մեծ ծառայութիւն մատոյց  
գաղղիական բանակին Մոնմարտի թնդանօթատեղիքը  
գնելով: Արպէս զի հաւատայ ստոյգ վաճառման վրայ,  
իւր աչքին դիմաց թնդանօթները մխեցին և ինքն ալ  
տուաւ գաշնադրեալ 10,000 ֆրանքը: Մայիս 14ի, Մոն-  
մարտի թնդանօթը վաթսուն գաշնակցականք սպաննե-  
ցին ի Լըվալլուա — Փէրրէ և պաշտօնական լրագիրը  
երկրորդ օրը կ'ըսէր համեստութեամբ մը որ « Հարուած-  
ներուն դեռ ուղղութիւնը ճիշդ չէր »: Այս ամենը տե-  
սակ մը պատրաստութիւն էր դէպի գլխաւոր դաշնա-  
դրութիւնը որ կը յառաջէր: Կ'աշխատուէր Գոմբրովսքի  
զօրավարը Հասարակավարչութիւնէն հանել, և ի վարձ  
իւր այս գործոյն այնքան զրամ տու իրեն, որ գումար  
մը ձեւանայ և ապրի Գաղղիայէ դուրս: Վէրսայի վար-  
չութեան գլխաւոր անձերէն մին Մայիս 10ին կը գրէր  
առ Վէյսէ Գոմբրովսքիի հետ որ և իցէ կերպով լմնցնել  
այս գործը, Դաշնագրութիւն մը կատարուեցաւ ինչպէս  
թէ երկու հաւասարագօր պետութիւնք ըլլային: Բոլոր  
բերդերուն գիծը Պուան աիւ Ժուրի դռնէն մինչեւ  
Վագրամի դուռը պիտի յանձնուէր կանոնաւոր բանա-  
կին: Վէրսայի վարչութիւնը իւր կողմանէ, պիտի վճա-  
րէր Գոմբրովսքիի և իւր սպայակուտին 1,500,000  
ֆրանք, պիտի տար նաեւ ազատ անցագիր Պարիզէ մեկ-  
նելու համար: Գումարը պիտի վճարուէր Գաղղիոյ Դրա-  
մատան տոմսակներով կամ Ֆրանքֆորդի Ռոչուլտի տան  
վրայ փոխանակագիրներով: Վէյսէ իւր կնոջը բռնուելէն  
վերջը սպաւիններ էր ի Սէն Տընի, Լապէն բլակ, պան-  
դակը: Հոն կ'ընդունէր Հիւցինկէր անուամբ սպայ մը,  
մտերիմ Գոմբրովսքիի: Դաշնագրութիւնը պիտի գոր-  
ծադրուէր Մայիս 20ին:

Այդ օրը Հիւցինկէր Վէյսէի հետ ժամադրութիւն  
դրած էր ի Սէնտ Օւան որ չէզոք շրջանակ մ'էր, և ուր  
պիտի խօսէին վերջնականապէս ըլլուելիքներուն վրայ:  
Պլանա երեսփոխանը զՎէյսէ նշանակեալ տեղը տարաւ,  
որ տեսնուեցաւ Հիւցինկէրի հետ: Գոմբրովսքի պէտք  
եղածը ըրած էր: Հիւցինկէր հանել տուեր էր թնդա-  
նօթքը և դադրեցուցեր էր կրակը: Դաշնակցական գուն-  
դերը յետ շարժուն կամուրջը իջեցնելու, ետ պիտի քա-  
չուէին, իբրեւ թէ այսպէս զօրավարը դիւրութեամբ  
արտաքին քննութիւն մը պիտի ընէր: Մաթիէօ անուամբ  
հազարապետ մը որ և նա գիտակ էր դաւոյն, պիտի  
գործադրէր այս ամեն հրամանները: Հիւցինկէր և Վէյսէ  
յարմարեցան ամեն բանի վրայ և Վէյսէ ցըցուց անոր  
20,000 ֆրանք որ անմիջապէս մեր բանակներուն Պարիզ  
մտնելուն, պիտի յանձնուէր Գոմբրովսքիի իբրեւ կան-  
խիկ մը իւր մեկնելուն առաջին ծախքերուն: Հիւցինկէր  
ձի հեծաւ հեռանալու և այն վարկենին որ Վէյսէ կը  
պատրաստուէր հասնելու Պլանայի որ իւր կառքին մէջ  
կը սպասէր, բռնուեցաւ: Զինքը մատներ էր Միւլլէր  
անուամբ կնիկ մը, զոր ստիպուեր էր իբրեւ միջնորդ  
գործածելու իւր և Հիւցինկէրի մէջ:

Այն թշուառը որ յաջողեր էր բերդերը անդէն ընե-  
լու և այն օրը որ օրինաւոր բանակները զայս իմանալով  
Իււքասուէլէ, դիւրութեամբ կը մտնէին ի Պարիզ, ինքն  
ալ կը մտնէր ի Պահպանոց: Գոմբրովսքի վախնալով որ  
Վէյսէ զինքը չմատնէ, խիթալով որ ամենը զինքը թո-  
ղուն և կասկածելով իրեն համախոհ սպաներէն, ետ քա-  
չուեցաւ: Մայիս 23ին երբ կ'անցնէր պուլվար Օւնա-  
նոյի պատնէչներէն մէկուն դիմացէն, կնիկ մը հրա-  
ցանի հարուած մը քաշեց վրան և վերաւորեց ստամոքսի  
խորշը. քիչ վերջը մեռաւ: Մեծ թաղումն ըրին իրեն  
ի Պէր Լաշէզ և քիչ մնաց իւր դագաղին քով հրացանի  
պիտի բռնուէր գերեզմանափոր մը, որ բաւականապէս  
կայրենասիրական ցաւ մը չէր արտայայտած:

Մայիս 22ին Պահպանոցի բանտարկեալք հեռուանց  
թնդանօթներու ձայներ լսեցին և քիչ վերջը իմացան  
որ պատերազմը սկսեր էր նոյն իսկ Պարիզու մէջ: Յոյս  
ունեցան որ գաղղիացի գունդերը փութով յառաջելով,  
զիրենք փրկեն. սակայն ատիկայ յուսախաբութիւն մը



եղաւ: Հասարակութեան կողմնակից պատմագիրք կը զարմանան որ Վէրոսայի բանակը այնքան դանդաղեցաւ յետ միագամ Պարիզ մանեւուն. կը համարէին որ կարող էր անմիջապէս ընկճել Հասարակութիւնը: Յիրաւի այդ կարելի էր Մայիսի 21ին և 22ին, բայց երկրորդ օրը Պարիզու մէջ հինգհարիւր ութսուն և երկու պատնէշք բարձրացեր էին, զորս մէկիկ մէկիկ պէտք էր զրաւել, և այսպէս սպասամբք ժամանակ սենեցան հրդեհներու և սպանութեանց: Միտնգամայն ամեն խոհեմութեամբ կը յաւաճուէր, որ չ'ըլլայ թէ յանկարծ պարտութիւն մը տեղիք ունենայ, որուն հետեւանքները ամենամեծ էին. որով և սահմանեալ սպահով ծրագրով մը կ'ընթանային, և շէր կարելի չեղիլ անկէ յետ քսան և չորս ժամ կուտելու:

Էրիկ մարդ կալանաւորաց թիւը այնքան շատ էր Պաշտպանոցի մէջ, որ ստիպուէր էին ոչ միայն բազմութեամբ լեցնելու ըստ կանոնի իրենց սահմանեալ խզիկներուն և սրահակներուն մէջ, այլ և զոցեր էին կանանց պատկանեալ հասարակաց սրահներուն մէջ: Իսկ կանայք տարածուէր էին առաջին յարկին մէջ Յաւելուած կոչուած տեղը, ուր սովորաբար կը դնէին այն աղջկունք զորս կուզէին բաժնել: Բանտին այս մասը որ կը բաղկանայ սրահէ մը և խզիկներէ, կը նայէր այն տան գաւթի մը վրայ, ուր կային տախտակամած անցքեր, որոնք կը միացնէին Ռատիկանութեան պալատան սպասահարկութիւնքը քաղաքապետին գրասենեկին հետ: Տախտակամածի անցքերուն և Յաւելուածին մէջ հազիւ մէկ մէդրի հեռուութիւն կար: Բանտարկեալք գիտէին որ իրենցմէ երկու քայլ հեռու կը տեսնուէին իրենց բանտերը: չըջակայ շէնքերը այրելու պատրաստութիւնք:

Մայիս 22ին, առաւօտեան ժամը վեցին ատենները, դաշնակցական հարիւրապետ մը որ Ռատիկանութեան Պալատան հրամանատարի պաշտօնը կը կատարէր, այցելեան ուղղակի ստացած հրամանները ի գործ կը դնէր: Արտնեց այն յարմար տեղուանքը, յորս կրնար գետեղել շատ մը սպանք և վառօդի տակաոնքեր Պալատան շէնքերը օդը հասնել տալու համար: Իրեն յարմար ընտրած տեղերն եղան խորերէն մաս մը, Պրաս Դոֆինի անկիւնը

կղած խաղաղութեան պահպանաց կայարանը, զիսաւոր դրան մօտ, բարուց ջոկատին կայարանը, նաեւ խուզարկութեանց հինգերորդ ջոկատին կայարանը, Հարլէ տիւ Պալէ միջոցը, Պերուսանուսի ալ և ձախ կողմերը: Այս ամեն գործողութեանց համար հարիւրապետը իրեն առաջնորդ առած էր Ռատիկանութեան ստորին պաշտօնեայ մը, զոր յետոյ անմիջապէս բանտարկել տուաւ Պաշտպանոցի մէջ, որպէս զի մինչեւ գործոյն կատարուիլ չգտնուի զիացող վկայ մը: Նոյն 22ին երկուշարթի օրը, երեկոյնան ժամը չորսին Վրիժառուք Յուրեկուսի վաշտ մը, որ իրենց ճերմակ քեփիկէն կը ճանչցուէր, Պաշտպանոցը բերաւ դաշնակցաց զգեստով անձ մը, որ բանտը դրուեցաւ ընդ անուամբ Ժան Վայիօ, քսան և ութ տարուան: Նոյն ատեն ծառայող հսկիչը, զինքը ազատելու համար այն շարչարանքներէն որ իրեն կուտային, զինքը մտցուց 415 խզիկին մէջ: Այն մարդիկը որ զինքը բերեր էին, խմբուած կեցան գաւթին մէջ, բանտին դրան առջեւ, կարծես մէջերնին բան մը կը սահմանէին, իրենցմէ մէկը զրկեցին Ռատիկանութեան Պալատան տեսչութեան, ուր Ֆէրլէ մշտամաց կեցած էր իբր նուիրակ Հասարակաց Ապահովութեան և իրենք սպասեցին: Այս միջոցիս Վայիօ երկայն բարակ նամակ մը կը գրէր, որով կը պահանջէր հինգ ֆրանքի գումար մը, զոր իրմէ յափշտակեր էին կալանաւորուելու ժամանակ: Ո՞վ էր այս Ժան Վայիօ, արդեօք դատախիզ դաշնակցական մը, արդեօք այն ազգային պահպաններէն որոնք մասնակցեր էին Հասարակութեան Բազմակներու կոչուած գաւոյն մէջ, կամ այն հարիւր յիսուն հրաձիգներէն զորս Վէրոսայի վարչութիւնը ծպտեալ զազանի Պարիզ մտուցեր էր: Հաստատուն կերպով բան մը չկրցանք իմանալ: Յուրեկուսի Վրիժառուներուն զրկած նուիրակը ետ զարձաւ ձեռքը թուղթ մը ծածանելով, զոր ցցուց ընկերներուն: Ատնք մտան Պաշտպանոցը և բանտապետին ցըցուին բերած հրամանագիրնին: Հրաման մ'էր սպանութեան, և լաւ է զայն մէջ տեղ բերել, որպէս զի տեսնուի թէ ինչ անտարբերութեամբ այդ մարդիկը մարդկային կենաց վրայ որոշողութիւնք կ'ընէին: Թուղթը գծուած էր, կարծես հաշուէտեսարակէ մը փրցուած «Առանց թուականի. Վրիժառուք Ֆուրլէնսի. հրաման կը տրուի ան-



միջապէս հրացանի բռնելու (Վայիո Ժան) անձը, որ ձեռքը զէնք բռնուեցաւ 1871 Մայիս 22ի պատահարին մէջ » : Բոլորը սխալ և հաստ գրութեամբ, առանց ստորագրութեան, միայն կարմիր ճանկի պէս գծեր :

Հրամանատար, Բանտապան. կնիք՝ Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն, ջոկատ Վրիժառուք Ֆրեյմսոնի : Գաղղիական Հասարակապետութիւն : Հակառակ կողմը, կնիքի ներքեւ. Հասարակութիւն Պարիզի, Նուիրակ ընդհանուր վարչութեան, անձնատողով Հասարակաց Ապահովութեան, կը կարգըցուի « Հասարակաց Ապահովութեան նուիրակը չ'արգելուր հրամայուած սպանութիւնը այլ ընդհակառակն կը հաւանի Թ. Ֆէրրէ » : Վայիո իրեն սպասող գունդին յանձնուցաւ : Երբ դաշնակցաց մէջ մտաւ, պահանջեց հինգ ֆրանքը զորս իրմէ առեր էին : Վրիժառուքներէն մին պատասխանեց. « Հիմա քեզի կուտանք, մեզի հետ եկուր » : Զինքը քարշեցին Օլրոտի գետափը և հոն հրացանի բռնեցին : Բանտապանը բանտելոց ցանկին սիւնակին մէջ զրեց որ « Հանուեր էր սպանուելու համար » :

Այս անձանթով կը սկսի բանտերուն մէջ կարգաւ սպանութեանց շարքը : Զասիկայ Պրոչրեկսի Վրիժառուք սպանեցին, միւսները պաշտօնական ձեւ մը առին և հրամայուեցաւ Հասարակաց փրկութեան անգամներուն ժողովքէն : Հարկ կը համարիմ յիշատակել որ Հասարակութիւնը պատերազմը սկսելու օրէն, սպանեցին որ իւր խելքին կարեւոր դատեց : Մայիս 22ին այս խեղճ անձանթով սկսաւ, բայց նոյն օրուան երեկոյին հոգաց ժողովելու իւր գուշակած վերջին ապաւէնին մօտ, այն նշանաւոր անձինքը, զորս վեց շաբաթէ ի վեր բանտեր էր, որպէս զի երբ ժամանակը գայ, ամենը մէկէն դիրութեամբ կարենայ սպաննել :

Մայիս 22ի օրուան մէջ եօթնասուներինն անձինք Պահպանոցը բանտարկուեցան. բանտուելուն պատճառները նոյն են. կը տեսնուի որ Հասարակութեան շուրջը վտանգը կ'առաւելու և ամեն կողմ, ոչ առանց պատճառի, թշնամիներ կը տեսնէ. « Նախատիք ազգային պահպանաց—խօսակցութիւնք հակայեղափոխականք — չուղել պատնէշներուն աշխատիլ — ուրախ որ

Վերսայլ Պարիզ գայ — համաձայնութիւն Վերսայլի Ժեզուիթներուն հետ » : Երկու երեք հոգի բանտուեցան իրրեւ թէ պատուհաններէն դաշնակցաց վրայ հրացան պարպած ըլլան, ասոնց մէջ էր նաեւ Տուլլըվաց, Գոֆէնի հրապարակի մէջ Հանրի ֆարրը պանդոկին տէրը :

Տխուր գիշեր մը անցաւ Պահպանոցի մէջ : վերջին կաշնաւորք պատերազմին լուրերը բերեր էին. դունդերը խոհեմութեամբ կը յառաջէին. տիրելով Լնվալիզի և Բատինեօլի մէջ կեդրոնէ զօրս մասերուն, միշտ կը տեղաւորուէին, բայց ուղղակի Օթէլ տը Վիլի վրայ յարձակումն չէին ըներ, որ ապստամբութեան կեդրոնական բերդը դարձեր էր : Դաշնակիցք ալ իրենց կողմանէ ժամանակին չէին կորսնցներ. ամեն կողմանէ պաշարներու սայլեր կը հասնէին : Հին արուարձանքն Մէնիլմոնտան, Վիլլէր, Բէլվիլ, Դարոն և Իվրի ու Մոնպարնասի մէջ եղած թաղերը կը շրկէին իրենց օգնութիւնը դէպ ի Պարիզի կեդրոնը, ուր պատնէշք կը բարձրանային ամեն փողոցներու անկիւնը : Հասարակութեան անգամք իրենց պատկանեալ դիրքերուն համար մեկնած էին. միայն Հասարակաց Փրկութեան յանձնաժողովը և Պատերազմի նուիրակութիւնը մնացած էին յՕթէլ տը Վիլ :

Մայիս 23ին օրը համեմատաբար հանդարտ անցաւ. տասնութէկ կաշնաւորեալ անձինք բերուեցան, շատ փոքրիկ զուճար մ'էր այս. Ֆէրրէ և Ռատու Ռիկո ուրիշ բաներ հօկելու զրադած էին : Ամենայն օր լուռ էր. հասարակաց օրահներուն մէջ ցած ձայնով կը խօսէին. բնաւ շառաջ մը չկար խղիկներուն մէջ : Հսկողք անհանգիստ բայց հաստատամիտ կերպով կը շրջէին անցքերուն մէջ. երբեմն երբեմն բանտապան մը կ'ելլէր դուրս, կ'երթար մինչեւ Օլրոտի գիտափը, ահանջ կը գնէր և դեռ շատ հեռու կը լսէր հրացաններուն ձայնը. ներս կը մտնէր. կ'ըսէին իրեն « Ուրեմն » կը պատասխանէր « միշտ կը կուտին » և նորէն կը տիրէր այն խռովեալ հանգարտութիւնը, որ միշտ կարապետ է մեծ վտանգներու : Երբ գիշերը եկաւ, Հասարակաց օրահներուն բանտարկեալք, որ մեքենայայէս մը կը նայէին պատուհաններէն, տեսան կարմիր լոյսեր զորս ամպերը կարծես իրենց ընթացքին հետ կը բերէին և գոչեցին.



« Պարեզ կ'այրի » : Կը խոնէին պատուհաններուն մօտ աւելի լաւ տեսնելու համար . բանտապանք մինչեւ Պոն-Նէօֆ գացին և զարհուրեցան : Սէնը ծիրանեգոյն գետ մը դարձած , կը հոսէր երկու բոցերու մէջէն , ալ կողմը Տիւրքի կը հրկիզէր , ձախ կողմը Լէփոն ա' Օնէօրի պալատը , Հաշուէտունը , Աւանդներուն և Յանձնեայնե-րու Արկղը . Լիւ և Բակ փողօցը կրակը առեր էր : Դաշնակցականք խառն ի խառն կը քնանային Պլաս Դոֆէնի , Հարլէ տիւ Պալէ փողօցին մէջ և Պոն-Նէօրֆի որմարգելներուն վրայ : Կրակով լուսաւորեալ խաւարին մէջ , կոխը դադրեր էր . հոսկէ կամ հոնկէ զիչերապահի մը հրացանի արձակած հարուածը միայն կը խոռվէր գիշերուան լուսթիւնը , կը լուսէր եւս բոցերուն ճար-ճատիւնը , որոնք դէպի երկինք կը բարձրանային :

Չորեքշաբթի Մայիս Չի արշալուսին , թնդանօթները սկսան : Իլ տը լա Սիթէ բռնուած էր պատերազմի կրկին շրջանակներէ . դժբաղդարար Սէնի երկու ճիւղերը զինքը պաշտպանելով , արգելք մը կ'ըլլային օրինաւոր զուն-դերուն երազութեամբ անցնելու անկէ : Եւ սակայն բա-նակը կը յառաջէր ապահով քայլով : Չախը կ'անցնի Լուվը , Պալէ Ռուայիալ , Բանքը , կանգ կ'առնու Սէնա Իւստաշի ծայրը եղած ընդդիմութեան պատճառաւ , բայց կը յառաջէ դէպի Մոնթոյոնի միջափայրը և Հիւսիսային կայարանը : Ալը կը չուէ Ասա և Նոտրը Դամ տէ Ծան փողօցներէն , կը հասնի Վալ դը Գրաս և կը սպառնայ Պանթէոնի : Կը տեսնուի որ բանակները կը կեդրոնա-նան : Գործողութեանց առանցքն է Մոնմարտի բլրակը , այդ նշանաւոր Ավենտինեան լեռը , որուն նախընթաց օրը կէսօրուան ժամը մէկին տիրեր էին . և այդ իրաւցնէ ահաւոր բերդին այդքան դիւրութեամբ տիրուելուն զլիաւոր պատճառն եղած էր թերեւս Ժօրժ Վէյյէի սկսած բանակցութիւնը : Այս դժբաղդին ժամն ալ մօտ էր ինչելու . զոհ պիտի երթար իր անձնանուիրութեանը այն խնդրոյն համար , որուն յաղթանակը պատրաստեր էր :

Առաւօտեան ժամը ութին , թէօֆիլ Ֆէրրէ հետը առած Ֆրոշքենի Վրիժառոչներէն ընտրած վաշտ մը , կանգ առաւ Պահպանոցի գաւթին առջեւ : Գորշագոյն թեթեւ վերնազգեստ մը հագած էր , սեւ թաւիչեայ փողպատով և ձեռքը բռնած էր բարակ զաւազանիկ մը որով կը

ծեծէր իւր տաբատը : Դարձաւ իւր գնդին և ըսաւ « բոլոր քաղաքական պահապանք , բոլոր զինակիրք , բոլոր կղերականք անմիջապէս հրացանի պիտի բռնուին . վստահ եմ ձեր վրայ » : Երկու մատաղահասակ դաշ-նակցականք յայտնեցին որ պատրաստ էին պատերազ-մելու , բայց չէին կարող այդօրինակ ազեզ գործողու-թեան մը : Ֆէրրէ գանոնք վատ կոչեց , իրենց ընկերները « պարագորդներ » կանչեցին . բան մը պատասխան չտուին և քաշուեցան :

Ֆէրրէ իր մարդիկներով Պահպանոցը մտաւ : Դաշ-նակցականք մեծ վանդակադուռն կոչուած մուտքին մէջ մնացին : Ֆէրրէ բանտը գնաց , զրկեց մէկը վարիչը բնտուելու , և անոր հրամայեց զՎէյյէ բերել տալու : Քանի մը վարկենէն Վէյյէ երեւցաւ հսկողի մը հետ : Տեսնելով այս զինեալ անձինքը և ճանչնալով եւս զՖէրրէ , զուշակեց զլիսուն գալիքը : Սակայն ինքզինքը չլաւ բռնեց և ըսաւ « Երբոր ես կալանաւորուեցայ , ու-նէի վրաս 20,000 ֆրանք , կուզեմ գիտնալ թէ ի՞նչ լըր հաշիւնիս մէկ անգամէն կը մաքրենք » : Ֆրոշքենի Վրիժառոչը շրջապատեցին զՎէյյէ , որ մնաս բարովի ձեւ մը ըրաւ հսկողի մը : Սա մօտեցաւ Ֆէրրէի երբ դոնէն դուրս կ'ելլէր և ըսաւ իրեն . « Բայց անշուշտ հրացանի չէք բռներ այս մարդը — Զքեզ ալ մէկտեղ , թէ որ գոհ չես » , պատասխանեց Ֆէրրէ :

Գունդը ուղղուեցաւ դէպ ի Պոն Նէօֆ . երբ հասաւ Հենրիկոս Դի արձանին մօտ որմարգելին , կանգ առաւ : Ֆէրրէ ըսաւ Ժորժ Վէյյէի « Հրացանի պիտի բռնուիս , բան մը ունիս ըսելիք զքեզ պաշտպանելու համար » : Վէյյէ ուր թոթվեց . զինքը մղեցին դէպ ի վանդա-կապատը : Ֆէրրէ կրակ հրամայեց : Չորս հոգի դիակը բռնեցին և ձօճելով որմարգելէն վեր , նետեցին Սէն գետը : Ֆէրրէ ըսաւ այն ատին . « Արժանի էր պատ-ժուելու ժողովրդեան արդարութեանէն . կը տեսնէք , քա-ղաքացիք , որ մենք ամեն բան յայտնապէս կ'ընենք » :



Ե .

ԵՆԹԱՊԱՆՊԱՆՊԵՏՆ ԲԻՍԲՈՐՆ

Յերրե կը դաւնայ Պանպակոց - Ժողեփ Ռիւօ - Բրարոն կը միջանտե - Բանտարգելոց տեսիր - Մէշկի - Ռիւր - Տոլլըվազ - Պատրաստուողիւշեր Ոստիկանութեան պարատր աշխարհ - Բանտարգելներուն սարսափը - Հրդեհը կը սախտակերը - Բրարոնի սպասուհիիլը - Կ'արձկե կալանաշորքը - Անպարտուող փախուշտ - Ոստիկանութեան պաշտոնի կ'աշրի - Մասնակցներուն նստուիլը - Տիկեկ Սեկե - Երբոշ փարսափրայն - Աշաշիկ հրդեհաշիջողներուն նստուիլը - Պանպակոցի կալանաշորք - Հրդեհը կը շրջապատե Պանպակոցը - Բրարոն կրակիկ աշխատուշեան գրոշս - Ողորշուն - Պանպակոցը կ'ազատի - Բունժանի խօսքը առ Պիեր Բրարոն .

Վէյսէի սպանմանէն վերջը Յերրե Պանպակոցը չ'երևնալով, մէջինները կը համարեին որ անկէ ազատեցան, բայց նա միտքը զրեր էր դառնալու, միայն կանխապէս ուզեր էր Ոստիկանութեան պարտան ամբողջովին կործանմանը պատրաստութեանց հսկելու: Ժամը ինն և կիսուն միջոցները, նորէն բանալ ներկայացաւ. գիտէ որ վայրկեանները թանկագին են և պէտք էր անպարտել: Այս անգամ միայնակ չէր և բայ ի Ֆրոքիենի փրիժառուներէն ուրիշ չորս հոգի ալ հետը առած էր, ուրոնցմէ երկուքը Հասարակութեան դատաւորներէն էին: Իր ետեւէն ունենալով իր մարդիկը, ինչպէս պաշա մը իր չափուշները, Ֆուէ տեսուչին հետ մտաւ, ստորալան ժամանակ, դատաւորաց վերապահեալ գրասենեակը .

պատուիրեց ենթապահապանապետ Բրաքոնի իրեն բերելու բանտին ցանկը . Բրաքոն իր ետեւը կեցաւ: Յերրէն Հետը թուզթ մը առած էր որպէս զի վրան նշանակէ այն կալանաւորելոց անունները, որոնք կուզէր սպաննել . և տեսարակին բաժանմունքները և նշանները չհասկցող մարդու մը պէս դանդաղութեամբ կը թղթատէր տեսարակը . և շուարեր էր այդքան զրուծեանց մէջ: Եւժէն Ֆուէ, որ և նա անխաբ էր բանտերու արձանագրութեանց, յակամայտ աւելի կը շփոթցէր զինքը, փոխանակ օգնելու . բանտապետը կը զգուշանար երևնալու և ենթապահապանապետը անխոտով կեցիր էր ետեւը:

Յերրէ չէր ուզեր մէկիկ մէկիկ հողալ, ինչպէս Վէյսէի ժամանակ, կը յուսար մէկ անգամէն լինցնել բոլոր «կապիճաւորները», և իր մարդկանց հրացաններուն ամբողջական խումբ մը ներկայացնել: Ամենէն առաջ Ժողեփ Ռիւօ անունը գրեց, կարծեցեալ բնապարտեան գործող, իր հրամանովը կալանաւորուած Մայիս 15ին և բանալ գաղանխելի գրուած 62դ խղիկին մէջ: Այս անունը գրեց ի յեշտութենէ, առանց գտնելու Տեսարակին մէջ: Բրաքոն զայն կարողաց ետեւէն և անտարբերաբար հեռացաւ . իրեն մէկը որ շատ սպասելէն կը ձանձորանայ: Երբ այնքան հեռացաւ որ ալ չէր տեսնուէր, մտաւ խղիկներուն բաժանման մէջ, բացաւ Ռիւոյի արգելարանին դուռը, զինքը բռնեց թեւէն և ցած ձայնով իրեն ըսաւ «Ինչ ալ ըլլայ, երբ քու անունդ կանչեն, պատասխան մի տար»: Յետոյ տճապարանօք զինքը մարդկանց հասարակաց սրահը բերաւ, հոն ներս մղեց, և խոռոնց երեքհարիւր կալանաւորելոց մէջ:

Այս ընելէն վերջը հարցաքննութեան դատաւորին գրաւ սենեակը դարձաւ: «Շուտով, ըսաւ իրեն Յերրէ, կանչէ Ռիւօ»: Բրաքոն նետուեցաւ սրահներուն մէջ բոլոր ձայնովը կանչելով Ռիւօ . — Ռիւօ որ գաղանխելի մէջ գրուած էր կանխաւ, բնաւ ծանօթ չէր հիմա խառնուած բանտարգելոց, ստեցաւ և ձայն չհանեց: Ի զուր Բրաքոն բարձրաձայն կը կանչէր: Հսկողները՝ որ բոլոր նոյն օրը Բրաքոնի տուած միջմանը հնազանդեցան և հաստատուպէս անհնազանդեցան պաշտօնական պահապանապետին, որուն վրայ բնաւ վստահութիւն չունէին, աւոնք ալ հետեւելով իրենց զխաւորին, որուն միտքը հա-



կըցան, վեր վար կը վագէին բանար «Ռիւօ, Ռիւօ» կանչելով: Ոչ ոք կը պատասխանէր. «Ուրեմն այս Ռիւօն»։ Բաւ Ֆէրրէ Բրաքոնի, որ ցաւած կերպարանքով մը կը դառնար, «Անկարելի է գտնել, կը լսես որ ամենքն ալ զինքը կը կանչեն: Ֆէրրէ բարկացաւ ձեռքը գրասեղանին զարկաւ «Ամեննիդ ալ վերայցի էք, կանչեց, ամեննիդ ալ. եթէ այս վարկենիս Ռիւօն շուտ չըբերէք, զամեննիդ ալ հրացանի պիտի բռնեմ: Բրաքոն պաղ արեամբ պատասխանեց, որ «աակէ ինչ օգուտ: Ներէ որ ըսեմ, քաղաքացի նուիրակ, որ դու արհեստդ չես գիտեր. մենք կը հնազանդինք, որովհետև մեր պարտքն է. բայց դու մեզ փնտռել կուտաս բանաւորկեալ մը որ շատոնց Պանպանոցէն ելած է. և անոր համար չենք կրնար գտնել:

«Ինչ, ըսաւ Ֆէրրէ, Ռիւօն հոս չէ. ուրեմն ո՛ր է» — Չեմ գիտեր, պատասխանեց Բրաքոն, բայց մէկ մը նայինք: Այս ըսելով առաւ տետրակը և բանափ գործոց վարժ մարդու մը պէս սկսաւ զայն դարձնել և ցըցուց թիւ 2609 և կարդըցնել տուաւ Ֆէրրէի «Ռիւօ Ժիւրէր, յանցաւոր բռնապարտեան երգեր ծախելուն համար, կալանաւորեալ 19 Ապրիլի, փոխադրուած Սանտէ բանաւոր Մայիս 18ին հրամանաւ Լատին Լըլրոյի»: Ֆէրրէ չգիտեց ոչ մկրտութեան անունը և ոչ բռնուելուն թուականը. առտոաց իր բաժնին գլխաւորին դէմ: Բրաքոնի յիշողութիւնը լաւ բանի եկեր էր, և այսպէս անմեղ մը ազատեր էր:

Ֆէրրէ սկսաւ դարձնել տետրակը, իր յանցանքը ճանչցող մարդու մը կակիցած ձայնով «Ի՜նչ քանի որ Ռիւօ հոս չէ — կրողը տանի Լըլրոն — գնա՛ փնտռելու Միւշէլը» — Բրաքոն հարցուց «Ո՞րը» — Ֆէրրէ գոյնը նետեց, կարծեց որ զինքը կը ծաղրեն: Բրաքոն ձեր զինուորի անխոտութեամբ ըսաւ իրեն «Բայց այո՛, քաղաքացի, ո՞րը. շատ մարդիկ Միւշէլ կը կոչուին, թերևս մենք հոս վեցէն աւելի ունինք. ըսէ՛ ինձի որ Միւշէլ և ես երթամ կանչելու»: Բրաքոն իբրև իրեն օգնելու նպատակաւ, աւելի շփոթցուց անոր փնտռելը: Թղթատելով բանտին տետրակը, կը ցուցնէր Ֆէրրէի «Միւշէլ, Լուի Պիէր, պահապան խաղաղութեան. — Միւշէլ, Ժիւլ Ալֆրէս՝ աղբակիր. — Միւշէլ Քասիլիէ, պաշտօնեայ. —

Միւշէլ — Հանրի Լուի, երբեմն քաղաքական պահապան»: Ֆէրրէ շուարեցաւ այսքան Միւշէլներուն մէջ և չէր գիտեր զորն ընտրել: Հրամայեց բերել վերջինը: Հսկողները սկսան կանչել, արդէն ապահով ըլլալով որ պատահան տուող պիտի չ'ըլլայ: Եւ յիրաւի, այդ անձը որ Մայիս 18ին կալանաւորուեր էր, երկու օրէ ի վեր ջրային մոլեգնութենէ բռնուած էր. իրեն բռնական շապիկ հագուցած Պահպանոցի սեպհական հիւանդանոցի մը ապահովութեան խղելի մէջ գոցեր էին, ուր ուրքեմը կը ահաւոր հարուածներ կուտար դրան և այնքան շարովը ահաւոր հարուածներ կուտար դրան և այնքան շարովը ահաւոր հարուածներ կուտար դրան իր անուանը կանչուիլը, նոյն իսկ թէ խեղք վրան ըլլար:

Մինչդեռ հսկողները կը կանչէին՝ «Հանրի Միւշէլ» և պատասխան մը չէին առնուր, տագնապ մը կըսկէր սոճիլ կալանաւորներուն հասարակաց սրահակներուն մէջ: Անոնցմէ մին Տ. Տոլլըվաց կը դիտէր պատուհանէ մը, որ կը նայէր Ոստիկանութեան Պալատան վերի յարկերը, ութը անձինք դաշնաւորի հագուստով և հնազանդելով իններորդի մը որ կը կրէր դուբըր քիփի մը սակի դժով, կուգային պատուհանաց առջև, կը բանային զանոնք և շի մը մէջէն զոր ձեռքերնին բռնած էին, հեղուկ մը կը լեցնէին պատուհաններուն շրջանակին և տախտակամածին վրայ: Անոնցմէ երկու երեքը, որոց ձեռքը կար զինգոյէ գոյլ մը կը թաթխէին մէջը վրձին մը և անով պատերը կը թրջէին: Ամենայն ինչ ծանրութեամբ և կարգաւ կը գործէին: Տ. Տոլլըվաց դիտեց նաև որ ամենն ալ իրենց քիփիկ ճակատանուն վրայ քաշեր էին, իբրև դէմքերնին ծածկելու համար: Ինքը մեքենայաբար կը դիտէր առանց իրենց գործողութեան նպատակը ըմբռնելու: Գլխաւորնին բոլոր պատուհանները աչքէ անցուց, յետոյ լուցիկի մը հանեց զրպանէն և իր վրան քսելով բռնկցուց. մօտեցուց պատուհաններէն մէկուն որուն փայլած բռնկեցաւ: Նոյնը ըրին իր մարդիկն ալ և Տ. Տոլլըվաց հասկցաւ որ Ոստիկանութեան պալատը կ'այրէին: Տ. Տոլլըվացի դիտածը կարող էին տեսնել նաև ուրիշներն ալ և փութով այն կողմը ահաւոր շփոթութիւն մը սկսաւ, ամենայն ոք կը պոսար «Արակ» և կը վագեր դէպ ի դռները: Տ. Տոլլըվաց իր բանտեալ սրահակէն հսկողին դնաց, որ այն Լըբու կոչուածն էր



Մայիս 20ին մտած, հասկցուց վտանգը և խնդրեց որ երթայ իմացնէ տեսչին: Հսկողը պատասխանեց որ ինքը կալանաւորէ մը հրաման ընդունելու պէտք չունէր և արդէն իրեն վերաբերեալ խնդիր մը չէր: Ոստիկանութեան պալատան հրգեհը կրնար հաղորդուիլ Պաշպանոցին, որով և բանտարդերոց վիճակը փութով անտանելի կրնար ըլլալ:

Եւ սակայն դեռ կը տեսէր Մելէրը կանչուիլը, որ իր սաքերով կը շարունակէր հարուածներ տալ գրան: Ֆէրրէ միշտ ցանկեր կը սկսէր, սրոնք չէր կրնար ամբողջացնել: Հսկողները ըմբռնելով որ այս գազանային կաստակերգութիւնը վերջանալու մօտ է կը բանային խղիկները և կ'ըսէին բանտերոց «Սիրտ ըրէք, այլ շատ երկայն չտեսէր»: Եւ ահա յանկարծ լուռեցան ճիչեր:

Յաւերուածի մէջ բանտեալ կնիկ մարդիկներն էին սրոնք աչքերնուն տակ տեսնելով Ոստիկանութեան պալատան այբիւր վախերնէն խենդ կը դառնային. արդէն բոցերը կը հասնէին մինչև իրենց բաժնին պատերը և պատուհաններուն ապակիները կը ճաթառէին: Այդ դժբաղդներուն ճիչը Պաշպանոցի սրահները կը թնդացնէր յուսահատելոց սղարակներու պէս: Ֆէրրէ գոյնը նեաեց և բարկութիւնը իր վերջին կէտը հասնելով կանչեց «բայց լռեցուցէք այդ շատախօսները»: Այս վարկենիս Ֆէրրէի ընկեր «դատաւորներէն» մին դուրս ելաւ: Եւ այն ատեն Պուէ տեսուչն ըսաւ Բրաքոն ենթապաշտպետի երթալ համոզել կանայք որ «քիչ մը համբերեն»: Այլ բաւական էր, և թերևս այդ յիմար խօսքն էր որ ամեն բան լուծեց և Բրաքոն դոչեց «սիրտ ունիք որ այդ խեղճ արարածները այբին — Բանձ, պատասխանեց, ասոնք զինակներնուն և քաղքին պաշտպանաց քածերն են»: — Բրաքոն այլ չկեցաւ, իր հինաւորաց համեատ սիրտը խնայեց. իր վերջին բազը խաղաց. խաղաց իր կեանքը և շահեցաւ:

Վաղեց սրահներուն մէջ և կանչեց «Բացէք խղիկներուն դռները, բացէք սրահակներուն դռները»: Հըսկողները հնազանդեցան: Մարդկային ամբոխ մը զիմեց սրահներուն մէջ: Չորս հարիւր յիսուն կալանաւորք Բրաքոնի ետևը կեցան որ յետ վայրկեան մը հանդարտեցնելու, սպա ըսաւ իրենց «Լրթանք տեսնելու որ այդ

մարդասպանները ինչ ընել կուզեն մեզ»: Եւ երբ հասաւ մեծ վանդակագուռը, ճիշտ ֆրոշրենի վրիժառուններէն վերջինը դուրս կ'ելլէր: Ֆէրրէ աճապարէր էր ազատուլու կէս մը սարսափած կնիկ մարդոց աղաղակէն և կէս մը յիշեհով հոս հոն դրած վտուղներուն տակաւը, ու անգամայն կը կարծուի որ իր այն «դատաւորը» որ դուրս ելէր էր, տեսեր էր որ կանոնաւոր բանակը կը յառաջէր բաղխելու Պոն — Եէօֆի պատանէլը որ Գոֆինի փողոցին զիմացն է. և վաղած ըլլայ Ֆէրրէի իմացնելու վտանգը, և Ֆէրրէ կէս մը օղը ելլելու վախէն և կէս մը Վէրսայլի գունդերէն բռնուելու կասկածէն, ֆրոշրենի վրիժառուններուն միաբան փախեր էր և իրեն ետեւէն կաղրան տեսուչը: Ամբողջ այս ամեն տեսարանը երկու ժամ տեսեր էր: Բրաքոն տէր կը մնար պատերազմի զաշախն և Պաշպանոցի:

Յիրաւի ստիկայ յաղթութիւն մ'էր, բայց ասով կանաւորները չէին փրկուեր և բանտը չէր ապահովնար. վտանգի Պաշպանոցին բաղդը կապուած էր Ոստիկանութեան Պալատան հետ: Եթէ Ոստիկանութեան պալատը օղը ելլէր, Պաշպանոցը կը տապալէր: Բրաքոն չէր զիտէր Հարլէյի փողոցի մէջ եղած պատրաստութիւնքը, բայց թաղին բնակիչքը գիտէին: Վաշնաւորաց մեկներով իրենք զիրենք ազատ գտնելուն պէս, վաղեցին աշխատելու և վտանգին առջև առնելու: Հարլէյի փողոցը և Գոֆինի հրապարակը շէնքերուն բարձրութեան պատճառաւ պաշտպանուած էին գնդակներէ. դաշնաւորք նահանջելով Դանթի մօտ կամուրջը, Սիթէ զինուորանոցը, Կոր Հօթէլ Տիէօի դեռ չմնցած էնքերուն մէջ, հոնկէ հրացանօք գնդակները կ'ուղղէին օրինաւոր բանակին գունդերուն վրայ որ արդէն տիրեր էր Մոնէլի, Գէնէգօ փողոցին, Լուլրի և Էկոլի հրապարակին: Այս պատերազմի զաշախն մէջ, Գոֆինի հրապարակը, ձգուած բերդի մը պէս, չէրք երկիր էր, ուր բնաւ պատերազմոց մը չէր երևար: Թաղին մարդիկը, մօտ երկու հարիւր անձներ, յորոց գոնէ հարիւր յիսունը կնիկ մարդիկ, ըմբռնած էին քաղքին այս կատորին վտանգը: Գոնապանք, խանութպանք, արք և կանայք, ով որ քիչ մը խելք ունէր, վաղեր էր զէմն առնու-



աղէաբին, որուն առաջին զոհերն իրենք պիտի ըլլային, և յարձակեցան բոցավառ Ռատիկանութեան պալատան վրայ:

Ճէրբէի հրամանները կատարուեր էին: Ուզեր էր որ Ռատիկանութեան պալատը դառնայ քիչ մը մոխիր, բայց մասնաւոր պատուէրներ սուսած էր հրդեհելու նկատմամբ, որպէս զի կարենայ պարպուիլ և ինքն ալ ժամանակին կարենայ քաշուիլ: Կրակ տրուեր էր նախ վերին յարկերուն, բայց տեղէ տեղ անցնելով բոցը հասեր էր մինչև գետնայարկը որ լի էր պաշարներով և մէկ պայթում մը այն կրտս պատերը շատ հեռու պիտի նետէր, պիտի կործանէր Պահպանոցը և պիտի ստապւէր Արդարութեան Պալատը որ արդէն քարիւղով կը բոցավառէր:

Ամեն մարդ դիմեց Ռատիկանութեան գետնայարկը, ուր կը կենան մշտամնաց հաշտութեան պահպանք և կեդրոնական քաղաքապահաց տեղը. և նոյն իսկ կրակին ներքև սկսան վառօղները փակցնել: Պէտք էր թէ աճապարել և թէ խոհեմութեամբ գործել, վասնզի փոզցի վրայ, ուր անընդհատ վառած կտորներ կ'իյնային սակառէ մը վառած թափթփուկներ և մեծ պարկէ մը ընկած փամփուշաներ կրնային անդարմանելի աղէաք մը պատճառել:

Գոֆինի հրապարակին մէջ կար ածխավաճառ մը Տիկին Սէն-Նըւի՝ զօրեղ օվէրնիացի մը Կանտալէն, որ բուն զիւցագնուէի մը կտրեցաւ. թեւերը վեր սոթթած, մագերը խառնափնդոր, քրտնաթոր և հեւալով, ածխի պարկի պէս կոնակով կը փակցնէր փամփուշաներուն պարկերը. լուս և բեռան տակ ծռած, կը տանէր կը ձգէր Տըսէքսի աղբիւրին աւազանը որ այն ատեն հրապարակին մէջտեղն էր: Ատիկայ ընելէն վերջը վազելով կը դառնար, մտիկ կընէր զաշնաւորաց վերի յարկերու մէջ ցանած փամփուշաներուն Փշփշալով պայթիւնը, տախտակներէն զէպի վար վազող բոցերուն կը նայէր և կ'ըսէր «Ա՛հ դեռ ժամանակ կայ», և ուրիշ պարկ մը կ'առնուր կոնակը կը տանէր ձգելու աղբիւրին մէջ, պուտ մը ջուր կը խմէր և զէպի վառօղներուն կը դառնար, զորս պէտք էր սպառել. խօքով, ձևերով, կանչով կը քաջալերէր իր ընկերները և շէր թողուր որ դադրին աշխատելէն ազատութեան համար:

Նոյն օրը թաղեցուց մէջ չափէն աւելի անձնանուիր մամբ աշխատողներուն մէջ պէտք է մասնաւոր յիշեմ Տ. Լըբուա վարսավիրայն, որուն կրպակը Հարլէյի փողցին մէջ ճիշտ բարուց վերատեսուչներուն կայարանին զիմացը կ'իյնար: Ինքն եղաւ որ վառօղի առաջին տակառը վերցուց, և ուրիշներն ալ իր օրինակին հետեւցան: Վառօղի երեք մեծ տակառք և հազար երկու հարիւր փամփուշաք կրակին բուն կեդրոնէն քաշեցին, բռնկելու մօտ. որով կը վերցուէր մերձաւոր մեծ վտանգը և այն ատեն սկսան կուռիլ հրդեհին դէմ: Ատիկայ զիւրին բան չ'էր, պակաս էին գործիքներ, վասնզի նոյն առաւօտը Ճէրբէ դեռ զժորժ վէյսէ սպանման շտարած, կանչեր էր Ռատիկանութեան Պալատան բոլոր կրակ մարողները և սպառնացեր էր զիրենք հրացանի բռնելու, թէ որ տանին իրենց ջրհանները:

Փորձեցին ազատելու նաև քիչ մը կարասիք, թղթեր և մանաւանդ արգիլելու որ կրակը շանցնի Հարլէ փողցին ազատ մնացած մասը և Գոֆինի հրապարակը: Տանիքներու վրայէն պատուհաններէն՝ դուլով, ամաններով, հողէ տաներով և որ և իցէ ձեռքերնին ընկած բանով մը ջուր կը նետէին: Այսպէս կրցան ազատել երկրորդ բաժնին, հաշուէկալութեան և զբազրութեան շէնքերէն մաս մը, Ժէրիւզալէմ փողոցին կողմն ալ Տ. Կլոդ Ռիշար, պաշտօնեայ ընդհանուր սպահաւորութեան, ազատեց աւտարակները և կարեւոր թղթերը և վտանգէն այն ատեն հեռացաւ, երբ քիչ մնաց պայթումէ մը պիտի սպանուէր:

Բոլոր օրը, բոլոր իրիկունը Գոֆինի հրապարակին բնակիչք կամաւորապէս կեցան բռնած տեղերնին: Առաջին օդնութիւնք հասան գիշերուան ժամը տանու մէկուսիսուն, և էին ատոնք Մէզոն-Լաֆիտի կրակ մարողք. առաւօտեան ժամը մէկին հասան Ռամբուլէյէի ջրհանները և սկսան աշխատիլ Խօտարանի նախադահին պալատան մնացորդքը փրկելու: Ինչպէս 1848ի Յուներիս Յեղափոխութեան ժամանակ, այսպէս հիմայ ալ Գազղիոյ կենսական զօրութիւնք կը զիմէին փրկելու գՊարիզ: Երկրորդ օրը Մայիս 25, Տ. Բրէստան, այն ատեն առաջին քարտուղար Ռատիկանութեան պալատան առաջին բաժնին, կը վազէր Վերսայլէ, կենացը վտանգ



գով այս կրակէ աւերակներուն մէջ կը մտնէր կը սահէր կործանուելու մօտ առաստաղներու ներքեւ և այս պէս կ'ազատէր բարոց և դաստաստանական գործոց պատկանեալ թուղթերէն մաս մը:

Վաստօզներուն վերնալը կ'ազատէր Պահպանոցը անմիջական աղէտքէ, բայց ատով բանտին վտանգը չէր անցներ. կրակը ամեն կողմէ զայն կը պաշարէր: Բանտարգետաբ կուղէին փախչիլ, կրակէն սպառնացած գաւիթներուն մէջ կը պտուակէին: Անձանօթ Ոստիկանութեան պալատան ներքին ճամբաներուն, ոմանք սկսան երթալ դէպ ի Օւրլոժի գետափունքը, ուրիշները դէպի Օրֆէվրի գետեղերքը: Երկու փուռնք ալ հրացանի զընտակներէն սրբուած էին, այս դժբաղդներէն ոմանք կրցան փախչիլ: Դատերը նորէն դարձան սպաւերելու Պահպանոցի մէջ զոր իրենց բացին: Ներս մտնելնէն վերջը Բրաքոն գոնները գոցել տուաւ և արգիլեց բանալու առանց իր հրամանին:

Փութով շրջան մը ըրաւ զինելու և զխանայու թէ որքան կրնար ըլլալ բանտին վտանգը: Ծանր էր կացութիւնը: Մուտքի զբան զիմաց կ'այրէր գտնուած ճիւղերու պակասարանը, և որովհետեւ այդ ընդարձակ շտեմարաններուն մէջ միշտ քսանէն քսանուհինգ հազար հովանոցք կը գտնուին, կրակը գտեր էր լաւ անուսդ մը: Պահպանոցի հարաւային ճակատը, ուր էին կանանց Յաւելուածը, Մարի-Ժողէֆ մայրապետներուն վանատունը, խենթերուն հիւանդանոցը, զրեթէ կից էր Ոստիկանութեան տախտակէ անցքերուն, որ արդէն կը բռնկէր: Յաւելուածին տախտակմամբ սկսեր էր մխալ. սրահը անկողիններով լեցուեր էր. վանատունը զոր մայրապետները Մարտ 29էն սկսեալ թողր էին, շտեմարան եղած էր բանտին աւելորդ անկողիններու: Գլխաւ բռնկելիք նիւթեր էին, զորս պէտք էր փութով տեղափոխել. վասնզի թէպէ մէկ մը կրակը առնուր, այն ասան կը հաղորդուէր բոլոր Պահպանոցին:

Պէր Բրաքոն, նման այն խելացի և կարիճ մարդկանց որոնք զխան հրամայել երբ պէտք է, որովհետեւ միշտ զխացեր են հնազանդիւ, զլուս կեցան ազատուելուն. իր կալանաւորքը խումբ խումբ բաժնեց հսկողներուն հրամանաց ներքեւ և երազութեամբ բայց կանու

նաւորապէս փրցուց տախտակամածները, վերցուց պատուհանները, որոնց փայտերը սկսեր էին ածուխ դառնալ, փոխադրեց մեծ վանդակազբան առջև բրդեայ անկողինքը, յարդեայները, ճերմակեղէնքը, միով բանիւ կրակը տարածուելու ամեն նիւթ հեռացուց: Ամեն մարդ աշխատեցաւ և այսպէս վտանգաւոր կողմը, միայն պատերը մնացին:

Բրաքոն ելաւ գնաց այն նեղ փողոցը որ Պահպանոցին իբրև գաւիթ կը ծառայէր այն ստեն, տեսնելու թէ արդեօք կային բանտին համար նոր վտանգներ. և սարսափեցաւ տեսածէն: Բանտին վրայ կային երկու յարկեր որոնք Արգարութեան Պալատան այլ և այլ պիտոյեց կը ծառայէին: Այս երկու յարկերէն, որոնք բնաւ յարբերութիւն մը չունէին ներքստապէս Պահպանոցի հետ, բոցի հեղեղներ դուրս կը վազէին պատուհաններէն, և քարիւղի թանձր հոտ մը տարածուած օդոյն մէջ, գուշակել կուտար որ կրակը մարելու մօտ չէր, և թէ պիտի լափէր բովանդակ շինութիւնքը: Պատերուն իյնալով անպատճառ պիտի ճաթըտէին Պահպանոցի առաստաղները և կրակը ներս պիտի թափանցէր:

Բրաքոն Պահպանոցը մտաւ և իմացուց կալանաւորներուն: Վտանգը անմիջական չէր և զեռ ժամեր պէտք էին որ վերի յարկերը բանտին վրայ կործանուէին: Վաթսուն կամ ութսուն բանտարգետալ ուղեցին մէկէն մեկնիլ, նոյն խակ եթէ ինկնային կանտնաւոր գունդերուն և դաշնաւորաց մէկմէկու նետած գնդակներու տակ: Լորան անուամբ հսկող մը յանձն առաւ ինքզինքը վտանգի մէջ զնել, անցնելով Օւրլոժի գետափը և ամբողջ տներուն զիմացէն սահելով անվտանգ, կրցաւ երևցնել հովանոցին ծայրը անցուցած ճերմակ թաշկինակ մը: Կանտնաւոր բանակը կրակը դադրեցուց. բանտեայները կրցան տարուել Պոն-Նէօֆի հողակոյտը. հոնկէ սկսան երթալ դէպ ի Մոնէի պալատը, և անկեց ոմանք իրենց տունները և ոմանք Պարիզու այն թաղերը ուր կուիւր վերջացեր էր:

Պահպանոցին մէջ եղողք կը սպասէին վարկենէ վայրկեան առաստաղներուն բացուիլը և կրակին ներս ողողիլը, և սրբան եղաւ դարմանքնին երբ կրակին տեղ յանկարծ ջրոյ հեղեղ մը թափեցաւ: Կեղրոնական ջրամ



բարը որ թէ բանտերուն և թէ Արգարութեան Պալատան ջուր կը մատակարէր, բոցերէն շրջապատեալ հանելով, զուրս կը թափէր իր պարունակածը և այսպէս հրդեհէին յառաջելուն արգելք կ'ըլլար: Զիրաւի Պահպանոցի բնակչաց համար շատ նեղացուցիչ էր այս, որոնց մինչև ծնկուղւնները ջուր էին, բայց միանգամայն իրենց փրկութիւնն էր, որովհետև առաստաղները խոնաութիւնը ձծելով, պատերը թըջելով և յատակները ջրի մէջ թաթխուելով, մեծ արգելք մ'էին կրակին տարածուելուն: Երեկոյեան ժամը հինգին կրակին տարինաւոր բանակին 794ի վաշտ մը, որուն կը հրամայէր հարիւրապետ մը, ներկայացաւ Պահպանոցը և գրաւեց զայն: Շատ ուրախութիւն ըրին «Կարմիր փակարարներուն» որոց կը սպասէին անձկանօք երկու ամիս էր վեր. և ամբողջ գիշերն սրահներուն մէջ հրդեհէն տաքացած ջրոյն գոլորչիներուն մէջ անցուցին: Երկրորդ օրը Արտի, Շարբի, Նոժան և Ռոզրիւի ջրհանները բռնկած մատերը ջրով սորդելով, բարձրակին սպասեցին զՊահպանոցը:

Մարտ 24ին երբ Ապտամբութիւնը յաղթանակելով տիրեց Պահպանոցի, Պիէր Բրաքոն վշտացած և չգիմանալով որ իրեն Գարբո հրամայէ, մտեր էր Տ. Բոնիժան նախագահին խցիկը և իրեն ըսեր էր, որ «Բաւական է այս խայտառակութիւնը. կուզեմ երթալ Վէրսայլ մեր գլխաւորներուն քով»: Բոնիժան իրեն պատասխաններ էր «Իրբև դատաւոր, քեզի կը հրամայեմ պաշտօնդ չթողու, իրբև բանտեալ, կը խնդրեմ քեզմէ: Թէոր դու մեկնիս, թէոր մեկնին ընկերներդ, ձեր տեղը ապտամբներէն պիտի դրուին որ զմեզ պիտի չարչարեն. կը թախանձիմ քեզմէ մնալ հոս և պաշտպանել խեղճ կարանաւորները»: Բրաքոն հնազանդեր էր. հաւատարիմ մնաց Տ. Բոնիժանի հրամանին, ազատեց զՊահպանոցը կրակէ և կրցաւ փրկել պատանդները մահուրնէ Թէրբի ձեռքէն, բայց ի դժբաղդ Ժորժ Վէյսէէ:

2.

## ԱՐԴԱՐԱԹԵԱՆ ՏՈՒՆԸ

Արգելարանը յաճախ կը շփոթուի Պանպանոցի նետ. — Տեսչի նրանակները. — Տ. Գիշրիկ, երկրորդ բանտապետ կ'երթայ ի վերսայլ. — Գրվիլ տեսչ. — Զինուորական բանտեպետները կ'արձկուէին. — Հրովարտակի ինչքերը գրաւելու. — Չարագործները կը բողբոյն. — Յնորակաւ շտեմարանը գեներալ. — Պիկպիշուի Հայրերը. — Տիկիկ տ'Օպիկետար. — Արգելը պատարագ ըսելու. — Գագաղներ. — Մկներու դաշը. — Զինակիրը Արգելարան կը փոխադրուի. — Տ. Գիշրիկի զգոշուրիները. — Այցելուրի Ռատը Ռիկոյի. — Կուզակ գիւնակիրները աւելու. — Տ. Գիշրիկ շտաբ. — Ստո նրանակ փոխադրուի. — Արգելարան Պանտակ աշրիլ. — Կրակ տառոյներուն գոշիլ. — Պանտակները կ'ագատին, եղեւնագործ կարանաւորը կը յանձնուի Արգելարան. — Գրվիլ տեսչի շաւ փարուները.

Արգարութեան տունը, Արգելարան (Conciergerie) կոչուածն է, Պալատան հին բանտը Օպրտի գետափին վրայ, ծանօթ Պարիզցոյ իր երկու աշտարակներովը և ուղղակի կախումն ունի Պետութեան ընդհանուր փաստաբանին: Աշիկայ, ինչպէս ըսիւք անցողաբար, բանտ մ'է ուր կը փակեն անոնք, որոնք պիտի ներկայանան աւսիկներուն և կամ պատժական դատարաններու: Հոն երկար չեն մնար եկողները, Մագասէն կուզան և յետոյ կ'անցնին ի Սանտէ, Սէնտ Պելրափի և կամ Կրանդ Ուքէտ: Շատ պզտիկ է, որով և քիչ կարանաւորք կ'առ-



նու, և երկու մաս բաժնուած է. խցիկներուն մասը և Հասարակխառն մասը՝ որ սովորաբար կոչուած է նոս կառապանաց քաղը, վասնզի հոն ննջարանի մը մէջ ա- տոնք կը քաշեն իրենց աննշան պատիժները, որոց սակալ կը դատապարտուին պարզ հսկողութեան տատանէն: Բանաբ միայն գեանայարկ է, վերին յարկերը բռնած է Վճառչինջ տատանը: Շատերը Արգելարանը կը շփո- թին Պահպանոցին հետ, այնպէս որ սպրոզ պատանդ- ները իրենց յետոյ ըրած պատմութեանց մէջ կը յիշեն Արգելարան փակուած ըլլալին, ուր սակայն սաք կո- խած չէին:

Օրինաւոր տեսուչը Տ. Ֆոնտէն, հանգստեան թոշա- կով քաշուած գնդապետ մը, Մարտ 18էն վերջն իսկ բռնագատուեցաւ նոր կարանաւորներ ընդունելու: Ազլա- տամբ վարչութիւնը խտու կը պահանջէր որ ամեն պաշտօնակալք հնադանդին իրեն. Տ. Ֆոնտէն պարտք համարեցաւ ձգել պաշտօնը և օրակարգով մը ստոիկայ ծանոյց իր ստորակարգելոց, աւելցնելով որ իրեն կ'իյնար երթալի վէճրայլ օրինաւոր վարչութեան քով, զորպէսք է պաշտպանէ ամեն բարի քաղաքացի: Այս հրատարակու- թիւնը ըրաւ Մարտ 30ին և երկրորդ օրուքնէ բոլոր սպասաւորք թերեւ իրեն հետեւէին, եթէ Տ. Բոնֆան նախագահի մէկ նամակին վրայ, Տ. Լակուր հրահանգ մը զրկած չ'ըլլար, կենալու տեղերնին. որով մեծ ա- զէտքներու առջևը կրնար առնցուիլ:

Բայց անկանոն վիճակնուն պատճառաւ իրենցմէ եր- կուքը գազտնի վէճրայլ գացին խորհուրդ հարցնելու իրենց գլխաւորներուն: Մարտ 30ին առաւօտը Տ. Դիւր- լէն երկրորդ բանտապետ և Քէնէն հսկողը՝ Ֆիւրի ա- նուամբ մեկու մը սայլի մէջ մտած որ Սէնի բանտե- րուն լուայքը կը տանէր և կը բնակէր ի Բուրնիլը, ծած- կուելով ձերմակեղէններուն կապոյցներուն ներքև, կրցան անցնել բերդերը, համալի վէճրայլ և լսել նոյն իսկ Տ. Լակուրի բերնէն, որ զլուս կ'ը Ոստիկանութեան առա- ջին բաժնին, բնաւ չթողու Արգելարանը բայց եթէ վեր- ջին պարագայի մէջ: Այսպէս կ'ոչնչանար օրինաւոր տեսչին օրակարգը: Տ. Դիւրլէն և Քէնէն զարձան Պա- ըրիզ, ձեռք ստին պաշտօննին, խրախուսելով իրենց ըն- կերները և պարտատուեցան իրենց ծառայութեան բռններուն:

Այս բեւը կարծուածին չափ անտանելի չ'եղաւ, քիչ մ'ալ տեղույն պղտիկութեան պատճառաւ, որով չկրցան լեցնել այնչափ կասկածաւորներ ինչպէս Պահպանոցը, Մագաս և ուրիշ տեղեր: Գարձեալ Հասարակութենէն անուանուած տեսուչը բնաւ չ'ընդգիմացաւ իրենց պահ- պանութեանը: Սա կը կոչուէր Դրվիլ, երբեմն պաշտօ- նեայ ձիարշաւներու գործակառարութեանց և Պարիզու պաշարման ժամանակ 12ր շրջանակին հիւանդանոցնե- լու մէջ ծառայած էր: Աշխատասէր անձ մ'էր, խոհեմ, առանց գոռոզութեան, որովհետև պղտիկութիւն չէր համարիր երբեմն հրաւիրել հսկող մը իրեն հետ «գա- լաթ մը զինի» խմելու: Եւանդուն, մարդասէր և բա- ըրի կամեցող ամբողջ իր պաշտօնավարութեան ժամա- նակ, առանց սակայն անոր ընթացքին եղանակը գեա- նալու: Այրող շասարակութեան ժամանակ Պարիզու բոլոր բանտերէն ամենէն լաւ մատակարարուածն՝ Ար- գելարանը եղաւ: Արգիւնքը կ'երթայ ընտիր ծառայող- ներուն և անկանոն տեսչին ջանքերուն:

Մարտ 18ին հոն քառասունեակէ կայանաւորք փա- կուած էին. ամենքն ալ Արգարութեան օրինաւոր հրա- մանով արգելուածներ: Բայց սպասամբութիւնը շատ հոգ չունէր օրէնքը յարգելու և զիւրաւ, ինչպէս կ'ը- սէր Ռատու Ռիկո «կը պարզէր ձեակերպութիւնները»: Կթէ կայանաւորել տուաւ շատ մը ընտիր քաղաքացի- ներ, որոնք չէին կրնար համաձայնիլ իր գործոցը, չվա- բանեցաւ զրկելու ժողովրդեան մէջ Արգարութենէ գա- տեալ շատ մը յանցաւորք սրաց համար Օրէնքը պատիժ մը վերապահած էր: Ապասամբութեան առաջին օրէն տեսնուեցաւ ընկերական սպաշտութեան արհամար- հաւիլը, և Կեդրոնական Յանձնաժողովը նախ տուաւ ստոր օրինակը, որ չմնաց առանց հետեւողի:

Մարտ 20ին Կեդրոնական Յանձնաժողովոյն երեսու- խան մը, ձեռքը լիանաւոր ելխանութեամբ ներկայա- յաւ – Շէրշ – Միտիի երկու զինուորական բանտերուն և բոլոր կարանաւորքը արձկեց: Իրեն զխառութիւն եղաւ որ ստոնք ամենն ալ զինուորական կարգապա- ձութենէ պատժուածներ չէին, այլ կային մէջերնին դատալիք զինուորներ. Հասարակաց իրաւանց դէմ և զեանագործութեան ամբաստանուածներ: Ատոր բնաւ



կարևորութիւն չտուին: 1100 բանտուածներ թողուեցան, որոնք դացին դաշնաւորաց զուգերուն մէջ ծուլութեան, գինովութեան և անհնազանդութեան օրինակներ տալու, որոնց անոնք պէտք չ'ունէին: Չասոնք Պարելու փողոցներուն մէջ արձկած ժամանակ, ծիծաղական կալանաւորութեանց հրամաններ կը վճռէին, Զանալով կապկորէն արգարութեան ձևերու նմանիլ. «Յօդուած 1. Տ Տ. Թիէր, Պիկար, Ֆավրը, Դիւֆօր, Սիմոն և Պոթիւ, ամբաստանուած են. — Յօդուած 2. Իրենց կալուածքը պիտի զբաւուին, մինչև որ երևնան ժողովրդեան արգարութեանը առջև»:

Կ'արձկուէին զինուորական դատապարտեալները, և կը զբաւուէին ստացուածքներ. օրէնք մը զոր իրաւամբ Յեղափոխութիւնը իր տապալած իշխանութեան յանդիմանած է: Կը կարանաւորէին պատանդներ և փոխադարձաբար կ'ազատէին եղեռնաւորները: Ոտու Ռիկօ ստորագրած է մէկ քանի արձկուելներու. բայց մեծամասամբ Արգարութեան պաշտօնարանէն կուգային հրամանները, ուր առանց դատի և առանց ուղղի փաստաբան մը՝ Լէֆէն Պրօստ անուամբ, իբրև նաւիրակ բազմած էր: Արգարութեան պաշտօնարանը զինետուն դարձուցեր էր և անշուշտ ինքնին Արգարութիւնը զարհուրած պիտի ըլլայ այսպիսի ներկայացուցիչ մը ունենալուն վրայ: Այդ անձին զրգմամբ աւտոգակ մը և սրիկայ մը ազատ թողուցան որպէս զի զինետունէ գինետուն պտտին փոխանակ գնդաններու՝ որ իրենց պէտք էր: Ապրիլ 19ին ուրիշ ամբաստանեալ չորս եղեռնագործք, «կը ստանան իրենց քաղաքացիութեան իրաւունքները», որ իրենց համար նպաններու և զողնալու խրաւուրէր էր: Այս օրինակները Հասարակութեան ուրիշ ստորակարգեալ դատաւորաց ալ նախանձ կը բերէ: Ապրիլ 22ին կ'արձկուին ուրիշ երկու չարագործք ալ և Մարտ 26էն մինչև Մայիս 24 Արգելարանէն քսան ամբաստանեալ կալանաւորք կ'արձկուին:

Ընդ հակառակն հարիւր ութսունուօրեց անձինք բանտուեցան ամենն ալ գրեթէ Ռատու Ռիկոյի հրամանով, որ իբրև դատախազ Հասարակութեան, չէր ուզեր որ բանտը անգործ կենայ: Այս հարիւր ութսունուօրեցին մէջէն մէկ հօգի միայն գողութեան համար բանտուե-

ցաւ, և այն ալ մէկէն ձգուեցաւ. մէկալ ամենքն ալ նոյն յանցանքներուն համար բանտ նետուեցան, որոնք տեսանք Պաշտօնացի տեսարակներուն մէջ. — Ապտամբութիւն — պատնայիք ընդգէմ Հասարակութեան — յարարութիւնք Վէրսայի հետ — բոնտապարտեան գործող: Բարերութիւնք Վէրսայի հետ — բոնտապարտեան գործող: Ինչպէս հոն, հոս ալ ստեպ կը պատահինք նաև «առանց պատճառի» բռտերուն: Այս բանտարգելութիւնունց պատճառի» բռտերուն: Այս բանտարգելութիւններով և անկանոն արձկուելներով հանդերձ, Արգելներով և անկանոն հանդարտ պիտի անցնէր այս գէշ ժամանակները եթէ Ռատիկանութեան Պալատան ծառայող զաշնուարաց հրամանատարք, երեկոյները զինին խմած ժամանակնին, մաքերնին չդնէին որ բանտին գեանափորներուն մէջ, հակառակորդք շատ գէնքեր պահած էին: Այն ատեն բազմութեամբ կուգային կանթեղներով և ձեռքերնին երկաթի ժանիքներով, կարծուած երկաթէ դռները բանտար համար և կ'երգուէն այդ նային Արգելարանէն չ'ելլու մինչև որ չգտնեն այդ գեանայարկ զինարանը: Տանը և պալատան գեանաւորայիկն մէջ կը պտտէին հրացաններով ծայրը սուին անցուցած, փախնալով որ յանկարծակիի չգան. կ'երթային մինչև Սէն Լուիի հին խոհանոցներուն տեղերը, պատերը կը զարնէին. կը փորձէին հրացաններուն գաւազանով և շատ անգամ հետագնութիւնը կը ըմնար ծակելով գինուց տակաւ մը ի պահետի կալանաւորներուն համար: Ամեն անգամ որ այս շփոթութիւններէն մին կը ըմնար, հսկողք կը համարէին որ ալ վերջացաւ. բայց յիմարութիւնը յամառ է. և երկրորդ օրը նորէն կը սկսէին, ի մեծ վնաս պահետի դրուած գինիներուն որոնք փութով պարպուեցան:

Ապրիլ 13ին օրը հանդարտ եղեր էր, նոյն օրը հինգ անձինք միայն բանտ բերուած էին, որոց մէջ էր Անտոնէն Դիւրօ, նշանակուած իբրև երբեմն քաղաքատնէն Դիւրօ, նշանակուած իբրև երբեմն քաղաքատնէն (արձկուեցաւ 18ին Ռատու Ռիկոյի հրամանով որ կալանաւորել սուած էր) Ժոզէֆ Օպպէնհայմ, գնդապետ Հասարակագետութեան Պաշտպաններուն, բանտարկուած «Կերակրոյ մը ժամանակ վիճելուն համար». և ուհա կէս զիշերուն բերուեցան բանտը սաստիւրեք քահանայք կառքերով, շրջապատուած դաշնաւորներէ: Դաքա Սուրբ — Սրաի Միաբանութենէն էին և կը բերուէին



Պիկպիւսի վանատունէն Ռատու Ռիկոյի հրամանով մը, զոր խտութեամբ գործադրեր էր կրօնիկէ անուամբ սուտ-սոսիկանապետ մը: Այդ խեղճերը գրեթէ ամենն ալ ձեր-մէկը եօթանասունը եօթ տարուան էր-յոզնած երկար խաղարկութենէ մը և ճամբան ազատամիտներէ ընդունած նախատինքներէն, որոնք կը պրտային որ ան-միջապէս խղզուին. և սակայն իրենք հանդարտ կ'երեւային և համակամեալ իրենց սպառնացուած մահուան: Չատոնք բանա բերին և փոխանակ առանձին առանձին դնելու գաղանխքի, ինչպէս էր կարանաւորութեան հրամանը, խումբ խումբ մեծ սենեակներու մէջ գրին հասարակաց բաժնին մէջ (կառապանաց մասը): Երկրորդ օրը ամենը մէկէն կրցան գանուիլ ամբողջ օրը բաց քառանկեան մէջ, և վիճիլ որ իւրաքանչիւրը որ տեսակ մահը նախամեծար կ'ընտրէր: Բանտին հացը շատ պինդ էր և կերակրոյն ընդեղէնքը չոր, խեղճ ծերերը շատ պիտի նեղուէին այս սնունդէն, և թէ Տիկինն ա'Յրեւնեօք, տեսչուհի հանգերձատան, չգիտար և իրենց չճարէր աւելի սննդարտար և նուազ կարծր սպրտաւ մը: Այդ ազնիւ կնիկը չկրցաւ ծածկիլ իրեն տարած խնամքը այդ ձեր կարանաւորներուն, որոնք ստուգապէս պատանդներ էին, և կրցաւ թողուլ ելիլ Պարիզէն որպէս զի Ռատու Ռիկոյի իրեն հակար կարանաւորութեան հանած հրամանէն ազատի: Իսկ քահանայք մէկդմէկ քաջալերելով, մէկմէկու խոտտովանելով մէջերնին կ'աղօթէին. կը նեղուէին միայն որ զուրկ են կրօնական պաշտօն մանքներէ, և աղաչեցին դատաւը որ հրաման սայ բանտի քահանային իրենց համար սրատարադեալ: Կթէ Գրեթի ձեռքը բնար, ապահովապէս պիտի գոհացներ զիրենք, բայց Հասարակութեան անդամաց մեծամասնութիւնը կանխաւ մտածեր էր, և Մարտ 25ին բանտերուն տեսուչք Ռատու Ռիկոյէն հետագիր մը կ'ընդունէին որով կ'արգիլուէր բանտերուն տեսուչներուն պատարագ ըսել սայ բանտին մէջ: Այս հրամանը զրկուած էր Չարչարանաց կիւրակէին նախընթաց իրիկունը և զեռ եւ չէր առնուած, որով Գրեթի ստիպուած էր համաձայնելու. որովհետեւ թէպէտ և զթափրա էր իրեն կարանաւորաց համար, բայց չունէր խրախոյս կուսելու Հասարակաց ապահովութեան նուիրակին դէմ: Այսպէս

Պիկպիւսի քահանայք զրկուեցան պատարագ լսելու միթարութենէն և կրցածնուն շափ ջանացին յարմարիլ բանտի կեանքին, զոր սպասաւորք կը ջանային տանել ընել իրենց: Բայց յանկարծ Ապրիլ 18ին գրուելով բանտի գոց կառաց մէջ, տարուեցան Մարտոս: Այնպէս կարծուեցաւ որ Ռիկո, Ֆէրրէ և Պրտոս և բանտերուն միւս ինամակալք կտոր մը ժամանակ մտցան Արդեարանի նոյն իսկ գոյութիւնը, վասնզի Ապրիլ 13էն մինչև Մայիս 19 և ոչ իսկ մէկ կարանաւոր մը զրկուեցաւ: Բայց ստոր փոխարէն երկու անգամ մեծ շփոթութիւն մը պատճառեցին, զորս պէտք է յիշել, ցուցնելու համար Հասարակութեան անձանց սղոյսամիտ զիւրահաւանութիւնը: Մայիս 10ին Լյուան Լըվրօ որ Ռատիկանութեան Առաջին բաժնին հրամանատարութիւնը յափշտակեր էր, երեկոյեան ե'լաւ Արգելարան բողմութիւ «սղոյսակուտով» մը: Այցելեց Մարի-Անտուանէաի զնգանը, ամեն կողմ քիչ մը փնտռեց, երկար ժամանակ կեցաւ զննեց փայտանոցի մը դրան ձեղքերէն, գրուել թութուեց և իր յուշատարիին մէջ բան մը նշանակեց:

Երկրորդ օրը երկու զաշնաւոր սղոյք հասան յԱրգելարան հետերնին դարբին մը և ձեռքերնին հրաման մը, բանալու այն գետնափորին գուռը, ուր առջի իրեկունը Էլզման Լըվրօ քաղաքացին գողցալ մը տեսեր էր իւր այցելութեան ժամանակ: Այս գուռաճալի լուրը անհաճոյ չեղաւ ոչ բանտարգետներուն և ոչ հսկողներուն. **գարբին շորս կողմը լեցուեցան և սպասեցին արգիւնքին:** Հեղբուեցաւ գուռը, սղոյները զիմեցին այդ մահապէկոյց գետնափորին մէջ և զագաղին տեղ գտան կոյս մը հոս հոն ձգուած և մտցուած փայտերու: Բայց ստիկայ գաս մը չեղաւ իրենց և ուրիշ աւելի տարօրինակ խուզարկութեան մը ձեռք գարկին:

Մայիս 14ին Արդարութեան պալատան ոստիկանաւ կան վերակեցու գրուած էր Բաշար անուամբ քաննակ սպրտան պատերը ներկելու նորուտող մը: Աճապարեց իր տարիքին աշխոյժը ցուցնելու, մէջ տեղ համաձայնելու մեծ դուռաճանութիւն մը: Իր գրասենեակը Արգելարանէն գտաւուած էր ուժով կտաւէ շրջանակով մը որուն վրայ կպցուած էր գունաւոր թուղթ մը: Ամեն



գելերը կոխելուն, այդ թեթև պատին կոնակէն տեսակ մը ձայներ կը լսէր: Իրեն այնպէս կ'երևար որ մարդիկներ զուշութեամբ հողը կը փորէին, կը խօսէին ցած ձայնով և յանկարծ կը կենային, իբրև թէ վտանգի կասկած մը ունեցած ըլլան. յետոյ ձայնը նորէն կը սկսէր և երբեմն կը շարունակէր գելերուան մեծ մաս մը: Տեղեկագիր մը ներկայացուց Հասարակաց փրկութեան. Վէրսայլի հակառակօք կը յուզուին Արգելաբանի մէջ. հոն ստորերկրեայ տեղ մը կը փորեն. ինչ նպատակաւ: Յայտնի է Հասարակութիւնը ստապարու համար, և հազիւ ժամանակ կայ մտածելու:

Հասարակաց փրկութեան յանձնաժողովը գումարուեցաւ և իրեն ամենալարջ գատաւորը զրկեց որոշ քննելու այս դաւը: Այդ հարցաքննիչ գատաւորը կը կոչուէր Արման-Պոլէն գիւ Բարրալ զը Մնտոնար, կամ պարզապէս՝ քաղաքացին Բարրալ և ճիշդ տասնուվեց տարուան էր: Մայիսի 17էն 18ին գելերը, այդ մանուկը, ընկերութեամբ բաւական թուով գաշնաւորներու, մտաւ Արգելարանը, սկսաւ խուզարկութիւնը այն կողմը ուր գաւաճանք աշխատել սկսած ըլլալու էին և փոխցուց խոմբ մը մկներու, որոնց կրճելու սղոտակը այնքան սպաւորութիւն բրեր էր խոշոր քաղաքացւոյն երեսուկայութեան վրայ: Բարրալ սակայն զոչ չեղաւ և համարեցաւ որ այնպէս իր անձը իր պատիւը և տանտակալութիւնը ծաղու նիւթ եղեր էր:

Այս ծիծաղական միջոցեպնները դժբաղդարար չէին զազրեցնէր Հասարակութեան զէպ ի անցթաութիւն մը դումը: Մայիս 18ին Արգելարանը հրաման ընդունեցաւ պատրաստ ըլլալու և տեղ ունենալու այն պատանդներուն համար, որոնք ամբաստանութեան ժողովքին պիտի ներկայանային: Յիրաւի 19ին, յիսուն քաղաքապահք, զինակիրք և Պարիզու պահապանք, որոց մէջ էր նաև ժէանտի զինուորական բնակութեանց վերակեցուն և ուրուն յետոյ պիտի հանդիպէնք, հասան կրանդ Ռաքէտէն ուր կարանաւորուած էին և զրկուեցան Արգելարանը: Նոյն իրիկունը և երկրորդ աստուտը ստորուեցան նորէն Պահպանողը: Երկրորդ օրը ուրիշ երեսունուչորս հաս զինակիրք բերուեցան: Բանասպանը Տ. Գիւրլէն, փոխանակ զանոնք առանձին փակելու խցիկներու մէջ,

ուսկից կրնային տարուել առանց բողոքնին ալ լսուելու, ամենը մէկէն զրկեց կառուպանաց բաժինը, բանաին ծայրերը, երկայն սրահի մը վերջը, կոչուած փողոց Պարիզու և գրեթէ անծանօթ Արգելութեան Պալատան հին խառնաշփոթ շինութեանց մէջ: Գոնեայ հոն միաբան էին: Այդ հին զինուորները գիտէին, թէ որ առիթը գար, ինչ պիտի ընէին:

Եւ սակայն ստանք, ո՞վ կը կարծէր, ընարուանի կալանաւորք էին, վտանգի Մայիս 22ին Ռատու Ռիկո եկաւ կէսօրուընէ վերջը ժամը չորսին անձամբ ստուգելու որ Արգելարանն էին: Գաղղիացի գաւազները երէկուընէ ի վեր Պարիզի մէջ էին և Հասարակութեան ընդհանուր գատախաղը կուզէր սպաշտով ըլլալ որ այդ որսը — երեսունեւ չորս զինակիրք — իր ձեռքէն պիտի չ'ազատէին: Ստուգեց հոն ըլլալնին և հեռացաւ ըսելով «Վաղը»: Մայիս 23ի կէսօրը, յիրաւի, գաշնաւոր սպայ մը ներկայացուց հետը ունենալով վաշտ մը որ մնաց գեափին վրայ, և ինքը մտաւ բանա: Եկած էր Ռիկոյի հրամանով մը հանելու կարանաւոր զինակիրները: Բարբաղդարար հաւաքական հրաման մ'էր, առանց նշարեբաղդարար հաւաքական հրաման հրաման մ'էր, առանց նշարակելու թիւ և անուն: Շատ անգամ ծաղու նիւթ եղած է գաղղիական մատակարարութեանց ամեն բան մանր պրպակը: Հասարակութեան մարդիկը զայդ չգիտնալով և լուսագոյն համարելով գործել «յեղափոխականորէն», պատճառ եղան զանազան զոհերուն սղատուելուն:

Տ. Գիւրլէն պող արիւն կեցաւ: Քսանեւ չորս ժամէ ի վեր լսած հրացաններուն ձայնը, յոյս սուեր էր իրեն որ ժամանակ ունենայ փրկելու այդ դժբաղդները: Չէր խարուած, իր կարիճ սիրալ լաւ վիկայեր էր: Հրամանը ստաւ Ռատու Ռիկոյի նաւերակին ձեռքէն և պալութեամբ մը ըսաւ. «Հոս ամենեւին զինակիր չունինք»: Գաշնաւոր սպայն գարմացաւ. «Սխալ մը պէտք է ըլլայ, վրայ բերաւ Տ. Գիւրլէն, զինակիրները հոսկէ տարուեցան — Ո՞ր և ե՞րբ, հարցուց. — Գնա նայէ Ռատու կանութեան գրասենեակը», պատասխանեց Տ. Գիւրլէն: Գաշնաւորը հեռացաւ, և դարձաւ կէս ժամէն: «Բան մը չգտանք. զինակիրները հոս պէտք է ըլլան» Ոչ, պատասխանեց բանասպանը, բայց անշուշտ հրա-



մանը պիտի ունենամ, երթամ փնտռելու. դու ալ բան ալ նայէ. թէ որ ուզած մարդիկներէդ մէկը գտնես, անմիջապէս հանելու ձեռնարկուրիւնքը կը կատարեմ եւ քեզի կը յանձնեմ»: Յետոյ գարձաւ առ հսկողն ժենէն, որ ե նա ըմբռնեց ինչ էր միտքը, ե ըսաւ «բաց խցիկները, որ քաղաքացի նուիրակը համարուի որ հոս բնաւ զինուոր մը չկայ»:

Նուիրակը խզիւ կատարեց իր պարտքը, մէկիկ մէկիկ նայեցաւ խցիկները ե եղեւնաւորնէն շատ քիչ բան սարկեալներ տեսաւ. — պանդուխտի մը ծառայ, մի կիկէնի անցքին երկու պահապանք — բայց զինակիրք չտեսաւ: Զգուշացան զինքը «կառապանաց բաժինը» տանելու, որուն գոյութիւնն անգամ չէր գիտեր: Նուիրակը ապշեր էր. բայց բռնագատուած էր հաւատարու նոյն իսկ իր աչքերուն. «Բայց զինակիրները ո՞ր են ուրեմն» հարցունջ մտնելով բանասպանին սենեակը — «Երեք կամ չորս օր կայ, որոշ չեմ յիշեր, ըսաւ Ռամբօ հսկողը, որ տարուեցան Ռաքէտի բանալը — Ահա փոխադրութեան հրամանը, ըսաւ Տ. Գիւրլէն, ե նուիրակին ցըցուց հրաման մը զոր գործադրեր էին 19ին ե 20ին առաջին բերումը զինակիրներուն համար: — «Նիշտ է, ըսաւ նուիրակը, սխալեր ենք» ե բարեկեամ գնաց. աւելցնելով, «կը ցաւեմ զձեզ նեղացնելու»: Գըլի տեսուչը ներկայ էր այս տեսարանին, գիացաւ ինչպէս վարուելու էր ե բառ մը չըսաւ: Իր մէկ խօսքը հրացանի բռնել պիտի տար ոչ միայն զինակիրները, այլ նաև Տ. Գիւրլէն ե երկու հսկողները՝ ժենէն ե Ռամբօ, որ իրենց կենսաբան փոսնուրով մասնակցեցան այս բարեգործութեան: Պատանդները սպասեր էին: Այ Ռատու Արիօ ե ոչ իր նուիրակը երեցան: Երկրորդ օրը Ֆէրրէ այնքան գրադած էր Պահպանողի մէջ, որ չէր կրնար գալ Արգելարանը. բայց սակէ մեծ յոյս ունէին կրակին վրայ: Պահպանողը հրաշքով մը ապաստեցաւ կրակէն, Արգելարանի սպասիւը հրաշք մ'է, փասնգի կողմէ Արգարութեան Պալատին, իր մեծ դուռը Պա-Պերդիշ պահին ներքե է ե իր վրան է մեծալինջ աստանը, ուրնք ասինն ալ այրեցան: Ինքը կեղրոնն էր փոտարանին ե շատ մեծ դժուարութեամբ սպասեցաւ: Ռատու կանութեան պալատին կրակ արուած ժամանակ, քա-

րիւզ կը լեցնէին Արգարութեան պալատին սենեակներուն մէջ, պատերը կը թրջէին ե 1618ի ե 1776ի հրդեհներէն աւելի մեծ կրակ մը կը պատրաստէին: Կար ընարեալ գունդ մը որ կը հնարանդէր Ֆէրրէն նշանակուած ե վատահացած անձի մը:

Մենք զիտենք ով էր այդ մարդը, բայց չենք զիտեր ինչ եղաւ. կարծեմ Արգարութիւնը ետեւէն ինկած չէ մեր պատմութիւններուն համար, որով մենք ալ չենք ուզեր արտասանել իր ստոյգ անունը: Մենք կը կոչենք զինքը Արիա: Հասարակութեան ժամանակ շուրտի մը հրամանատար եղեր էր, բայց աւելի խուզարկութեանց մէջ նշանաւոր էր քան պատերազմի: Չի մը գրաւեր էր, ե անոր երասանակը: Կը սիրէր շքեղ հագուել իր չորս գիծ սակէ երիզ քիփիկ, իր կակուզ բարձրաունք կոշիկները ե կնքաւոր վերնադրեալը: Մասնաւոր ցոյցով մը կը կրէր մեքսիքացի դաշույն մը, որ Գաղղիայ մալրաշախտէ մը գողցեր էր: Անձնանուէր էր Ֆէրրէի, ուսկից Մայիս 24ին առաւօտը ստացաւ հրահանգները: Անմիջապէս սկսաւ գործել ե ըսաւ իր մարդիկներուն որոց կը հրամայէր «կ'երթանք շամիւրի զարնելու հետաքրքիրներուն առկը» որ ըստ իրեն էր Արգարութեան Պալատը: Իր կրակ առաւոյները պալատին այլ ե այլ մասերը զրկեց, մեծ սրահը, ներկուած տախտակով սենեակները, թղթով լեցուն գրասենեակքը, փաստարաններուն գրատունը, զգեստներուն շէքերը, ե հրաւան արուեցաւ որ բնաւ չխնային հանքային ձէթին. ե իրեր փունջ մը իրեն կը վերապահէր Սէնտ-Շապէլը:

Արիա չթողուց սերիշի ծծմբով պատրաստած պատուոյգներուն կրակ տալու պատիւը: Չտեսաւ որ բռնկաները քարիւղի մէջ մխուած էին, բոցը երազութեամբ քայլեց ե անցաւ կազի խողովակներուն որոնք պայթեցան: Արիա այդ պոյթիւնէն մարած գետինը ինկաւ: Իր մարդիկը զինքը տարին, ե խեղը գլուխը եկաւ Մէգաթին մէջ մագերը խանձած, աչքերը այրած, երեսին մարթը երած, ե այնպէս շուարած, որ ինքզինքը զըսնելու համար Շատրլէի հրապարակին զինեպուն մը տանել տուաւ: Օրը հոն անցուց, ե երբ յանկոտը միտքը եկաւ Սէնտ-Շապէլը, ալ ժամանակ չկար երթալու, որովհետեւ բոցերէն շրջապատեալ էր: Երեք օր վերջը



Ունեա իր այլութենէն վրայ դրեր էր և Ֆերբէէն իբրև վտահանալի անձն, ստացեր էր ուրիշ գործ մը, այսինքն այրելու Սէնա Ամբրուզ եկեղեցին. բայց մեր գունդերուն հասնելովը խախտուեցաւ:

Արգելարանին մէջ բոլոր հսկողութեան անձինք ոտքի վրայ էին: Կտրուած քարերէ շինուած հին պատ մը բաժնուեցաւ Արգարութեան պալատէն. սակայն կրցաւ տեղը մնալ, թափթփեցաւ, բայց չկործանեցաւ. վտանգը ուրիշ կողմանէ եկաւ: Խցիկներուն բաժինը ունի բայց սրահներ կալանաւորաց շրջագայելու համար: Այս ճամբաներէն իւրաքանչիւրը երկու որմոց մէջ փակուած է ունենալով բարձր տախտակամած մը զինգով պատած: Վառած խոնձող մը ինկաւ այդ տանիքներէն մէկուն վրայ և բռնկեցաւ: Երկաթի ճանկերով քակեցին զայն և մարեցին, յաջորդաբար ուրիշ տանիքներ ալ բռնկեցան և նոյն ոճով մարուեցան:

Արգարութեան Պալատը և բանտը իր ջերմութիւնը կը ստանար տաք ջուրի ջերմարերներով, և այդ ջրերուն պահարանները կրակէն հալեցան. որով ինչպէս Պահպանողին մէջ, հոս ալ ջուրը սղոզեց: Գանտի սպասուորներէն մին կը գրէ որ « Չրայն մէջ թաթխուած էինք »: Կրնար աւելցնել որ քաղցած էին, վանդի ուտելիք չունէին և կերպ մը չկար ճարելու: Հացի պաշարը որ ստին օր իրենց պէտք էր զրկուիլ Սէն Վազար բանակէն, չէր հասներ պատնէշներուն պատճառաւ. ան կարելի էր գրեթէ երթալ ուտելիք փնտռել, բոցերու կէտ շրջանակի մը մէջ պաշարուած էին. մէկ միայն ճամբայ մը՝ որ էր Օւլտի գետափը՝ կրակը առած չէր, բայց հոնկէ ալ չէր անցնուէր հրացանի հարուածներուն և մի-դրայի գնդակներուն պատճառաւ:

Ազատեցին բանտէն ապօրէն հրամաններով կալանաւորքը և պահեցին խցիկներուն մէջ քսանեօթն Արգարութենէ բանտարկեալքը, զորս Հասարակութիւնը մտցեր էր գարձնել քաղաքականութեան: Պահպանները կը հսկէին Պալատան և պատրաստ կեցեր էին հասնելու Արգելարանին որ կողմն որ կրակը սկսէր: Մայիս 25ի առաւօտեան ժամը երկուքին, լսեցին որ վրայէ վրայ մուտքին գուռը կը գարնուէր, վազեցին և յետ դրան վրայի ծակէն նայելու, ըստ կանոնի, բացին.

բանակին 69դ ին գունդ մ'էր: Գնդապետին առաջին խօսքին թէ « Չեր պատանդները »: Կրցան պատասխանել « փրկուած են »: Երեսուն և չորս զինակիրքը զորս Տ. Գիւրլէն մահուանէ խալսեր էր, տարուեցան Շապուրէի հրապարակը, զոր մեր գունդերը բռներ էին. և անմիջապէս սկսան ծառայել շրջաններուն, որոնք թէտարը Վրիքի կրակը կ'աշխատէին մարելու:

Արգելարանը գիտցաւ իր պատուովը պահել իրեն յանձնուած յանցաւորքը և գատապարտեալքը: Առաւօտեան ժամը չորսին ժամանակները Տ. Գիւրլէն կոչումն ըրաւ քսանեօթն բանտարկեալներուն, որոց պատասխանատու էր և օգնութեամբ հսկողներուն և նոյն խի Գլովիլի, զանոնք Օւլտի կայարան մը տարաւ Պալէի մեծուղոյն վրայ: Հոն չկրցան կենալ որովհետև սուսբերը կ'իջնային խճուղոյն վրայ, սպաւինեցան Կոնստանտին փողոցը, և հոնկէ ալ գնդակներէն մերժուած Սիթէին զինուորանոցի թամբագործութեան տեղը ապահովցան: Կալանաւորներէն մէկը փախաւ, անցաւ Պրաի Պոնը, բայց կարկտի նման գնդակներուն ներքև նորէն զինքը բռնեցին ժէնէն և Ռամբօ հսկողները: Այսպիսի պարագայից մէջ ազատել եղեռնաւորքը և անցնելով կրակէ և պատերազմէ, զանոնք յանձնել նորէն Արգարութեան, յիրաւի դիւցազնութիւն մ'է որ պատիւ կը բերէ նաև պարտուց զգացմանը: Գլովիլ վարիչը ինքն ալ ամբողջովին մասնակցեր էր այս ջանից. ինքը անձամբ կուզէր յանձնել կալանաւորները ընդհանուր գատախաղին, բայց իրեն հասկցուցին որ իր ապահովութեանը համար լաւ էր աներևութանալը: Փախաւ և գնաց օտար երկիր, և բնաւ պէտք չ'եղաւ գատի կանչուելու, որ անշուշտ ներողամիտ պիտի գտնուէր իր նկատմամբ. որովհետև եթէ յանցաւոր էր իր պաշտօնը յափշտակելուն, բայց զայն ի գործ դրաւ անպարտու կերպով:



Է .

ՍԷՆ ԼՍՁԱՐ ԲԱՆՏԸ

Հասարակորեն անուանուած տեսուչը - Մարի Ժոզեֆ մայրապետները - Մեոի վեանց Լարբիելիեր - Մեֆիստո - կը սարսափեցնէ Սեն Լագար - Կրկին խաղ կը խաղայ - Պարիզէն դուրս շրջագայութիւնը - Լարբիելիեր գիւնառակիսն հարգարկելի - Բստ կանն կարանաւորութիւններ - Գետնափորը - Գետնափորներու խաղարկութիւնը Հասարակութեան հիշակութիւնն է - Մարի Ժոզեֆ մայրապետները կ'որոշին մեկներու - Բոյր Մարի Էյեռնոր - Փախուստ - Մոռուտ կոչակարը - Անկանոնութիւնը և անասակութիւնը - Մատակարարակիսն Նաւակարգութիւն - Եկեղեցին Սեն Լօրան - 1765 Մայիս 21ի հրամանը - Դիակները - Երկայագլուներ և սուտեր - Պիկպիշի Գալ Բըսելները - Տ. Ուշըրընի միջանոցութիւնը - Շփոտութիւն վարչութեան մէջ - Ռատը Ռիկոյի վերջին հրամաններէն մին - Մոռուտ վիրաւորերոց դարմանատեղի (ambulance) կը հաստատուի - Դատարարտութիւնը:

Կանանց բանախն և պատժարանին տեսուչն ալ վէրասայլ գացեր էր ուրիշ կեդրոնական մատակարարութեան գլխաւորներուն հետ. իրեն տեղը դուրս էր Ֆիլիպ Հէս անուամբ շրջող վաճառական մը, որ պաշարման ժամանակ Ազգային պաշտպանաց տեղապահ-սպայ եղած էր: Երեսուն և չորս տարուան անձ մ'էր իշխել սիրող և ճիշդ, գիտէր հնազանդել տալ և կանոնաւորապէս իր պաշտօնը կատարող: Ամենը կը վախնային իրմէ և ցած ձայնով տանը մէջ կ'ըսէին որ երբեմն բռնի ծառայու-

թեան դատապարտուած էր: Բայց սխալ էր և իր անցեալին մէջ չունէր յանցաւոր գործ մը: Վարժ զինուորական կանոնաւորութեան, բմբուած էր դասակարգութեան օգտակարութիւնը. գիտցաւ տէր ըլլալ հաստատապէս և առանց չափազանցութեան:

Սէն Լագարի վարչութիւնը մատակարարական տեսուչն աւելի կը պատկանի մեծաւորուհոյն - մեծամօր - Մարի Ժոզեֆ մայրապետներուն, որոնց ձեռք են կալանաւորք, ո՛վ որ ալ ըլլան: Սոյնքան է իրենց իշխանութիւնը որ միայն տեսուչը և պաշտպանապետը կրնան մտնել բանալը, որուն հսկողութիւնը յանձնուած է քառասուն մայրապետաց: Ատոնք թէ շատ պարզ եղան և թէ շատ յանգուզն, պահեցին իրենց սև զգեստը, ձերմակ գլխազիրներն, կապոյտ քօղը, զօտիներնէն կախուած երկայն վարդարանը և շարունակեցին իրենց յանձն առած հոգը այն գժբազդներուն վրայ: Մեծամայրը, քոյր Մարի Էշէնտոր դեռ բաւական երիտասարդ էր, վայելուչ, հաստատամիտ և զուարթ կերպով իր հօտը կառավարող, և իր չորս կողմը անցած գացածին վրայ տատամետալ, բայց ուրիշներուն կը ծածկէր իր յուզմունքները, կը խրախուսէր սկարները, վստահ Նախախնամութեան վրայ, սիրուած բոլոր բանտարկեալներէն և իր ամեն գործերուն մէջ ունենալով նաև քաղաքականութիւն մը, որով կրցաւ փրկել Սէն-Լագարի հասարակութիւնը, որուն էր և է հիմայ ալ մեծամայրը (1877):

Ունենալով արիասիրտ տեսուչ մը առանց չափազանցութեան և բանախն հաւատարիմ անձնանուէր պաշտպանք, մայրապետներուն վիճակը անտանելի պիտի չ'ըլլար, թէ Սէն Լագարի մէջ Ռատը Ռիկոյի հրամանով գետեղուած չ'ըլլային երկու ցած սինդրօրներ, որոնք ամեն տեսակ յիմարութիւնք կը գործէին: Մէկը կը կոչուէր Լա բրիւնիէր դը Մէդիսիս, միւսը Մէֆիստօ մականունը առած էր, զոր կը թողունք իրեն: Առաջինը տասնուչորս տարի Ա. դուաֆներուն մէջ ծառայած էր և նշանաւոր եղած. վէրք մը ստացած ըլլալով կորսնցուցեր էր մատանույ մասը և 1865ի 480 Ֆրանքի թոշակով քաշուեր էր: Պաշարումը իր խելքը տարաւ, ինչպէս ուրիշ շատերունը: Փոխանակ կանոնաւոր բանակին մէջ մտնելու, իրեն ընտիր զինուոր մը ինչպէս էր ալ, փա-



փաղեցաւ ինքն ալ հրամայելու և թևին վրայ ոսկի եւ  
 բիզ մը ունենալու։ Ա՛մի դը ֆրանս անուամբ գունդ մը  
 ձևացուց, անոնց սպայ անուանեց ինքզինքը. առտուընէ  
 մինչև երեկոյ զինուպցաւ. և Խորթելով այս ծոյլ և զի-  
 նով կեանքէն, Մարտ 18ին սպայակուտին գնդապետ  
 անուանուեցաւ և Ռատլ Արիւոյէն զրուեցաւ իբրև պա-  
 հապան քաղաքագիտական վերակեցունեցու։ Այս պաշ-  
 տօնը իրեն բաւական չեղաւ, ստացաւ նաև բարուց ծա-  
 ւայութեան տեսչութիւնը, պաշտօն մը որուն վրայ Պա-  
 բիզու անատակը ուրիշ հաշիւներ կ'ընէն։ Այդ տիտղո-  
 սով մտաւ Սէն Ղազար կամ ըսենք Կիրացաւ։ Ամբողջ  
 սպասամբութեան ժամանակ հոն սպրեցաւ և ընդհա-  
 նուր շտեմարանաց կողմը բնակեցաւ։ Ֆելիպ շէս պա-  
 տուեց անոր վերակեցու բարուց պաշտօնը և շատ ան-  
 գամ անկէ կ'առնուր հրամանները։

Լա Բրիւնիէր դը Մէզիսիս, կը բնակէր և կուտէր  
 Մէֆիստոյի հետ։ Սա մազ ծախող էր, այսինքն կեղ-  
 ծամներ շինող, և յանկարծակի անուանեցաւ բանաե-  
 բուն ընդհանուր վերատառչ։ Ինքիբով լեցուած, հասարակ,  
 միշտ անխող, ինքզինքը Յեղափոխութեան  
 ամենէն ազեղ անձնաւորութիւնէն միոյն թոռն կ'ա-  
 նուանէր. պարծանօք մը կը ցուցընէր ոսկի մատանի  
 մը զոր իւր պապէն ստացած կըսէր։ Ատենօք հեռաւոր  
 գունդերուն երաժշտութեան մէջ եղջերափող չալած էր  
 և պաշարման ժամանակ սպգային պահապանաց գնդի  
 մը երաժշտութեան ուղղիչ եղաւ. բաւական լաւ կ'եր-  
 գէր և նոյն իսկ մեր քնարերգակ թատրոններուն խում-  
 թութիւնքը օգտակար եղան իրեն Հասարակութիւնէն  
 վերջը և կրցաւ ծածկուած ապրիլ իբր երգեհոն ծեծող  
 մատրան մը մէջ որուն անունը չենք տար։ Կը սիրէր  
 փայլուն գոյները և իր անունն ալ այդ խատուակի գոյ-  
 ներուն պատճառաւ ստացած է. կարմիր գլխարկ, կարմիր  
 փողպատ, վերնազգեստ կարմիր, ստիպտ կարմիր, գօտի  
 կարմիր, ուր երկու տարճանակք զարնուած էին։ Իր  
 սուրբ ետեւէն երկաթներու ահաւոր ձայն մը կը ձգէր  
 որ զմարդ կը վախցնէր, կը ջանար միայն Պիր Գիշչին  
 լրագրին (աղտեղի) լեզուն գործածել և կը վախցնէր  
 ամենէն ուժով սրտերն ալ։ Բարեկամ էր Ֆերրէի և Ռա-

տիկանութեան պալատան մէջ իր սեղանակիցը, կը սպառ-  
 նար հրացանի բռնելու բոլոր մայրապետները, բոլոր  
 բանտեղանները, բոլոր հսկողները, բոլոր օրինաւոր վարչու-  
 թեան կողմ եղողները, բոլոր քաղաքացիքը, բոլոր վեր-  
 սայլիքը. անքան ուժով կը պոռար որ միայն իրեն  
 ձայնը կը լսուէր։ Եւսակայն այս Մէֆիստօն որուն վրայ  
 մինչև այսօր այնքան սարսափով կը խօսին Սէն-Ղազար  
 բանտին մէջ, զէջ մարդ չէր, իր մոլեգնութիւնը ցոյց  
 մ'էր և երկու երես ունէր։

Պաշարման ժամանակ շատ անգամ կտրեր անցեր  
 էր զերմանական բանակը, գաւառները նամակ տանե-  
 լու համար. մասնաւոր երեւիլի էր յառաջապահներէն  
 անցնելու. և չվախցաւ միջնորդ ծառայելու Վերսայլի և  
 Հասարակութեան անդամաց մէկուն որ հինգերորդն էր  
 որ չէր մերժած վերսայլուց կաշառման փորձերը։ Մէ-  
 ֆիստօ այս բանիս համար կը ծպտուէր, կը մտնէր կառք  
 մը իրեն տրամադրութեանը դրուած, բարձերուն տա-  
 կը կար տուփ մը որ ծածուկ նամակագրութիւնքը կը  
 բովանդակէր և զանոնք բերդերէն դուրս գինետան մը  
 մէջ մամուսւոր զրկուած անձի մը կը յանձնէր։ Բա-  
 նակցութիւնը ելք մը չունեցաւ. որովհետև պահանջները  
 շատ մեծ էին։ Այս օգուտը եղաւ որ այդ անձը Հա-  
 սարակութեան անկումէն վերջը առանց նեղութեան մը  
 կրցաւ ձգել Պարիզ։ Իսկ Մէֆիստօն և ոչ իսկ փնտսող  
 եղաւ։

Լա Բրիւնիէր դը Մէզիսիս և Մէֆիստօ թէպէտ ու-  
 նէին իրենց վճարքը, բայց երբեմն նեղը կը մտնէին։  
 Լա Բրիւնիէր որ վարպետ անձ մ'էր գտեր էր զուար-  
 ճանալու դրամ ժողուելուն կերպը։ Հայրենեաց պաշտ-  
 պանողներ պատրաստելու պատրուակաւ, երիտասարդ  
 անվարժ քաղաքացուց զինաշարժութիւն կը սորուցնէր  
 Դէյուզէ Թատրոնին մէջ։ Ամեն նիստէն վերջը գնդապետ  
 ուսուցիչը ինքը դրամը կը ժողուէր իր ընկիւնի մէջ իբրև  
 բանակին հիւանդանոցաց աղքատներուն համար։ Այս  
 ստեպ հաւաքուած դրամը միշտ իր կոկորդը կը մտնէր։  
 Ծեր կապկի պէս շատ գիւտեր ունէր երբ «վերաւորաց»  
 համար ողորմութիւնը չբաւէր, չէր տապնապեր ուրիշ  
 պարկեշտ միջոց մը փնտուելու։ Ապրիլ 19ին Սէն-Ղա-  
 զարի Ժէլլի հսկողը բռնել կուտայ և կը տանի Ռատլ



Ռեկոյի երբև մեծ գործ մը. Ռեկո կը հասկնայ միաքը և 25 ֆրանք նուէր կուտայ: Լա Բրիւնիէր կը արտնչէ զամարին քիչ ըլլալուն վրայ. Ռեկո կը յիշեցնէ անոր հայրենասիրութիւն, ժամանակները զէշ են, սասակ չկայ. թերևս ապագային աւելի լաւ ըլլայ: Լա Բրիւնիէր բարկացած Սէն-Լազար կուգայ, կ'երթայ ժէպի բնակարանը և լաւ մը վեր վար ընելով կը գտնէ քառասուն և հինգ ֆրանք և գրպանը կը գնէ: Յետոյ անմիջապէս վճիռ մը կը ստորագրէ բանակու Տրիկին ժէպի և ինը տարուան ազլիկը, որոնք Սէն-Լազար կը մնան մինչև Մայիսի 25ը:

Մէֆիսո և Լաբրիւնիէր զը Մէդիսիս Սէն Լազար գալերնուն մասնաւոր նպատակի մը ետեւէ էին: Գիտէին որ Մարի ժոզէֆ մայրապետները իրենց հոգևոր ամփոփման համար ուրիշ վանք մը ունին Արժանտէյլի մէջ, և երկուքն ալ մտքերնին դրած էին որ Սէն Վէն սան վանատունը ստորերկրեայ ձամբով մը կապուած է Արժանտէյլի հետ. աչքերնին բան չէր երևար երկու քիւմէզը հեռաւորութիւնը և Սէնի երկու զրկաչափ բարձրութիւնը: Արդէն Հասարակութեան անդամք ամեն կողմ զեանապորներ փնտռելու ետեւէ էին: Լա Բրիւնիէր և Մէֆիսո երզուընցած էին գտնելու այն ստորերկրեայ ձամբան որ պիտի միացնէր Սէն-Լազարը Արժանտէյլի հետ, ուսկից մեծամայրը Վէրսայլի հակառակորդաց զէնք կ'անցնէր: Պեղումները սկսան երկրորդ բաժնին բազմիչներուն սակ: Սակայն ի զուր փորձեցին. դետինը միշտ «խուլ» էր և մերձաւոր խոտոչի մը նշան չկար: «Այս մայրապետները մեր վրայ կը խնտան, կըսէր Բրիւնիէր, և կանչել տուա Քոյը Մարի Էլէոնոր, որ անշուշտ պիտի լաւ մը ծիծաղէր հարցնողին վրայ, թէ որ զինքը չլխացնէին Մէֆիսոյի կարմիր զգեստները և սարձանակները և Լա Բրիւնիէրի հայհոյութիւնները և սպանալիքները: Խեղճ մայրապետը ըսաւ որ այսպէս ստորերկրեայ տեղ չկար և բնաւ այդպիսի բան լաւ չէ, և իրեն այդպիսի պարապ բաներ հարցնելու տեղ, թողուն որ քնանայ: Լա Բրիւնիէր չէր կրնար համոզուիլ «Եթէ զէպի Արժանտէյլ ստորերկրեայ չկայ, գտնէ ցըցուր մեզի Սէն-Լորան գացող գերնապորին մուտքը զոր պէտք էս գիտնալ»: Վէճը նորէն կը սկսէր և կ'եր-

թային բորել ուրիշ կողմեր միշտ ի զուր: Ամեն երեք զիշերէն երկու զիշեր բոլոր Միաբանութիւնը կ'արթըննար այդօրինակ շփոթութեան համար: Խեղճ բորողներուն ըր շատ քաշեց և ձայն չհանց այդ գինով բորողներուն զիմաց, և այս տեւեց Մարտ 22էն Ապրիլի կէսը. մինչև ծիծաղելի կ'ըլլային, և հրաման զրկուեցաւ Լա Բրիւնիէր զը Մէդիսիսի «այլ ևս այդպիսի խուզարկութիւնք չ'ըլլան Սէն Լազար բանտին մէջ» ստորագրեալ. Ա. Գիւնպոն. զուլի քաղաքային ստիկանութեան, Էդմուն Լըվրո զուլի Ա. բաժնին. 15 Ապրիլ 1871.

Այսպէս մայրապետները կ'ազատէին անտանելի խուզարկութիւններէն, երբ արդէն իրենք ալ որոշեր էին սմբողջապէս ազատիլ այս կեանքէն որ անտանելի եղած էր, որովհետեւ զաշնաւորաց գունդ մը հան հաստատուելով, կ'ապրէր ամեն ոք իրբև թէ իրեն տանը մէջ ըլլար: Մայրապետները կը զուշակէին որ իրենց մեկ-միւր շատ մը կարանաւորաց պատճառ պիտի ըլլար կէս մը ազատութեան որ սպա անառակութեան պիտի փոխուէր, բայց բանադատուած էին նախ հսկել իրենց փրկութեան և զիտէին որ անկարող էին յաղթել այնքան հակառակ կամքերու որոնցմով պաշարուած էին: Երզուընցեր էին բնաւ չհանել իրենց կրօնաւորական զգեստը, որ իրենց համար նշանակ մ'էր պարտուց և հաւատոյ: Որով հարկ եղաւ բանակցիլ, ստանալ հրաման ձգելու զՍէն Լազար, ձգելու Պարիզ, օրուան մէջ բարձր ի զուլի իրբև բանակ մը որ կը նահանջէ զինուց պառտուօք, երբ անօգուտ կ'ըլլայ ընդդիմութիւնը: Քոյը Մարի-Էլէոնոր յանձն տուա այս քաղաքապետական զերը և յաջողեցաւ: Մէջտեղ բերելով ձարտարութեամբ խոյճի սպանութեան իրաւունքը և իր քոյրերուն այնպիսի վտանգներ զորս կրնար զուշակել, ստացաւ Լաման Լըվրոյէ ամբողջ Միաբանութեան Արժանտէյլ բաշտելու հրամանը, յետ աշխարհական սպասահարկութիւն մը կազմակերպելու բանտին ամեն մասանց մէջ: Անցազիրը ստորագրուեցաւ: Յուցուեցաւ զուրը կեցող պահակին որ զայն կանտնաւոր գտաւ և խոտապաւ յորգելու գայն:

Ապրիլ 17ին մայրապետաց պատկանող կահկարասիք, սրբազան անօթք մատրան՝ ուր արթիեց սուրբն Վէնտան











Թեան դատաւորները որ միջազգային խնդիրներ յարուցանել չէին ուզեր, երբ զխանապետ մը պահանջեր կալանաւոր մը, անմիջապէս կ'ազատուէր:

Բանասպաններուն և զինակիրներուն կանայք, որ յանցաւորաց և դատաւորներուն մասին մէջ կը գտնուէին, սկանջ կը դնէին դուրսի ձայներուն: Կը մտածէին որ իրենց բանտարկութիւնը շատ երկար տևեց և կը խորհէին սպառազային վրայ: Երբեմն ձեռքերնին կ'իյնար հսկողուհւոյ մը բերած լրագիր մը. անհամբերութեամբ վրան կը թափէին, կը կարդային լուրերը որ իրենց միշտ ահաւոր կ'երևար, վանդի լրագրութիւնը երբեք այնքան սուտ խօսած չէ, ինչպէս Հասարակութեան միջոց: Հեռագրի լուրերն ալ միշտ միակերպ էին. վերսայցեք միշտ կը յաղթուէին և դաշնաւորք յաղթող էին: Եւ սակայն զիտեցին որ Մայիս 22ին Մուզոն տեսուչը շատ մտածմունքի վրայ էր, ինքնիրեն կը խօսէր և կ'ըսէր «Յայտնի է, այսպէս պիտի ըմնար: Ատկէ հանեցին որ ազատութիւնը մտա է: Մէֆիստո աներևութացեր էր և լա Բրիւնիէր թերևս կը մըտածէր ակրութեամբ որ եթէ հոշակաւոր ստորերկրեայ ձամբան գտնէր, առանց վասնզի կրնար երթալ Արժանդէսը:»

Մայիս 22ին երեկոյեան, շփոթութիւն մը ծագեցաւ թէ տեսչութեան տեղը և թէ բանտին մէջ: 228: գունդին պատկանող դաշնաւորները բռնի բանտը մտան և պահանջեցին Մուզոնէն որ շուտով իրենց յանձնէ իրենց գինեպանուհին որ երեք օրուքն է ի վեր բանտուած էր: Մուզոն բանակցեցաւ. անոնց բացատրեց որ ինքը գործադիր իշխանութիւն չէր և իրեն արգելուած էր «օրէնքներէն» առանց հրամանի բանտեալ արձկել, բայց խոստացաւ գրել Հասարակութեան գործակառարին ի նպատակ իրենց խնդիրքին: Արեմն գրեց «Քաղաքացի Ռիփօ, եթէ նկատողութեան առնուա բազմաթիւ քաղաքացւոց պահանջը ազատելու իրենց գինեպանուհին, արդար գործ մը կ'ընես. Ուլոյն և Հաւասարութիւն-Տեսուչը, Կ. Մուզոն:»

Գաշնաւորները այս նամակը առնելով քաջուեցան: Մէջերնէն շատերը մուտքին զմայի կայարանը կեցան ընկերներուն հետ եզրայրակցելու, և նուիրակները մեկ-

նեցան գտնելու Ռատու Ռիփօ, որ չգտնուեցաւ ոչ Արդարութեան պալատը, Ոչ Ռատիկանութեան պալատը ոչ Օթէլ տը Վիլ և ոչ Կատակերգական-Ջրօսանք թատրոնը, զոր երբեմն կը պատուէր իր ներկայութեամբ: Վերջապէս գտան, և մատիտով մը Մուզոնի թղթին միւս կողմը գրածը կ'ըսէ ամեն բան «Հրաման թղթին Սէն-Լազարի տեսչին ազատելու Ա... քաղաքացուհին, գինեպան 228: գունդին-Հասարակութեան ընդհանուր դատախազ, Ռատու Ռիփօ.-Գրուած 142: գունդին կայարանը, ի Մոնմարտը, այսօր 22 Մայիս 1871:» Այս հրամանը Ռատու Ռիփոյի տուած ներքին վերջիններէն մէկն է. գիրը բարակ է երազ և ձպտու:

Մայիս 23ին առաւօտ, Մուտոն առտուքն ուրիշ տալազով մը երեցաւ, ըմբռնեց որ թէ գինուորութիւնը և թէ տեսչութիւն կատարելու ժամանակը անցեր էր, և թէ աւելի խեղացի էր զուլի ըլլալ հիւանդակալաց: Թեւին վրայ ժընէվի խաչ, ժընէվի խաչ գլխարկին վրայ. ալ չկար կարմիր գօտի ոսկէերկը քիփի՝ հիւանդակահարձեա գարձեր էր որ կը բանար բանտը և սիրտը բոլոր զժբողներուն: Սէն-Լազարի ստորին յարկը հիւանդանոց վերածեց. անկողին և սաւաններ կային, բաւական էր տանը կից շտեմարաններուն մէջ փնտուել: Մուտոն հոգածութեամբ կ'ընդունէր վերաւորները: Հսկողուհիք և աղախինք ամենն ալ հիւանդակահարձան վերքեր հոգալու: Մուտոն համոզուած էր որ Հասարակութիւնը հոգեվարք էր և իրեն շոր կողմի եղողք ալ նոյնպէս կը մտածէին: Երկու երեք ուսմբ, չեմ գիտեր որ կողմէն գալով տանիքը քերեցին առանց մեծ վնաս մը ընելու. բանտեալները վարտերնէն պոռացին: Մուրը-Սրտին մայրապետները, ծուռ չոգած իրենց ննջարանին մէջ, բարձր ձայնով կ'աղօթէին: Կեւրակրեղէն կար: Բանտերուն փուռը Սէն-Լազարի մէջ է, որով և այն առաւօտ կրցեր էին եփել:

Երկրորդ առաւօտ 24 Մայիս, Չորեքշաբթի, հրացաններուն հարուածը որ խոկորան անդադար էր կարձեա սկսաւ հեռանալ և յանկարծ օրինաւոր զօրաց խումբ մը բանտը մտաւ: Երբ գինուորները կնիկներով լեցուն քառանկիւնը մտան, ամենքն ալ ուրախութեամբ կան-



չեցին «Ահա վերսայլ»: Գնացին կանոնաւոր զինուորսն երէն քանի մը վերաւորք բերին և յանձնեցին հիւանդանոցի գլխաւորին որ ամեն խնամք ցըցուց: Խուճբին գնդապետը հարցուց թէ «Ո՞ր է տեսուչը»: Մէկը չպատասխանեց: Մուտոն վերաւորելոց խնամքը աւելցուց: Այս մարդը գէշ մէկը չէր եղած և իր ձեռքին տակ չէին ներուած. իւր որկորածէտութիւնը գինքը անվնաս ըրեր էր. հսկողներէն ոչ ոք իրեն չարիք կ'ուզէր և գինքը չմտանցին: Գնդապետը կրկնեց իր հարցմունքը: Բանտարգետալ մը որ իբր աղախին կը ծառայէր, աչքովը ցըցուց հիւանդանոցին գլխաւորը:

Մուտոն կարանաւորեցաւ: Երբ դատարանին դիմաց ելաւ, նկատողութեան առնուեցաւ իր չէզոք և առանց չարութեան բնաւորութիւնը, թեթեւ պատիժ մը տրուեցաւ, զոր ապա աւելի քիչցուց շնորհներուն յանձնաժողովը: Իր բանտարգետութեան ժամանակ կեդրոնական բանտին մէջ, կոչկալարութեան արհեստին մէջ օրինակ մը եղաւ, որուն համար կը ահանուի մասնաւոր տաղանդ մը ունէր. հիմայ ազատ է (1877) և փիլիսոփայու թեամբ մը ձեռք առած է դանակը և փոկը: Մէֆիստօ, ինչպէս ըսինք, կրցաւ ազատիլ փնտոռելէ: Լա Բրիւնիէր զը Մէտիսիս աւելի գժբաղդ եղաւ: Մայիս 25ին բանտ գրուեցաւ և դատապարտուեցաւ աքսորի: Տուլանի բանտէն Կարետոնիա մեկնած ժամանակ իր կնիկանը գրեց նամակ մը որ մանրամասն մատուցութիւն մ'էր իր ձանչցած շատ մը դաշնաւոր սպայից, և կը լսենէր այս բառերով. «Իմ անունս և իմ պատիւս ինձ կ'արգելուն մատնչի պաշտօն ընելու»:

Լ.

Ս Է Ն Տ - Պ Է Լ, Ա, Ժ Ի

Օգիշտուէն Ռաւնիիէ, տեսուչ. - Գաբրիէլ Ռաւնիիէ՝ ակադէմիկ Նասարակոչքեան - իր ծագումը, կարծիքները - կրակ տոշոյ և մարդասպան - Տգիտոչքիւն Օգիշտ Ռաւնիիէի - Պրեօ դը փետի - Գործակատար կ'ըլլայ Օ. Ռաւնիիէի - Խոշգարկոչքիւնը և գողոչքիւնը քաղիկ մէջ - Քանակայն Բեւեյօ - Հսկողն վիլլովէն - Կիշտալ Շոտե բանտարկուած Պալիլլոն Պրեկեի մէջ - Բարեկալ Պրոշտոնի - Շոտե 21 Յոլմուարի - Պիլ Պիլիէն գիւնը կը մտնէ - Վերջին այցելոչքիւն - Քանակայր Սիւն - Մետարի - Ռաուշ Ռիկօ կոչոյ Սիւն - Պեղածի - Ռիկօ և Շոտե դիւնացի դիւնաց - Դատապարտոչքեան բանակէր - Ռիկօ կրակը կը հրամայէ - Սպակուզն Շոտի - Սպակուչքիւն երեք գիւնակրաց - Սիւն - Պեղածի կ'ազատի - Ման Ռաուշ Ռիկոյի - Սպակուզն Պրեօ դը վիտիլի - Անձնապակուչքիւն Օգիշտուէն Ռաւնիիէի:

Մէտ - Պեղածին հիմնեց 1665ին Մարի Բոննօ, այրի Բոնարնէ զը Մերամն՝ անտակ աղջկանց համար, Ժար - գէն գէ Պրանտի թաղին մէջ: Խցիկ չունի, բայց ննջաբաններ են, հասարակաց սրահներ և միայն քանի մը վերապահեալ սենեակք: Գարձեալ կղզիացեալ բաժին մը քաղաքական յանցաւորաց համար, որ կատակէ համար կը կոչուի, օրարան իշխանաց: Ահաւոր է այս բանտը: Ծերացած և պէտք է որ վերջապէս ինկնայ: Աւելի բորտանոց մ'է քան բանտ: Չարագործաց համար դարոց մ'է յոռութեան, քաղաքական յանցաւորաց համար նուաստացուցիչ. բազմաթիւ տաղնապ մը մատակարարութեան համար:



Հասարակութիւնը չգործածեց զայն. այսու հանդերձ չորս սպաննութիւններով պղծուեցաւ: Մարտ 22ին, երեք զինակիրք որոնք նոյն առաւօտ Սէլէստէնի զինուորանոցին մէջ կալանաւորուեալ էին հոն բերուեցան քաղաքին սպայակուտի հրամանատարին խօսքովը. իրենց անունները նշանակուեցան Օգիւստ Բուզըն, Լէոն Կապ դըլիւ և Կոմիսիկ Պակոս. զանոնք մէկտեղ զրին և մէկտեղ թողուցին իրենց բանտարգելութեան ժամանակ որ տխուր կերպով պիտի վերջանար: Տ. Լասայ կանոնաւոր վարիչը բանտը չէր թողուցած: Մարտ 23ին առաւօտեան ժամը ութին, իւր յաջորդը Կեդրոնական յանձնաժողովոյն թղթով մը ներկայացաւ և գրաւեց յետ տարւո ստացազիր մը արկղին մէջ իրեն յանձնուած 2030 Քրանքին: Այս յաջորդն էր Օգիւստէն Ռանվիէ զինիի մունետիկ և պաշարման ժամանակ ենթապալ 1227 գունդին: Քառասուն տարուան մը կար և իրմէ շատ տարեց կնկան մը հետ կարգուած էր ուսից բաժնուած էր: Սէնտ - Պէլաժի կամ Պէլաժի ինչպէս կըսէին այն ատեն, կրնար քաղաքական յանցանորայ համար լաւ բանտ մը ըլլալ, որով հոն պէտք էին իրենց վտաահանալի մէկը դնել: Հարկ էր որ այդ մարդը շատ խղճմտանք չունենար, որովհետեւ իրմէ շատ փափուկ ծառայութիւններ կրնային պահանջուիլ, ինչպէս սպանութիւնք և ասոնց նման պղտիկ ծառայութիւններ որոնց վարժած էին Հասարակութեան հրամայողքը. իրենց ընտրութիւններն ցըցուց որ լաւ մտածեր էին:

Ռանվիէ բիրտ էր, զինով, միշտ թաղին զինետուններուն մէջ նստած, սաղնապած հարցափորձի տետրակներուն և թղթերուն զիմաց և չէր զիտեր ինչպէս այն «կախարդական գրքերուն» մէջէն կլլել, որովհետեւ Տ. Բոքէն օրինաւոր ատենադպիրը խելացի գտնուեր էր մեկնելու, հետը տանելով հաշուի գրքերը: Ռանվիէ երկու նոր ատենադպիրք անուանեց՝ Կլէման, որ ծանօթ չէ ուսից եկած ըլլալը և Բէն՝ անգղիացի մը, սպանաւոր ժապաւենալաճառ:

Երկուքն արդիւնքն ալ այն էր որ իրեն պէս կը մտածէին և կուզէին, այսինքն ժողովուրդը պէտք էր փոխանակել ամեն ընկերութիւն, ընդհանուր հասարակացեալութիւն, դաշնաւորութիւն ժողովրդոց և հաւաքակա-

նութիւն (solidarisme): Բանալը գրեթէ բնու երթեկ չունէր, գրութիւնք կնճառտ չէին և ամեն բան քիչ շատ կանոնաւորապէս կ'երթար: Բայց Օգիւստէն Ռանվիէ բնու գոհ չէր, որովհետեւ իր մատակարարական թղթակցութիւնք անընկճելի դժուարութիւններ ունէին: Այս մասին իր ատենադպիրները իրմէ աւելի չէին զիտեր և թէպէտ այս ժամանակիս նամակագրական յարաբեթիւնք Ռատիկանութեան Պալատան և բանտերուն մէջ շատ պարզուած էին, այսուհանդերձ տեսուչը անկարող էր այդ կարեւորն ալ ընելու, եթէ Սէնտ - Պէլաժիի կրկանքերու ներքեւ բանտեայ չգտնուէր կառուցող - երկրաչափ մը Կիւտալ Սիմոն Պրէօ զը Վէտէլ՝ որ տասուիւրեք ամսուան բանտի դատապարտուած գողութեան համար և որ հոն գրագրի պաշտօն կը կատարէր:

Պրէօ զը Վէտէլ ապահովապէս մահացու հակառակութիւն մը յղացեր էր ընկերութեան մը դէմ որ օրէնքներ ունի և կը պատժէ շարագործները: Իր իմացականութեամբը վախցուցեր էր գամէնքը: Ունէր բազմակութիւն մը, մարդավարութիւն, հասակ մը, ուժ, զրաւիչ թուի գեղեցկութիւն մը, լեզուանի և անխիղճ ծաղրածութիւն մը. կրցաւ շուտով տիրել Ռանվիէի վրայ և ըլլալ անոր ընկերը: Ինքը կը գրէր անոր գերբեր և խոստացաւ որ քիչ ատենէն առաջին ատենադըպիր պիտի անուանուէր: Կը շարունակէր բանտին բնակութիւնը, բայց դացուած չէր: Թողուցեր էր կալանաւորաց զգեստը, քաղաքացի զգեստ հագեր էր քովը միշտ ատրճանակով մը: Հասարակութեան միջոց՝ Օգիւստ Ռանվիէէն աւելի Պրէօ զը Վէտէլ եղաւ Սէնտ Պէլաժիի տեսուչը: Կը հրամայէր հակողներուն, ասենադըպիրներուն հրաման կուտար, կը բանար պաշտօնական թղթակցութիւնները, կը փոխէր բանտին սովորական կանոնթափանները, որպէս զի կաշառ տոտնայ, զոր կը բաժնէր Ռանվիէի հետ և սորա հետ միաբան մերձաւոր զինետունները կ'երթար: Երեկոյնները տեսչին սրահակ կը հաւաքուէին քանի մը ուրիշ բարեկամներով որոնց վարքը շատ խիստ չէր երևար:

Բէն, Կլէման, Պրէօ զը Վէտէլ և Ռանվիէ չորսն ալ կը խմէին և կը դուարճանային: Հսկողներուն արթննութեամբ բանտին բարեկարգութիւնը և զնացքը չէր



խանգարուէր, և եթէ երբեմն զինին պակսեցաւ, պատճառը տեսչութիւնն էր որ զայն պարպեր էր: Աշխատանցներուն մէջ ամեն ձեռագործ դադրեցուցեր էին, պատճառ բերելով որ կալանաւորաց աշխատութիւնը անհատականաց շահուն միտս կը բերէ: Բանտայինը ձանձրութենէն նեղուած, յօրանջելով ջերմատուներուն մէջ, կը հաւաքուէին քառանկեան սրահները յիշելով այն ժամանակները որ զիւրին աշխատութեամբ կտոր մը դրամ կը շահէին: Ամենայն ինչ յայտնուեցաւ, նոյն իսկ զնդաններուն մէջ. կալանաւորք հասկցան ինչ որ կ'անցնէր տեսչութեան տեղը: Օր մը երբ Պրէօ զը Վէլզէ կ'անցնէր սրահէ մը, սուլեցին իրեն, քանի մը ծաղրածութեամբ հասկցուցին իրեն որ ինքն ալ յանցաւորաց կարգէն էր:

Համար էր զՕգիւստէն Ռանլիէ որ իբրև տեսուչ Սէնտ Պէլրափի, իրաւունք ունէր հսկելու մերձաւոր փողոցներուն, խուզարկութիւններ և կալանաւորութիւններ ընել: Այսպէս կը հաստատեր թէ իր և թէ Հասարակութեան իշխանութիւնը: Եւ որովհետև բանտի տեսուչ էր, նովին իսկ գործով իրաւունք ունէր ստացուածք գրուելու: Այնքան պայծառ էր այս պատճառարանութիւնը որ պէտք էր տեղիք տալ: Այն օրուրնէ սկսան զիշերային արշաւանքերը: Երեկոյեան ժամը տասնին միջոցները դուրս կ'ելլէին, կ'երթային փողոցին դուռներուն կը զարնուէին, յանուն օրէնքի բանալ կու տային, և իբրև ստուգելու համար որ տանտէրները Վէլր սայլի հետ յարարեութիւն չունին, կը խուզարկէին կահկարասիքը, կը բանային զբրոցները և պահարանները կը թափէին դուրս: Երբէք պարտալ ձեռքերով չէին դառնար, նա մանաւանդ երբեմն լեցուն զբայաններով կը հեռանային: Թէոր ընդգիծացողք գանուէին, զանոնք Սէնդ-Պէլրափի կը բերէին և երկու երեք օր կը բանտէին: Թէոր լաւ աւար ըլլար, մէջերնին ընտանեկան ուրախութիւն մը կ'ընէին և ատոր «Բարոտասար» անուն զրած էին: Քիչ զինովները կը պակեկցնէին զտեսուչը, որուն զրուխը տկար ըլլալով, միշտ ամենէն առաջ կ'իյնար տեղանին տակը:

Սէնտ-Պէլրափի բանտին քահանայն Տ. Բէլէյնօ, ստիպուեցաւ թողուլ բանտը և ապաւինիլ իր բարեկամներ

ընէն մէկուն տունը իրեն եղած սպառնալիքներուն համար: Սեկնելուն պէս կտորեցին սենեկին դուռը, ջարդեցին կարասիքը, զողջան ձերմակեղէնքը և առին աւոր զինիները: Այսչափը բնական էր, բայց Ռանլիէ, աւանդապահ և պատասխանատու Տէրութեան տակին, Բէլէյնօ քահանային հաշիւ դրկեց զարբնով դուռը բանալուն և զինին մինչև տեսչութեան բնակութիւնը տանելուն համար: Յայտնի է քահանայն Բէլէյնօ չլճաւրեց:

Ապրիլ 26ին, Վիլլմէն անուամբ Սանտէի բանտին հսկող մը, Սէնտ Պէլրափի զրկուեցաւ ենթապահապետի պաշտօնով: Այս Վիլլմէն երբեմն նաւաստի, երբեմն զինուոր, հաստատամիտ և օրինաւոր անձն, այս անկանոն յառաջադիմութիւնը յանձն առեր էր Տ. Կլոտի կանոն յառաջադիմութիւնը յանձն առեր էր Տ. Կլոտի Ապահովութեան գլխոյն թախաձանօքը. որ այն ատեն Սանտէ կը գտնուէր իբր պատանդ: Օգիւստէն Ռանլիէ փութով գուշակեց. շատ անգամ զՎիլլմէն «Վէլրայլցի» կոչեց, որ այն ատեն մեծ նախատիք մ'էր և սպառնացաւ հրացանի բռնելու: Վիլլմէն գլուխը կը ծռէր, կը թողուր որ փոթորիկը անցնի, նորէն կը սկսէր իր ծառայութիւնը, կը ջանար հասնիլ կալանաւորելոց և ստեպ կ'երթար խօսելու Բուզոնի, Պակոտի և Կապլզըլլիի հետ, որոնք միշտ բանտեալ էին, անոնց ուտելիք մը կը տանէր և երբեմն գաւաթ մը աւելի զինի: Այս ամեն բան անհաճոյ էր Ռանլիէի, որ ենթապահապետին ազդեցութիւնը կտորելու համար և անշուշտ Պրէօ զը Վէլզէի խորհրդով, պահապետ մը անուանեց, որուն պէտք էին հնազանդիլ ամեն հսկողները: Այդ անձը կը կոչուէր Ֆելքս Մազուար Ժանգիլ, երբեմն վաճառող հինումին զգեստներու և ցնցոտեաց և զոր Ռասուլ Ռիկօ կը գործածէր ատեն ատեն ոստիկանապետի տեղ: Այս Ժանգիլը բանէ չքաշուող մէկն էր, որով անմիջապէս գնահատուեցաւ տեսչին ընկերներէն և անոնց մտերմութիւնը ստացաւ:

Մայիս 19ին Ուրբաթ օրը, Կիւստավ Դոտէ՝ Սէնտ Պէլրափի բերուեցաւ և բանտուեցաւ «Իշխանաց Օթարանը»: Ապրիլ 13ին Ռիկոյի հրամանաւ կալանաւորուեր էր, բանտուեր էր Պահպանողը, 14ին Մազաս փոխադրուեր էր, և իր ամուսնոյն ջանքերովը Սէնտ-Պէլրափի



կը փոխադրուէր, ուր նիւթականագէտ ըսէ էր և աւելի ապահով կը կարծուէր: Դոտէ այն առեն կար յիսուս նեւերիու տարուան, Քողբոյ Ատենին փաստարան, սիւրբի իր պաշտօնակիցներուն, որոց ախորժելի էր իր շառաչուոր բարութիւնը: Իր կարծիքները չափաւոր հասարակագետական էին. աւելի ժիրոնտեան գործափարներու հակոյ: Իր հայրենակիցին Պրուգոնի մտերիմ, կրօն էր անոր ազդեցութիւնը և սիրած էր արամաբաշ նութիւնը, բայց առանց դիտելու որ շատ անգամ հեռու տեւորները վրիպակ էին որովհետեւ առաջին անգամները ձեռտ չէին: Չէր գիտեր որ Պրուգոն իսկ երբեմն կը գործուրէր իր գործէն և գրած էր բարեկամի մը որ «Քառասուն տարի ապրեցայ, աշխատեցայ արգարութեան և ազատութեան համար. գրիչս ձեռք առեր եմ անոր ծառայելու համար. բայց կը տեսնեմ որ աւելի գերութիւն առաջ բերեր եմ և խառնակութիւն»: Խոստովանութիւն մը, զոր անշուշտ յեղափոխականներէն շատերը ըրած են խղճմտանքնուն մէջ:

Դոտէ Յունուար 22ին Օթէլ զը Վիլի յուզման մէջ իբրև բաղաբազուլու 94 շրջանակին, մեծ դեր ունեցեր էր ապստամբաց յարթուելուն, որով Մարտ 18ի վարչութիւնը յեղեց և կասկածաւորներուն թուոյն մէջ անցաւ: Մարտ 31ին 1871, այսպիսի Հրաման մը եղաւ. «Քնդհանուր Ապահովութիւն. Տեղեկութիւնք առնուլ Դոտէ կոչուած անձին վրայ. Հրամանատար զօրավարն Պարիզու բանակին, Բեթրլրի: Արիկայ չարակամութեան սկիզբ մ'էր և զոր չզիտցաւ անշուշտ Դոտէ: Առաջին Պիլ Գիշիկն րադիբը եղաւ որ զինքը մտանեց և պաշտանեց որ սպանուի. «Կայ, զորօրինակ, այդ եղիկի Դոտէն, որ այնքան ցած դեր մը ունեցաւ այն ինտերոյն մէջ (22 Յունուար) և դեռ հանգիստ կը զուարճանայ Պարիզու մէջ իբրև փոքրիկ Յովհաննէս Վիլարի մը.»» Վէրմէլ րագրին խմբագրապետը, յայտարարած է որ ինքը մաս չունի այս մասնութեան մէջ և պատասխանատուութիւնը ձգած է Ալֆոնս Էւմբէր մէկու մը վրայ: Այս մասին կարծիք մը չէնք կրնար տալ, միայն գիտենք Պիլ Գիշիկի մասնութիւնը «22 Ժերմինայ Հի տարի»: Եոյն երեկոյ Ապրիլ 22 Դըլ կիլիզ ըսաւ Հասարակութեան գումարման մէջ սա Ռասուլ Արիօ. «Կը

զարմանամ որ Դոտէ չէ կալանաւորուած»: Երկրորդ օրը Դոտէ կալանաւորուեցաւ Պիլոտէ անուամբ մէկու մը ձեռքով, որ հինգ օր վերջը երաւ նոյնպէս կալանաւորելու 815 Քրանք Տիկին Դոտէի ասուել: Ի՛՞՞՞՞՞ շատ աշխատութիւնք եղան ազատելու զինքը: Ի՛՞՞՞՞ բանեկամներէն մէկը գնաց խօսելու Ռասուլ Արիկայի որ պատասխանեց. «Տրոփանի և Դոտէի մէջ տարբերութիւն չեմ գնիր»:

Կըսեն որ Դոտէ ունէր գնդա տեղեկութիւնք Հասարակութեան նկատմամբ, որուն պատճառաւ հարստուէր եցաւ: Դոտէ կարեւորութիւն մը չեմ տար այս ձայնին: Ռասուլ Արիկայի բնաւորութիւնը բաւական է բացատրելու այն եղեանը, որուն ուղեց ինքը գլուխ կենար: Դոտէ զիտէր որ վերջնապէս գաղղիացի բանակը պիտի մանէր Պարիզ, և անշուշտ կը խորհէր որ մօտ էր իր ազատութիւնը: Եւ որովհետեւ մարդս ինչ որ կը մտածէ, կարծէ թէ նոյն զգացումները ուրիշներն ալ ունին, անոր համար երբէք փտանգ մը չէր կրնար գուշակել. շատ շատ բանասարգելութեան երկարութիւն մը թէ որ դաշնաւորաց գունդերը յաջողին վանելու բանակը:

Մայիս 23ը Կիւստալ Դոտէի համար կրկին երջանիկ տարեգործ մ'էր որ իրեն կը յեղեցներ իւր ամուսնու թիւնը և իր սրբոյն ծնունդը: Այն օրը, Տիկին Դոտէ, պատերազմողներով լի փողոցները կարելով, եկեր էր տեսնելու իւր ամուսինը և թէպէտ շատ թախանձեր էր, բայց չէր կրցած Օղիւստէն Ռանիլիկէն՝ միաբան ճաշելու հրամանը առնուլ: Դոտէ իջաւ վարը գրութեանց սենեակը, ջանաց տեսչէն հրամանը ստանալու, բայց չյաշտեցաւ: Տիկին Դոտէ բռնադատուեցաւ հեռանալու, ըսելով իր երկանը «Յտեսութիւն վաղը»:

Օրը հանդարտ եղեր էր, թէպէտ և բանալը երեք տը հիւրեր ընդուներ էր: Դաշնաւորք յարձիկեր էին Աէն-Մէտաք եկեղեցին, և փոխանակ իրենց փնտրած գիտնալ թշնամիներուն, հոն գտեր էին երկու երեցիտեանք և մէկ ժամկոչ, զորս փութով կալանաւորեցին: Տ. Տ. Աստըլէն զը Վիլլըքիէ, Պիկու և Պլատիւէլ Աէնտ-Պէլոփ բերուեցան. ճամբան թէ բերող պաշտպաններէն և թէ ապստամբներէն շատ նախատիքներ ընդունելով. բանտուեցան՝ «Առանց պատճառի, ստատիքերէն»:











Մայիս 24ին, երեկոյեան ժամը հինգին ատենները 17րդ դունդին հետի որսորդները, որոնք Արագո բուլվարին պատնէշին տիրեր էին, տեսան որ դաշնաւորաց հրամանատար մը հապճեպով պանդոկը կը մտնէր, վրան հրացան քաշեցին, բայց պարապի ելան: Չորս հինգ հոգի տասնապետով մը ետեւէն վազեցին, մասն տունը և տանտէրը կալանաւորեցին. որ բնականապէս լուրջ դժուարութիւնք մէջ տեղ բերաւ: Տունը մէկ միայն մուտք ունէր, բռնեցին գայն և տանտիրոջ բռնադատեցին երթալ բերել դաշնաւոր սպայն, որ սանդուխներէն վեր ելեր էր: Սանդուխին զուլը պատուհանի մը ներքև որ կը բացուէր դէպ ի տանիքը Տ. Կրէտիէն, տան տէրը, գտաւ զՌիկօ և իրեն ըսաւ « Չինուորները վարն են, պէտք է իջնել »: առաջարկեց տանիքներէն փախչել: Տանտէրը չթողուց « Այ, վար իջիր և անձնատուր եղիւր, ապա թէ ոչ քու տեղդ ես հրացանի պիտի բըռնուիմ »: Ռատու Ռիկօ կարծես տատախեցաւ. յետոյ « լաւ, ըսաւ, փառ մէկը չեմ, իջնանք »: Սուր մը ունէր և աորձանակ մը ձեռքը բռնէր էր: Երկրորդ յարկը հանդիպեցաւ տասնապետին որ երկու մարդիկներով վեր կ'ելլէր: Ռիկօ ըսաւ « Ես եմ » և զէնքերը յանձնեց առանց ընդդիմութեան մը:

Չինուորները զինքը պաշարեցին և տունէն հանեցին որպէս զի Լիւսամբուրի պալատը հաստատուած Հարցաքննարանը տանին: Տասնապետը սարձանակը ձեռքը բռնած էր. Կէլիւսաքի փողոցը, մօտ Ռուայիէ - կուլար փողոցին, սպայակուտի հազարապետի մը հանդիպեցան. որ կեցաւ և հարցուց « Ա՞՞վ է այդ մարդը »: Ռիկօ պատասխանեց « Ես եմ Ռատու Ռիկօ, կորսուին աւազակները »: Տասնապետը, առանց հրամանի սպասելու, սարձանակը անոր զլխուն զրուս ըսելով « Կանչեցցէ բանակը »: Ռիկօ կանչեց « կեցցէ Հասարակութիւնը »: Տասնապետը պարպեց սարձանակը: Ռիկօյ ինկաւ երեսը գետնին և թևերը առջև. ցնցմունք մը զինքը դարձուց. այն ատեն որսորդներէն մէկը հարուած մը պարպեց անոր ձախ ծոցը: Գիտակը Կէլիւսաքի փողոցի պատնէշին քով քարերուն վրայ երկնցուցին, ուր արդէն կային ուրիշ երեք ալ. և ճանչցուելու համար գօտիին կապեցին յարգէ խորձ մը: Յետոյ տարին մօտ տուն մը, ուր մնացին երկու օր:

Ռիկօյի վրայ ցաւելու բան մը չկայ. « Ոստիկանութեան Պարտաը, գրած է Ռոսսէլ, շալլուղի դայթակղական կեանք մը ունեցաւ, չըջպատեալ չնչին բաներով. և իր ժամանակին մեծ մասը վատնելով անառաւ կուլթեամբ »: Երբէք եղեոնագործ մը աւելի արժանի չեղաւ մահուան: Միշտ ոյժը օգնութեան կանչեց և ինքն ալ անկէ զարնուեցաւ:

Մայիս 24ին առաւօտը վայրկեան մը երեցաւ 11րդ Երջանակը և հոն ստորագրեց պատանդները սպաննելու հրամանը: Յաւապի է որ Մայիս 23ին չպաննուեցաւ, այսպէս ազատած կ'ըլլար Կիւստավ Դոտէ:

Կլէման ատենագրելը և Ժանտիլ պաշապետը անբընութացան. չգիտցուիր թէ սպանուեցան պատնէշներուն վրայ թէ փախան: Բէն և Պրէօ զը Վէդէլ մատնուեցաւ պատերազմի 6րդ ատենին: Բէն երկու տարուան բանտի դատապարտուեցաւ հասարակաց պաշտօն մը յափշտակած ըլլալուն համար: Պրէօ զը Վէդէլ նեղուեցան, ժխտեց, բողոքեց, սուտ ըսաւ: Չինքը ամբաստանող վիպուցիւնք միաձայն էին և զինքը ջախջախեցին: Արդարութիւնը թէ ուզեր խկ, չէր կրնար ներողամիտ ըլլալ. դատապարտուեցաւ մահուան և շորհի դիմումը մերժուեցաւ: Պարութեամբ կատարած եղեոնեղեմումը օրէք էր որ օրէքը գործէր: Մեռնելէն առաջ բուն առջև հարկ էր որ օրէքը գործէր: Մեռնելէն առաջ գրեց Պ. Թիէրի, նախագահ Հասարակապետութեան « կը սպաննուիմ... բայց անմեղ կը մեռնիմ և սպագայ սերունդը վրէժս պիտի խնդրէ »: Բնդհանրապէս ականն ալ կը մեռնին այսպէս բողոքելով սպագայ սերնդեան:

Բայց ոչ այսպէս Օգիւստէն Ռանվիէ: Մայիս 28ին առաւօտը երբ դաղիացի զինուորք տիրեցին Սէն Մոր փողոցին և պրպտեցին թիւ 139 տունը. Գիւլար անուամբ տիկնոջ մը սենեկին մէջ մտրդ մը տեսան առաստաղէն կախուած: Գիտակը արգէն ցուրտ էր: Սէն Փոգէֆ եկեղեցին տարին ուրիշ շատ մը պատնէշներուն ետեք սպատամբներուն սպանուած դիակներուն հետ: Երբ այդ անծանօթ դիակին զգեստներուն մէջ թուղթ մը կը փնտռէին որ թերեւս ո՞վ ըլլալը խմանան, տեսան որ գնդաւետով տոմսակ մը զարնուած էր ժիլիին ներքին կողմը: Այս տոմսակին վրայ կը կարդացուէր « Ես եմ Ռանվիէ, տեսուչ Սէնտ-Պէլլաքի բանտին: Կը մեռնիմ, որովհետեւ իմ յանցանքս աններելի է »:







անոնց»։ Բայց մէկ անձ մը չէր կրնար ամբօխին մըղմանը դէմ կենալ, որ դուրը բռնադատեց բացառ և դիմեց բանտը և լեցուեցաւ զաւերթը, կեղրոնը, զրանեհակը։ Ամբօխին մէջ կային նաև կանայք որոնք յուզուած կը պրուային։

Վաղեց Տ. Լըֆէրիւր Սանտէի օրինաւոր տեսուչը։ Դա երիտասարդութիւնը անցուցած անձ մ'էր, միջահասակ, հեզաբարոյ, խելացի և բանտերու երկար ժամանակ կառավարութեամբ, փորձառու հաստատամիտ վճռական, թէպէտ անոյշ. կարծես կը փնտռէր երբեմն բառ մը զոր միշտ կը գտնէր։ Բնաւ չէր սիրէր յուզմունքներ, բայց երբժամ ժամանակն ալ չէր ետ քաշուեր։ Նախ հարցուց որ ինչ հրամանագրով հոն բերուեր էին այդ չորս կալանաւորները։ Իրեն ձեռքը թղթի կտոր մը տուին «Հրաման Սանտէի բանտի տեսչին, աւանդ ընդունելու Շանդի զօրավարը մինչև նոր հրաման մը. տեսուչը իր գլխովը պատասխանատու է այդ կալանաւորներուն»։ Վասն է. Գիւլիտի։ Կայոյ-Պարիզ, 19 Մարտ 1871. կնիք. Գաղղիական Հասարակապետութիւն։ Սպայտիոյտ Սգգային Պահապանաց, 137 Շըրլանակ»։ - Նմանօրինակ հրամաններ կային նաև զը Լանկուրեանի, Գիւկոզէ զը Նադէլի և Կօզէն զը Վիլլէնի համար։ Այս կալանաւորման հրամանք յայտնապէս սպորտուեալ էին, բայց անկարելի էր մերժել, մանաւանդ որ այնպէս անոնց կեանքը վտանգի կը դրուէր։ Տ. Լըֆէրիւր ըմբռնեց. զիտնալով որ ամբօխը փութով կը հանդարտի իր ատելութեան առարկայն ալ ևս չտեսնալով, հրամայեց որչափ կարելի է փութով բանտարկել չորս կալանաւորքը։

Բայց շատ դիւրին բան մը չէր, որովհետև դաշնաւորք պատեր էին զանոնք և չէին ուզեր աչքերնէն կորսնցնել։ Բայց Տ. Լըֆէրիւրի աչքի մէկ նշանին, Ազամ բանտապետը բռնութեամբ մը բռնեց Շանդի, Լանկուրեան զօրավարաց և անոնց համհարգներուն թևերէն, և սկսաւ քաշել դէպ ի դուռ մը զոր հսկող մը բացեր էր. Սէրիգիէ բռնցի հարուածներով ձեղքեց ամբօխը որ դեռ «Մեռնին, մեռնին» կը պոսար։ Բանտարգելները անցան տախտակամածը որուն դուռը վրանին զոցուեցաւ և այսպէս փրկուած էին։ Տ. Լը-

ֆէրիւր դիտեց Սէրիգիէի ազդեցութիւնը ամբօխին վրայ և ըսաւ անոր՝ որ իրեն պերճախօսութիւնը միայն կարող էր պարպել բանտը և այսպէս ապահովել այն զօրավարաց կեանքը, որոց համար այնքան հօգ կը ցուցնէր։ Պէտք չեղաւ Սէրիգիէի երկրորդ անգամ ազանցել, բարձրաձայն ձառախօսութիւն մը սկսաւ և երգուեցաւ որ բոլոր «դասալիք վատերը» պիտի չ'ազատին «ժողովրդեան արդարութենէն»։ Կամաց կամաց ամենը հեռացան. սակայն դուռը կեցող դաշնաւորաց վաշտէն պահապանները զրկուեցան կալանաւորներուն դրան դիմաց կենալու. զորս ամբօխը արդէն սկսաւ պատանդ անուանել։

Եթէ այդ մարդկանց սրտին մէջ կտոր մը հայրենասիրութիւն ըլլար, պէտք էր Շանդի զօրավարը յաղթանակաւ տանէին, որ զիւցաղն հանդիսացեր էր Լուսթիկեր էր Գաղղիոյ զինու զՊաղղիա բայց ուի վրայ, և եթէ չէր կրցած փրկել զՊաղղիա բայց կան Յանձնաժողովը և Հասարակութեան մարդիկ այդպէս րաներ չէին մտածեր։ Կ'ուզէին կործանել բանասիրութիւնը և կղերը, այսինքն բարեկարգուեցաւ զատուութիւնը և կրօնքը։ Այս պատճառաւ կը բանտէին զինուորները, դատաւորները և քահանայքը՝ միայն իրենց զգեստին տեսքէն։ Այս պատճառաւ բռներ էին Լանկուրեան զօրավարը զիպուածով Օուլէանի երկաթուղին, երբ կ'աճապարէր Վէրսայլ երթալու և հոն ընդունելու իր ջոկատը որ Բարտոյէն կուգար։

Իսկ Շանդի զօրավարին համար կամայեր էին. փընտեցին զինքը և գտան երկաթուղուց կամաքի մը մէջ ուր շնանցին զինքը, որովհետև միշտ պարտքը ըրած ըլլալով, մտքէն չէր անցնիր որ զինքը ամբաստանեն։ Նախ 137 Շըլմանակի քաղաքավարչութեան պալատը տարուեցաւ սպանաւից ամբօխին մէջէն, միշտ պաշտպանուելով 150 Մէյիէէ, յետոյ զինքը «կալանաւոր» հոշակեց զօրավարն, ձուլող գործաւոր, Էմիլ Գիւլիտ. անկէ 94 բաժնին բանտը տարուեցաւ, 150 Մէյիէ զինքը իր քովը առաւ, բայց ամբօխը կրկին քաշեց առաւ և տարաւ բանտը։ 150 Մէյիէ անկեղծօրէն ամեն ջանք ըրաւ ազատելու զօրավարները և սպանները և մտածելով որ այն խեղճ բանտին մէջ սպահով չէին ամբօխէն, հրամայեց



որ փոխադրուին Սանտէ, ուր կային բանափ մը ամեն ազահոգութիւնք<sup>1</sup>։ Գանձեք խուժանին նախաստիճաններէ ազատելու համար կառքով զրկեց, բայց ամբողջ կառքը կտոր կտոր բրտու և ամեն հետաքրքիր որ վազեց, կարծես կատարութիւն մը հագաւ։ Եւ ինչ նախաստիճանքով և հարուածներով չորս անդադու սպայք հասան բանափ, արդէն վերը ընկեք։

Կեդրոնական Յանձնաժողովը եղածը լսելով, իմացուց որ սխալմունք մը եղեր էր և չորս զօրավարները պէտք էին ազատ ձգուիլ։ Եստ լաւ. բայց Ծր բաժնին դաշնաւորք սյգալէս չէին մտածեր. գիտնալով որ ալ տէր են և ուղածներին կրնան ընել, որոշեր էին բնաւ չթողու իրենց սրտը։ Ժամը իննին, երկու անձինք, որոնք իրենց անունը չուուն և որոնք էին զօրավարն կրքմէ և Տ. Արքանըն, ներկայացան Տ. Լըֆէրբերի, ձեռքերնին հրամանագիր մը ստորագրեալ՝ Լիւիէ, ընդհանուր սպարապետ, որ Սանտէի տեսչին կը հրամայէր անխնայեալ ազատ թողու զՏ. Դանդի։ Կտր հրաման մը Գիւլիպէ բանասարգելու, ուրիշ հրաման մը Լիւիէէն ազատ ձգել, որով երկու հրամանք մէկգրմէ կը ջրէին։ Տ. Լըֆէրբերի ուղածն ալ էր իր բանտին մէջ. «Կրնամ ազատել Դանդի զօրավարը, կըսէր, բայց դաշնաւորք պիտի չթողուն որ երթայ, և թէ պնդենք, գանձկայ խողտողելու վիճակի մէջ պիտի գնենք։ Կրքմէ զօրավարը պնդեց. - Կանչեցին պաշտպանաց գունդին զըլխաւորը և ցըցուցին հրամանը։ Պատասխանեց «Բան մը չեմ կրնար ընել առանց իմ մարդոց հարցնելու»։ Քանի մը վարկենէն եկաւ և ըսաւ. «Ես կուզեմ թողու զօրավարը, բայց զինուորները չեն ուզեր. մաքերներն զրոյս են որ գտալէք մ'է և պատրաստուեր են հրացանի բռնելու թէ որ բանտէն ելլէ»։ Պարզ էր։ Տ։

1. Լէօ Մէյիտ ազատեց նաև Տ. Խոմնոն Տիւրիէ երեսօխանը, որ Դանդի զօրավարին բռնուած ժամանակը կալանաւորուեր էր։ Հաւասարակութեան յաղթուելէն վերջ, Տիւրիէ շնորհաւ իրեն եղած ծառայութիւնը, պահեց զԼէօ Մէյիտ և իրեն միջոց գտաւ Գաղղիա թողու և ազատելու։

Լըֆէրբեր խնդրեց Դանդի զօրավարին բարեկամներէն երթալ գտնել զԼիւի Գիւլիպ. զա զինուորական նուրբակ եղած էր Ոստիկանութեան, զուես 13ր Երկանակի լեգէոնին և հրամանատար Ծր բաժնին. իր երեսնասար լեգէոնը, ետանդուն խօսակցութիւնը և Բլանքիի հակա-կարծիք ըլլալը, իրեն մեծ ժողովրդակամութեան հրատուած էին թաղին մէջ. եթէ ինքը ազատութեան հրաման ստորագրէր, թերևս Սանտէի գաշնաւորք հրաման զանգէին։ Զօրավարն կրքմէ և Տ. Արքանըն երեկոյեան ժամը տանուածէկին գունդին զըլխաւորին հետ Ոստիկանութեան պարտաք գացին առ Գիւլիպ, որ կարդաց Դարբ Լիւիէի ստորագրած հրամանը, գոյն պատուեց և ըսու որ Դանդի զօրավարին ազատումը, նշան մը պիտի ըլլար սպասամբութեան։ Գիւլիպ աւելին ըրաւ. անձամբ գնաց և կամ մէկը զրկեց Կեդրոնական Յանձնաժողովին և անուցաւ հետեւեալ հրամանը «Կեդրոնական Յանձնաժողով ազգային պահապանաց. Ժամակէտ առուտեան. Մարտ 20։ Հրաման Գիւլիպ քաղաքուցոյն, հրամանատար Ոստիկանութեան պալատին, կալանաւոր պահելու Դանդի զօրավարը, մինչև նոր հրաւանաւոր պահելու Դանդի զօրավարը, կորմանէ, Սասի ման։ Կեդրոնական յանձնաժողովին կորմանէ, Քասի Բաշ, Ճարդիէ Ծոչոօ, Մարդիէ, Կիրալ, Կրնիէ, Կրոչար, Օտուսևո, Ռոչուսո, Բարիկ, Բարրուտ, Գիւլպոն»։

Մարտ 20ին՝ Բէլէ, չնայելով իր 76 տարիքը, անձամբ եկաւ Սանտէ այն յուսով որ հետը կարենայ տանել զԴանդի զօրավարը. «Պատու չունիմ, կըսէր, Կեդրոնական յանձնաժողովին անգամակցութեան, բայց այդ տղաքը զիս կը յարգեն, մտիկ կ'ընեն և անշուշտ պիտի համոզուին»։ Սակայն ի գուր. Բէլէ կրցաւ միայն տեսնուել զօրավարին հետ և Գիւլիպին հրամանով, «Կրցաւ ազատել Գոգէն զը վիլէն տեղապահը»։ Սմեն հրաման որ այն բաժնին զըլխաւորէն ստորագրուած չէր, զօրութիւն մը չունէր։ Տ. Սարապէն, փոտտարան, Դարբ Լիւիէի հրամանագրով մը եկաւ անունելու Դանդի զօ-

1. Տ. Դարբ Բէլէ, որ հազուագիտ բարեսիրտ անձ մ'էր, ամեն կողմ գիտեց ամեն ջանք ըրաւ Սանտէի կալանաւոր սպայքը ազատելու համար։ Եւ եթէ չկրցաւ փրկել «պատանդները» բայց կրցաւ գանձեք բաշխել։







և եթէ երբ նեղ գաւթին մէջ կը պտտէր, երկու կողմանէ աւնենալով երկու հրացանակիր զաշնաւորք, միշտ այնպէս էր ինչպէս Գաղղիոյ պատերազմներուն մէջ, բարակ և գոց անձ մը, հեռու ամեն տեղի զգացումներէ և ամեն պատահարներէ վեր: Գիտէր ևս որ օրինաւոր վարչութիւնը զինքը չէր մոռնար և իր ազատութեան համար կ'աշխատէր և գայտ զարմանալի միջոցով մը իմացեր էր: Ազգերով ամիլուիլ, վարսավիրայ մը կանչէր էր. և իրեն բերուէր էր Լըքէօր անուամբ բարի ծեր մը, որ ժամանակաւ նաւաստի եղած էր և զը Մաքքօ ծովակալին ծառայած: Երբ մտաւ Շանգի զօրավարին սեւեակը զաշնաւորաց հսկողութեամբ, արանջաց որ լոյս չկայ, զօրավարը քանի մը անգամ սաղիս անդին դարձուց մինչև որ երեսը շտեման զաշնաւորք և յանկարծ մատը զօրավարին բերանը մխեց, իբրև երեսը ուսեցնելու և ամիլելու: Զօրավարը զգաց որ թղթի գնդակ մը դրաւ վարի աղաներուն ետևը. Երբ առանձին և դաւ, բացաւ գայն և կարգաց. « Սըխայիր. Բարի խրատոյս, երկար շտեղծ, կը մտածուի քեզ համար. — Սէսսէս: » Զօրավարը զարմացաւ այս ճարտար հնարքին վրայ, բայց այդ տուած յուսոյն վրայ մասնաւոր բան մը չզգաց, և անտարբեր կը սպասէր ազատուելու ժամուն որ եղաւ Մարտ 25ին:

Զօրավարն Կրքմէ Կեղրոնական Յանձնաժողովէն այսօրինակ հրամանագիր մը ստացաւ « Բաղաքացի Գիւլայ, անմիջապէս աղատել Շանգի զօրավարը. — Ստորագրեալ՝ Ա. Բելլորի, Բարիկ, Ա. Բուշի, Ա. Գիւլիան, Լաւաիեր. — Բարիկ ինքը տարաւ զԿրքմէ զօրավարը առ Գիւլայ, որովհետև կը վախնային որ Ռատիկանութեան Պալատան մէջ յանկարծ նոր դժուարութիւն մը հանեն և կամ Ռատու Ռիկօ միջամտէ գործոյն: Գիւլայ սիրով ընդունեցաւ և գրեց՝ « Հրաման անմիջապէս ազատելու զքաղաքացին Շանգի: » Եւ Կրքմէի պարզ գիտողութեամբ մը աւելցուց « և Լանկուրեան »: Բարիկ որ վերաշուական միտք մը ունէր լցեալ ժայռայեղ խորհրդագրագրութեամբ, ուրախութեան կուլար մասածելով միայն որ Շանգի զօրավարը պիտի ազատէր. « Ուրեմն զինքը շատ կը սիրէիր » հարցուց Կրքմէ զօրավարը. — « Բնաւ տեսած չեմ ». հեծկատալով պատասխանեց Բա-

րիկ: Այդ խեղճն ալ գէշ մարդ չէր, պարզամիտ մէկն էր: Եթէ Ալիս, որ համակրական խիտուններուն գիւտը ըրած է և Բարիկ, Հասարակութեան գլուխ եղած ըլնային, խեղճերը պատանդի տեղ զօրավարները և արքեպիսկոպոսները պիտի չբռնէին, այլ իրենց ազատութիւնը ապահովելու համար կալանաւորել պիտի տային խենթերու բժիշկները:

Երեկոյեան ուշ ատեն, գրեթէ կէս գիշերուն, Բարիկ և զօրավարն Կրքմէ ներկայացան Սանտէ բանառք. տեսուչը և Լալոէ գրագիրը շուտով մը կատարեցին ազատութեան ձեռնարկութիւնքը, առանց լուր տալու զաշնաւորաց, որ իրենց կայարանին մէջ կը քննային: Քաղաքացի զգետները զրկուած էին երկու զօրավարաց, որոնք նոր գլխու ցաւեր չունենալու համար ազգային պահապաններէն, ծպտեալ դուրս ելան, հետեւին տանելով նաև Գրքօզէ զը Նազէլ գնդապետը: Ազատութեան հրամանագրին միւս կողմը ստորագրեց բաժնին նաւերակը Կիւնար, որ չկրցաւ համարձակիլ, իր զօրավարին՝ Լալի Գիւլայի, հրամանագրին հակառակիլ: Բայց Շանգիի համար գեռ լինցած չէր. վերջնականապէս ազատուելու համար պէտք էր որ Կրքմէ և Լանկուրեան զօրավարաց հետ Կեղրոնական Յանձնաժողովոյն ներկայանար:

Կէս գիշերը անցեր էր, ծխախոտի ծխոյն մէջ, կանթեղներու լուսով լուսաւորուած հաւաքուէր էր Կեղրոնական Յանձնաժողովը, որ պիտի դատէր մեր ամենէն նշանաւոր զօրավարները: Ամեն յոգնած, մանաւանդ իրենց խեղք չհասած աշխատութեանց պատճառաւ, կը ջանային ուժերին բռնել զինիով և օղիի գաւաթներով, ոմանք քնանալով ոմանք ոգելից ըմպելիքներէն զրգուած, ամենն ալ ուրուականներու պէս. յոգնութիւններէն ոմանք փողպատնին, ուրիշները կօշիկնին հանած:

Զօրավարն Կրքմէ Կեղրոնական Յանձնաժողովը այսպէս նկարագրած է Մարտ 18ի համար եղած Հարցաքննութեան ատենին առջև. « Պժգալի տեսարան մ'էր, տեսնել բոլոր Օթէլ ալ Վիլի սրահները ազգային պաշտաններով լեցուած: Մեծ ամպուրը ելլելէն վերջը մեծ սրահին մէջ բազմութիւն արանց և կանանց գինով



վիճանի մէջ. յետոյ կ'անցնուէր երկու երեք հանդարտագոյն սրահներ և կը հասնուէր ուրիշ սրահ մը որ գետափին և Օթէլ տը վիւի անկիւնը կ'իյնար: Հոն կը հաւաքուէր Կեղորոնական Յանձնաժողովը: Ժողուելէն հինգ վայրկեան վերջը մէկմէկու մագերէ կը քաշէին. չկայ զինետուն մը որ Կեղորոնական Յանձնաժողովոյն հաւասարի... երբէք վեց եօթը հոգիէն աւելի չկային գումարման: Ոմանք կը մտնէին, ոմանք կ'ելլէին: Կային որ զինով էին և ատոնք միշտ հաւասարիմ էին ժողովքի գտնուելու, որովհետև չէին կրնար տեղերնէն ելլել երթալ: Կար միջահասակ գէր մէկը, երկայն գորշագոյն մագերով, աղտոտ մորուքով, որ միշտ շատցօ հրացանը ձախ ուսին վրայ բռնած էր. երբ կը խօսէր ամեն պարբերութեան հրացանով քեզ նշան կ'անուոր, երբ խօսքը կը լմննար իր շատցօն նորէն ուսը կը գնէր»:

Կրմէ վարպետ գտնուեցաւ Յանձնաժողովոյն առջև, որովհետև արգէն սկսեր էին զինքը ամբաստանել որ վէրսայլի հետ հաղորդակցութիւն ունի, և մինչև խօսք կար զինքը հրացանի բռնել: Եւ սակայն կրցաւ յաջողել և հետը տանիլ երկու զօրավարքը որոնք ինչ գազափար առած պիտի ըլլան այն վարչութեան վրայ զոր Պարիզ գրաւ ինքն իր վրայ. հետեանք շատ մը տկարութեանց և բռնութեանց:

Զօրավարն Շանգի բանաէն ելլելով գնաց եղբօրը քով բուլովար Մաճէնտա. հազիւ հոն հանդարտեր էր, առաւօտեան ժամը երկուքին ժամանակները բարեսիրտ Բարիկէն նամը մը բերին իրեն, որով կ'իմացնէր աւճապարանօք, որ 13դ շրջանակին Յանձնաժողովը իր ներկայացուցչին ձեռքով յայտներ էր իր մեծ բարկութիւնը այս ազատման համար, զոր փախուստ կ'անուանէին. և ամեն կողմ լրտեսներ տարածեր էին նորէն զինքը բռնելու հրամանով: Շանգի զօրավարը հասկցաւ որ Պարիզու մէջ իրեն սպառնալու թիւն չկար, մինչ ուրիշ տեղ օգտակար կրնար ըլլալ: Գնաց արթնցուց Լանկուրեան զօրավարը որ քաշուեր էր Մալգէրր բուլվարը: Երկու զօրավարները առանց դանդաղելու հետի մեկնեցան և հասան նոյն օրուան առաւօտը ի վէրսայլ:

ժ.

Բ Ա Ն Տ Ա Ր Գ Ե Ա Լ Ն Ե Ր Ը

Տ. Կրոյ, Ապամոլոքեան պաշտօնարանի գրիւտարը. — Իր կալանաւորուէր. — Գիշտայի առաջարկուէրիւքը կը մերժէ. — Սակտե կը բանտարկուի. — Ինչ որ էր Տ. Կրոյ. — Բակտիկի նստողները. ՏՏ. Լաթե, Պերեստի և Տիբսիէ գրագիրը. — Ինկերոյր բաժնիկն նոշիրակները. — Կրպի գրագիրը. — Ինկերոյր բաժնիկն նոշիրակները. — Կրպի բարոքիւնէր. — Գաւ զՏ. Կրոյ փախցնելու. — Գեղերայիկն աչցերուէր. — Գաւ զՏ. Կրոյ փախցնելու. — Միկիմ գիւնուրակներ. — Շարոն նագարայետը. — Միկիմ գիւնուրակներ. — Գալուաւորը կը տիրեն բակտիկ. — Կը յաջողիկն զակոնը վնակուէր. — Գրեկիէ լուսարարիկն նրանուէր մը:

Մարտ 20ին Սանտէ բանտը կը բերուէր Տ. Կրոյ՝ Շանգի զօրավարէն նուազ մեծանուն, բայց ամենածանօթ Պարիզու մէջ, իբրև գլուխ Ոստիկանութեան պաշտօնին Ապահովութեան պաշտօնեաներուն: Նոյն օրը առաւօտեան ժամը տասնին ժամանակները Արդարութեան պալատան գաւթէն կ'անցնէր: Ծառայ մը զանկայ ճանչցաւ և ցըցուց գաշնաւորներուն, որոնք կալանաւորեցին և տարին Գիւլլալ զօրավարին: Հոն գօրավարը ոսկիգիծ զգեստով զարդարուած նստած էր շատ մը զինեալ անձանց մէջ: Սերով ընդունեցաւ Տ. Կրոյ և ըսաւ իրեն. « Ինչո՞ւ մեղի հետ չես միաւորուէր և չես ծառայեր Պարիզու հրատարակած վարչութեան »: Տ. Կրոյ մերժելու ձև մը ըրաւ: Գիւլլալ ընտանեարթ թեք բռնեց և զինքը տարաւ մերձաւոր սենեակ մը ուր միայն էին: Գիւլլալ կրկնեց իր առաջար-







Կողմի սիրելի եղած էր, անոր խորհուրդներ կուտար, որոնց մտիկ կ'ընէր տեսուչը և որոնք պահպանեցին զբանտը: Տեսչին վրայունեցած ազդեցութիւնը յայտնի երեցաւ զիպուածով մը. Շանդի և Վանկուրեան զօրա-վարներուն բանտարկուելէն անմիջապէս վերջը, Շրջա-նակին բաժինը չորս նուիրակ զրկեր էր որոնք մշտա-մնաց պիտի կենային Սանտէ, հսկելու Տերութեան կա-լանաւորները. պիտի ստուգէին ստէպ անոնց ներկայու-թիւնը և ամեն զգուշութիւն ձեռք պիտի առնուին որ-պէս զի չհիտչին: Զօրավարները ձգուեր էին, բայց նուիրակները գէշ չէին գտած բանտը, ուր տիրաբար կը հրամայէին և դարձ մը չունէին. անոր համար չէին անապարեւ երթալ իրենց զինուորական պաշտօններուն: Ատենազպիրները հասկցուցին Կողմի, որ այդ նուիրակ-ներուն ներկայութիւնը նախատինք մ'էր իրեն հեղի-նակութեանը, զորս պէտք էր ձամբել հոն՝ ուսկից ե-կեր էին: Կողմ գործը աւելի ազէկ լննցնելու համար, նուիրակները մօտ զինետուն մը տարաւ, լաւ մը խմցուց և տեղերնին ձամբեց: Այն վայրկենէն ատենազպիրները և հսկողները մէջերնին գաղտ սահմանեցին պատանդ-ները աւելի ազատ բռնել: Ալ դուրսնին խտուր չգո-ցուեցան, և կրցան մէկմէկու հետ տեսնուիլ և մէկտեղ քայլել սրահներուն մէջ:

Գիտած էին որ Կողմի մէջ երկու անձինք կային. մարդն առաւօտեան, մարդն երեկոյեան: Առաւօտեանը բարեմոյն էր, մտիկ ընող խորհուրդներու. վասն զի ծով էր և ինքն իրեն: Երեկոյեանը բոլորովին տարբեր էր, աջ ու ձախ կը հրամայէր. կ'երթար անձամբ նայելու որ կալանաւորքը լաւ «խցուած» էին իրենց ծակերուն մէջ. կը խօսէր այն «գերագոյն նպատակին» վրայ, զոր Հասարակութիւնը կը պատրաստէր Վաղդիոյ. կ'ը-սէր «Հաստատուն ըլլանք, խորտակենք յետամնացնե-րը»: Պատճառը այս է որ շատ խմեր էր, կամ Ոստի-կանութեան պալատէն դարձեր էր, ուր լսեր էր Ոստու-Ռիկոյի ճոռումարանութիւնները:

Խեղճ Կողմն ձախորդութիւն մը ունեցաւ որ իրեն մեծ վիշտ պատճառեց: Պէտք մը կը զգար ամենուն աչքին ցուցնելու իր տեսչի տիտղոսը և արտաքսապէս ալ նշաններ կրելու: Գնաց Պարիզու ամենէն լաւ զը-

խարկալաճառին և հազարապետի քիփի մը պատուերեց չորս կարգ ոսկի գծով: Քսանուչորս Քրանքի խօսեցաւ և վճարեց: Յետոյ մտածելով որ Հասարակութիւնը պար-և թէ տական էր ժողովրդեան բարօրութիւնը հոգալու, և թէ իր բարօրութիւնը կը կայանար ոսկեերկզ քիփի մը գնե-լու գլխուն, հաշուէն թուղթը Ոստիկանութեան Պալատը զրկեց, խնդրելով որ ստակը տան: Զգիտցուի ինչ ճանճ մ'էր որ խայթեց Նիւթերու տեսուչը որ պատասխա-նեց՝ «Քաղաքացի տեսչէն կը խնդրուի որ իրեն պարտքը ինքը վճարէ, որովհետև Ոստիկանութեան պարտքը չէ զինքը հագուեցնելու»: Մեծ վիշտ եղաւ այդ Կողմի, որ չկրցաւ հասկնալ և ստէպ կը կրկնէր «Արդեօք իմ ան-ձնանուիրութեան վրայ կը տարակուսին»: Խեղճը իր ձնանուիրութեան վրայ կը տարակուսէր: Աւելի կանոնաւոր եղած միամտութեամբը սխալեր էր: Աւելի կանոնաւոր եղած կ'ըլլար թէ որ քիփին առնուր և չվճարէր. այն ատեն ամեն բան կ'անցնէր:

Ապրիլ 7ին ուրիշ նոր պատանդներ եկան խցիկներու մէջ դրոյուելու. և էին ատոնք զինակիրներ, որոց մէջ խառներ էին Սէն-Սիւլպիսի կղերանացին տեսուչը Տ. Իկար և անտեղ Տ. Ռուսէլ: Այս երկու կալանաւո-րաց նկատմամբ ևս տեսնուեցաւ Կողմի բնական քաղց-րութիւնը: Ի պաշտօնէ ինքը պէտք էր հնազանդի Ռուու Ռիկոյի. իբրև պաշտօնեայ Հաստատութեան վարչութեան, ստիպուած էր անստուգանութիւն քարո-վարչութեան, ստիպուած էր անստուգանութիւնը կրնար ենթար-կուիլ և թողուց Տ. Իկարի ամեն օր մատրան աւան-դատան մէջ պատարագ ըսելու: Հաւանականաբար նախ մէկ օրուան համար հրաման տուաւ, յետոյ ալ ետ չա-ռաւ: Թէպէտ այս բարի գործոյն մէջ բոլոր իր մարդիկն ալ համախոհ էին և մարդ շյայտնեց զազտնիքը:

Բայց միշտ այսպէս բարեկէր չէր և իր կալանաւոր-ներէն մին, Տ. Կլոդ, երբեմն երբեմն նեղուցաւ անոր համարձակութիւններէն: Երեկոյնները, երբ Կողմ կ'ըն-հատուէր իր բարեկամները և բարեկամուհիները, երբ շատ մը զինուոյ շէրեր լեցուն կուգային պարապ կը գտնային, յետոյ իր հրաւիրեալքը բանտը կը պատցնէր, զանոնք կը տանէր Տ. Կլոդի խցիկը և կը ցուցնէր Ապահովութեան գլուխը և կ'ըսէր «Տեսէք, ինքն է, և



Հիմա ժողովրդեան արդարութենէն կախումն ունի» : Այս ցուցընելները, թէպէտ անպատշաճ հետաքրքրութեան մը հետեանք էին, բնական է Տ. Կլոզի համար լաւ չէին հնչեր, և կը դարմանցնէին զինքը, որովհետեւ Կոլլէ առաւօտեան ժամերուն շատ ազնուութիւններ ունէր և մինչև հրաման սուած էր Տ. Կլոզի ընդունելու իր կնոջը այցելութիւնը :

Թէ ստենագրիներուն և թէ հսկողաց ամենէն մեծ մտածութիւնը Տ. Կլոզն էր, զոր կուզէին փրկել, մինչև այս խորհրդով զաւ մը մտածեցին : Տ. Լալոէ, դաշնաւոր սպայի շքազգեստ մը ճարեր էր, կուզէին անոր հազուեցնել : Կրնային երեկոյ մը փախցնել, երբ Կոլլէ Ոստիկանութեան պալատը գտնուէր, կամ երբ քնանար իր գաւաթին առջևը : Բայց քիչ մը լաւ մտածելով, ետ կեցան խորհուրդէն : Տ. Կլոզի նման պանտալոնի մը փախուտը անմիջապէս պիտի իմանար բանտին տեսուչը և յետոյ Ոստիկանութեան Ռիբի, և յայտնի էր հետեանքը : Ատենագրիները, հսկողք պիտի բանտուէին և թերեւ Հասարակութեան ղէմ մասնութեանց զինուորական առտենին պիտի հանուէին : Յետոյ պիտի ստատիկանային խտուրթիւնք պատանդներուն ղէմ, անոնց կենացը վտանգով, որովհետեւ անշուշտ դաշնաւորաց պիտի յանձնէին : Որով ետ կեցան դադար Տ. Կլոզը փախցնել, և այս որոշութիւնը թերեւ ազատեց Սանտէի պատանդները :

Տ. Կլոզ միայն Կոլլէի և իր « ընկերութեան » այցելութիւնները չէր ընդուներ, աւելի անախորհներն ալ ունեցաւ : Մայիսի 4էն 5ին զիչերը յանկարծ ուժով մը իր դուռը բացուեցաւ, անկողնէն վար ցատքեց և զի մացը տեսաւ խոշոր մանչ մը, բարձրորունք կօշիկներով, զգեստին ամեն կարերուն վրայ սակիներդ : Շարդոնն է, հազարապետ Շարդոնը, զինուորական հրամաւ նասար Ոստիկանութեան պալատան Գիւլպի մահուրնէ վերջը, որուն համհարդը եղեր էր : Հետը կային ձեռքերնին ճրագով երկու սպայք և երկու զինուորք : Կոշտութեամբ սկսաւ Տ. Կլոզի հարցնել. « Էհ, ծեր շուն, բաւական մարդիկ ներս գրիր, հիմա կարգը քեզի եկաւ, և ուրախ եմ » : Տ. Կլոզ պատասխանեց, « Ես Արդարութեան հրամանները գործադրեր եմ միայն, և եթէ չեմ սխալիր, վասն զի ամենէն բարի մարդն ալ

կրնայ սխալիլ, միայն շարագործները բանտարկեր եմ » : Այս խօսքին վրայ Շարդոն գոյնը նետեց. ձեռքը կուրծքին դարկաւ, ըսել ուզելով որ այդ խօսքը իրեն էր, բերանը խօք մը եկաւ, բայց լուց չ'ըսաւ : Վայրկեան մը զիտեց Տ. Կլոզը յետոյ սկսաւ խնդալ « սակայն այդ մանն ալ ծերուկս, քու երեսդ կապարի զնդակներով լալէ պիտի չ'ազատեն » : Տ. Կլոզ երբ միտակը մնաց, յիշեց որ պատժական ստեղծին հրաման մը գործադրեր էր կաթսայագործի մը նկատմամբ՝ որ պղտիկ գողուցնէր մը ըրած էր Օուլէանի երկաթուղւոյն կայարանին մէջ : Այդ կաթսայագործը Շարդոն հազարապետ եղեր էր : Թէպէտ և այնպիսի մարդ մ'էր որ վրան կրնար էր : Թէպէտ և այնպիսի մարդ մ'էր որ Ժընէվ անվասահացուիլ : Ապրիլ ամսուն քանի մը որ Ժընէվ անցուցեր էր և հանկէ քսան զուխցերիի անցազիր բերեր էր, որոնք սպազային անօդուտ չեղան իրեն բարեկամներուն :

Մայիս 13ին խումբ մը պատանդներ բերուեցան Սանտէ : Քառասուն և եօթն զինակիրք էին Մինիմ զինուորանոցէն, որոնք մերժեր էին միանալ Ապստամբութեան հետ : Իսկզբան զանոնք հսկողութեան ներքև պահեր էին, բայց զազդիական բանակին մօտենալովը, սահմանուեցաւ Սանտէ փոխադրել : Երկու որ վերջը ուրիշ ինը պատանդ ալ բանտուեցան, որոց մէջ էր Նոյր Գամըլը Լորետի պահապանը և Տ. Լինդրէկ՝ պետական Հանդերձատան վերակեցուն, որ մերժեր էր Վիկտորին Լուիզ ազջկան, որ էր պահձու Լուզ գորավարին, ուզած զգեստները տարու :

Զինակիրներուն Սանտէ բանտուելը վտանգ մ'էր բանտին, և ստենագրիները կրցան համոզելով զԿոլլէ վտանգին զիմացն առնուլ : Մայիս 19ին հարիւր վաթսուն դաշնաւորք 97 բաժնէն, ամենն ալ զինով, կրխցին բանտը Կարոյի հրամանագրով մը որ Սէրիզիէի աջ բազուկն էր : Պատրուակ առած էին որ պատանդները ժողովրդեան կը պատկանէին և թէ զինակիրները դաւ մը պատրաստած են և իրենք եկեր են հսկելու և պարապի հանելու : Սէրիզիէ իբրև խոհեմ մարդ մը, զիտէր Իսի բերդին առնուելը, զիտէր որ Վէրսայի վարչութիւնը ուժով մը պիտի գործէ, որովհետեւ երկու որ առաջ 17 Մայիս, իրեն մեծ գումար մը առաջարկուեր էր դուռ



մը յանձնելու և չէր ընդունած . Սէրիգիէ գիտէր որ Հասարակութիւնը յաղթուելուն պէս հրացանի պիտի բռնէր բոլոր պատանդները, անոր համար ապահով մարդիկ զրկեր էր Սանտէ՝ որպէս զի ժամը զալուն, կարենայ ուղածը գործադրել: Դաշնաւորք այնքան գինով էին, որ անկարելի էր հետերնին տրամաբանել: Կոլլէ տարակուսեալ մնացեր էր:

Երեք աստեղապիրները և պահապանապետը որ Ազամ անուամբ ծեր անվախ ալգասիացի մ'էր, ըմբռնեցին որ ուղղակի դէմ կենալ չէր ըլլար, և պէտք էր հնարագիտութիւն մը: Ազէկ երես ցըցուցին դաշնաւորաց, անոնց բացատրեցին որ եթէ միջավայրին և սրահներուն մէջ կենան, անկարելի էր ծառայութիւնքը կատարել . միանգամայն ամեն մարդ պիտի վախնար խցիկներուն զիմաց հրացանով մարդիկներ տեսնելով, և զիրենք համոզեցին մատուօր բնակիլ: Հոն չկրցան հանգիստ քնանալ, որովհետև անկողին չկար. կերակուր նին խորճ եղաւ, խմելքնին ոչինչ, որովհետև բանտին ստալիքը կալանաւորաց թուօյն համեմատ էր: Անոնց հետ խօսած ժամանակնին առանց կարեւորութիւն տալու, կ'ըսէին որ բանտը Ֆէրրէէն կախումն ունի որ էր գլուխ Հասարակաց Ապահովութեան, որ անշուշտ պիտի զայրանար որ այսպէս իր իշխանութիւնը ստնակոխ կ'ընէին և սուղի պիտի նստէր, չէթէ Սէրիգիէի, այլ ստորակարգերոց: Երկրորդ առաւօտ յոգնած, ձանձրացած և նեղացած էին: Անոնց զիմաց անհոգաբար մը պատմեցին որ նոյն օրը Ֆէրրէ բանտը պիտի գար: Ոմանք անօթի էին, ամանք կ'ուզէին տներնին երթալ, ամենն ալ ծարու ունէին և քիչ քիչ անցան գնացին և ալ չդարձան: Այսպէս բանտը նորէն կանտնաւոր սպասաւորաց ձեռքը մնաց: Երկրորդ օրը 21 Մայիս, հակողները Սանտէի փողոցը ելլելով, գնեցին Պաշտօնական լրագիրը նոյն առաւօտը ելած և կարդացին մէջը « Պարեգու ամեն բնակիչ քառասունուութ ժամուան մէջ պէտք է գտնայ իր բնակութիւնը . սպա թէ ոչ այդ յապաղմանէն վերջը իրենց անուան արժէթղթերը և մայր ստորակները պիտի այրուին »: Սոյս սպորինաւոր հրամաննին սուտոյն էր Կրէլիէ, անգամ կեղբոնական Յանձնաժողովոյն: Պահապանին մէկը ըսաւ. « Սոյդ կը նշանակէ որ վերջերնին մօտ է, ալ երկար չեն մնար վրանիս »:

Ի .

ՍՊԱՏՆԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԸ

Հրատարակորչիւն Դրրիկիչզի - Պաշտօններուն սայլը - Կրրիի վարանունըրը - Տիրսիիի ազդեցորչիւնը ակոր վրայ - Կը մերժե վառօյնըրը ընդունելու - Հրաման պատանդները սպաննելու - Ստենուպիրը կը միջամտեն - Կրրիի բարի տրամադրորչիւնը - Կոզակ սպանուի ըրրայու քե հրամանը պիտի կատարուի - Կարանաւորաց անհանգստորչիւնը - Գարդիակակ բանակիկ յաւաչ բարըր - Սիրիգիէ և Միրիի - Ժակ Բատիատ Միրիի - Վեձ - Սիրիգիէ պանապանաց գիտաւորիկ հրաման կոտոյ պատանդները սպաննելու - Սմեր կը գրկուի - Սիրիգիի բուրեղըր սպաննելու - Սմեր կը գրկուի - Սիրիգիի կը փակեն - Ազատորչիւն - Կրրիի դատապարտորչիւնը - Տ. Կրրիի մեկ խօսըր:

Մայիս 22ին Պաշտօնական լրագրիկ մէջ Կրէկիւզի ստորագրութեամբ կը կարգըցուէր հետեւեալ վերոուոյց հրատարակութիւնը « Տեղեք սուէք ժողովրդեան, մերկ բազուկներով կոռօղներուն . յեղափոխական պատերազմին ժամը հնչեց »: Սոյն վարկենին որ հեռուէն կը լուէր թնդանօթներուն որոտումը, տեսնուեցաւ որ Սէրիգիէ չէր մոռցած Սանտէ բանտը: Առաւօտեան ժամը չորսին ժամանակները քսանուերկու կառք բեռնաւորում վառօղի տակառներով և ուրիշ պատերազմական մթերքներով, կեցաւ բանտին դրան առջև: Չանոնք բերող դաշնաւոր սպայն տեսչին՝ ցըցուց սպայակուտին հրաման մը, որ կը պատուիրէր այդ սպայթող մթերքը տանը ստորերկրեայ տեղերը գետեղել: Կոլլէ կանչել











լէի դէմ որ ամուր կեցած էր: Վերջնոյս պատճառաբանութիւնը շատ պարզ էր. « Իմ պարտքս է Ոստիկանութեան վարչութեան հաշիւ տալ, որ ինձ յանձնած է այս գործը. պարտք չունիմ լեգէոնի գլուխներուն հնազանդիլ: Զինուոր եղած եմ և գիտեմ կանոնաւորութիւն. սպայմանական հրաման ընդունած եմ, երբ ժամանակը դայ, այն ատեն կը գործեմ »: Յանկարծ Սէրիլիէի միտքը լուսաւորուեցաւ « Ըսէ՛ ինձի, հարցուց, դու քու հին մարդիկդ պահեցիր »: — « Այո՛ » — Այն ատեն Սէրիլիէ նախատեց զԿոլլէ. ըսաւ որ իր պարտքէն պակասեր էր, որ իրեն պատուիրուած էր ճամբելու բոլոր հակողները: Կոլլէ ուրացաւ, և սաստիկ վիճաբանութիւն մը սկսաւ: Կոլլէ ցըցունելու համար որ սուտ չէր խօսեր, գորոցները խառնեց և վերջապէս յաղթական ձևով մը թուղթ մը ցըցուց. « 7 Սպրիլ 1871. քաղաքացիին Կոլլէ, տեսուչ Սանտէ բանտին, իշխանութիւն ունի իր մարդոցը նկատմամբ պէտք եղած տրամադրութիւնքը ընել — Ստորագրեալ. Լ. Շալիկ. — հաստատուած՝ Ռառչ Ռիկօ »: — « Ապուշ, ըսաւ իրեն Սէրիլիէ, դու չես հասկցած, պէտք էր զամենն ալ վճարել »: Յետոյ գտնուելով դէպ ի Միլիէր ցած ձայնով ըսաւ անոր. « Հոս ընելու բան մը չկայ. երթանք »: Հետը տարաւ նաև դրած ցանկը և իրեն կռուի մը ցուցնելով կանչեց. « Զքեզ կը գտնեմ »: Սէրիլիէ, Միլիէր և թընդանօթաձիգը գնացին:

Պահապանապետ Ադամը իրմէ առաջ անցաւ դուռը բանալու համար. և անոնց հետ մէկտեղ մտաւ դաշնաւորաց կայարանը: Սէրիլիէ գնդապետ հրամանատարին տուաւ պատանդներուն ցանկը և ըսաւ իրեն. « Այս մարդիկը դու հրացանի բռնել կուտաս ». Բանտապետը պատասխանեց. « Շատ լաւ »:

Պահապանապետ Ադամը գոցեց դուռը այս երեք անձանց վրայ, և քանի մը վայրկեան անցնելէն վերջը, հարցուց զլուսւորին, որ սրդեօք « Կրնա՞ր խրախոյս ունենալ, ալդպիսի ոճիւր մը գործելու »: Այն ատեն զարմանալի բան մը պատահեցաւ: Այդ պահապաններէն շատերը Պօրուր Սէն Ժաքի փոքր խանութպաններ էին, հանդարտարարոյ, աւելի ամառականի քան Հասարակութեան սիրոյն համար այդ պաշտօնը յանձն առած:

Գնդապետն ալ տարէց մարդ մ'էր և այն թաղին մէջ լաւ համարմունք ստացած: Երբ Ադամ իրեն հարցուց, զուելը ծոկեց բան մը յիշելու համար և յանկարծ թատերական ձև մը առնելով ընդհատեալ ձայնով մը ըսաւ « Այս քաղաքացիք զինուոր են և ոչ մարդասպանք »: Ժամանակաւ Օպերայի երգիչ եղած էր և յիշեց Հիւկընոյի Չորրորդ տեսարանէն կարո մը:

Ազամ վաղեց բանտին գրութեանց սենեակը: Կոլլէ և ատենադպիրք պահապանաց կայարանը եկան, ուրախակցութիւննին ըրին գնդապետին, հոն եղող դաշնաւորաց ձեռքերը սեղմեցին, և ամենն ալ ոգևորուեցան բարւոյ մը համար: Զինուորները հպարտացան իրենց գնդապետին խօսքին և կը գոչէին « Ոչ, մենք մարդասպանք չենք »: Ներս կանչեցին գրոսի պահապաններն ալ, հրացաններէն հանեցին փամփուշտները և գաւթին մէջ շարեցին, որոց ալ չդպան ազգային պահապանք: Հակողները կրնային պէտք եղած ժամանակ գանոնք առնուլ և գործածել ընդդիմութեան համար: Նախ գանոնք առնուլ 23 Մայիսի, Սանտէ փողոցին երկու

երկրորդ օրը 23 Մայիսի, Սանտէ փողոցին երկու ծայրերը պատնէշներ բարձրացել էին զորս կը պաշտպանէին 1867 գունդին դաշնաւորները: Կայարանին զինուորները շմանակեցան անոնց, և բանտին գաւթին և միջավայրին մէջ անցուցին ժամանակին: Դուռը գոց մնաց, ոչ ոք փորձեց ներս մտնել: Ամեն կողմ եղած պատերազմին և շառաչին մէջ լուսութեան տեղ մը եղեր էր տուր: Կէսօրուան մօտ պատանդները ազատարար կը քալէին սրահներուն մէջ և կը խօսէին, երբ յանկարծ ուռմը մը տանիքը անցնելով պայթեցաւ ահաւոր շառաչով մը: Բիւտ — օ — Կայլի արտամը թնդանօթները պաշտպանուեցան և աւելի նուազ վտանգաւոր տեղերը քաշուեցան: Կը մտածէին որ զինուորական սպանութիւնէ ազատելէն վերջը, սպասամբութեան ուռմբերուն տակ չմեռնին:

Ուռմբերէն տանիքներուն կտոր կտոր ըլլալը, շարունակ հրացաններուն սուլելը, յուզեր էին Կոլլէի ջիղերը. յանկարծ երեցաւ ձեռքը տորճանակ մը որ կը ձօճէր զվսէն վեր պտտելով « ինձի եկէք ամեննիդ, մեր եղբայրները կը սպաննեն. « Յատա՛յ, դէպ յառա՛ջ »: Իր







հաստատու էր սեպհական գնդան մը Ալլընիւ ա'խտալի  
թիւ 38: Վերջին օրը մէջի եղողները դամենն ալ ջար-  
դեց:

Սէրիզիէ կայսրութեան քաղաքական դատապարտեալ  
մ'էր: Սեպտեմբեր 4ին, Բէլճիա էր. Բարիզ եկաւ և  
պաշարման ժամանակ նշանաւորութիւն մը ունեցաւ,  
ինչպէս տեսանք, Հոկտեմբեր 31ին, և Յունուար 22ին:  
Մարտ 18էն վերջը, գրագիր անուանուելով 15<sup>օ</sup> Մէյիէի,  
յետոյ նուիրակ Հասարակութեան 13<sup>դ</sup> Շրջանակին,  
Մայիս 1ին հրամանատար 13<sup>դ</sup> լեգէոնին, հրամանատար էր  
տասուերկու գունդերու, որոնք լաւ կուսեցան մէջ կար մէկ  
տիյոն և Հոգ Բրիւէր: Բայց գունդերուն մէջ կար մէկ  
հատ մը զոր շատ կը շոյէր, մէկալնոնցմէ աւելի, գրեթէ  
անձնական գունդ մը, կազմուած ընկերներէ, բարեկա-  
անձնական գունդ մը, կազմուած ընկերներէ, մեծ խօսող,  
մեծ էր. և այդ էր 101<sup>դ</sup> գունդը: Եռանգուն, մեծ խօսող,  
շատ խմող, առանց խրախուսի զործաւոր, կ'ապրէր  
Հասարակաց օդնութեան արկղէն գողնալով: Սէրիզիէ  
ստոյգ աղղեցութիւն մը ունէր անկիրթ անձանց վրայ,  
որոնցմէ շրջապատեալ էր: Վայրենի և գոռոզ, գիտէր  
հնազանգել տալ և սարսափեցուցեր էր 13<sup>դ</sup> Շրջանա-  
նակը: Եկեղեցականաց զէմ' իր ատելութիւնը ծիծա-  
ղական պիտի ըլլար, եթէ անդարմանելի վնասներ ա-  
ղալ բերած չ'ըլլար: Մեծ ուրախութիւն զգացեր էր իր  
շուայտութիւններով պրծելով քանի մը եկեղեցիներ և  
աճրդով ծախելով Բրէտայի մատրան մէջի սաարկաները,  
աճրդով ընդհատեց Վաղղիացաց գունդերուն մուտքը ի Պա-  
ղըր ընդհատեց Վաղղիացան եղաւ այլ և կրակ տուող.  
Բիզ: Այն միայն մարդասպան եղաւ այլ և կրակ տուող.  
Վանդի ինքը կրակ տուաւ Վորըլէնի զործարանաց:  
Միջանցաակ մարդ մ'էր, քառակուսի ուսերով, աչքերը  
ճաւարտուն և անհանգիստ, ձայնը օղիէն խժոտած, ճա-  
կատը ցած, շրթունքը հաստ, դունչը նեղ, զուէրը կա-  
կատը ցած, շրթունքը հաստ, դունչը նեղ, զուէրը և կրան  
Սէրիզիէի գլխաւոր նպատակն էր Սաբէր և կրան  
13<sup>դ</sup> շրջանակէն ոչ շատ հեռու, մօտ Բիսէգրը բերդին  
և Հոտ-Բրիւէր ամբարտակին: Արկէւլի Վոմենիկեանց  
և Հոտ-Բրիւէր ամբարտակին: Արկէւլի Վոմենիկեանց  
և Հոտ-Բրիւէր ամբարտակին մը շունէր, որովհետև սահ-  
մանակից էր ասպատակութեան գլխաւոր ընդդիմութեան  
համար շինուածներուն: Պաշարման ժամանակ զարոյցը

Լ .

ԱՐԿԷԻՅԼԻ ԴՈՄԻՆԻԿԵԱՆՆԵՐԸ

Ինչո՞ւ Սանտ Վործանեցաւ. - 9<sup>դ</sup> բաժնին զեղանք. -  
Սերիզիէ. - 10<sup>դ</sup> գունդը - Արեւի Լրկրան դպրոցը. - Հի-  
շանդակաւ. - Լոռի Բռնակ կոչուած եւս. Բորէ. . .  
կարծեցեալ նշանք առ Վերայցիս. - Կը տիրե՞ն դպրո-  
ցիկ. - Գոմեհիկեանց կարանաշորուն. - Բիսէգրը բերդը  
փոխադրուիլը. - Գորոշիէն հասկերձ խորտակուալը. -  
Գիւնդուշիէն, - Բիսէգրի բերդին պարպուշիլը. - Գոմե-  
հիկեանք 9<sup>դ</sup> բաժնին զեղանք կը փոխադրուի. - Ստի-  
պոնու կրքալ պատկէնները շինելու. - Մերժումն. - Զի-  
նուշորակ կացուշիէն փոսեգաւոր կ'ըլլայ. - Սերիզիէ  
կ'որոշի գոմեհիկեանց սպանուշիլը. - Կանայք սպասու-  
րուքեան ժամանակ. - Որս քահանաներու. - Զարդ. -  
Զինուորակ Ստեան. - Սերիզիէ կը փախչի. - Որ-  
բնարի մը. - Սերիզիէի կարանաշորուն. - Սերիզիէ և  
Բորէ կը սպանուի:

Ի՞նչպէս եղաւ որ Սանտ Վործանեցաւ և պատան-  
դները շապանուեցան: - Ֆէրրէ միտքը զբաժ էր որ իր  
հրամանները կատարեր էին և Սէրիզիէ համոզուեր էր  
որ տունը այրեր էր: Բիւզ-օ - Կայլէն իր հրանօթները  
բանտին վրայ ուղղեր էր: Ուսմը մը բռնկեցուց փայտի  
գործարան մը Սանտէի մօտ, Սէրիզիէ համարեցաւ որ  
բանտը կ'այրէր և ուսմերը ուրիշ կողմ ուղղեց, այս-  
պէս ազատեցաւ այն տունը որուն աւերուած երրուըն-  
ցեր էր: Բայց ոճիրներուն ծայրը չէր հասած: Ճիշդ  
հոն ուր 1848ի ասպատակութեան ժամանակ խողխո-  
ղուեցան զօրավարն Բրէտ և Մանժէն գնդապետը, հոն







րեք, տղաք տասնուհինգ տարուան և տասնըութը պաշտօնեայք որոնք հիւանդանոցին մէջ կը ծառայէին, պաշարուեցան և տարուեցան: Հայր Կապտիէ իբրև մեծաւոր և պատասխանատու, պահանջեց և ստացաւ որ արտաքին զրան վրայ կնիք դրուի:

Երեկոյեան ժամը եօթին, բանտարկեալները ճամբան ամեն նախատինք կրելով հասան Բիսէզըր բերդը: Հոն մնացին բաց տեղը քովէ քով վանդակաձև տախտակամածի մը տակ, ուսկից իբրև թէ գազաններ ըլլային, կուգային երբեմն երբեմն դիտելու ազգային պահապանները: Վրանին խուզարկեցին ամենայն խնամքով, մինչև տղու մը գրպանէն առին առածգական գնդակ մը: Գիշերուան ժամը մէկին զանոնք քշեցին ներքնատուն մը, ուր կրցան դիտնին վրայ տարածուել, գլուխնին բարձի տեղ պատի քարերուն կռիցցնելով: Առաւօտեան թէ Մեծաւորը և թէ գործակալը Հայր Կոտո՛ պահանջեցին սաստիկութեամբ և բարեմտութեամբ որ հարցաքննուին, կուգեն դիտնալ թէ ինչու կալանաւորուեցան և բերդի մը մէջ փակուեցան իբրև պատերազմի գերիներ: Իրենց պատասխան տրուեցաւ որ « Այդ ձեր դիտնալութանը չէ »: Եւ երբ աւելի կը պնդէին, այնպիսի աղտեղի երգեր սկսան երգել որ բռնադատուեցան սկանչունին զոցելու: Վերջապէս Մայիս 21ին Հայր Կապտիէն նոյն խի Բիսէզրի բերդին մէջ առեանի դիմաց հանուեցաւ զոր կը կազմէր միայն Լիւսիպիա: Ամեն հարցմանց վրայ ծաղրածու ձայնով մը կ'աւելցնէր « Բայց ինչո՞ւ կը վախնաք, դուք ամբաստանուած չեք. արդարութիւնը ձեռակերպութիւններ ունի, որոնց ստիպուած ենք խոնարհիլ. դուք տեսաք հրդեհը, Լա Պրատ դղեակին սուտ հրդեհը, լաւ գիտէք որ առիկայ նշան մ'էր Վէրսայցեաց համար. մենք զձեզ պահէր ենք պարզ իբրև վկաներ, որպէս զի վկայէք երբ խնդիրը հարցաքննութեան ելլէ »:

Արդարութեան այս ձեռակերպութիւնքը տարօրինակ կ'երևար Գոմինիկեանց, որոնք անդադար իրենց ազատութիւնը կը պահանջէին, Լէօ Մէյիէ կ'ըսէր որ ինքը անկարող էր. և ինքը այսպէս գործեր էր Հասարակաց փրկութեան Յանձնաժողովոյն բարձրագոյն հրամանովը: Անշուշտ Հայրերուն բողոքներէն ձանձրացեր էին, և

ուզեցին մահացնել անոնց ընդդիմութիւնը, անոր համար երկու օր ամբողջ Մայիս 22 և 23, զիբնք առանց ուտելիքի թողուցին: Երբ խեղճերը ներքնատան մը մէջ ցուրտէն և անօթութենէն գրեթէ կը մեռցնէին, իրենք Աւբէրը և Կրան դպրոցը կը խուզարկէին, այսինքն իրենք Մայիս 24ին Մայիս 15 կէտօրը մտան Գոմինիշէն առեր էին Մայիս 24ին 15 կէտօրը մտան Գոմինիշէն առեր տունը: Տասուերկու հրանօթից սայլ և ութը կեանց տունը: Տասուերկու հրանօթից սայլ և ութը կեանք պէտք եղան փոխադրելու համար կահ կարասիքը, լաթեղէնքը և մնացեալքը. 15,000 կամ 16,000 Քրանք, երկաթուղւոյ արժէթղթի վրայ, որոնք երկու ծառայից շատ տարուան խնայողութիւնքն էին, զբրաւուեցան իբրև « Ազգային զրամ » և մտան այնպիսի զբրպաններու մէջ, ուր յետոյ բնաւ չգտնուեցան: Այս խուզարկութենէն վերջը, դպրոցը պիտի այրուեր, բայց ազատեցաւ իր գինետանը պատճառաւ, ուր շատ ապրանք կար, զաշնաւորք այցելեցին, խմեցին և հոն մնացին: Երբ խօսք եկաւ « Վառելու որոջը », կնիքներուն վերակեցուն որ Քէնօ կը կոչուեր, ըսաւ որ Բիսէզրի բերդէն թնդանօթով պիտի կործանէին: Այս սուտը իբրև ճշմարտութիւն ընդունեցան և այսպէս Աւբէրը և Կրան վարժարանը չ'այրեցաւ:

Երկրորդ օրը Լէօ Մէյիէ և իր սպանները ըմբռնեցին որ ալ ապահով չեն Բիսէզրը բերդին մէջ: Բանակը կը մօտենար և կացութիւննին վտանգաւոր էր: Որոշեցին քաշուել Պարիզ, ուր բազմաթիւ պատմէշներով զեռ կրնային դիմանալ և հեռու փողոցներուն ծամածուռ ներքի մը գահալիթաբար, բայց առջի օրուան հաւաքած անարնին չ'մոռցան: Ամեն կառքերը գործածուեցան ատնցմով զէպի Պարիզ երթալու: Այնքան աճապարանօք մեկնեցան որ բանտարկեալները մոռցան իրենց ներքնատանը մէջ: Խեղճերը վայրկեան մը յուսացին որ անշուշտ « Վէրսայցիք » կը հասնէին և զիբնք պիտի ազատէին: Բայց մտքերնէն չէին անցուցած զՄէրիկիէ որ կը մտածէր իրենց համար. 1584 զունդէն շփատ մը եկաւ զիբնք առնելու: Երկու տղաքը և երկու բէճիկացի ծառաները իրենց ազգութիւնը հաւատարմով, թողուեր











հրացաննիդ, սա ողորմելին դեռ կը շարժի»։ Հնազանդեցան շուտով. դիակը երեսուն և մէկ հրացանի հարուած ընդունեցաւ։

Մէրիզիէ գոհ էր, բայց դեռ կշտացած չէր։ Հրամայեց իր մարդկանց՝ իր 1017 դաշնաւորաց՝ սպասելու. վասն զի դեռ գործը չէր լնացած։ Մտաւ բանտը, առաւ ձեռքը բանտարգեալներուն գիրքը, և սկսաւ կանգել անոնք, գործնք կուզէր սպաննել. բայց միանգամայն ձեռակերպութիւն մը կուզէր տալ։ Իր տեսածնեբուն նմանելու համար « և օրինաց համաձայնելու համար »։ Խմացուց որ զինուորական ատեան մը կը հաստատէր. բնական է ինզկնքը նախագահ անուանեց և խորհրդականի ու դատախազի տեղ առաւ Տէոնա անուամբ մէկը որ հսկողի և օգնականի պաշտօն կը կատարէր Թր բաժնին պատժական բանտին։ Բիւսքան անուամբ ծեր տեղապահ մը, անտարբերութեամբ բանտը կը մտնէր կ'ելլէր, կարծես դուրսը բան մը կը դիտէր և երբեմն աչք կ'ընէր Մէրիզիէին։ Այն վարկենին որ Մէրիզիէ կայանաւորներուն ցանկը լնցնելով, Բօքէշին կը հրամայէր նշանակեալները դուրս հանելու, Բիւսքան քովը եկաւ և ականջէն բան մը փոխաց։ 137 լեզեանին հազարապետը ձեռքէն թուղթը ձգեց, ցատքեց անցաւ ծառուղին, մտաւ այն տներէն մէկուն մէջ որոնք Եռազի ծառուղոյն հետ յարաբերութիւն ունին և աներևութացաւ։ Բիւսքան տեղապահը իրեն իմացուցեր էր որ գաղղիական զունդերը Ալընիւ գ'Իտալիի կողմէն կուգան և արդէն հեծեալները սկսեր էին երևնալ։ Մէրիզիէ ըմբռնեց որ պաշարուած էր և գատուած. թողուց փախաւ։ Երբ 1137 զունդին ջոկատները հասան, ուրիշ բան չ'ըրին բայց եթէ դիակները վերցնել։

Մէրիզիէ չէր տարակուսեր որ ինչ կատարած պահուած էր իրեն և ամեն ջանք ըրաւ փախչելու։ Թերեւս յաջողէր, եթէ միայն կրօնաւորներ սպաննած ըլլար, բայց դեռ ուրիշ սպաննութիւնք ալ ըրած էր որոնցմէ մէկը իր կորստեան պատճառ եղաւ։ Պարագայի մը մէջ որ այս պատմածիս չլերարեորտ, սպաննել տուած էր ազգային պահապան մը, ամբաստանելով, ինչպէս միշտ, Վէրսայի հետ յարաբերութիւն ունեցող։ Այս մարդը առ մուսնացած էր և իւր կինը զինքը կաթոզին կը սիրէր։

Չմոռցաւ երբէք ուլ զինքը որբեարի ըրեր էր։ Այն օրուընէ որ գաղղիացի զունդերը Պարիզու Սէնի ձախ կողմին տիրեցին, սկսաւ իր միտքը դրածը՝ առանց մէկու մը ըսելու։ Իրեն կ'ըսէին ամենը « Մէրիզիէ մեռած է, հրացանի բռնուած է, պատնէշներուն վրայ ինկաւ »։ չէր հաւատար, ատելութիւնը զգուշաւոր է։ Խոհեմութեամբ սկսաւ իր խուզարկութիւնը և ապահով զիտցաւ որ Մայիս 25ին երեկոյ, Մէրիզիէ տեսնուած էր ժան տ'Արկի հրապարակի մէջ. որ շատ յուզուած էր ժան տ'Արկի հրապարակի մէջ. որ շատ յուզուած էր կրնար ձանջուել. որ վերջապէս զիչերը անցուցեր էր Եստօ տէ Ռանտիէ փողոցին մէջ տուն մը, ուսկից Մայիս 26ին առաւօտեան ժամերուն ելած էր քաղաքացի հագուստով։ Ասկէ անդին կը կորսնցնէր հետքը։

Այս տեսն ինքը կատարեալ խուզարկութիւն մը կազմակերպեց, որովհետեւ համոզուած էր որ Մէրիզիէ Պարիզ եկած չէ։ Ըսաւ մտքէն որ Մէրիզիէ կաշէգործ մ'էր, որ գրպանը եղած դրամը պէտք է պարպուած ըլլայ, որ սպորուտ ձարելու պէտքը զինքը բռնագատած ըլլայ աշխատելու իր գիտցածով. որով գործանոցի մը մէջ պէտք էր մտնար։ Պարիզու մէջ կային երկու հարիւր երեսունուերկու կաշէգործութեան գործատուներ. այսու հանդերձ որբեարին շուտահետեցաւ և կարմրամորթի յամառութեամբ սկսաւ փնտռել Մէրիզիէն։ Այնու առաւօտ և ամեն գործաւորաց մտնելու ելելուն։ Այնու առաւօտ և ամեն գործաւորաց մտնելու ելելուն ժամանակ քարշ կուգար երեկոյ գործատանց չորս կողմը, որոնց թիւը և տեղերը սորուեր էր։ Այս էր իր օրական զբաղումը, և չպակեցաւ բնաւ, սակայն Մէրիզիէ չէր գտնուեր։ Վերջապէս Հոկտեմբեր 16ին Պարլանդ փողոցը անցնելու ժամանակ տեսաւ մարդ մը Գրանդ փողոցը անցնելու ժամանակ տեսաւ մարդ մը իրեն փնտռածը կ'երեւար։ Արդեօք անիկայ էր։ Երեսը իրեն փնտռածը կ'երեւար։ Արդեօք անիկայ էր։ Երեսը իրեն փնտռածը կ'երեւար։ Արդեօք անիկայ էր։ Երեսը իրեն փնտռածը կ'երեւար։ Արդեօք անիկայ էր։ Աչքովը հետեցաւ անոր. տեսաւ որ կը վիճէր գործաւորի մը հետ. մտաւ զինետուն մը, ելաւ և մտաւ տուն մը ուր բէճիացի կաշէգործ մը քանի մը արուեստաւոր ունէր։

Ուզողակի ինքը չզնայ մասնելու, որովհետեւ ծանր



















լատին. «Քաղաքացի Կարրո. տեղեկութիւն տալու համար կ'իմացնեմ քեզ որ ենթապահապանապետ Բրաքոնի կնիկը կերակուր կը բերէ Կորէ անուանուած անձին. դու ըրէ, ինչպէս պատշաճ կը դատես. թէ ինձի մնար զանկիայ կը բանտարկէի: Աղջոյն, եղբայրութիւն» : Կարրո կարեւորութիւն չտուաւ և Տիկին Բրաքոն շարունակեց յարմար կերակուր բերել ու Կորի, Գերապայծաւ Գարբուայ և Բոնիֆան նախագահը, որ զեռ Պահպանոցն էին, և քիչ ատենէն Մազաս պիտի բերուէին: Հասան հոն Սպրիլ Յին բազմութեամբ մը: Մազասը կըլլար բանտ մը նշանաւոր պատանդներուն և նախասենեակի գատապարտութեան, այսինքն Կրանտ-Ռաքէտի:

Այս օրուրէն մինչև 24 Մայիսի, մինչև Պարիզու ազատման նախընթաց օրը, բանտը պիտի ընդունէր հինգ հարիւր երեսուն և երկու կախանաւորք, որոնք ա՛մենն ալ այլ և այլ տեսակէտներով Պետութեան կալանաւորք կրնային համարուիլ: Սպրիլ 10ին բանտարկուեցաւ յիւստենութ տարուան մէկը իր թմրածութեամբը, և էր Ժան Բատիոզ Ժէքքէ սեղանաւորը, որ Մէքսիկոյի պատերազմին ժամանակ ունեցաւ իր կարեւորութիւնը: Այն օրը ներկայացրէր էր Ռատիկանութեան պալատը անցադիր մը ուղեւ համար, պաշտօնատէրին թուղթ մը ներկայացուց որուն վրայ գրած էր սուտ անուն և սուտ որպիսութիւնք: Պաշտօնատէրը առանց զիտողութեան մը, անցադիրը գրելու վրայ էր, երբ հոնկէ անցաւ վերատեսուչ մը. նայեցաւ պաշտօնատէրին գրածին վրայ, նայեցաւ Ժէքքէի որ ձախ ձեռքին մէջ ծալած թուղթ մը բռնած էր: Արդեօք Ժէքքէ այլալեցա՞ւ, կամ միւսը բան մը ճանչցա՞ւ: Չէնք գիտեր, վերատեսուչը ծալած թուղթը առաւ ձեռքէն, բացաւ և տեսաւ որ հին կանոնաւոր անցադիր մ'էր Ժէքքէի անուան, և գրող պաշտօնէին ըսաւ որ «Պահէ զայդ մինչև ես գամ»: Յետոյ վազելով Սուաշին բաժնին գլխաւորին ցըցուց անցադիրը: Գլխաւորը վազեց Ռուսի Ռիկոյի գոչելով. «Ժէքքէն ձեռքերնիս է» - «Պէտք է բռնել» պատասխանեց Ռիկօ, որ անմիջապէս ստորագրեց կախանաւորութիւնը:

Այդօրինակ դէպքով մը քիչ մնաց պիտի բռնուէր նաև Տ. Հոսմանի հայրը: Ռատիկանութեան պալատին սանդուխներէն վեր կ'ելլէր, Պարիզէն դուրս ելլելու սպահովագիր մը առնելու համար: Գրագրութեան սենեկի ծառայ մը զինքը ճանչցաւ և ըմբռնեց այդ ծերունը՝ ըրած վտանգաւոր դիմումը, թեւէն բռնեց և կամացուկ մը ականջէն ըսաւ. «Ետեւէս եկուր, սպա թէ ոչ լմացար»: Տ. Հոսման հնազանդեցաւ, ծառային ետեւէն զնայ մինչև Պոն Նէօֆի մօտ, ուր անիկայ իմացուց որ իրեն նման անձինքներու անցադրէն աւելի բանտ տանելու հրամանը կը արուէր:

Մուսոն բարեսիրտ էր պատանդներուն նկատմամբ, և սզէտ կը ձեւանար հսկողներուն երբեմն անոնց տուած թոյլտուութիւններուն՝ մէկզմէկ տեսնելու: Մէկը կար որ ամեն օր կը համարէին թէ արձկուի: Ատիկայ էր քահանայն Կրոզ, որ այնքան ծառայութիւններ ըրած էր Կրանտ Ռաքէտի գատապարտեալ կախանաւորաց: Գիտէին որ Ռուզֆոր մեծապէս կ'աշխատէր անոր աւ զատուելուն համար: Թէպէտ քահանայն Կրոզ իմաստասիրի պէս անհոգ կ'երևար. և երբ ամանք կը արանջէին թէ խցիկներու մէջ ապրելու ստիպուած են գէշ սնունդով, գէշ անկողնով, առանց սպահովութեան մը վաշտուան համար, ինքը պատասխանեց «Շնորհակալ եմ Նախախնամութենէն, որովհետև այսպէս կ'անցնիմ ա՛ծարանութեանս վրայէն, զոր քիչ մը թողուցեր էի»:

Պատանդներուն Մազաս բերուիլը շատ մը վախեր արթնցուց. հասկցուեցաւ որ քահանայից բնաւ պիտի չինայուէր: Արդ Մազասի քահանայն Տ. Ժուզան ձեռ էր և գրեթէ հիւանդ՝ բանդարգեալի մը երկաթէ զաւազանով զլսուցն տուած հարուածի պատճառաւ: Չինքը շատ մը նեղութիւններէ և բանտարկութենէ ազատելու համար պէտք էր զինքը բանտէն հանել և Պարիզէն համար տանիլ: Այս բանս նորէն մէջի պաշտօնեայք գործադրեցին. Տիկինն էլ ձկնակոյն կնիկը, առաւ զանիկայ մէկտեղ և սարաւ գաւառին քաղաք մը ուր մնաց մինչև որ Մազաս օրինաւոր մատակարարութեան ձեռքն անցաւ. և այն ատեն նորէն դարձաւ:

Կը պատմուի որ Մուսոն գթալով արքեպիսկոպոսին և Տ. Բոնիֆանի վրայ, ջանացեր էր անոնց փոխելու



ճար մը մտածել. կ'ըսուի որ անոնց դաշնաւորի զգեստ գտեր է, Տ. Բոնիտան դրած ըլլայ արքեպիսկոպոսին ճակտին վրայ քիփիև և խնտալով մը իրեն ըսած ըլլայ « որ ատով զինուորական կերպարանք մը կ'առնուս որ շատ բաւ կը յորմարի »: Սակայն երկուքն ալ մերժած ըլլան տեսչին արամազրութիւնէն օգտուելու, արքեպիսկոպոսը պատճառելով որ այսպէս Հասարակութիւնը պիտի զայրացնեն կղերին զէմ և Տ. Բոնիտան ըսած ըլլայ որ դատուորի մը չվայլէր փախչիլ: Այս պատմութիւնը անկարելի չէ. թէպէտ և շատ դժուար էր փախցնել այն երկու անձինքը, որոնց Հասարակութիւնը մեծ կարեւորութիւն կուտար:

Բայց տեսակ մը բանակցութիւն կար թիէրի հետ բանտարդեալներու փոփոխութեան համար. սպասումը վարչութիւնը կը խոստանար ազատելու շատ մը եկեղեցականներ եթէ ազատ թողուի Բլանքի: Այդ նպատակաւ բաճանայն Լագարտ իր խոստմանը վրայ զրկուեցաւ ի վէրսայլ և բանակցութեան մէջ մտաւ նաև Տ. Ուոշբըրն Միացեալ Նահանգաց զետպանը: Բայց ի զուրամեն բան ջախջախուեցաւ յամուծութեան մը առջև, զոր ապա պարագայք յանցաւոր դատել տուին: Տ. Ուոշբըրն որուն Ռատու Ռիկո չէր կրցած մերժել այցելութեան հրամանը, շատ անգամ զնաց տեսնելու զարքեպիսկոպոսը, իրեն տարեր էր քաղերներ, Սպանիոյ գինիներ, և ըսած էր որ պատրաստ էր ամեն ծառայութեան. մինչև վէրսայլ զրկեր էր Գերապոյծոս Գարպուսայի մէկ յուշագիրը որ կ'եզրակացնէր ազատ թողլու զԲլանքի: Այս յուշագիրը Պապին նուիրակը ներկայացուց առ թիէր, որուն պատասխանը ժխտողական եղաւ: Վարչութեան գլուխը յայտնեց որ չէր կրնար բանակցիլ ապատմութեան հետ և ապահովցուց որ պատանդներուն կեանքը ամենեւին վտանգի մէջ չէր: Բայց այդ կարծիքէն չէին ոչ կարդինալ Կիճի և ոչ Ուոշբըրն և իրաց կատարածը ցըցուց որ իրաւունք ունէին: Բլանքիին ազատելով իրենց համար նոր վտանգ մը չկար, շատ շատ մէկ խենթ մը աւելի պիտի ըլլար Օթել զը Վիլի մէջ որ խենթանոց մը դարձեր էր:

Կալանաւորները եթէ փոփոխուէին, արդեօք Տ. Բոնիտան ազատ պիտի ձգուէր: Ատիկայ տարակուսական էր.

որովհետև իր բռնուած օրէն, իբրև յաղթութիւն մը համարուած էր: Իր կալանաւորման երկրորդ օրը Տ. Պոլ Ֆապըը, Վճռաջինջ Ստենին ընդհանուր դատախազը, նոյն խկ ինքն ալ կալանաւորուելու վտանգով, զնաց տեսնելու զՌատու Ռիկո և պահանջեց որ Նախագահը ազատ ձգուի « Անկարելի է պատասխաներ էր Ռիկո - Իճու - Չէր Բոնիտանը տեսնակալ է. - Ինչ կ'ըլլայ, ըսած էր Տ. Պոլ Ֆապըը. ստիկայ ապօրինաւորութիւն մ'է »: Այն ատեն Ռիկո կրկներ էր իր բերանը եղած միշտ սիրելի խօսքը « Մեր ըրածը օրինաւորութիւն չէ, այլ յեղափոխութիւն »: Փորձեցին Տ. Բոնիտանի համար շնորհք մը ընդունելու, զոր արամազիլ էին էին աալու. որովհետև կը ճանչնային իր սապեւտական զգացումները: Կուզէին հրաման տալ որ խօսք սոյլ և քառասունըութը ժամ ելլէ բանտէն, համարժեք իր տղաքը և ամուսինը: Մտածեց որ յանկարծ զէպք մը կրնար զինքը ուշացնել և այսպէս կարծուիլ որ զրժեց խոստման, որով մերժեց: Անխառով, երբեմն իր բարեկամներէն մէկուն այցելութիւնը կ'ընդունէր, իր բարեկամներէն շնորհուեցաւ, տկարացած և դժուին համար հրաման շնորհուեցաւ, տկարացած և սկար, բայց միշտ պահելով իր ոգւոյն մեծութիւնը, իր խցիկին առանձնութեան մէջ կարծես կը խօսկցէր Մաթիէն Մոլէի և Նախագահ Գիւրանդրի ոգիներուն հետ:

Պատանդներուն վիճակը պիտի փոխուէր. Ռատու Ռիկո Հասարակութեան դատախազ անուանուելով, համարեցաւ որ կալանաւորաց համար Մուտոն շատ քաղցր էր. անոր տեղը իր ընտրութեամբ մէկը դրաւ, որուն անողորմելի բնաւորութեան վրայ վստահ էր և Մազաս զրկեց Կարրօ զարբինը, մինչ Մուտոն կօշկակարը Սէն Լազար կը զրկուէր: Անկէ վերջը տանը վրայ տիրեց բրտութիւնը, տէր մը կար: Այն կալանաւորք որոնք կը հարցնէին թէ ինչո՞ւ բռնուեր էին. Կարրօ կը պատասխարցնէին « Շատ հեռաբբիւր էք »: Տրանջացողներուն կ'ըսէր « Թէոր կուզէք, զուլինիդ... ջախջախե՛ք, անկէ դիւրին չկայ »: Հսկողները կը դողային այս միշտ սպառնացող մարդուն դիմաց. ո՞ր չէին համարձակիր պատանդներուն հետ խօսիլ, որոնք խիստ ծածուկի փակուեցան: Տիկին Կորէի, Տիկին Բրաքոնի Կալանաւորաց տարած խնամքին աննպաստակ կը մնային և երբ կը-



սէին Կարրոյի որ արքեպիսկոպոսը հիւանդ էր որ Տ. Բոնժան տկար էր. կը պատասխանէր, «Թէ որ գոչ չեն, թող սատկին, մենք ալ կ'ազատինք»։ Արով բոլոր պատանդները, դատաւորք, քահանայք, Յիսուսեան հարք, Պիկպիւսի հարք, Ռատիկանութեան գործակատարք, բանտի վարիչ մեքսիքացի սեղանաւոր, կղերիկոս, ամեն ալ Կարրոյի վայրենի ձեռքին տակ կ'ապրէին որ ամեն նեղութիւն կուտար։ Եւ եթէ ունեցաւ քանի մը հանդարտ և յուսովից օրեր, այն ալ եղաւ շնորհիւ Տ. Էտմոն Ռուսի, գաւազանաւ իր փաստարաններու կարգին որ իրեն պարտքը կատարելէն ամենեւին չվախցաւ։ Միտքը դրած էր բնաւ չճանչնալու Հասարակութեան դատաստանական հերետիկոսութիւնները, բայց և հաստատապէս որոշած էր իր ճարտասանութեամբ նպատակելու առ ինքն դիմողաց։ Կս մանաւանդ չսպասեց որ պատանդները իրեն դիմեն, այլ յանուն այն կարգին որուն ներկայացուցիչն էր, ինքն գնաց առաջարկելու զիրենք պաշտպանելու, նոյն իսկ Ռիկոյի հնարած Արգարութեան դիմաց։

Մայիս 17ին Հասարակութեան խորհուրդը սահմաններ էր գումարելու դատախազութեան տառնան մը պատանդները դատելու համար։ Ասկէ կարծեցին որ կարելի պիտի ըլլար վիճել և վկաներ կոչել, բայց կը սխալէին։ Ընդհանուր դատախազը Ռատու Ռիկո, բացարձակ այդ իրեն երդուեալներուն որ պարզապէս պիտի քննէին թէ այդ նշանակեալ անձինքը կրնային նկատուիլ իր պատանդ թէ ոչ։ Այս տարօրինակ տառնանին դիմաց կ'ըլլէր մին, որ Մայիս 19ին խմբուեցաւ և միայն այն անգամ, անպարտ հռչակուեցաւ. այսու հանդերձ Ռաքէտ տարուեցաւ և սպաննուեցաւ Հաքոս փողոցը։

Որչափ որ պաշտպանելու իրաւունքը ցնորակներ քան մ'էր, բայց բողոքելու իրաւունքը կը մնար փաստարաններուն կարգին, որ առանց վարանելու յանձն առաւ այդ պարտքը և անոնց կարգին գաւազանակիրը պէտք եղած թոյլտուութիւնք ստացաւ տեսնելու զարքեպիսկոպոսը, Տ. Գրգէրիի և հայրն Կօբէր։ Կարևոր անձ մը տեսնելու համար հարկ էր որ կարէր անցնէր սրահներուն մէջ բանակած զինեալ անձեր, քնացած տղաներ, թմրած կնիկներ և յափրացած մարդիկ, սակաւ-

ներու, զինուոյ ամաններու և շիշերու կոյտեր։ Տեսաւ նաև զՌատու Ռիկո իր հրամանատարի շքեղ տարազով վճռալինջ ստենին մէջ. տեսաւ զԵւթէն Պրոսո, Արգարութեան նուիրակը, որ կնքապահի պաշտօնէութեան սրահին մէջ բազմած էր, ինչպէս զինետան մը մէջ. կրցաւ մաննել ի Մագաս, տեսնել պատանդները, խօսիլ անոնց հետ և յոյս տալ անոնց, մինչ թերևս ինքը չունէր այդ յոյսը։ Արքեպիսկոպոսը հանդարտ էր, և համակամեալ, Տ. Գրգէրիի իր բնութեան համեմատ խօսող, հազորդող. Հայրն Կօբէր անխախտ իր հաւատքին վրայ և համոզուած որ Գաղղիա այս փորձէն պիտի յառնէ աւելի քրիստոնեայ, որով և առաջուրնէ աւելի զօրաւոր»։ Մայիս 20ին շաբաթ որ Տ. Էտմոն Ռուս տեսնուեցաւ պատանդներուն հետ, զիրենք թողուց խոստանալով դառնալու առաջիկայ երեքշաբթին։ Հասարակութիւնը պիտի խափանէր այդ խոստումը և այս այցելութիւնը առաջինը և վերջինը եղաւ։

Ալ ամեն բանէ վախ կար, որովհետև Մայիս 17ին, Հասարակաց փրկութեան Յանձնաժողովը քուէարկած էր պատանդները սպաննելու։ Հասարակութիւնը ամեն միջոց ձեռք պիտի առնուր ինքզինքը պաշտպանելու համար. «22 Մայիս 1871. Քաղաքավարչութիւնները անընդհատ ամեն եկեղեցիներու մէջ պէտք է հնչեցնեն սաղմոսի զանգակները. — Քարտուղար Հասարակաց փրկութեան Հանրի Բրիտասը։ Նոյն թուականով. Կրկնութեան Հանրի Բրիտասը։ Նոյն թուականով. Կրկնութեան Ծրագէ քաղաքացիէն Անդրիէի կողմանէ, իւրեքուրի Ծրագէ քաղաքացիէն Անդրիէի կողմանէ, արգիլել ջրուղիները որոնք զէպի վերայցուց եղած կողմերը կերթան, նոյնպէս կապի խողովակները»։ Վայրենի կոիւր կը սկսէր։

Մագասի հսկողները շատ տագնապատ էին, որովհետև անոնցմէ մէկը, Բոնար անուամբ, որ Կարրոյի հետ մտերմանալով մինչև ստենադպիր եղած էր, ըսեր էր իր հին ընկերներուն «Գիտցեք որ եթէ Վէրսայի գունդերը Պարիզ մտնեն, մայրաքաղաքը պիտի այրուի, բոլոր հոս գտնուող քահանաները հրացանի պիտի բռնուին. Պագանուող քահանաները և զիակներու զէպ մը պիտի գաւրիղ սակրակներու և զիակներու զէպ մը պիտի գաւրիղ նայ»։ Տարակոյս չունէին որ Կարրո զիտնալով ըսեր էր ասոնք, անշուշտ լսելով Ռիկոյի և Ֆէրրէի։ Հակողները որչափ ալ ուզէին բարիք ընել, սակայն գաղնատ-







ամենքը կենդանիներու կանոնաւորութեամբ իրեն որովը կը դառնային: Ահաւոր եղաւ 24ին 25ի գիշերը, խնայան պահապաններէն որ Պարիզ կ'այրէր. շատ մը գնդակներ տանիքը ծակեցին: 25ին սուսուտ տեսան որ անկարելի էր բանտարկեալները կերակրել և խցիկները բացին. «Ինչ որ ունիք, սուէք դացէք»: Շատերը կը վախէին որ բանտը օդը պիտի հանեն և փախան. հարիւր հոգի մը ելան Մազասի բուլլարի վրայ և չէին գիտեր որ կողմը երթալ. ավրնիւ Գիւմէսնիլի վրայ պատնէշ մը բարձրացեր էր զոր դաշնաւորք կը պաշտպանէին և հաւաքեցին բանտէն փախչողներէն զամանս և բռնադատեցին պատերազմելու: Բանտարկեալներէն մէկը որ կը պարծէր Վինչէնցիների սպաննողներէն ըլլալուն, հրացան մը առաւ և սկսաւ պարպել դաղղիական գնդին վրայ, բայց գնդակէ մը զարնուելով գետինը փռուեցաւ: Միւս բանտարկեալները ոմանք տները սպաստանեցան ոմանք շարունակեցին ճամբանին գրնդակներուն ներքև և գրեթէ ամենն ալ սպատեցան: Ամենէն խելացիները Մազաս եկան, ուսկից չէին ուզած մեկնիլ նաև քահանայն Արոզ և Տ. Կորէ: Կարրօ կը զգար որ այ տէր չէր, հսկողները իրեն սպառնական կերպ մը առին. ուզեց փախչիլ, առին ձեռքէն իր հրացանը և վեցերորդ բաժնին թիւ 8 խցիկին մէջ գինքը փակեցին, ճիշտ հոն ուր քառասունեկինն օր փակուեր էր քահանայն Արոզ:

Մայիս 25ին երեկոյեան, կանոնաւոր զօրաց հարիւրապետ մը որուն մէկ գունդը բռներ էր Լիոնի երկաթուղոյն կայարանը չնայելով, ավրնիւ Տօմէսնիլը պատնէշի որ կը տիրէր Մազասի բուլլարի վրայ, սահեցաւ ու մտաւ բանտը: Առին բոլոր գտած տակառնին, լեցուցին գրնդակներով, զգեստներով, և շարեցին բուլլարի վրայ, սյապէս ամբարտակ մը ձևացնելով դաշնաւորաց գրնդակներուն առջև: Այդ տակառներուն ետեւէն ծոկելով անցաւ զինուորական աշխատութեանց գունդ մը և տիրեց բանտին: Զինուորներէն ոմանք հետերնին հացերնին ունէին, զոր մեծաւ շնորհակալութեամբ ստացան բանտին մէջ եղողները, որոնց երեսունուվեց ժամէ ի վեր ուտելիք չէր տրուած: Գնդապետին առաջին տաղնապով Հարցումն եղեր էր «Ո՞ր է Բոնտան նախագահը, ո՞ր

է արքեպիսկոպոսը»: Հրամայուեցաւ բերելու Կարրօ տեսուչը: Զինուորաց յանձնուեցաւ. զէպ ի բոլորակին պատը մղեցին և հոն հրացանի բռնեցին<sup>1</sup>.

1. Պէտք է ըսել որ՝ օրինաւոր վարչութեան վրայ ալ ամբաստանութիւնք եղած են զանազան անձինք առանց գառաստանի սպանուելուն համար: Ծ. թ.



















Լ. Գ.

ՊԱՏԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԱՀԸ

Հասարակորէիներ կ'ապաշինի 114 Երզնակիին քաղաքախարչական պալատը - Օրէլ տը Վիլի կրակ տուողները - Կրակն զը Բօֆոր - Պատանդներուն չարքը վաքը չեցաւ - Զինուորական Ատան - Կիւստալ Էրեկ Ժանտուն - Դաներուն փախուը - Արքեպիսկոպոսը խցիկը կը փոխէ - Զորս կանայր Ռորեո կը բանտարկուի - Սպանկողներուն խուշըր կոչուայ - Անկանուն հրահան - Ատանայրիս ընդդիմորէիներ - Ասաչիս ցակիկն փոփոխորէիները - Էտուն Մեծի - Բեկմակն Սիկար - Հանրիուն նստողը - Հանրիուն կը փախչի բանդիները պանդով - Ատանն պանսպանսպետը և Բոսն նստողը - Կոչ - Բունման Նախագահին « Մեար բարովը » - Մարպասպանը կը վիճէ - Արձակուոն - « Կը միակէր » - « Գրոչիսիս կը ցաւցեն » - Խուշիկն կրակը պարպելը - Վերջին ընդունաց նարուածը - Մեծի խիդը - Խցիկներուն մէջ գողորչիկն - Զրոչիստ քե աղանակ - Մեաները կը մերկացեն - Մարմիկները Էտո գերեզմանները կը տարուի - Երկերի չորը :

Ժամը չորսին « Հանգիստը » պէտք էր ըմնալ. պատանդները իրենց բաժինը տարուեցան, բայց դաները վեցին փակուեցան, բանտին կանոնաւոր ժաման. որով թիչ մը ժամանակ կրցան մէկտեղ մնալ: Իրենց շրջապատներուն ժամանակ ուշադրութեամբ դրսի ձայները

մտիկ ըրեր էին և հապիւ թնդանթներու հետու բովբիւններ կը լսէին: Մայիս 23էր՝ Երեքշաբթի, և պատերազմը Ռաքէտի շէր մտանար: Հսկող մը իրենց ըսեր էր « Ապատամբեան վերջին բնակարանը Բելլիլ պիտի ըլլայ. պէտք է համբերել և արիանալ. մեծ կուրմեր չորս կողմը պիտի ըլլայ »: Պատանդները նոր բնակութիւննին և կենաց դրութեան փորձը ըրեր էին, ուրուան մէջ մէկտեղ կը ձգուէին. և գեշերը կը փակէին. ստիկայ իրենց համար մեծ բարեւորումն էր: Առաւօտան իւրաքանչիւրին մէկմէկ խոր պնակ տուեր էին, որով կ'ըլլար ուտելիքի բաշխումը. ընդունէր էին իրենց ջրով եփուած ընդեղէնը. աղէկ գէշ իրենց ճաշը առնելէն վերջը քնացան ստամոքսնին թեթև, խղճմտանքնին հանգիստ: Երկրորդ օրը, Մայիս 24, օրուան մէջ, հսկող մը իւրենց ըսած էր « Նորութիւն մը. Հասարակութեան ամբողջ ոգին ժողուեր էր 114 Երջնակի քաղաքախարչական պալատը »: Որ է ըսել Ռաքէտէն երեք հարիւր մէքը հետու: Ասիկայ գէշ մերձուորութիւն մ'էր: Որոշուէր ժողովրդական հին պալատը պարպել և « վարչութիւն » փոխադրել Բելլիլի ոտքը, պաշտպանուելով Պէր - Լաչէգի բլուրէն, Վէնաէն, Օբերլիլիէն, Ռոմէն - Վերեւ վիլի դաներուն մօտ, որով կարող էին փախչիլ: Ուրեմն դէպ ի Գերմանացուց բանած շրջանակները և Ուրեմն երեք մեծ « պաշտօնարանք », Պատերազմի Հասարակաց պալատներուն և Արևմտից 114 Երջնակին քաղաքա-

վարչական պալատը կեդրոնացեր էին: Բայց բաւական չէր Օթէլ մը Վիլը պարպելը, պէտք էր կրակ ալ տալ: Քանի մը աւազակք յանձն առին և օգնուած դաշնաւորներէն և Յորդիկնի վրիժաւորներու երկու գունդերէ, կրակ տուին ոչ միայն Օթէլ տը Վիլի այլ նաև Տրոց պալատին դիւաններուն, Հասարակաց Օգնութեան պալատին և բոլոր Հրապարակին: Հասարակութեան մարդկանց վրայ սպաննելու կատարութիւն մը եկեր էր: Մայիս 24ին առաւօտը սպայ մը որ մասն կը կազմէր Արևգլբի սպայակուտին, կը ջանար հասնիլ մինչև 114 Երջնակին քաղաքախարչական պալատը: Պատանդներուն մօտ զինքը կը բռնեն և կը ստիպեն որ քար կրէ. կ'ըսէ որ հրամաններ ունի տանելիք, և թէ իր աստիճանը պէտք է յարգեն. կը պրոան « Այսօր

իր աստիճանը պէտք է յարգեն. կը պրոան « Այսօր



















բոլորակ գացող առաջին ճամբուն դուռը բացու. ամեն  
 նէն առաջ արքեպիսկոպոսը անցաւ. շուտով իջաւ ասն  
 դուխներուն հինգ աստիճանը և դարձաւ: Երբ իր  
 մարտիրոսութեան բոլոր ընկերները սանդղայն վրայ  
 էին, բարձրացուց աջ ձեռքը երեք մատերը երկնցած, և  
 արտասանեց արձակման ձևը. « Ես արձակեմ զձեզ  
 յամենայն բանադրանաց և մեղաց »: Յետոյ մերձե-  
 նալով Տ. Բոնիֆանի, որ նեղութեամբ կը քալէր կան-  
 խաւ ըսած պատճառնու համար, թեք տուաւ իրեն:  
 Միշտ Ռամէնի առաջնորդութեամբ, պաշարուած զաշ-  
 նաւորներէն, աջ աջ երթալով հասան բոլորովին երկայն  
 ճամբան որ կը հանէ բանտին առաջին դաւթին մօտ:  
 Ամենէն քիչ մը առաջ կը քալէր քահանայն Ալար,  
 ճակատէն վեր շարժելով ձեռքերը և « բան մը մրմնջե-  
 լով», կըսէ ականատես մը: Այս «բան մը» հոգևորքնե-  
 թուն ազօթքն էր, զոր կը մրմնջէր կէս ձայնով: Աւրիշ-  
 ները լուռ էին:

Հասան այն վանդակագուռը որ կը կոչուի՝ «վան-  
 դակագուռն մեռնողներու» և որ կը փակէ բոլորակին  
 առաջին ճամբան. գոցուած էր: Ռամէն որ շատ խու-  
 ված էր և թէպէտ քովն էր բանալին, սակայն կը  
 բնտուէր նորէն: Այս վարկենիս Գերապայծառ Գար-  
 բուա, չէթէ կենացը, այլ ոճիրի մը դէմը առնելու համար  
 փորձեց երկու խօսք մը ըսել դահիճերուն. « Ես միշտ  
 սիրեցի ժողովուրդս, ես միշտ սիրեցի ազատութիւն »  
 ըսաւ: Գաշնաւոր մը իրեն պատասխանեց « Բու ազա-  
 տութիւնդ մերինը չէ, դու զմեզ կը ձանձրացնես »:  
 Արքեպիսկոպոսը լռեց և սպասեց որ Ռամէն դուռը  
 բանայ: Քահանայն Ալար դարձաւ նայեցաւ դէպի պա-  
 տուհանները և տեսաւ չորրորդ բաժնին կալանաւոր-  
 ներէն ամանք որ իրենց նայելով կուլային: Գարձան դէպ  
 ի ձախ, յետոյ նորէն դէպ ի ձախ և մտան բոլորակին  
 երկրորդ ճամբան որուն բարձր սե պատը կարծես օդոյ  
 մէջ էր: Խորը պատ մը կը բարձրանար որ կը բաժնէ  
 բանար Ֆոլի-Ռէնյօ փողոցին կից կողերէն:

Այս այն տեղն էր զոր Ֆրանսուա և Վէրիկ Մայիս  
 22ին դիտեր էին, լաւ ընտրուած էր և մէկը բան չէր  
 տեսներ: Տեսակ մը խուտ էր գաշտի մէջ, կատարեալ  
 որոգայթ մը: Ռամէն գացեր էր: Զոհերը և մարդաս-

պանները կը մնային դիմացէ դիմաց, առանց վկայի  
 որպէս զի սպագային չխօսին Արդարութեան առջև:  
 Մարմիններուն գանուած դիրքէն կը տեսնուի որ պա-  
 տանդները ինչպէս խցիկներուն մէջ հոս ալ դասակար-  
 գութեան աստիճանով շարուեցան պատին տակ երես-  
 նին դէպ ի սպաննող գունդը: Կախ Գերապայծառ  
 նին Գարբուա, յետոյ Բոնիֆանի, Հայրն Ալէքս. երկուքն  
 Ղըկէրբի, Հայրն Գիւլուրբէ, Հայրն Ալար, երէց  
 ալ յիսուսեանք և վերջապէս քահանայն Ալար, երէց  
 հիւանդանոցներու որ պաշարման և Հասարակութեան  
 առաջին կախներուն ժամանակ շատ վերաւորներ աղա-  
 տեր էր: Սպաննող գունդը այն վեց համակամեալ  
 մարդիկներէն երեսուն քայլ հեռու կեցեր էր: Ժանտոն  
 հրամայեց կրակը: Նտեւէ ետև հրացաններուն ամբողջա-  
 կան պարպուիլը լուռեցաւ և քանի մը առանձին  
 հարուածներ: Ժամը երեկոցեան ութին քառորդ կար:  
 Կը պատմուի որ սպաննող գունդին իւրաքանչիւր

մէկին յիսունական Ֆրանք արուեցաւ ի վարձ. անկա-  
 ընել չէ, բայց փաստ մը չգտանք: Երբ գունդը դա-  
 տապարտելոց պահանջի դիմացի հրապարակը ելաւ,  
 ամբողջ խնդակցեցաւ դաշնաւորներուն: « Կեցցէ,  
 արեւ գործ էր »: Վէրիկ կը ցուցնէր իր երկայն սուրը-  
 ճանակը և կ'ըսէր, « Ասով լմնցուցի երևելի արքեպիս-  
 կոպոսը. կոկորդը շախշախեցի »: Կը հպարտանար:  
 Պաշտօնական անգամապննութիւնը յայտնեց որ Գերա-  
 Պաշտօնական « շնորհաց հարուածը » ընդունած  
 պայծառ Գարբուա « շնորհաց հարուածը » տանուիլը  
 չէ: Նոյնպէս չեղաւ Տ. Բոնիֆանի համար, տանուիլը  
 դնդակ զարկին զինքը առանց մահացու հարուած մը  
 տալու և ձախ ականջին քով տարձանակի հարուած մը  
 վերջ տուաւ իր շարչարանքերուն:

Չորրորդ բաժնին պատանդները որոնք գոհերուն  
 կանչուիլը լսեր էին, որոնք սրտերնուն մէջ լսեր էին  
 սպաննող գունդին հրացաններուն հարուածը, կը սպա-  
 սելին վարկենէ վարկեան որ վանդակագուռը բացուի,  
 կամ սրահը անցնին մահուան երթալու համար: Ֆրան-  
 սուա անգամ միտքը դրած էր որ այդ բաժնին բոլոր  
 կալանաւորները սահմանուած էին հրացանի բռնուելու:  
 Անոնցմէ մէկուն վրայ խօսելուն ըսաւ « Ասիկայ եր-  
 կրորդ անգամուան պահուած է, վաղը »: Չորրորդ







Լ Դ

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Յրանառայի գագաւնոչրիւնները - Երեք հսկողք կոչգեւ  
 փորձել պատանդները ազատելու - Խորհուրդ սարս-  
 տալելու - Եւսեւոյ մարաչախտ ընակոչրեանց -  
 Պիեկե և Եւսեւոյ - Եւսեւոյ կը մերժէ Պիեկե խոր-  
 հուրքը - Լաիկ կոչա - Հաւարակաւ հրաւան - Չոր-  
 րորք բաժնիկն պատանդները - Պոյ Սեկըրտե - Տ.  
 Կերեկ և Տ. Շըպրիս - Աւաջիկ բաժնիկն պատանդ-  
 ները - Սոչը - Եւսեւոյի փորձանունները - « Եր-  
 րանք, իջևանք » - Մեկնուակ - Ամերիսիկ հաւա-  
 կոչրիւնը - Գարրիի Ռանիի - Հարստ փողոցը -  
 Վարդե կը ջանայ պատանդները ազատել - Աւաջիկ  
 հարաւածը տոչոր կիկ մ'է - Երեք բանակայ մը եւ  
 ընակոչրեանց մարաչախտ Եւսեւոյի - Խաղ մը կը  
 հնարեն - « Տեսարք, կեցցէ կայսր » - Չորս բանա-  
 նայր - Կրօնաւար եղբայր կը մարի - Լուարեանց փողոց:

Արգելակողութիւն, Տ. Բոնժանի և չորս քահանայից  
 սպանումը ապստամբական զգացում մը տուաւ հսկող-  
 ներուն, որոնք սպաննական զիրք մը առին: Հանրիոն  
 փախեր էր, Բոսէ առաւօտունէն ի վեր չէր տեսնուեր.  
 Ասանէն սահմանադր էր, կը վախէր որ իր ստորակար-  
 գեաւքը ալ իրեն չհնազանդին և այս վախը ըսաւ Յրան-  
 սուայի: Սա բարկացաւ « Հրացանի բռնուեցան, ըսաւ,  
 քահանաները, շատ լաւ եղաւ, հրացանի բռնուեցաւ

մեքսիքացի սեղանաւորը, արժանի էր, հրացանի պիտի  
 բռնուին զինակիրները որոնք գող են, հրացանի պիտի  
 բռնուին քաղաքային պահապանները որ աւազակներ  
 են, և եթէ հսկողներն ալ կանոնաւորապէս իրենց  
 պարաքը չկատարեն, դաս տալու համար, անոնք ալ  
 հրացանի պիտի բռնուին »:

Հսկողները լուցին. բայց մէջերնէն երեք հոգի  
 Պինէ, Բուրկինյոն և Գոտման, մէկմէկու հարցուցին  
 թէ ժամանակը չէր օգնութեամբ զինուորական պա-  
 տանդներուն, ապստամբութիւն մը փորձել, ազատել  
 զամենը և փախչիլ այս անիծեալ տնէն: Նախ վիպա-  
 սանական հնարքներ մտածեցին. պատին վրայ ծակ մը  
 բանալ, ստորերկրեայ տեղեր փորել և լուալեաց ճամ-  
 բայ մը փնտռել: Բայց այս բաններուն շատ ժամանակ  
 պէտք էր: Չէին գիտեր որ գաղղիական բանակը մին-  
 չեւ սուր եկեր է. վերջապէս մէջերնին ծրագիր մը  
 հաստատեցին որ եթէ լաւ գործադրուէր, կրնար յա-  
 ջողութիւն մը ունենալ:

Մայիս 22էն ի վեր պահապան դաշնաւորաց թիւը գրե-  
 թէ երեք հարիւր էր, որոց կը հրամայէր Վէրիկ. բայց  
 ստունցմէ շատերը երեկոյեան տներնին կ'երթային պառ-  
 կելու և կը դառնային երկրորդ առաւօտ: Գիշերը բան-  
 աին մէջ կը մնային վաթսուն կամ առ առաւելն ութսուն  
 պահապանք: Հսկողները գիտեր էին այս բանը, որոնք  
 գիտէին նաև որ դաշնաւորք գրեթէ միշտ զինով էին  
 և չէին մերժեր օղիի գաւաթ մը: Հաշուեցին որ քո-  
 վերնին հարիւր յիսուն ֆրանք մը ունէին, որով ամ-  
 մէկ մէկ գաւաթ օղի պիտի հրամցնէին և այնչափ  
 պիտի կրկնէին, որ բնաւ ոտքի վրայ չկրնային կենալ:  
 Հաշիւ ըրին որ եօթնասուուն ֆրանքի օղի և ապէնտ  
 բուական էր վաթսուն կամ ութսուն դաշնաւոր բոլո-  
 բովին թմբութեան մէջ ձգելու համար: Երբոր լաւ  
 զինավնային այն ստուն հսկողներէն մէկը պիտի երթար  
 առաջին բաժնիւր ուր փակուած էին զինակիրները,  
 յիսուն հոգի մը, ամենն ալ Ղրիմու, Իտալիոյ և Մեք-  
 սիքայի պատերազմներուն ծեր զինուորներ, վարժ գէնքի  
 և յանգուզն գործողութեան և զանոնք պիտի հանէր:  
 Ասոնք պիտի զիմէին դաշնաւորաց կայսրանը, հրա-











Ժամը գրեթէ չորս էր երբ պահապանապետը մը-  
տաւ Չորրորդ բաժինը: Իր առաջին խօսքը բնաւ տա-  
րակոյս մը չթողուց պատանդներուն, կը տեսնուէր որ  
բազմութեամբ պիտի տարուէին. « Աւշադրութիւն :  
պատասխանեցէք երբ ձեր անունները տամ, տասնու-  
հինգ հաս կուզեմ. արդէն մէկը կայ. (այս ըսելով  
կրէֆը կ'իմանար) ». Իւրաքանչիւր ոք պատասխանեց  
առանց տկարութեան: Ռամէն չէր կրնար կարգաւ ա-  
նուն մը. « Բէնիմյի... Բէնիմէ... » Տ. զը Բէնիմի, յի-  
սուսեան, երբեմն քաջանայ Ղրիմու բանակին, մօտեցաւ  
և ըսաւ « Ես եմ », և միացաւ ՏՏ. Կորէրի և Օմի-  
վէնի. Պօլ Սէնյըրէ ալ կանչուեցաւ, գրկեց իր ընկեր-  
ներէն մէկը, սխմեց ուրիշի մը ձեռքը, որոնք Սէն  
Սիւլվիտ իրեն ընկերները եղած էին և մէկտեղ բռնուած  
և դնաց կայնեցաւ միւս գոհերուն քով: Պահապանա-  
պետը երկու անգամ համրեց. քաջանայ մը ուզեց զը-  
խարկը առնուլ, ուրիշ մը ուզեց փոխել հողաթափներն,  
Ռամէն կրկնեց ինչ որ ըսեր էր Տ. Բոնիմանի « Ալեւ  
լորդ է, այսպէս աղէկ էք »: Տասնումէկ եկեղեցական-  
ները և երեք աշխարհականները հետեւեցան Ռամէնի,  
որ զիրենք արքեպիսկոպոսին գացած ձաճէն շտարաւ  
այլ դէպի մեծ սանդուխը: Այս փոփոխութիւնը միա-  
ցողներուն յոյս մը տուաւ, որոնք ուշ կը դնէին լսելու  
հրացաններու միարան նետուելուն ձայնը սպաննութեան  
համար բայց բան մը չսեցին: Այսու հանդերձ չորրորդ  
բաժնին մնացած պատանդները գրեցին իրենց վերջին  
կամքերը և պատրաստ կեցան: Իսկ դացողները տա-  
րուեցան գրութեանց սենեակը:

Երբ Ռամէն պահապանապետը զանոնք կանչեր և  
համրեր էր, Պիկոն ենթապահապետը գացեր էր առա-  
ջին բաժինը, ուր երկու ամսէ ի վեր զինակիրները կը  
բնակէին ուրիշ տասնուհինգ քաղաքային հսկողներու  
հետ՝ Մարտ 18ին կալանաւորուածք: Հոն կոչ չ'ըրաւ  
Պիկոն. այլ ըսաւ միայն: « Կարգի մտէք և իջէք ».  
Յիսուսէն աւելի անձինք կային հոն որոնք սրահներուն  
մէջ կը պարտէին, որովհետև դռներին ամրողը օրը  
բաց կը մնար: Անոնցմէ մէկը հարցուց « Ինչո՞ւ կ'ի-  
ջեցնեն զմեզ, ո՞ւր պիտի երթանք » Պիկոն որ Ֆրանս-  
սուայէն խրատուած էր, ըսաւ անոնց որ բանախն մէջ

ալ հաց չկար, և պիտի տարուէին Բէլլիլի քաղաքա-  
վարչութեան պալատը ուր հաց ընդունելով, աղատ  
պիտան ձգուէին: Չինուորները վաղեցին խցիկներն, պար-  
կերներն կանախներն առին, քէփիներն շտկեցին զուգնուն  
վրայ և սրահին մէջ շարուեցան: Միայն բնակութեանց  
մարաջախան Ժէանդի կատածեցաւ և նայեցաւ Գէօր-  
ման հսկողին երեսը որ այն երեք սպասաւորութիւն ուզող  
հսկողներէն մէկն էր: Հսկողը իրեն ուժով նշան մը  
ըրաւ որ կը նշանակէր « Մէ իջնաք »: Ժէանտի ան-  
շուշտ հասկցաւ բայց միշտ վարժած հրամանի կար-  
գամ որ իրենց համար « բան մը չկար, այլ քահա-  
նաներուն համար էր », զարձաւ իրեն մարդկանց եւ  
ըսաւ « Երթանք, իջնանք »: Մեկնեցան զոյգ զոյգ,  
քայլերնին նշանակելով, իբրև թէ մէկ հսկողութեան  
մը երթային:

Ամենը մէկէն միացուցին մեծ խօսարանին մէջ:  
Կմիլ Կուա, Ֆրանսուայի հետ միարան եկաւ տեսնելու  
պատանդները, շուտ մը աչքովը համրեց. երեսունեօթին  
զինակիր և տասնուհինգ քաղաքային պահապանք: Նշա-  
նով ցըցուց Ֆրանսուայի սպաննողներուն գունդը եւ  
ըսաւ որ « Եստ եմ »: Քաղաքային պահապանները  
խցիկներն զրկուեցան: Երբ Գէօման հսկողը բաժնին  
վանդակադուռը կը գոցէր, տեսաւ զինակիրներէն մէկը  
որ պահուրտեր էր և չէր գացած ընկերներուն  
հետ. կանչեց Բուրկինյոն հսկողը զինքը հիւանդա-  
նոցի բաղնիքին կողմը հրեցին և պատուիրեցին անշարժ  
կենալ և շտեմնուիլ. գոնէ այդ ազատեցաւ:

Սպաննութեան գունդը պաշարեց զինակիրները, քա-  
ղաքացիքը և քահանայքը. Կմիլ Կուա ձի հեծաւ եւ  
ամենը մեկնեցան: Կտրիճ անձինքներու համար ծիծաղա-  
կան բան մ'էր պահպանութեան գունդը. բայց ինչպէս  
ըսինք այդ զինուորներուն սրտին մէջ արութիւնը մե-  
սեր էր, կարծես միայն մեռնելու քաջութիւնը մնացեր  
էր ներսերնին: Իսկ քահանայք կը պատկանէին կրօնքի  
մը որուն Աստուածը ըսեր էր իր առաջին առաքեալին.  
« Սուրբ պատեան զարձուր ». բնաւ չէին մտածեր  
կուռելու և ցած ձայնով կ'սողօթէին:



Թաղին այն քիչ անձինք զորս Հասարակութիւնը պատնէշներու վրայ չէր քշած, կանայք, ծերք, զբռներնէն ելած ցաւելով մը կը զիտէին այս խումբին անցքը: Ոտքէտի փողոցին ծայրը կնիկ մը պռուց «Ինչ կեցեր էք, փախէք»: Սպազովապէս ամեն տուն պիտի բացուէր զաննք ընդունելու: Բայց պատանդներէն մէկը շմտածեց փախչելու: Ժեանտի առջևէն կ'երթար բարձր ուսով իբրև զօրահանդէտի մը: Կարծան զէպի ձախ և մտան Մէնիլ Մոնտան բուլվարը, քայելով աջ կողմէն ուր կայ Պէր-Լաշէղի պատը, ամենը համակրանօք մը կը նայէին: Հոն ուր բուլվարը Օբէրքամիֆ փողոցին զիմաց կէս լուսին մը կը ձևացնէ, Կուա կեցնել տուաւ խումբը, կը զգար որ եթէ պատանդները ընդզիմանան, քիչ մարդ ունէր և հոն պատնէշին վրայ եղող զվաւորէն նոր օգնութիւն ուղեց: Ամբողջ զունդ մը միացաւ իրեն որուն կը հրամայէր Գալիլուանուամբ մէկը, որ սովորական ժամանակ տանիքները շտկող էր և ապստամբութեան միջոց գնդապետի պաշտօն կը վարէր: Ամենը մէկէն սկսան կտրել Մէնիլ Մոնտանի երկայն խճուղին: Քիչ մը ժամանակ մարդկանց անոյ շերտներէն խարուեցան, և կարծեցին որ Բէլլիլի քաղաքավարչութեան պալատը կը տարուն: Միայն մէկ ծեր քահանայ մը շատ շարջրեցին որովհետեւ չէր կրնար երազ քայլել և Պօլ Սենյըրէ օգնելու համար անոր թեւ մտաւ և այնպէս կատարեցին բոլոր այս ցաւալի ուղևորութիւնը:

Երբ Պիւէրլա ճամբան մտան, թշնամի բնակչաց մէջ գանուեցան որոնք սկսան քար նետել պատանդներուն «մեռնին գտակաւորները» պռուլով: Բոլոր զինեալ դատարկապարտներու ծաղիկը, բոլոր պատերազմին փրփուրը, բոլոր սրիկանները, աւազակները, վրիժաւուք, պատերազմէն փախչողները լեցուեր էին Բէլլիլի և Մէնիլմոնտանի բարձունքուն վրայ: Վաճառանոցին զիմացը եղած հրապարակին վրայ կեցեր էր հետաքրքրեմունտ տեսարանը. թնդանութիւններու խուլ որոտումը կը լսուէր ինչպէս փոթորիկի ժամանակ և օդոյն մէջ կը բարձրանար ամպանման ծխով: Տեսարանը մեծղի էր. աշտերը կեցան զիտելու: Այս վարկենիս հասան

Բիւա-Շոմանի քով յաղթուած դաշնաւորները որոնք սկսան կանչել «Մեզի տուէք գերիները որ հրացանի բռնենք»: Ամբոխը անմիջապէս գերի համարեցաւ պատանդները և սկսան մէկմէկու պատմել որ այդ զինակիրները քահանաները «ժողովրդեան» վրայ քաշեր էին Սըզէնի փողոցին պատնէշին քով:

Պատանդները մօտեցան 20դ Շրջանակի քաղաքավարչութեան պալատան: Հոն դուռը կեցեր էր Գալիլուանի Ոսանիլիէ զարգարուած իր կարմիր գօտիով և կը բերէր Ոսանիլիէ զարգարուած իր կարմիր գօտիով և կը նայէր եկող խումբին: Անմիջապէս ըստ Լամիլ Կուայի «Բոլոր այդ մարդիկը ներս մացուր»: Երբ պատանդները զիմացէն կ'անցնէին իրենց կանչեց «Քատորդ մը ունիք թէ որ կ'ուզէք կտակ ընել»: Մէկէն ձայն տարածուեցաւ որ պատնէշներուն վրայ բռնուած գերիները բերուեր են և հրացանի պիտի բռնուին: Ամբողջ թաղը ուրախութեամբ լեցուեցաւ. խմորները գինեատուններէն դուրս թափեցան, զինուորները թողուցին իրենց պահպանութիւնը և փութով պալատան զիմաց խոնկեցան զինեալ երկու հազար հոգի: Քսան վայրկեան վերջը պատանդները դուրս ելան, ամենէն առաջ ժեանտի, յետոյ Պարիզու քսանեւթն պահապանները, ամենէն տասը զինակիրք, չորս «աշխարհականները», ամենէն վերջը քահանայք և խեղճ պղտիկ Սենյըրէն, աժգոյն բայց միշտ օգնելու համար հայր Տիւֆֆիլի թեւէն բռնած:

Գարբիլի Ոսանիլիէ որուն զիմացէն կ'անցնէին ամեմեռն, բարձրաձայն կանչեց Լամիլ Կուայի «Տօր աւանք բոլոր հրացանով սպաններու պարիսպներու տակ»: Ամբոխը մեծապէս ուրախացաւ. անմիջապէս տեսակ մը, իր խելքին համեմատ յուզարկ մը կազմեց յաղթական գնացքի մը պէս: Կերակուր ծախող կնիկ մը կարմիր հագած, ձեռքը դաշոյն, առնացի ձի հեծած ամենէն առաջ կ'երթար, յետոյ թմբուկ զարնողներու զունդ մը որուն կը յաջորդէին փողահարներ, որոնք կանոնաւոր հնչիւններով կ'օգնուէին արդէն ալքոհով և արիւնով ոգևորուածները. երաժիշտներուն ետևէն կու գար քսան տարուան երիտասարդ մը ճարտար եւ ձկուն որ հրացանը խողցնելով կը կաքաւէր: Ամբոխը կը կրէր պատանդները, կնիկները ձեռքերնին «կ'եր-















Ռէւյի փողոցը, Սէնտ-Սնաուան արուարձանը և Տրոնի հրապարակը: Այլ թեւ յետ մոլեգին ընդգիմու-  
թեանց կրցեր էր Բուլլլար Գալու և Բուլլլար Մարտիէի  
զիրքերուն տիրել որով կրնար բաղխել Բէլլիլի բարձուն-  
քը: Չառ թեւ անցնելով Բուլլլար Տամիլը, տիրելով Վիլ-  
լէտի բուլլարակին, հաստատուեր էր Բուլլլար Լընուար և  
Սէն Մարտէն ջրանցքին սփանց վրայ մինչև Ռւբի  
գուռը որով և կը սպառնար Բիւտ-Շամնի: Այսպէս  
աղեղ մը կազմելով շուտով պիտի շրջապատէին սպաստե-  
լութիւնը:

Հասարակութիւնը հոգեվարքի խոկալը սկսեր էր:  
Մայիս 27ին վերջին գումարում մը եղեր էր Հաքսո  
փողոցին պզտիկ տան մը մէջ ուր կը բնակէր Վէլլիլիէ  
և որ դաշնաւորաց ճարտարապետական օգնող գունդին  
սպայախուտի ծառայած էր. հազիւ տասուերկու անձինք  
էին: Հոն յետ մէջերնին բաժնելու վերջին եղած դրամը  
և սահմանելու որ իւրաքանչիւրը իր գիտցածին պէս  
կուտի, սպա սկսան յարձիլի իրենց ընկերներէն անոնց  
զէմ որոնք զիրենք թողուցեր էին: Կը փափագէին  
զանոնք գտնել հրացանի բռնելու համար: Կործանման  
մոլեգնութիւնը յետին ծայրը հասած էր: Մայիս 27ին  
առաւօտ Բանյըլոյէն զէպի Պանտէն գուռը շարժ  
հրանօթներնին սկսան խառն ի խառն առանց նշանի  
սուձրեր թափել մայրաքաղաքին վրայ, գերմանացի  
բանակը որոնք մօտ գիւղերու մէջ էին, զարմանքով  
մը կ'որստխանային տեսնելով որ ընկերական առելու-  
թիւնը աւելի կը գործէ քան զքաջութիւն և հայրե-  
նասիրութիւն: Հասարակութեան երկու գլխաւոր ան-  
ձինք Իպպոլիտ Պարան և Անուզ փորձեցին բանակցիլ  
նաև Գերմանացիք յետ պտտցնելու նաւիրարները  
սպայէ սպայ, զանոնք ամնչցած ետ ճամբեցին:

Երբ հասարակավարելք կը փնտռէին մէկգմէկ  
սպաններու համար և ուրիշները ապաւէն կը խնդրէին  
գերմանացի բանակներէն, Ժիւլ Աւերս, Տը շրջանակին  
երբեմն քաղաքավարիչը, ուրախութեամբ կը հանէր  
Բէլլիլի բարձունքներուն վրայ: Այն բարերազգու-  
թեամբ որ միշտ ունին խենթերը, չենք գիտեր ինչպէս  
կրցեր էր կարել անցնիլ Պարիզ. և այս ուրախ լուրը

կը բերէր որ քաղքին կեդրոնը զինուոր չէր մնացած  
և թէ շատ զիւրին էր տիրելու, բաւական էր քիչ մը  
« մղուի »: Այն ատեն Հասարակութիւնը յաղթական  
պիտի հանդիսանար մշտնջենաւորապէս և պիտի սկսէր  
ընդհանուր երջանկութեան դարը:

Օրինաւոր վարչութիւնը յաղթութեան երկրորդ օրը  
գլխաց այս խեղճ մարդուն վրայ և զինքը նորէն Շա-  
րանթոն (Յիմարանոցը) գրաւ, ուսկից պէտք չէր եր-  
բէք ելած ըլլար:

Թ. Ֆէրրէ չէր պատերազմեր. իր բնաւորութեան  
մէջ կը տեսնուի որ ատրիկայ չկար. հիմայ առաջուրնէ  
աւելի պաշտօնայ ընդհանուր ապահովութեան, խիղճը  
ծանրացած կը գտնէր քանի կը մտածէր որ դեռ շատ  
պատանդներ կան. որովհետև միայն Պըտիտ Ռաքէտի  
մէջ կային հազար երեք հարիւր երեսուն և երեք զիւ-  
նուորք, այլ և այլ զինուորանոցներէ բերուած: Կրանդ  
Ռաքէտի մէջ աւելի քիչ էին. կային հարիւր վաթսուն  
և եօթը եղեռնական դատապարտուածներ և երեք հա-  
րիւր տասնուհինգ պատանդք, որոնք մէկտեղ չէին, այլ  
զանազան բաժիններու մէջ:

Կրանդ Ռաքէտի մէջ ամենայն ոք գիտէր զինակի-  
ներուն և միւս պատանդներուն վախճանը: Քաղաքային  
պահապանք երկրորդ բաժնին մէջ, մեծապէս զայրու-  
ցեր էին. Ղրիտու և Իտալիոյ յաղթական զինուորները  
կը սպաննուէին առանց իրենք զիրենք կրնալ պաշա-  
կանելու: Բարկութիւննին աւելի կը սաստկացնէր ա-  
նօթութիւնը, որովհետև առջի օրէն հացը լըմնցեր էր:  
Քիչ քիչ զուլս վերցնելու զգացումը սկսաւ տարածուիլ  
սրտերուն մէջ, կ'ըմբռնէին որ ալ ո՞ր և իցէ հնազան-  
դութիւն զիրենք կարող չէր փրկել, որ իրենք մարդ-  
կային կենդանիներ էին սահմանուած մորթուելու, և  
միայն յուսահատական արութիւն մը զիրենք կրնար  
փրկել: Սկսան մէջերնին փախալ որ պէտք էր պատ-  
նէշներ շինել և երթալ գութեանց սենեակը թէ՛ որ  
կանչուին: Նայն խիկ եղեռնական դատապարտեալք ու  
րոնք ժողուած էին կեդրոնական գաւիթը, սուձրերուն  
պայթիլը տեսնելով բանտին տանիքերուն վրայ, մեծա-  
պէս տագնապած էին և ահուգողի մէջ՝ նաև զայրացած  
Հասարակութեան զէմ: Զինակիրներուն սպանութիւնը



իրենց օրինաւոր կ'երևար, բայց քահանային և մանաւանդ արքեպիսկոպոսին սպանութիւնը սաստիկ բարկացուցեցեր էր զիրենք: Առաւօտը իրենց հաց չէր բաժնուած: Կը կարծէին որ զիրենք ալ հրացանի պիտի բռնեն: Աշքովին կը համբէին զիրենք և բազմութիւ կը գտնէին և կ'ըսէին մէջերնին. « Աէաք է մենք զմեզ պաշտպանենք »: Կը հաշուէին որ գաւթին քարայտակով իրենք չմեռած, գոնէ քանի մը դաշնաւոր կրնային սպաննել: Ուսմէն պահապանապետը և Պիզոն ենթապահապանապետը կը ջանային հսկողները քաջաւերել, որոնք կարծես վհատեալ էին: Ուսմէն մէջերնին ծածուկ կըսէին « փախչինք այս դժոխքէն » . ուրիշները կը պատասխանէին. « կենանք, պատանդները պաշտպանելու համար »: Ծրանաւա՛ մեծ օրերու տարազով, կարմիր գօտին ուսընդանութ, սորձանակը գօտւոյն մէջ, սուրը գետինը քարչ բերելով և ոսկէ երկղ քէփին ականջներուն վրայ, իր մեծութիւնը ամեն կողմ կը պտտցնէր և կարծես մեծ պատահարի մը կը սպասէր: Ստէպ փողոց կ'իլլէր և կը նայէր Ռաքէտի փուղցին վերի կողմը. շատ անգամ Կրովիս Բերան՝ Պըտիա Ռաքէտի տեսուչը եկեր էր և խօսեր էին մտերմարար:

Ճամը մէկը կար, երբ Ֆէրրէ ձիով եկաւ Կրանդ Ռաքէտ. քովէն կուգային ուրիշ երկու ձիաւորներ ալ և ետեւէն դաշնաւորաց շօկատ մը, մէկ գունդ մը մըտաւ առաջին գաւթիթը, միւս մարդիկ զուարը հրապարակին վրայ մնացին: Ֆէրրէ գրութեանց սենեակը գնաց ուր զինքը ընդունեցաւ Ծրանաւա: « Կուգանք սանելու Ժողովրդապետները և քաղաքային հսկողները »: Այս վարկենիս Բուրգինյոն հսկողը մեծ վանդակազուօր կը գտնուէր և լսեց Ֆէրրէի խօսքերը: Ֆէրրէ իրեն պատուիրեց կառք մը գտնելու և երթալ պահապան զինուորաց սպրուստ բերելու, որոնք տրանջացեր էին առջի օրուընէ անօթի մնայնուն: Բուրգինյոն հրամանը անցուց միայն սոգգային պահապանաց և բանտին կէսը վազելով մտաւ հիւանդանոցը ուր իր Պինէ ընկերը ծառայութեան էր և կանչեց անոր. « Հոն են, եկաւ սպաննութեան ամենիւ քահանաները և քաղաքային հսկողները »: Պինէ պատասխանեց « Մէկը տա-

լու չէ »: Պինէ հին զինուոր մ'էր, քանի մը տարիէ ի վեր բանալի ծառայութեանց մէջ մտած. պատերազմի ժամանակ նորէն գնաց զինուորութեան, յիշուցաւ օրակարգներու մէջ և նշան ստանալու առաջարկուեցաւ: Չինադադարումն ըլլալով, նորէն եկաւ բանալի իր ծառայութեան մէջ մտաւ: Պատմեցինք որքան աշխատեր էր ազատելու Պարիզու պահապանները: Հազուադիւս էր քաջութիւն մ'ունէր՝ պարտատ իր կենանքը վտանգի զնելու արի գործոյ մը հաստատեց. ապստամբեցնել ելեանան մէջ ծրագիր մը հաստատեց. ապստամբեցնել ելեանան կան դատարարեալները, վառել պատանդները ընդդիմութեան և անոնց հետ միանալ: Բուրգինյոն և ինքը կեդրոնական զբառնեակը գացին, առին երկրորդ երրորդ վանդակազաներուն և աշխատանոցներուն բանալիները:

Գատապարտեալ կալանաւորները գաւթին մէջ կը պտտէին. Պինէ գտնոնք աշխատանոցները մտցուց և ըսաւ. « Եկան զձեզ կ'առնուն հրացանի բռնելու համար, զինուեցէք ձեր գործիքներով. մենք ձեզի հետ ենք և ձեզի կ'օգնենք »: Ամենքը քաղցին առին սրոց, մուրճ, կացին, ժանկք, և ինչ որ գտան և գացին շատուցան սրահներուն մէջ պատրաստ կուտելու: « Կըրնանք ձեր վրայ վտահ ըլլալ » հարցուց Պինէ: Գատապարտեալները « Այո՛ » պատասխանեցին: Պինէ պատուիրեց որ աշխատանոցներուն մէջ կենան՝ ուր աւելի սպառնալ էին քան թէ գաւթին մէջ և Բուրգինյոնի հետ մէկտեղ ելաւ վերը գէպ ի բաժինները: Բուրգինյոն մտաւ երկրորդին մէջ ինքը երրորդին մէջ: Բուրգինյոն երկու բառով մը բացատրեց կալանաւոր ենթապայի երկու բառով մը բացատրեց կալանաւոր ենթապայի մը որ եթէ կանչեն զիրենք, վար չ'իջնան. որ եթէ իրենք զիրենք յուսահատաբար չ'պաշտպանեն, չ'մնցած է իրենց համար. որ ալ ժամանակն էր ամեն փայտ զէնք ընել և շփողուլ որ մէկը բաժնին մէջ մտնէ. « Ես հիմայ կ'երթամ և կուգամ օգնութեան գտնէն, հոն երմայ կ'երթամ և կուգամ օգնութեան գտնէն, հոն երկու պահապան գրէք, զարկէք ով որ ձեզի նշանարանը կու պահապան գրէք, զարկէք ով որ ձեզի նշանարանը ըլլայ »: Մարտէն ըսաւ: Պահարէ. և նշանարանը ըլլայ « Մարտէն » բառը: Պատանդները ուղեցին որ մէջերնին կենայ. բայց ինքը համոզուցուց որ լաւ էր երթալ և տեղեկութիւններ տանալ: Թողուցին որ երթայ և իրենք սկսան աշխատիլ:



Այս միջոցիս Պինէ մտեր էր երբորդ բաժինը օգնութեան դռնէն և գոչեր էր « Պատանէշ բարձրացուցէք, պատանէշ բարձրացուցէք »: Անմիջապէս կարգի գրուեցաւ ինչպէս ղէմ պիտի կեցուէր. ժողովոցին բոլոր խոտէ և բրդէ անկողինները յատակէն մինչև առաստաղ մէկ պատէն միւս պատ լաւ մը զոցեցին, միայն բարձրը ծակ մը թողուցին զիտերու համար եւ կաւորները: Հանեցին գեանի քառակուսի աղիւսները, որպէս զի քարկածէն յարձկողները անկողիններուն տակի տակտակները ձեղքեցին, ծայրերը սրացուցին որպէս զի կարենան սրաքներու պէս զիմացիններուն մարմնոյն մէջ խօթել. քակեցին երկաթէ անկողինները և երկաթները առին հարուածելու համար: Կային հոն տասը քաշանայք որոնք կ'աղօթէին, կը խրախուսէին աշխատողները և կ'օրհնէին: Պինէ ամեն կողմ կը հասնէր կը խրախուսէր զամենը և կ'երզնուր կամ զիրենք խաբկուր կամ միտքան մեռնելու: Երբորդ բաժինը ուղեց հաղորդակցութիւն ունենալ երկրորդին հետ. հանեցին աղիւսները, փրցուցին տակտակները և շորտաք արամաղձով ծակ մը բացցին: Անբացատրելի սրբախութեան վայրկեան մը եղաւ երբ երբորդ և երկրորդ բաժնի պատանգները կրցան հաղորդակցութիւն ունենալ մէկմէկու հետ: Երկրորդ բաժնին պատանգները հաւաքուեցան ծովին ներքև՝ գլուխին բաց, վզերնին ծոած. տասը քաշանայք ձեռքերնին երկնցուցին օրհնեցին զանոնք և արձակման ձևը ըսին. որովհետև ամենայն ոք մահուան կը պատրաստուէր: Ֆէրբէ և Ֆրանսուս մէջերնին պատանգները « հանելու » նկատու մամբ կարեւորները սահմանելէն վերջը, հրամայեցին Ռամէնի զանոնք իջեցնելու. նախ քաղաքային հսկողները և յետոյ « ժողովրդապետները »:

Պահապանապետը հսկող մը զրկեց կեդրոնական գրասենեակը. երկրորդ և երրորդ բաժնին բանալիները չկային: Բուրգինյոն ներկայ էր հոն և կը ջանար անխառն կենալու. գիտէր ուր էին բանալիները: Ռամէն կարծեց որ հսկողին մէկը սաւած է շէնքին սրեւեկեան մատին շրջանը ընելու, և հրամայեց Պիկոն ենթապաշտակապետին երթալ առնուր և քաղաքային հսկողները գրասենեակը իջեցնելու: Պիկոն շուտով զարձաւ սար-

սոված և պատմեց որ կալանաւորք պատանէշ բարձրացուցեր էին, վանդակագուները գոց են և անկարելի է մանել բաժնիներուն մէջ: Ֆրանսուս, Ռամէն, Պիկոն և քանի մը հսկողք որոնք նախանձախնդրութիւն մը կը ձեռացնէին, վաղեցին սանդուխը: Երկրորդ և երրորդ կը ձեռացնէին, վաղեցին սանդուխը: Վաղեցին կեւ բաժնիները գոցուեր էին անկողիններով. վաղեցին կեւ զրոնական գրասենեակը, ի զուր վանդակագուներուն բանալիները վնասուցին. օգնութեան դրան բանալին նայեցան. այն ալ չկար. հոն եղողներէն միայն Բուրգինյոն գիտէր ուր ըլլալը: Հսկողներուն անունները կոչեցին. միայն Պինէ կը պակսէր. « Չինքը հրացանի պիտի բռնեմ » պրտաց Ֆրանսուս:

Ռամէն փորձեց բանակցելու, գնաց մեծ գաւիթը և քիթը գեպ ի պատուհանները կը պոսար « իջէք վար, յիմարութիւն է ըրածնիդ, ձեզի գէշութիւն մը ընող չկայ »: Ի զուր ամեն ճարտասանութիւն թափեց, պատահանալ չկար: Նորէն սկսաւ « Կեցցէ Գաղղիա, տակննիս եղբայր ենք, սերմն խեղճ բարեկամներս, ամեննիս եղբայր ենք, սերմն համար »: Չինուոր մը վար իջէք սուսլիքիդ առնուր համար »: Չինուոր մը գլուխը լուսամուտէն հանեց կանչեց պահապանապետը և ձեռքերը քիթին առնելով ծիծաղական ձև մը ըրաւ. « Չանիկայ սղ սղ պիտի այրեմ » ըսաւ Ռամէն հեռանալով: Չորրորդ բաժնին պատանգները այս ամեն բանը կը տեսնէին բայց գեռ իմաստը չէին ըմբռներ: Ռամէն մտաւ դրութեանց սենեակը և ըսաւ « ճար չկայ վար իջեցնելու »: Սէքը զիպաւ Ֆէրբէի նայուածքին և տագնապեցաւ:

Կեղհանուր սպառնալու շուրթակը մեծապէս զայրացած էր և խօսքերէն կը հասկցուէին: Կանչել տուաւ Կալիս Բրիան Պրախա Ռաքէտի տեսուչը և իրեն ըսաւ « Պատրաստեցիք խումբերը. գիտցիր երեքի բամուսած պէտք է ըլլան. զուրս հանել տուր մարզիկդ »: Կալիս Բրիան դարձաւ փութով իր բանարը և Ֆէրբէ ըսաւ Ֆրանսուայի. « Քանի որ ժողովրդապետները չկան, զրկէ հոս բոլոր զինուորները. հետս կը տանիմ »: Փութով բերուեցան իննսուն և հինգ զինուորներ, որոնք լեցուեցան մուտքին գաւիթը: Երբ բանալին չէր սրոնք լեցուեցան մուտքին գաւիթը: Երբ հարկեր զինուոր մէկ կ'անցնէին զիմացինն ելան երեք հարկեր զինուոր պարկերնին կանակնին որ Պրախա Ռաքէտէն կ'ելլէին:



Գլըէկըզի ծրագիրն էր Մարտ 18էն բոլոր գերեալ զինուորները հաւաքել Ռէլիլի և Ջանայ փոփոխելու, բանակցութիւն մը փորձել Վէրսայի հետ: Տէրրէ գրութեանց սենեակը ձգելէն առաջ ըստ որ « Ս.յս. գերիները ես կուզեմ տանիլ. զեռ ուրիշ երկու խումբեր ալ կան զորս պիտի տանիմ. աշխատեցէք ինչպէս որ կրնաք տալու ինծի քաղաքային պահապանները եւ ժողովրդապետները. անձամբ կուզամ գանձեք տանելու, և վայ ձեզի թէսոր անոնք չ'առնում»: Ս.յս ըսելով ձի հեծաւ և ձիւղ այն տանն հասաւ հրապարակը երբ լսուեցաւ ահաւոր գոչուն մը « կեցցէ՛ բանակը »: Թաւ զին բոլոր բնակիչք, խանութպանք տեսնելով երկու Ռաքէտէն ելած զինեալ խումբերը, պժգոցսած Հասարակութեան սպանութիւններէն, տեսնելով զինուորները ինքնարեւոյրար գոչեր էին « կեցցէ՛ բանակը »: Չինուորները ծածանեցին իրենց քէփիները և պատասխանեցին « կեցցէ՛ ժողովուրդը »: Չինուորք շուեցին իրենց ծախահարող ամբոխի մը մէջէն առանց վնասի: Տէրրէի մեկնելէն վերջը Ռամէն պահապանապետը նորէն սկսաւ բանակցել երկրորդ և երրորդ բաժնին կալանաւորաց հետ: Տեսնելով որ համոզուածեամբ չ'ըլլար, ուզեց բանութիւն գործածել: Մտաքին պահապաններէն քանի մը հոգի հեար տուաւ և անոնց զուխ անցնելով սկսաւ սանդուղիները ելլել. հրացանի ձողերը մտցնել տուաւ անկողիներուն մէջ. բայց հարուածները քանի մը հին խտուրբ ծակելէն զատ ուրիշ արգիւնք մը չ'ունեցան: Մտածեց այն տանն պատնէշներուն կրակ տալով պատանդները ծխով խղզել: Բայց պատնէշ շինողները կանխաւ մտածեք էին եւ վանդակազբանց մտա միայն բրդէ անկողիները դրած էին և խտուրբները ետեւ, որոնց Ռամէն և իրենները չէին կրնար հասնիլ: Բրդէ անկողիները այնքան հին և գործածութեամբ այնքան պնդացեք էին, որ անկարելի էր մէջերնէն օդ անցնել. դարձեալ բուրդը շրունկեր ալ կը միայ միայն: Գաշնուորք փորձեցին վրան կանթեղի ձէթ լեցնելով այրել և կը դիտէին արդիւնքը. բայց բուրդերը կը միայն և չէին այրեր: Պատանդները առջի օրուրնէ անօթի միայն մեծ աման մը շուր ունէին, որով ծարուանին կ'անցնէին, չէին

ուզեր արդ շուրէն կաթիլ մը կորսնցնել կրակը մարելու համար: Սրահներուն մէջ ծուխը քիչ մը տարածուեցաւ, բայց բոլոր պատուհանները բանալով, օդայ ընթացք մը սկսաւ և առանց նեղութեան կը շնչէին:

Եղեռնական կալանաւորները կարծելով որ ուսմբէրէն կրակ գոյացաւ և թէ իրենք ոչ չ'ողջ պիտի այրին, վազեցին մեծ գաւիթը պոռպոլ կանչելով, զինուած իրենց գործիքներով և ազատութիւն կը պահանջէին: Ռամէն շուարեր էր: Հսկողները կարծես տարբեր կը հասկնային իր հրամանները և հակառակը կը գործէին. ի գուր պատանդներուն աղաչեր պաղատեր էր, բնուի գուր գառնար, պէտք էր հնարք մը մտածել:

Եւ ահա յանկարծ գաւթին մէջ ձիերու մուտքի շառաչը լսուեցաւ. Տէրրէ և Ֆրանսուա էին դաշնաւորներու գունդով մը: « Ի՞մ պատանդներո՞ւ » հարցուց Տէրրէ: Ռամէն խոնարհութեամբ պատմեց ճշմարտութիւնը: Տէրրէ միաքը զրու ինչ ալ ըլլայ ձեռք բերել պատանդները. ազատել եղեռնական դատապարտեալները և դաշնաւորաց հետ միարան յարձկել տալ վանդակազբան վրայ և զանոնք տապալել: Պէտք եւ դած հրամանները տուաւ Ռամէնի որ անմիջապէս գնաց եղեռնական յանցաւորներուն հետ խօսելու: Անոնք ի սիզբան անխտահարութեամբ ետ քաշուեցան: Ռամէն ըսաւ իրենց « կանչեցէք, կեցցէ՛ Հասարակութիւն եւ կ'ազատիք »: Կալանաւորք կանչեցին « կեցցէ՛ Հասարակութիւն »: Գաշնուորք պատասխանեցին « կեցցէ՛ն դատապարտեալք ». որովհետեւ ազնուութիւն փոխադարձ պէտք է ըլլայ: Խառնուեցան մէկմէկու հետ եւ եզրայրացան: Մահուան դատապարտեալ մը ձեռքը հրացան կը պոռար « Ո՛ր է Պինէ որ սպաննեմ ». Ռամէն ձեռքէն հրացանը առաւ:

Ռաքէտի հրապարակը, առաջին գաւիթը, գրութեան սենեակը լեցուեր էր դաշնաւորներով և հետաքրքիրներով: Կալանաւորք միանալով ազգային պահապանաց՝ Ռամէնի առաջնորդութեամբ սկսեր էին երթալ բաժնիներուն վրայ յարձակումը փորձելու, երբ այս ամենքը յանկարծ ազգաւներու թուշու պէս վարկենէ վարկեան անհետացան: Երբէք թատրոնի մը



այնքան երազ պատահած չէ տեսարանի մը փոփոխութիւնը: Կրանդ Ռաքէտի գրան դիմաց այն կամարին ներքեւ ուր էր սղգային պահապանաց կայարանին գուռը — խեղկատանկ մը — հանճարեղ մէկը — շուտ բաժ մը, կանչեր էր «Ահա Վէրապլցեք»: Փախչող փախչողի եղաւ: Ֆէրրէ, Ֆրանսուս նետուեցան ձիերու վրայ, դաշնաւորք քովի փողոցներէն փախան, կալանաւորք կայարանին մէջի հրացանները առնելով, հրապարակը վազեցին: Բանտը երկու վարկենի մէջ շարագործ հիւրերէն ազատեցաւ: Այնքան էր վախերնին որ ալ չգործան: Բանտը ազատ էր: Կրկորդ և երրորդ բաժնին պատանդները պատուհաններէն ամեն բան տեսեր էին. բայց Պինէ խորհուրդ տուաւ տեղերնէն շարժելու մինչև որ գաղղիացի բանակը չդայ. դուրս ելլելը ներս մնալէն վտանգաւոր կը համարէր: Բայց չորրորդ բաժնին պատանդները քանուելիք հոգի, որոնցմէ տասնուվեցը եկեղեցական, առանց շատ մտածելու իրենց ընկերներուն ամանց կանչելէն վար իջան և սկսան յորդորել երկրորդ և երրորդ բաժնին պատանդները «Ի՞նչ կեցեր էք, ազատ ենք, վար եկէք»: Իրենց պատասխանեցին «Ո՛չ, մի երթաք, ներս մտէք, դուրսը կը սպանուիք»: Սակայն չտեցին կամ շուղեցին լսել եւ թողուցին Կրանդ-Ռաքէտը:

Գերապայծառ Սիւրա՝ աւագաբերկաւագ Պարիզու, միացաւ հրապարակին վրայ Տ. Բէքուրի և Տ. Հուլիւնի. Ռաքէտի հրապարակը մարդ չկար. մասն Սէն Մորի փողոցը՝ Պրէնս Լեօէն բուլվարը անցնելու համար. Շարոնի փողոցին քով բռնուեցան: Գերապայծառ Սիւրա անխոհեմ պարզութեամբ մը ըսաւ որ «Քաշա՜նայ եմ և Ռաքէտէն ելայ»: Տարուեցան մինչև բանտին պատը, կնիկ մը տարճանակի հարուածով Լախլա՜խեց Գերապայծառ Սիւրայի գլուխը, Տ. Բէքուր և Տ. Հուլիւն՝ քարոզիչ, հրացանի բռնուեցան: Փախչողներէն ամանք կրցան առանց վտանգի ազատի. ուրիշներն ալ յետ շատ մը վտանգներ անցնելու, ողբապատ գարձան Կրանդ-Ռաքէտ և Տ. Տրէնկար բանտին գեղավաճառը զիրենք ընդունելով տարաւ Հիւանդանոցը և ապահովուց ուր չվախնան: Մահուրէն հրաշքով ազատուցներուն մէջ էին Տ. Շըլրիս և Ռաբիւ ոտակաւ

նապետը: Սա ալ բռնուեցաւ դաշնաւորներէն Սէն Մոր փողոցին մէջ, հարցուցին իրեն ո՞վ ես՝ «Խեղճ եղեանագործ եմ, ըսաւ, Ռաքէտէն փախայ, թողուցէք որ երթամ»: Գաշնաւորք կը տատանէին երբ կնիկ մը կանչեց որ «Լաւ մարդ է, բան մը մի ընէք — փախիր», և Տ. Ռաբիւ շարունակեց իր վազելը գրնդակներու սուղններու մէջ: Հազիւ Բասակլան մեծ խահուէն անցեր էր երբ մէկը իրեն պոսաց «Լ՛հ, մարդ ուր կը փախչի»: Տ. Ռաբիւ միտքը զրաւ որ այս անգամ լնցաւ. դարձաւ և քաջ ոտակաճաղեակ պէս փոխանակ մարդուն երեսին, նայեցաւ սրունքներուն եւ տեսաւ կարմիր տաբատը: Օրինաւոր բանակին սպայ մ'էր որ զինքը տարաւ Ասիստանս պիւշչիկ՝ ուր ան միջապէս ճանչուեցաւ: Ինքզինքը եղեանագործ մը հուշակելով կրցեր էր ազատի. մինչդեռ Գերապայծառ Սիւրա սպանուեցաւ, որովհետեւ խոստովաներ էր յայտնուպէս քահանայ ըլլալը: Այս երկու զէպքերը քովէ քով գնելով կրնան Հաստարակութեան պատմութիւնը կազմել: Երեկոյեան ութին միջոցները Ֆրանսուս բանտը եկաւ, զնայ իր սենեակը, քանի մը կապոց շինեց, զորոնք տարին իր ընկերները, և բոլորովին մեկնէլէն առաջ հարցուց հսկողի մը «Ուրեմն պատանդները: — «Միշտ պատնիչած են» պատասխանեց պահապանը — Լաւ, ըսաւ Ֆրանսուս, կ'երթամ Պէր Լաշէզ թնդանօթի հարուածներով կործանել Ռաքէտը»: Ծիծաղական սպանուալիք: Կոյն օրը առանց մէկ հարուածի մը գերեզմանոցին տիրեր էր գաղղիական բանակը:

Այն զիշերը Ռաքէտի մէջ շատ ծանր անցաւ: Երրորդ բաժնին տասը քահանայքը, ութսունուերկու զինուորները, երկրորդ բաժնին քառասունուերկու քաղաքային հսկողք, տասը թնդանօթաճիգ քանուշորս ժամ էր անօթի էին: Վանդակադրանց քով պահապաններ զրեր էին և փոփոխակի կը հսկէին: Գուրբ լուծիւն էր. մէկմէկու կը հարցնէին «Ո՞ւր են վերստայցիք»: Կիրակի առաւօտ Մայիս 28ին Լատուր հսուկողը որ մուտքի դրան պահապան էր, լսեց որ դուռը կը հրեն, աչքը զրաւ զրան ծակին և տեսաւ որ կանոնաւոր բանակին հրացանակիր նուաստեաց գունդ



մ'էր. մէկէն վազեց բացաւ և իր կանչը, « Վերջապէս  
ահա Գաղղիա » կրնայ գաղափար մը տալ իր զգա-  
յածին :

Պարզ հսկողը իմացուց Պրաս հազարապետին, որ  
կը հրամայէր նաւատեսաց, պատանիշեալ պատանդներուն  
վիճակը, առանց հացի և ջուրի անշուշտ մեծ նեղու-  
թեան մէջ պէտք էին գտնուիլ և փութով օգնելու էր:  
Գիմեցիին փութով մեծ գաւիթը և հանկէ սկսան կանչել  
պատանդներուն՝ վար իջնելու . բայց անոնք չէին  
իջնար որովհետև կարսիւր տարասներ չէին տեսներ —  
նաւատեսաց զգեսան էր հաստ կառէ տարատ և կա-  
պոյտ զլսարկ: — Ի զուր նաւատալները կը գոչէին  
« Կեցցէ Գաղղիա » և կը ցուցնէին եռադոյն զրօշը .  
բանտեալները պահուած կեցեր էին և մէկմէկու կը-  
սէին « Պատանդներնիս պահէնք »: Պրաս հազարապետը  
ըմբռնեց այս անվաստահութիւնը և համբերեց: Իրմէ ու-  
զեցին իր տետրակը, սարճանակը, քսան հրացան,  
քսան ծրար փամփուշտ: Ուզածնին շուտով վեր հա-  
նեց: Գաւառիկան չեղաւ և կատակերգութիւնը դեռ պիտի  
տւէր, թէոր յանկարծ 14դ դունդը չմանէր գաւթին  
մէջ: Կարսիւր տարասներուն տեսքը ամեն տարակոյս  
վերցուց: Տալոյեցիին անկողինները և խոտակոյտները .  
սանդուխը իջան ցտաքելներով և վազեցին ամենն այ  
գրկուելու:

« Արքեպիսկոպոսը և Տ. Բոնժանը — Հրացանի  
բռնուեցան » — կսկիծի և ստիւամի զոյ մ'էր տիրեց:  
Այդ ոճիրները կատարողը հոն չէին: Ուր գտնել զի-  
րենք: Խօսուեցաւ Վէրիկի վրայ. գիտէին որ կը բնա-  
կէր Պարմանտիէի փողոցը ուր ճարտարանոցի մը մէջ  
կ'աշխատէր . գնացին և հոն գտան խճայատակ շինող  
զորձաւորի զգեստով, ամեն այցելուաց քաղցր երես մը  
ցուցնելով: Քաշեցին բանաը բերին, համառօտ հար-  
ցաքննութիւն մը ըրին. հաղցուցին բռնի շաղիկը և կո-  
ղին հրացանի կոթի հարուած մը տալով, ձգեցին այն  
փողոցին վրայ ուսկից այնքան անտեղներ սպաննելու  
տարեր էր և ցաւալի աճապարանօք հրացանի բռնեցին  
այն մարդը, որ շատ գաղտնիքներ գիտէր: Այսպէս  
պատմութիւնը և արգարութիւնը զրկելով անգիւտ  
վկայէ մը:

Պրանտուան գտնելը աւելի դժուար եղաւ. կը  
կարծէին որ սահմանագրութիւնը անցած է: Բայց Պարեկ  
ձգած չէր: Նման աթուէն ձգուած թագաւորի մը, որ  
զիշերը կուգայ թափառելու իր պալատան չորս կողմը,  
Պրանտուա շատ անգամ մութին կրանդ-Ռոքէտի քո-  
վերը կը պտտէր « Ե՛հէ, սրբան փոխոխեալ » (E en !  
quand on est en... չունէր կարմիր գօտի, սակիերիկ  
քէփին, օղին քիչ էր և ախանջները կախուած: Այս  
փիլիսոփայական շրջագայութեանց մէջ, յորս անշուշտ  
կը մտածէր մարդկային մեծութեանց ունայութիւնը,  
կին մը զինքը ճանչցաւ, իմացուց քաղաքական պա-  
հապանի մը, որ զինքը կալանաւորեց Բուլէ փողոցը  
արձեատանոց մը մտած ժամանակ: Կրկին անգամ գա-  
տապարտուեցաւ իրը համախոճ պատանդներու սպա-  
նութեան և Հաքսօ փողոցին ջարդին: Մեկարեկի էր  
իրեն ներել և սպաննեցին 1872 Յուլիս 25ին:

Այն օրը որ պատանդները ազատեցան հրացանա-  
կիր նաւատիներէն 28 Մայիս 1871, նոյն օրը հասա-  
րակութիւնը ինկաւ, հոն ուր սկսեր էր Ֆոնտէն-օ-Ռուա  
և Ռիւ սէն Մօր փողոցներուն անկիւնը: Վերջին պատ-  
նէշը պաշտպանողն էր երբեմն դռնապան գրագիր  
Լուի-Ֆորտիւնէ Պիա անուամբ Հասարակութեան ան-  
դամներէն մէկը: Տեսնելով որ բանակը Պարիզու ամեն  
կողմ տիրեր է և սպասամբութիւն յաղթուած է,  
հրացանին ծայրը ճերմակ թաշկինակ մը անցուց եւ  
անձնատուր եղաւ կանոնաւոր դունդերուն: Ժամը կէս-  
օրուան մէկն էր:

Պատերազմը լնցեր էր, բայց յաղթութիւնը չէր  
սրբեր շատերուն պատտախանամուտութիւնը: Տ. Թիէրի  
վարչութիւնը որ յետ երկու ամիս կուռելու կրցեր էր  
յաղթելու եօթը օր պատերազմելով, կը նմանէր ջրհանի  
մը որ ստիպուած էր մարելու այն կրակը զոր թողեր  
էր բռնկելու: Այն քաղաքագէտները որոնք Սեպտեմբեր  
4էն սկսեալ կառավարեցին, եթէ խզճերին քննեն, պիտի  
տեսնեն որ այս ամենը առաջ եկան ուզելով շոյել  
գժողութեւրդը և հաճեցնելով զինեալ և ինքիրեն թու-  
զուած ամբոխ մը: Եթէ վարչութեան զուգները եւ  
եթէ մասնաւոր յեղափոխութեան զուգները կարծես  
միացան զՎաղղիա ի կորուստ տանելու: Թէ սասնը



Թէ անոնք յանցաւոր էին: Առաջինները չգիտցան  
 դորձածել ոչժերը ընդդէմ Գերմանիոյ. միւսերը մեր  
 դժբաղդութիւնները իրենց պատեհ տաին իրականացը-  
 նելու անկարգ երազնին: Թշնամուոյն զիմաց բոլոր սըր-  
 աերը միաձայն պէտք էին բարախել. ամեն թե նոյն  
 նպատակին պիտի նայէր և արհամարհելի պէտք էր  
 ըլլալ ամեն բան որ թշնամիէն սպասելու համար չէր:  
 Այն անձինք որ Ահտանէն վերջը անցան իշխանու-  
 թեան գլուխ, Հոգոսցին կառավարելու Պարիզու ժո-  
 զովուրդը. Թողուցին զայն զատարկութեան, զինովու-  
 թեան եւ յաղթուելուն վհատութեան մէջ. որով  
 անոնք որ ընկերական յեղափոխութիւններ կ'երազէին  
 փութով տիրեցին ամբոխին և զաղլիական պատմու-  
 թեան այս ամենէն ոճրագործ մասը կատարել տուին:

Վ Ե Ր Զ

Յ Ա Ն Կ

Կախնական տեղեկութիւնք. - Ազգային պահպանք. - Եջ  
 Կեդրոնական Յանձնաժողով. - Մարտ 18ի Հասարակութիւն . 9  
 Ա.  
 Հասարակութեան գիտաւոր անձինքը: - Ռատու Ռիկոյ. - 26  
 Թէոֆիլ Ֆէրրէ, - Իրենց անգլմութիւնները ևւ վերջը .

Բ.

Պարիզու բանտերը. - Լիւլիէ. - Խօսք. Զօրախան Գիւ-  
 վալ. - Տ. Կորէ. օրինաւոր տեսուչը բանտարկեալ. - Գարրօ  
 զարբինը. - Առաջին պատանդ. - Տիկինն Գորէ և Տիկինն  
 Բրաբոն. - Գովելի վարմունք օրինաւոր մատակարարութեան  
 պաշտօնէից. - Յանձնարարութիւն Տ. Բոնժանի. - Առ ընդհա-  
 նուր դորձակալը գրած նամակը. - Տ. Լըկուրի անմիջապէս  
 պատուէրը. - Այս պատուէրներուն ազդեցութիւնը պատան-  
 դից վրայ. - Չանք զՏ. Բոնժան ազատելու. - Ռաուլ Ռիկօ  
 և Ֆէրրէ Տ. Բոնժանին խղիկին բով. - Ֆէրրէի նամակ մը . 40

Գ.

Կալանաւորութիւնք. - Փահանայք. - Գըկէրրի քահանային  
 տան կողոպտուիլը. - Արքեպիսկոպոսին կտորքը. - Հասարա-  
 կախաբազան պղծութիւնք. - Օրէնք կաակաճաւորաց. - Դարլ  
 Լիւլիէ. - Իր փախուստը. - Ռոսսէլ. - Իր փառասիրութիւ-  
 նը. - Կուիրակ պատերազմի. - Իր գատապարտուիլը և մահը 40

Դ.

Առաջին սպանութիւնք. - Կարրօ զարբինին տեղ կ'անցնի  
 Ֆուէ անոյշ հոտեր ծախողը. - Ռիկոյի և ընկերաց հարեմը. -  
 Ժորժ վէյսէ. - Միջնորդ Պարիզու և վէրսայի մէջ. - Չորս  
 բնակութիւնք. - Մոնմարտրի թնդանօթմանդիք. - Զօրախան  
 Դամբրովսքի. - Գաղտ գաշինք. - Հիւցինկէր, վերջին տեսու-  
 թիւն. - վէյսէյի կալանաւորուիլը. - Բերդերուն պարպուիլը.  
 - Գոմբրովսքի կը սպանուի. - Գաղղիացի գունդերուն Պարիզ  
 մտնելը. - Գանդաղութիւն շարժմունքներուն և աղետալի հե-  
 տեանքը. - Չեռք անուսած հանդերձանք այրելու և օդ հանե-  
 լու Ռատիկանութեան պալատը. - Ժան վալյօ. - Իր սպանուե-  
 լու



լու հրամանը . - Հրացանի կը բռնուի - Գաղղիացի գունդե-  
րուն յառաջելը . - Պարիզ կ'այրի . - Զինուորական գործողու-  
թեանց ամբողջութիւնը . - Թէոֆիլ Ֆէրրէ և սպաննողաց  
գունդը . - Սպանունն ժողովէ յէսէի

Էջ

61

Ե .

Ենթադասականական Բրաբրն . - Ֆէրրէ կը դառնայ  
Պահպանող . - Ժողէֆ Ռիւս . - Բրաբրն կը միջամտէ . - Բան-  
տարբէլոց տետրը . - Միշէլ . - ՌԲԸ . - Տ . ՏՈՒԼԼԱԳ : - Պա-  
տրաստութիւնը Ռոտիկանութեան պալատը այրելու . - Բանտար-  
գեաներուն սարսափը . - Հրդեհը կը սպանայ կանանց բնա-  
կութիւնը . - Լուցուցէք այդ շատականները > - Բրաբրնի ա-  
պշտամբիւր . - Կ'արձկէ կալանաւորը . - Անպարտեց փա-  
խուստ . - Ռոտիկանութեան պալատը կ'այրի . - Վառչներուն  
հանուիլը . - Տեկին Սէն-Շըլի . - Լըբուս վարսալիբայն . - Ա-  
ռաջին հրդեհաշիջոյցներուն հասնիլը . - Պահպանողին կալա-  
նաւոր . - Հրդեհը կը շրջապառէ Պահպանողը . - Բրաբրն  
կրակին աշխատութեան գլուխ . - Ոչողուն . - Պահպանողը  
կ'ազատի . - Բանժանի խօսքը առ Պիէր Բրաբրն .

72

Զ .

Արդարութեան տունը . - Արդելարանը յաճախ կը շփոթուի  
Պահպանողի հետ . - Տեաչին հրամանները . - Տ . Դիւրլէն ,  
Երկրորդ բանտապետ կ'երթայ ի վէրսայլ . - Դըլի տեսուչ . -  
Զինուորական բանտեաները կ'արձկուին . - Հրովարտել ինչ-  
քերը գրաւելու . - Չարագործները կը թողուին . - Յնորական  
շտանարանը գէնքերու . - Պիկպիւսի Հայրերը . - Տեկին ա'Օպե-  
նեօք . - Արդէք պատարագ ըսելու . - Դազադներ . - Միջներու  
դաւը . - Զինակերք Արդելարան կը փոխադրուին . - Տ . Դիւր-  
լէնի զգուշութիւնը . - Այցելութիւն Ռատու Ռիկոյի . - Կու-  
գան զինակիրները աճնուլ . - Տ . Դիւրլէն շտար . - Սուս հրա-  
ման փոխադրութեան . - Արդարութեան պալատան այրիլը . -  
Կրակ տուօղներուն գլուխը - Պատանդները կ'ազատին , Եղեռ-  
նագործ կալանաւորը կը յանձնուին Արդարութեան . - Դըլի  
տեսչին լու վարմունքը .

83

Է .

Սէն Լազար բանտը . - Հասարակութենէն անուանուած  
տեսուչը . - Մարի Ժողէֆ մայրապետները . - Մեաիշեանց Լա-  
բրէնիէր . - Մէֆիստօ . - Կը սարսափեցնէ Սէն Լազար . -  
Կրկին խաղ կը խաղայ . - Պարիզէն դուրս շրջապալութիւնը . -  
Լաբրիւնիէր զինուորական հարցաքննիչ . - Ըստ կամեա կալա-  
նաւորութիւններ . - Գեանափորը . - Գեանափորներու խոզար-  
կութիւնը . - Հասարակութեան հիւանդութիւնն է . - Մարի

Էջ

Ժողէֆ մայրապետները կ'որոշին մեկնելու . - Քոյր Մարի Է-  
լենտը . - Փախուստ . - Մուսան կօշկակարը . - Անկանոնու-  
թիւնը և Անասակութիւնը . - Մատակարարական համակարու-  
թիւն . - Եկեղեցին Սէն Լորան . - 1765 Մայիս 21է հրամա-  
նը . - Դիակները . - Կերկայացմունք և սուտեր . - Պիկպիւսի  
Դամ Բլանշները . - Տ . Ռուշըբընի միջամտութիւնը . - Շփոթու-  
թիւն վարչութեան մէջ . - Ռատու Ռիկոյի վերջին հրամանե-  
րէն մին . - Մուսան վերադարձը դարմանատեղի կը հաստա-  
տէ . - Դատապարտութիւնը .

96

Ը .

Սէնտ - Պէլաժի . - Օդիստէն Ռանիէի , տեսուչ . - Գա-  
բրիէլ Ռանիէի անդամ Հասարակութեան . - Իր ծագումը , կար-  
ծիքները - Կրակ տուօղ և մարդասպան . - Տգիտութիւն Օդիստ  
Ռանիէի . - Պնէօ դը վէտել . Գործակատար կ'ըլլայ Օ . Ռան-  
վիէի . - Խուզարկութիւնը և գողութիւնը թաղին մէջ . - Քա-  
նանայն Բէնյօ . - Հսկողն Վիլլըմէն . - Կուստով Շոտէ բան-  
տաքուած Պալիլյոն Պրէնտի մէջ . - Բարեկամ Պրուսանի . -  
Շոտէ 21 Յունուարի . - Պի Գաշիկ գինքը կը մասնէ . - Վեր-  
ջին այցելութիւն . - Քահանայք Սէն-Մէտարի . - Ռատու Ռիկո  
կու գայ Սէնտ-Պէլաժի . - Ռիկօ և Շոտէ դիմաց գիմաց . -  
Դատապարտութեան բանաձեւը . - Ռիկօ կրակը կը հրամայէ . -  
Սպանունն Շոտէի . - Սպանութիւն Երէք զինակրաց . - Անտ-  
Պէլաժի կ'ազատի . - Մաս Ռատու Ռիկոյի . - Սպանունն Պրէօ  
դէ վէտելի . - Անձնատեղանութիւն Օդիստէն Ռանիէի

109

Թ .

Սանտէ Բանտը . - Զորավարն Շանդի . - Կը յարձկին բան-  
տին վրայ . - Տ . Լըբէրիօ օրինաւոր տեսուչ . - Պատանդները  
փակել կու տայ . - Սերկիի ճառախօսութիւնը . - Զորավարն  
Շանդի Լուառի վրայ . - Լէօ Մէյլիէի ջանքը կալանաւորը ա-  
զատելու . - Տ . Լըբէրիօ խոհեմութիւնը . - Դաշնաւորը կը  
մերժեն ազատ թողու Շանդի զօրախորը . - Շարլ Բէլէյ . -  
Անվտանգութիւնը . - Դիակը . - Տ . Լըբէրիօ մեկնիլը . -  
Կրկէ հասարակութենէն տեսուչ կ'անուանուի . - Շանդի զօրա-  
վարին ազատիլը . - Բարիկ հոտաւետ նիւթեր ծախողը . -  
Շանդի զօրախորը կ'գործնական Յանձնաժողովոյն առջև կ'ել-  
լէ . - Յանձնաժողովոյն նիստը .

122

Ժ .

Բանտարկեւները . - Տ . Կլոդ , Ապահովութեան պաշտօնա-  
ւանի զխաւորը . - Իր կալանաւորումը . - Դիւ վայի առաջար-  
կութիւնը կը մերժէ . - Սանտէ կը բանտարկուի . - Ինչ որ էր  
Տ . Կլոդ . - Բանտին հսկողները . - ՏՏ . Լաթօ , Պերէտտի և



Տխրելի զբաղիքը . - Խնկերոց բաժնին նուիրակները . - Կսուէի մէջը երկու անձինք . - Իր վիշտը . - Կսուէի բարկութիւնը . - Դաւ ԳՏ . Կլոդ փախցնելու . - Գիշերային այցելութիւն . - Շարդան հազարսպետը . - Մինիմ գինուորանոցին զինակիրները . - Դաշնուորը կը տիրեն բանտին . - Կը յաջողին դանոնք վանակու . - Գրէլիէ լուսցարարին հրաման մը .

Էջ  
133

Ի .

Սպաննելու հրամանը . - Հրատարակութիւն Գլըէկլիզի . - Պաշարներուն սայլը . - Կսուէի վարամուտները . - Տէքսիէի ազդեցութիւնը անոց վրայ . - Կը մերժէ վասոյները ընդունելու . - Հրաման պատանդները սպաննելու . - Ատենազպիքը կը միջամտեն . - Կսուէի բարի արամադրութիւնքը . - Կու գան սպահով ըլլալու թէ հրամանը պիտի կատարուի . - Կալանաւորաց անհանգստութիւնը . - Գաղղիական բռնակին յառաջ քաշելու . - Սէրիզիէ և Միլիէր . - Ժան Բատիստ Միլիէր . - Վէճ . - Սէրիզիէ պահապանաց գլխաւորին հրաման կու տայ պատանդները սպաննելու . - Ամէնը կը բերուին . - Սէրիզիէի սուժբերը . - Կսուէի յանկարծական բորբոքիւր . - Զանիկայ կը փակեն . - Ազատութիւն . - Կսուէի գատապարտութիւնը . - Տ . Կլոդի մէկ խօսքը .

141

Լ .

Արկէյլի դոմինիկանները . - Խնչու Սանտէ չհորձանուեցաւ . - Զր բաժնին գնդանը . - Սէրիզիէ . - 10դ դունդը . - Աւրէր Լըհրան դպրոցը . - Հիւանդակառք . - Լուի Բուան կուչուած նաև Բորէշ . - Կարծեցեալ բռնակին առ վէրսայցիս . - Կը ախրեն դպրոցին . - Դոմինիկանց կալանաւորումը . - Բիսէզըը բերըը փոխադրուիւր . - Գողութիւն հանդերձ խորտակմամբ . - Գինտօլութիւն . - Բիսէզրի բերդին պարտուիւր . - Դոմինիկանք Զր բաժնին գնդանը կը փոխադրուին . - Ստիպում երթալ պատնէշները շինելու . - Մերժումն . - Զինուորական կացութիւնը վատնպետը կ'ըլլայ . - Սէրիզիէ կ'որոշէ Դոմինիկանց սպանուիլը . - Կանայք սպտամբութեան ժամանակ . - Որս քահանաներու . - Զարդ . - Զինուորական ատեսան . - Սէրիզիէ կը փախչի . - Որբեարի մը . - Սէրիզիէի կալանաւորումը . - Սէրիզիէ և Բորէշ կը սպանուին .

150

ԼԱ .

Մազաս Բանուր . - Մարտ 19 . - Պարիզու պահապանները . - Կազապին հակոյներուն միջամտութեամբ . - Մուտն կոչկարտը . - Խնքի իրեն տուած հրամանը . - Մոն վալէրիէնը կը պարզուի թիէրի հրամանով . - Կարևոր ժամանակին նորեն կը գրաւուի . - Հինգհարիւր երեսուն և երկու Պետու .

Էջ

Թեան կալանաւորք . - Ժէքքէրի կալանաւորուիւր . - Տ . Հոմանի հայրը . - Քահանայն Կրտ . - Քահանայն ժուփան - Արքեպիսկոպոսը և Տ . Բոնժան . - Փոխանակութեան բանակցութիւնք . - Բլանքի . - Տ . Ուոշըրն . - Տ . Պոլ Ֆապրը . - Գարրո գարրինը . - Տ . Խոմեն Ուոս փաստարաններուն կարգին գաւազանակիր . - Իր տեսակցութիւնը պատանդներուն հետ . - Վայրենի պատերազմ . - Պատանդներուն փոխադրութիւնը և Կրանդ-Ուրքէտ . - Հացը կը պակսի Մազասի մէջ . - Բանուր կը բանան . - Վլինչէնցիին սպաննողներէն մէկուն մահը . - Կարրո հրացանի կը բռնուի .

164

ԼԲ .

Կրանդ-Ուրքէտ . - Պատանդներուն հասնիւր . - Փոքր Ուրքէտ . - Կլոդիս Բրիան . - Հրաման մահուան . - Խաղոր Ֆրանուսա կառավարիչ Ուրքէտի . - Ոսմէն պահապանակետը . - Սպասուորները . - Լա եղեռնաւոր մը . - Գնդակետն Վէրիկ . - Կիլլոտինը կ'այրուի . - Այցելութիւն բանտին . - Վէրիկ կ'ըմբռնէ . - Մեռնին գտակաւորք . - Պատանդները խցիկներու մէջ կը դրուին . - Արքեպիսկոպոս և Բոնժան նախագահը . - Յետուսեան հարք - Քահանայն Գըղէրրի . - Երկու հին դասընկերներ .

178

ԼԳ .

Պատանդներուն մահը . - Հատարակութիւնը կ'ապաւինի 11դ Շրջանակին քաղաքական պալատը . - Ոթէլ դը Վիլի կրակ տուողները . Կոմեն դը Բոֆոր . - Պատանդներուն ջարդը վճռուեցաւ . - Զինուորական ատեսան . - Կիստապ Էրնէ Ժանտոն . - Գոնէրուն փակումը . - Արքեպիսկոպոսը խցիկը կը փոխէ . - Զորս կանայք Ուրքէտ կը բանտարկուին . - Սպաննողներուն խումըը կու գայ . - Անկանոն հրաման . - Ատենազպիքն ընդդիմութիւնը . - Առաջին ցանկին փոփոխութիւնները . - Խոմենին Մէժի . - Բէնժամէն Սիկար . - Հանրին հակողը . - Հանրին կը փախչի բանալինըը պահելով . - Ոսմէն պահապանակետը և Բոսէ հակողը . - Կոշ . - Բոնժան նախագահին « Մընար բարովը » . - Մարգասպալը կը գիծին . - Արձակումն . - « Կը միջնչէր » . - Կլուինիս կը ցաւցնէս » . - Խուժրին կը բազը պարպելը . - Վերջին շնորհաց հարուածը . - Մէժիի խիղճը . - Խցիկներուն մէջ գողութիւն . - Զմրուխտ թէ՛ ազամանդ . - Մեռելները կը մերկացնեն . - Մարմինները Էստ գերեզմանոցը կը տարուին . - Երեքի ջուրը .

186

ԼԴ .

Ժողովրդեան արդարութիւնը . - Ֆրանսուայի գազանութիւնները . - Երեք հակողք կ'ուզեն փորձել պատանդները ա-



զատելու . - Խորհուրդ ապստամբելու . - Ժէանտի մարաջատ  
 րնակութեանց . - Պինէ և ժէանտի . - ժէանտի կը մերժէ Պի-  
 նէի Խորհուրդը . - Իմիլ կուս . - Հաւարական հրաման . - Չոր-  
 րորդ բաժնին պատանդները . - Պօլ Սէյլըրէ . - Տ . կէրէն և  
 Տ . Նըպրիս . - Առաջին բաժնին պատանդները . - Սուր . -  
 ժէանտիի վարանմունքը . - Կրթմանք , Իջնանք՝Յ . - Մեկնումն .  
 - Սմբուխին համակրութիւնը . - Գաբրիէլ Ռանվիէ . - Հարստ  
 փողոցը . - Վարէն կը ջանայ պատանդները ազատել . - Ա-  
 ռաջին հարուածը տուողը կին մ'է . - Երբ քահանայ մը և բնա-  
 կութեանց մարաջախ ժէանտի . - Խաղ մը կը հնարեն . -  
 « Տեարք , կեցցէ կայսրը . - Չորս քահանայք . - կրօնաւոր եղ-  
 րայրը կը մարի . - Լուսակեաց փոսը . . . . . 200

ԼԵ .

Պատանդներուն ապստամբելը և ազատութիւն . - Վերջին  
 հասարակարիչները . - կը փորձեն անցնիլ գերմանացի բա-  
 նակներէն . - Թ . Ֆէրրէ . - Ռոբէտի կալանաւորք . - Դատա  
 պարտեալները . - Հակոյները . - Բուրկինյան և Պինէ հակոյնե-  
 րը . - Պինէ ոտք կը հանէ գատապարտեալները . - Բուրկինյան  
 երկրորդ բաժնին մէջ . - Պինէ երրորդ բաժնին մէջ . - Պա-  
 տանդները կ'ապստամբին . - Պատնէշ կը բարձրացնեն . - Օրհնու-  
 թիւն և արձակումն . - Ռամէն պահապանապետը . - Ի զուր կը  
 փնտռէ բանակները . - կը փորձէ համոզել . - Ֆէրրէ և կը-  
 վիս Բրիան . - կրանդ և Պետիտ Ռոբէտի զինուորները . -  
 « կեցցէ բանակը » . - կը փորձեն բանտին պատնէշները այրել .  
 Դատապարտեալք կ'ապստամբին . - Դարձ Ֆէրրէի . - Իր ծրա-  
 դերը . - Ահաւաստիկ վէրապլցիք » . - Ամենուն փախուստը . -  
 Բանտը ազատ է . - Երկրորդ և երրորդ բաժնին պատանդները  
 տեղերնին կը կենան . - Չորրորդ բաժնին պատանդք բանտէն  
 կ'ելեն . - Մահ ՏՏ . Սիւրայի , Հուրլլոնի . - Բէքուրի . -  
 Շուրիէյի . - Փախուստ Ռարիի . - Ֆրանսուայի ապանալիքը . -  
 Հրացանակիր նաւատիք . - Պատանդները վար կ'իջնեն . - Վէ-  
 րիկ ահապարանօք հրացանի կը բռնուի . - Ֆրանսուա կը բռն-  
 ոուի . - Վերջ Հասարակութեան . - Պատասխանատուութիւնք 215





Հայաստանի Ազգային գրադարան



NL0438276



Առաջաբան

Գրքի Է քր. 2



